

Հավելված
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Սևան համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 18-ի N 150-Ն որոշման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ (ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԸ, ԳԱԳԱՐԻՆ, ԳԵՂԱՄԱՎԱՆ,
ԴԴՄԱՇԵՆ, ԶՈՎԱԲԵՐ, ԼՃԱՇԵՆ, ԶԿԱԼՈՎԿԱ, ՆՈՐԱՇԵՆ,
ԾԱՂԿՈՒՆՔ, ԾՈՎԱԳՅՈՒՂ, ՍԵՄՅՈՆՈՎԿԱ, ՎԱՐՍԵՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ) ՆԵՐԱՌՈՂ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ
ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ
ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԵՐՈՎ

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ
ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-1

Սևան քաղաք (Գագարին գյուղ), Գեղամական, Դդմաշեն, Զովաբեր, Լճաշեն, Ծաղկունք,
Ծովագյուղ, Նորաշեն, Չկալովկա, Սեմյոնովկա, Վարսեր գյուղեր/11/

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ

Պատվիրատու՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

Պատվեր՝ N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/7

ՏՆՕՐԵՆ՝

Ա.ՀԱԿՈԲՅԱՆ

Երևան 2022

ԳԻՐՔ 1

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	7
2 ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ	7
2.1. Հայեցակարգային դրույթներ.....	8
Գլուխ 1	12
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻԳՆԱԶԱՏԱԿԱՆ	12
1.1. Համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի վերլուծություն	12
1.2. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ	15
1.2.1. Մարզի ընդհանուր նկարագիրը	15
1.3. Ինժեներակառուցական և սեյսմատեկտոնական պայմանները.....	20
1.4. Բնակլիմայական պայմանները.....	21
1.4.1. Կլիմա.....	21
1.4.2. Մարզի բնական պայմանները և հարստությունները	23
1.4.3. Մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները:	26
1.4.3.1. Սևան ազգային պարկ.....	26
1.4.3.2. Նորաշենի արգելոց	27
1.4.3.3. Լիճք-Արզիշի արգելոց	28
1.4.3.4. Գիլլի արգելոց.....	28
1.4.3.5. Արտանիշի արգելոց.....	29
1.4.3.6. Գավառագետի արգելավայր	30
1.4.3.7. Գիհի-կաղնուտային ռելիկտային արգելավայրը	31
1.4.3.8. «Նորաշենի» արգելավայր.	32
1.4.3.9. «Սևան» ազգային պարկի ռելիեֆային գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունները.....	32
1.4.4. Բնության հուշարձաններ	36
1.5. Պատմամշակութային հուշարձաններ	37
1.6. Օգտակար հանածոներ	38
1.7. Բուսական աշխարհ.....	51
1.8. Կենդանական աշխարհը	53
1.9. Լանդշաֆտների դասակարգումը և գնահատականը.....	54
1.9.1. Զբոսաշրջություն	55

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

1.9.1.1. Զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներն ու դրա նշանակությունը մարզի համար	58
1.9.2. Մարզի բնակչությունը	60
1.9.3. Հողային ռեսուրսներ	62
1.9.3.1. Հողային ռեսուրսների պահպանումը	63
1.9.3.2. Հողային ռեսուրսների պահպանության հեռանկարները Հայաստանում	64
1.9.3.3. Օրգանական և էկոլոգիական հողագործություն	64
1.9.4. Բնակելի ֆոնդ	66
1.9.5. Տնտեսություն	66
1.9.5.1. Գյուղատնտեսություն	66
1.9.5.2. Արտադրություն	66
1.9.5.3. Արդյունաբերություն	67
1.9.5.4. Զինաբուծություն	67
1.9.6. Կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն	68
1.9.7. Տրանսպորտ	69
1.9.8. Քաղաքային զարգացում	71
1.10. Համայնքների դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում	72
Գեղարքունիք-1» միկրոռեգիոնի բնակավայրերի տեղադրման վերաբերյալ	74
1.10.1.1. Ասան քաղաք (Գագարին գյ ու դ),	74
1.10.1.2. Գեղամավան	77
1.10.1.3. Դղմաշեն	79
1.10.1.4. Զովաբեր	80
1.10.1.5. Լճաշեն	82
1.10.1.6. Ծաղկունք	87
1.10.1.7. Ծովագյուղ	93
1.10.1.8. Նորաշեն	95
1.10.1.9. Զկալովկա	95
1.10.1.10. Սեմյոնովկա	96
1.10.1.11. Վարսեր	97
ԳԼՈՒԽ 2	111
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ	111
2.1. Հեռանկարային բնակչություն	111

2.2. Հեռանկարային զարգացման հայեցակարգ	112
2.2.1. Տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացում	116
2.2.2. Ներքին տրանսպորտ.....	117
2.3. Հասարակական սպասարկման ոլորտ	117
2.4. Բնակավայրերի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպում և գործառական կառուցվածք	125
2.4.1. Բնակավայրերի տարածքային զարգացման հիմնական սկզբունքները	125
2.5. Միկրոռեզիդենսյալ գյուղական բնակավայրերի հեռանկարային զարգացման հայեցակարգ	125
2.5.1. Արդյունաբերության զարգացման հեռանկարները.....	125
2.5.2. Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման հեռանկարները.....	126
2.5.3. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը	126
2.6. Հատակագծային հեռանկարային կառուցվածք	127
2.7. Բնակավայրերի տարածքի գործառական գոտիավորում և կառուցապատման ռեժիմներ	128
2.8. Գյուղական բնակավայրի բնակավայրերի տարածքի ֆունկցիոնալ գոտիավորման և պլանավորման կառուցվածքը.....	130
2.9. Համայնքային զարգացում	131
2.9.1. Ներդրումային գրավչություն	131
2.9.2. Զբոսաշրջության.....	132
2.10. Գյուղական տարաբնակեցում	133
2.11. Ժամանակակից գյուղական բնակավայրի զարգացման օրինաչափություններն ու սկզբունքները	137
2.11.1. Նորարարություն համագործակցության միջոցով	140
2.11.2. Կլաստերի զարգացման սկզբունքները.....	140
2.11.3. Կլաստերում մասնակցության առավելությունները	140
2.11.4. Կլաստերի բոլոր անդամների համար ընդհանուր ծառայությունների մատուցման իրավասությունների ստեղծում և զարգացում	140
2.12. Սոցիալական ձեռնարկատիրություն ,	144
2.13. Աճի բևեռներ	145
2.14. Բնակավայրերի սահմանում արտադրական տարածքների հիմնախնդիրները	150
2.15. Քաղաքաշինական համատեքստը	153
2.15.1. Քաղաքային/գյուղական տարածքների ապագա զարգացման մոդելի ձևավորում	154

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

2.16.	Բնակավայրերի հեռանկարային զարգացման ցուցանիշներ.....	155
2.17.	Գեղարքունիք-1 ՄՄՀՏՊ տարածքային զարգացման այլընտրանքային, /այդ թվում գրոյական/ տարբերակի կիրառման գործնականության վերաբերյալ	212
2.18.	Քննարկվող տարբերակներ.....	212
2.19.	ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	213
2.19.1.	Զրամատակարարում.....	213
2.19.2.	Զրահեռացում	218
2.19.2.1.	Կենցաղային և արտադրական կոյուղի	218
2.19.2.2.	Հեղեղատար կոյուղի	220
2.19.2.3.	Տեխնիկական այլ առաջարկություններ	232
2.19.3.	Էներգամատակարարում.....	234
2.19.3.1.	Էլեկտրամատակարարում.....	234
2.19.4.	Գազամատակարարում.....	242
2.19.4.1.	Զերմամատակարարում	243
2.19.4.2.	Գազի հեռանկարային ծախսը	243
2.19.4.3.	Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ	245
2.19.4.4.	Հեռահաղորդակցություն.....	246
2.19.4.5.	Կոշտ թափոններ.....	246
ԳԼՈՒԽ 3.....		247
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....		247
3.3.1.	Համայնքի բնակչության պատրաստումը	249
3.3.2.	Բնակչության իրազեկումը և ազդարարումը.....	249
3.3.3.	Բնակչության տարահանումը	250
3.3.4.	Բնակչության տարահանման ձևերն ու միջոցները	250
3.3.5.	Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը	
	251	
ԳԼՈՒԽ 4		254
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ.....		254
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՒՅԹՆԵՐ		254
4.1.	Գոտնորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ	254
4.2.	Գոտնորման համակարգի կառուցվածքը	254

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսյալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

4.3. Գոտևորման նախագծի կիրառման բնագավառը	254
4.4. Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հիմնական բնութագրեր	255
4.5. ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ	256
4.6. Է. Հատուկ իրավական ռեժիմով գոտիներ (ՄՊԳ)	267
4.7. ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿ	270
4.8. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ	283
4.9. Լրացուցիչ պահանջներ	291
4.10. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	291
4.11. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ	295
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ.....	297
2.20. Առկա իրավիճակը	297
Սևան քաղաքում ավտոմոբիլային տրանսպորտի.....	298
արտանետված նյութերի քանակի հաշվարկ.....	298
7.1. Շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ	313
Հավելված 4 Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ	316

ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Միկրոռեզիդենսի բնակավայրերի համակցված

1. Հենակետային հատակագիծ Մ 1:25 000
2. Տարածքի համալիր գնահատում Մ 1:25 000
3. Տարածքի զարգացման հատակագիծ (հիմնական գծագիր) Մ 1:25 000
4. Տրանսպորտային և ինժեներական հաղորդակցության ուղիների ուրվագիծ Մ 1:25 000
5. Բնության և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության ուրվագիծ

Միկրոռեզիդենսի առանձին բնակավայրերի.

1. Հենակետային հատակագիծ (Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ) Մ 1 : 5 000
2. Տարածքի համալիր գնահատում (Ռիսկերի և սահմանափակումների քարտեզ) Մ1 : 5 000
3. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գծագիր Մ1 : 5 000
4. Տարածքի զարգացման հատակագիծ (հիմնական գծագիր) Մ 1:5 000
5. Հողատեսքերի բաշխումն ըստ սեփականության սուբյեկտների Մ 1:5 000
6. Հողերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիր Մ 1:5 000
7. Քաղաքաշինական գոտիավորման նախագիծ Մ 1 : 2 000

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա փուլի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական իրավիճակն առաջնահերթ պահանջ է դրել մշակելու և իրականացնելու նոր, կայացվող պայմաններին համապատասխանող, մարզի իրական հնարավորությունները հաշվի առնող քաղաքաշինական գործունեություն: Դրա հետ կապված առաջացել է անհրաժեշտություն փաստաթղթերի մշակման նոր տիպի նպատակային ծրագրի, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին և կներառի տարածական պլանավորման հիերարխիական երեք մակարդակ՝ մարզի (տարածքային հատակագծման նախագիծ), համայնքի (գլխավոր հատակագիծ) և բնակավայրի (գոտնորման նախագիծ):

Միկրոռեզիդենսլ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակառոտված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիրի իրականացմամբ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեզիդենսլ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Գեղարքունիք-1՝ Սևան քաղաք (Գագարին գյուղ), Գեղամավան, Դումաշեն, Զովաշեն, Լճաշեն, Ծաղկունք, Ծովագյուղ, Նորաշեն, Չկալովկա, Սեմյոնովկա, Վարսեր գյուղեր/11/) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔԿ-ԳՀԱՇԶԲ-21/7) և վերջինիս կողմից տրամադրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Մշակվող միկրոռեզիդենսլ մակարդակի փաստաթուղթն իրենից ներկայացնում է բազմանպատակ նախագիծ, որի հիմնական նպատակը համայնքների տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումն է, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, տարածական-տնտեսական գործունեության համակարգված կազմակերպումն է, տարածաշրջանի և համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական և մշակութային կապերի, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի և ֆունկցիոնալ գոտնորման խնդիրների լուծումը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ պայմանների և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմանն ուղղված միջոցառումների առաջադրմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ:

2 ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հասարակության հետխորհրդային ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական արմատական փոփոխությունները շոշափելի փոփոխություններ մտցրեցին նաև քաղաքաշինական գործունեության մեջ՝ Պետությունը դադարեց անշարժ գույքի և ֆինանսական միջոցների միահեծան սեփականատերը լինել, ներկայումս որպես կառուցապատող, ներդրող (այսինքն՝ քաղաքաշինական գործընթացի առավել ակտիվ մասնակիցներ) հանդես են գալիս բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ՝ ֆիզիկական և

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

իրավաբանական անձինք: Հետևաբար, արդի՝ նոր սերնդի քաղաքաշինական փաստաթղթերում հարկ է կանոնակարգել քաղաքաշինական գործունեության իրականացման մեխանիզմները՝ հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները և ապահովելով տարածաշրջանի կայուն զարգացում: Տարածաշրջանի կայուն քաղաքաշինական զարգացման նպատակները ներառում են.

- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում,
- բնակչության բնակության պայմանների մակարդակի բարձրացում,
- սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում՝ բնակչության ռեկրեացիայի և առողջության կազմակերպման համակարգերի ներառումով,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային և ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում,
- պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում վերակենդանացում,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում՝ խթանելու ներդրումային գրավչությունը:

2.1. Հայեցակարգային դրույթներ

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման հիմնադրությամբ փաստաթղթերի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում կարտացոլվեն միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, այն է՝

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրները բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

Նախագծման համար ուղեցույց են ծառայել համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և պետական ինքնակառավարման մարմինների որոշումները, հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.

- ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին:
- ՀՀ հողային օրենսգիրքը:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

• Հայաստանի Հանրապետության օրենքը Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998 թ. նոյեմբերի 11, ՀՕ-261)

• ՀՀ ջրային օրենսգիրքը,

• ՀՀ օրենքը «Սևանա լճի մասին»,

• ՀՀ օրենքը «Ընդերքի մասին»,

• ՀՀ օրենքը «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը(2006թ.),

• ՀՀ օրենքը «Բուսական աշխարհի մասին» (1999թ.),

• ՀՀ օրենքը «Կենդանական աշխարհի մասին» (ՀՕ-52, 03.04.2000թ.),

• ՀՀ օրենքը «Մթնոլորտային օդի պահպանության մասին» (1994թ. հոկտեմբերի 11, ՀՕ-121):

• ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (2014 թ. հունիսի 21, ՀՕ-110-Ն):

• 2002 թ. մայիսի 30-ի «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» N 927-Ն ՀՀ կառավարության որոշում,

• 2007թ. հունվարի 18-ի «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» N 205-Ն ՀՀ կառավարության որոշում,

• ՀՀ կառավարության 2019 թ. հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 927-Ն և 2007 թ. հունվարի 18-ի N 205-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 947-Ն ՀՀ կառավարության որոշում,

• 2008թ. 14 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն ՀՀ կառավարության որոշում,

• ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության որոշումը հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը:

• ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը:

• ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 72-Ն որոշումը:

• Հայաստանի Հանրապետության կառավարություն N 855-Ն որոշումը (18 օգոստոսի 2016 թվականի) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին:

• «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում (2011 թ. Հունվարի 27, N75-Ն):

• «Նոր կառուցվառդ փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժում նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դիրքիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ծանրաբեռնված գտերի ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում (2021 թ. Ապրիլի 8, N 488-Ն):

- «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» ՀՀ կառավարության որոշում (2005 թ. Հունվարի 20, N 64-Ն):

- «Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» ՀՀ շրջակա միջավայրի նախարարի հրաման (2020 թ. Մեպտեմբերի 9, N 355-Ն):

- Կարգ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման (հաստատված ՀՀ Կառավարության 02.05.03թ. N 625 – Ն որոշմամբ):

Վերոյշալ նորմատիվ իրավական փաստաթղթերը կանոնակարգում են համայնքների քաղաքաշինական զարգացումը՝ հիմնված հետևյալ հիմանական փուլերի վրա.

- համայնքներում առկա քաղաքաշինական իրավիճակի բացահայտում ու վերլուծությունը,

- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու սահմանազատումը:

- առաջնային սպասարկման և սոցիալական ենթակառուցվածքի անհրաժեշտ կազմի առաջադրումը և տեղաբաշխումը,

- համայնքի համար հիմնական հեռանկարային ուղղությունների զարգացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,

- միասնական քաղաքաշինական միջավայրի ձևավորմանը միտված՝ համայնքների տարածքում կառուցապատման սահմանափակումների և չափորոշիչների համակարգի մշակումը:

Նախագծում հաշվի են առնվել նաև.

- Նախագծային տարբեր կազմակերպությունների կողմից մշակված մարզի առանձին բնակավայրերի գլխավոր հատակագծերը: ՀՀ Կառավարության, շահագրգիռ նախարարությունների, ՀՀ ՀՀ կադաստրի կոմիտեի, ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, Գեղարքունիք 1-ում ներառված համայնքների ելակետային տվյալները, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:

- ՀՀ կադաստրի կոմիտեի կադաստրային քարտեզները:

- «Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և կառավարության կողմից հաստատված (10.04.03 N 610-Ն) «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ» հիմնադրույթները:

Նախագծում հաշվի են առնված ՄԵՄԱԹ-ի «Հիմնադիր սկզբունքները Եվրոպական մայր ցամաքի կայուն զարգացման» և «Հայաստանում Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի» միջոցառումների և տարածքային պլանավորման փոխկապակցվածության սկզբունքները, որոնք կարելի է խմբավորել հետևյալ բլոկներով.

- Տնտեսության կայուն զարգացում՝
 - Արդյունաբերություն,
 - Գիտատար արդյունաբերական արտադրություն,
 - Ագրոարտադրական համալիր,
 - Ռեկրեացիա, հատկապես տուրիզմ,
 - Փոքր և միջին բիզնես,
 - Բնապահպանական միջոցառումներ:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

- Քաղաքաշինության կայուն զարգացում՝
 - Բնակելի շինարարություն,
 - Բնակելի-կոմունալ շինարարություն,
 - Լանդշաֆտի ռացիոնալ օգտագործում,
 - Բնապահպանական միջոցառումներ:
- Ինժեներական, տրանսպորտային և տեխնիկական ենթակառուցվածքների կայուն զարգացում՝
 - Տրանսպորտ,
 - Ջրամատակարարում, ջրահեռացում,
 - Էներգամատակարարում,
 - Թափոնների օգտահանում,
 - Բնապահպանական միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքներ

- 1) Միկրոռեգիոնի և մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
- 2) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
- 3) Արդյունաբերության զարգացում
- 4) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
- 5) Տնտեսության դիվերսիֆիկացում և արտադրության գիտատար, ստեղծարար տեխնոլոգիաների ճյուղերի զարգացում
- 6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
- 7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
- 8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
- 9) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
- 10) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդլայնում
- 11) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

Գլուխ 1

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Գեղարքունիքի մարզում ցանկացած գործունեության դեպքում պետք է պահպանվեն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթերը:

Նախագծի շրջանակում միկրոռեգիոնների տարածքները դիտարկվում են որպես քաղաքաշինական ընդհանուր հիմնախնդիրներով շաղկապված տարածական միավորներ և որպես միասնության անբաժանելի մասեր կազմող վարչատարածքային միավորների՝ համայնքների համախումբ, որոնք ընդհանուր հիմնախնդիրների շարքում, պահանջում են ընդհանրությունից և յուրահատկությունից բխող համապատասխան քաղաքաշինական լուծումների առաջադրում:

Տվյալ բաժնում կատարվել է առկա վիճակի վերլուծություն ըստ հետևյալ ենթաբաժինների.

- Տարածաշրջանի սահմաններում բնական և անտրոպոգեն հողօգտագործումների ամրագրում,
- Սահմանվել են տարբեր նպատակային նշանակության հողօգտագործումների նկատմամբ վերգետնյա կամ ստորգետնյա սահմանափակումների համալիրը,
- Վերլուծվել են ընթացիկ մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը և դրանց իրականացման գործընթացը:

1.1. Համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի վերլուծություն¹

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջանակում դիտարկվել են համայնքի կողմից մշակված հնգամյա սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական նախանշումները, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթի՝ միջոցով կանոնակարգելով նախանշումների տարածական տեղաբաշխումը՝ մարդու համար անվտանգ, հարմարավետ ու գեղագիտական առումով գրավիչ կենսամիջավայրի ձևավորմամբ: Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի՝ 2022-2026թ. թ. 5-ամյա զարգացման ծրագրի առանցքում համայնքային ռազմավարական ուղղությունների ուրվագծումն է, որոնց շնորհիվ որդեգրվելու է զարգացման մի նոր փուլ: Ծրագրում նախանշված հիմնական ուղղություններն են.

1. Տարածաշրջանի մարդկային և բնական ռեսուրսների կառավարում.

- Սևանի տարածաշրջանի ռեսուրսների արդյունավետ, նպատակային կառավարում և օգտագործում.
- Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում, միացյալ ծրագրերի և նախաձեռնությունների իրականացում.
- Տարածաշրջանի մտավոր ներուժի համախմբում, լավագույն ավանդույթների շարունակում, արվեստագետների բանկի ստեղծում.
- Քաղիասարակության և հասարակական կազմակերպությունների միջոցով ոչ ֆորմալ կրթական հարթակների ստեղծում.

¹ https://sevancity.am/upload/DocFlow/Projects/Th2282514082941711_Sa2271621385931711_5amya2022.pdf

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

- Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդական զբաղվածության և առաջ մղման խնդիրների լուծում՝ համագործակցությամբ ոլորտում հաջողություններ գրանցած ընկերությունների և անհատների հետ.
- Խրախուսել տարածաշրջանում աշխատատեղերի ստեղծման նպատակով ներդրում կատարողների, նպաստել փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը.
- Գյուղաբնակ և քաղաքաբնակ կանանց առաջխաղացման ծրագրերի մշակում.

2. Տարածաշրջանի ենթակառուցվածքների պահպանում, բարելավում, ճանապարհաշինական ծրագրերի իրականացում

- Սևանի քաղաքային զբոսայգու վերականգնում՝ տեղական բյուջեի, բարերարների և դրամաշնորհային ծրագրերի միջոցով՝ այն դարձնելով մշակույթի և ժամանցի տարածաշրջանային զբոսայգի.
- Բակային տարածքների ճանապարհների բարեկարգում, տարածքների կանաչապատում.
- Ներհամայնքային և միջհամայնքային փողոցների, ճանապարհների հիմնանորոգում, բարեկարգում, պահպանում.
- Սևանի տարածաշրջանի բնակավայրերում գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում, էներգախնայող համակարգի ներդրում.
- Տարածաշրջանում վերականգնող էներգետիկային ուղղված ծրագրերի իրականացում, էներգաարդյունավետ և էներգախնայող տեխնոլոգիաների ներդրում.
- Բնակավայրերի ջրամատակարարման, ջրահեռացման ներքին ցանցերի վերանորոգում.

3. Գյուղատնտեսության կայուն զարգացում

- Բնակավայրերում ոռոգման համակարգերի գործարկում, արդիականացում.
- Անասնապահությանն ու անասնաբուծությանն ուղղված ծրագրերի խրախուսում.
- Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման լիզինգի ծրագրերի շրջանակներում տեխնիկայի հավաքակազմի համալրմանն ուղղված ծրագրերի ներդրում և խրախուսում.
- Ջերմատնային տնտեսությունների հիմնմանը նպաստող ծրագրերի խրախուսում.
- Խելացի անասնաշենքերի կառուցման ծրագրերի ներդրում.
- Կաթի, կաթնամթերքի արտադրության, վերամշակման, սպանդանոցների կառուցման ծրագրերի ներդրում.
- Դրամաշնորհային և պետական աջակցության ծրագրերի միջոցով տարածաշրջանի բնակավայրերում գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման արտադրամասեր ստեղծելուն ուղղված աշխատանքների իրականացում.
- Ներդրումային ծրագրերի շարունակականության ապահովում.

4. Նախադպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակության կազմակերպում, կրթական ծրագրերի ներդրման խրախուսում

- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգման, հիմնանորոգման, պահպանման և կահավորման ծրագրերի իրականացում.
- Արտադպրոցական և մշակութային հաստատությունների շենքերի հիմնանորոգում, կահավորում.

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

- Տարածաշրջանի մանկապարտեզներ չունեցող բնակավայրերում նախակրթարանների հիմնում, լավագույն փորձի տեղայնացում.
- «Գագարին» պրոյեկտի շարունակականության ապահովում.
- Տարածաշրջանի բնակավայրերում արվեստի և արհեստի խմբակների հիմնում.

5. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում

- Սևանի բիզնես կենտրոնի գործունեության միջոցով ստարտափերի ներդրում, գործարար միջավայրի բարելավում, ֆորումների կազմակերպում, ներդրումների խթանում և խրախուսում.
- Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ծրագրերի խրախուսում՝ համագործակցությամբ պետական և մասնավոր կառույցների.
- Ներդրումային ծրագրերի խրախուսման մեխանիզմների ստեղծում.

6. Մշակութային կյանքի կազմակերպում

- Տարածաշրջանի մշակութային արժեքների հարթակի ստեղծում, մշակութային արժեքների

պահպանմանն ուղղված ծրագրերի, փառատոնների իրականացում՝ համահունչ բնակավայրերի առանձնահատկություններին.

- Սևանի մշակույթի զարգացման ռազմավարության մշակում EU4Culture ծրագրի շրջանակներում՝ համագործակցությամբ հասարակական կազմակերպությունների.

7. Ֆիզիկական կուլտուրայի և ակտիվ ապրելակերպի խրախուսում

- Տարածաշրջանում մարզական կյանքի աշխուժացման, մասսայական սպորտի տարածման նպատակով միջոցառումների կազմակերպում, մարզադպրոցի և խմբակների բնականոն գործունեության ապահովում, համալրում սպորտային գույքով.
- Մարզական օբյեկտների, մարզա և խաղահրապարակների բարեկարգում, կառուցում, խաղամիջոցների տեղադրում.
- Համայնքի ղեկավարի գավաթի համար մրցախաղերի և մրցաշարերի անցկացում.
- Տարածաշրջանում ֆուտբոլի մասսայականացմանը ուղղված ծրագրի իրականացում.

8. Բնակարանային ֆոնդի պահպանում

- Բնակֆոնդի պահպանության և կառավարմանն ուղղված խնդիրների կարգավորում, օժանդակություն համատիրությունների գործունեությանը, վերահսկողական մեխանիզմների մշակում.
- Համայնքում առկա վթարային շենքերի սեյսմակայունության բարձրացման դրանց հետագա շահագործման նպատակահարմարության, 4-րդ կարգի վթարայնություն ունեցող շենքերի սեփականատերերին տարհանման և փոխհատուցման խնդիրների կարգավորման նպատակով համագործակցված աշխատանքի իրականացում համապատասխան գերատեսչությունների հետ.
- Բազմաբնակարան շենքերի էներգախնայող ծրագրերի իրականացում, համատիրությունների դերի բարձրացում.
- Բարձրահարկ բազմաբնակարան շենքերի վերելակների անխափան գործարկման

ապահովում.

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

- Տանիքաշինության ծրագրերի շարունակականության ապահովում.
- 9. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում, համայնքային գերեզմանատների պահպանում**
- Քաղաքաշինական ճիշտ պլանավորմանն ուղղված միջոցառումների իրականացում.
- «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» միջոցով տարածաշրջանում աղբահանության արդյունավետ համակարգի ներդրում.
- Կոմունալ տնտեսության տեխնիկական պարկի թարմացում և համալրում.
- Մաքուր միջավայրի ապահովում.
- Շրջակա միջավայրի պաշտպանության, բնապահպանական խնդիրների լուծման նպատակով համալիր ծրագրերի իրականացում՝ համագործակցելով տեղական և միջազգային կազմակերպությունների հետ.
- 10. Հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում**
- Միջբնակավայրային և ներքաղաքային երթուղիների կազմակերպում, համակարգային ծրագրերի իրականացում.
- Ճանապարհային ենթակառուցվածքների կահավորում.
- Ճանապարհային երթևեկության անվտանգության համակարգի ներդրում.
- 11. Ջրուսաշրջության զարգացման խթանում**
- Սևանի տարածաշրջանի ճանաչելիություն բարձրացման, զբոսաշրջային գրավչությունների ավելացման նպատակով տարածաշրջանի բրենդի մշակում.
- Տարածաշրջանի բնակավայրերում զբոսաշրջությունը խթանելու նպատակով ենթակառուցվածքների զարգացում, գործող ենթակառուցվածքների բարելավում հյուրատների գործունեության ապահովում, նորերի հիմնման ծրագրերի խրախուսում.
- Մշակութային, ագրո, էկո, ժամանցային և արկածային զբոսաշրջությանն ուղղված ծրագրերի մշակում, տարածաշրջանի զբոսաշրջային գրավչությունների ճանապարհային քարտեզի ստեղծում.
- Սևանի տարածաշրջանի պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված ծրագրերի իրականացում՝ համագործակցությամբ տեղական և միջազգային կազմակերպությունների.
- 12. Համայնքում անվտանգությանն ուղղված խնդիրների լուծում**
- Համայնքի բնակիչների անվտանգությունն ապահովող ենթակառուցվածքների բարելավում.
- Քաղաքացիական պաշտպանության ոլորտում բնակչության իրազեկվածությանն ուղղված ծրագրերի և վարժանքների իրականացում.
- Աղետների, ռիսկերի կառավարմանն ուղղված համալիր ծրագրի մշակում.
- Համայնքային ենթակայության և բազմաբնակարան շենքերի սեյսմակայունության ապահովում:

1.2. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ

1.2.1. Մարզի ընդհանուր նկարագիրը

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Գեղարքունիք - մարզի կարգավիճակ ունեցող վարչատարածքային միավոր Հայաստանի արևելքում: Սահմանակից է հյուսիսում՝ Տավուշի, արևմուտքում՝ Կոտայքի և Արարատի, հարավում՝ Վայոց ձորի մարզերին, արևելքում՝ Ադրբեջանի հանրապետության Գետաբեկի, Դաշքեսանի և Թովուզի շրջան-ներին, հարավ-արևելքում՝ Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանին:

Գտնվում է ծովի մակերևույթից 2000-3500 մ բարձրության վրա՝ զբաղեցնելով մոտ 5351 կմ² (535131.8 հա) տարածք: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-



արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ:

Մարզը զբաղեցնում է պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի մի հատվածը, հիմնականում Գեղարքունիքի, Սոթքի և Արեգունու գավառները:

Գեղարքունիքն ամենախոշոր մարզն է և զբաղեցնում է ՀՀ տարածքի 18%-ը /5351.318 քառ.կմ/:

Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաք՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 87 գյուղական բնակավայրեր: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: Այն հիմնադրել են 1830թ. Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից վերաբնակեցված հայերը՝ պատմական Գավառականի տեղում: Խորհրդային իշխանությունների տարիներին քաղաքը կոչվել է՝ սկզբում Նոր Բայազետ, ապա՝ Կամո:

Գավառը նախախորհրդային Հայաստանի չորս քաղաքներից մեկն էր: Նրա բնակչությունը գյուղատնտեսությունից բացի զբաղվում էր արհեստագործությամբ ու առևտրով: Արդյունաբերությունը թափ առավ խորհրդային տարիներին: Կառուցվեցին սարքաշինական, էլեկտրատեխնիկական, տեքստիլ ու սննդի արդյունաբերության գործարաններ, որոնց շնորհիվ Գավառը դարձավ Հայաստանի աչքի ընկնող արդյունաբերական կենտրոններից մեկը: Այժմ քաղաքում գործում են նաև կրթական, կուլտուր-լուսավորական ու առողջապահական՝ մարզային նշանակության կենտրոններ:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Մարզի տարածքով անցնում է Երևան - Սևան - Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին:



Գեղարքունիքը տարանցիկ գոտի է մերձավորարևելյան և եվրոպական ու ասիական բազմաթիվ երկրների համար: Իրանից դեպի Սևծովյան ավազանի երկրներ տանող ամենակարճ ճանապարհն անցնում է Սևան-Մարտունի-Գետափ, Սևան-Դիլիջան երթուղիով: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

Մարզի տարածքի 1/4-ը ծածկված է ջրով: Այստեղ է գտնվում բարձր լեռնային (բարձրությունը ծովի մակերևույթից 1900 մ) եզակի էկոհամակարգով Սևանա լիճը, որի մակերեսը կազմում է 1.26 հազ. քառ. կմ, ծավալը 35.8 մլրդ. խմ: Սևանա լիճը Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է, որը հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա: Կենսաբանական բազմազանության պահպանությունն ուղղված է Սևանա լճի ավազանի բնական պաշարների երկարաժամկետ օգտագործման կարգավորմանը, որը կնպաստի ոչ միայն ավազանի, այլև ողջ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը:

2001 թվականի մայիսի 15-ին ընդունված «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով Սևանա լիճը բնորոշված է որպես Հայաստանի Հանրապետության բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման (այսուհետ՝ վերարտադրություն), պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները: Սևանա լիճը Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանն է: Օրենքի 10-րդ հոդվածով կանոնակարգված է սահմանված Կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում գործունեության իրականացումը:

1. Կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում արգելվում է Սևանա լճի էկոհամակարգի վրա վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած տեսակի գործունեություն:

2. Անմիջական ազդեցության գոտում արգելվում են՝

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	40.91	34.57	38.74	114.22	74.3	182.7	341.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	16.65	17.11	18.83	52.59	1.70	44.4	63.8
Տեղումները լճի մակերևույթի վրա	44.2	30.7	23.3	98.2	33.4	71.5	131.7
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	3.30	5.70	7.90
Ընդամենը	104.36	84.98	83.57	272.91	165.3	288.5	463.4
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	12.2	94.6
Գոլորշացում լճի մակերևույթից	11.7	15.2	26.0	52.9	23.0	53.0	82.2
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.50	1.10	1.70
Ընդամենը	12.1	15.6	26.4	54.1	24.0	67.1	144.8
Կուտակում (նվազում)	63.9	64.2	115.5	243.6	25.8	221.3	454.6
Բացարձակ անկապ	28.36	5.18	-58.33	-24.79		1.30	
Հարաբերական անկապ %	27.2	6.10	41.1	8.33	0.10	4.60	22.9

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.51	1278.606	38.1895
Ամսվա վերջին օրը	1900.70	1280.406	38.4331
Միջին ամսական	1900.60	1279.459	38.3047

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում 0.19 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.22 31.05.22 ընթացքում 0.27 (մ)
 31.05.22 և 31.05.21 մակարդակի տարբերությունը - 0.20 (մ)

Գեղարքունիքի մարզում կարելի է հանդիպել նախաուրարտական և ուրարտական ժամանակաշրջանների բերդերի, ամրոցների, բնակավայրերի, հնավայրերի հետքեր, սեպագիր արձանագրություններ: Լճից ազատված տարածքներից հայտնաբերվել են մինչև հինգհազարամյա հնության դամբարաններ:

Երկար ժամանակ լճի անունը բացատրվում էր հայերեն սև և վանք բառերից, որոնք



Սևանավանք

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

բնութագրում էին Սևանավանքը: Վերջինս կառուցել էր Սյունիքի իշխանուհի Մարիամ Բագրատունին սև տուֆից (9-րդ դար):

Սևանա լճի ափին կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել է ուրարտական սեպագիր արձանագրություն, որը թվագրվում է մ.թ.ա. 9-6-րդ դարերին: Այն թույլ է տալիս եզրակացնել, որ անվանումը կարող է ուրարտերեն լինել. սունիա նշանակում է «լիճ»:

Ուշ միջնադարում լիճը կոչվել է նաև «Գյոքչա», որը թարգմանաբար նշանակում է «կապույտ ջուր»: 1901 թ. հրատարակված Յուժակովի հանրագիտարանում նշված է նաև հին պարսկերեն անվանումը՝ Գաոսրավագա:

Գյոյություն ունի լճի անվանման ծագման երկու ավանդություն.

- Սևանա լճի տեղում առաջ ցամաք է եղել՝ անտառապատ բլուրներով, ծաղկավետ դաշտերով ու բերրի վարելահողերով: Գյուղին մոտիկ բլրի տակ եղել է մի ջրառատ աղբյուր, որից ջուր վերցնելիս գյուղացիները հանում էին ակունքի մեծ փակիչը և ապա զգուշությամբ հարմարեցնում տեղում:

Մի երեկո գյուղի հարսներից մեկը ջրի է գնում աղբյուրը, հանում է փակիչը, կուծը լցնում ու գալիս տուն՝ մոռանալով փակել ակունքը: Ջուրը դուրս է հորդում, ծավալվում չորս կողմ, երբ հասնում է տնակներին, բնակիչները փախչում են, ասելով «Քար դառնա ով բաց է թողել ակունքը»: Եվ մոռացվոտ հարսը քար է դառնում, իսկ ջուրը անընդհատ հոսելով գոյացնում է Սևանա լիճը, որի երեսից հազիվ վեր է բարձրանում քարացած հարսի գլուխը՝ Հարսնաքարը:

- Վանեցիները գաղթում և վերաբնակվում են Սևանի ափերին՝ որոշելով, որ դա էլ մի Վան է: Բայց հետո տեղի ցուրտ ու դաժան կլիման դուր չի գալիս նրանց: Նրանք հիշում են իրենց երկրի մեղմ ու տաք բնությունը, իրենց բարեկեցիկ կյանքը և դառնորեն կանչում՝ «Սև Վան եկավ մեր գլխին, սև Վան»: Ու այդպես էլ լճի անունը մնում է Սևան:

Պատմահայր Մովսես Խորենացին Սևանա լիճն անվանում է «Գեղամա ծով»: Նման անվանում հանդիպում է նաև Խորենացուց մի քանի դար հետո գրված «Հայոց պատմություն» աշխատության մեջ, որի հեղինակը Հովհաննես Դրախտանակերտցին է), ինչպես նաև Կիրակոս Գանձակեցու և այլ պատմիչների աշխատություններում: Լիճը հայտնի է նաև «Գեղարքունյաց ծով», «Գեղարքունի», «Սևանգա» և այլ անուններով:

Այսպիսով, հայ պատմագրության մեջ այն կոչվել է ոչ թե լիճ, այլ ծով: Սևանա լճի այդ անվանումները կապված են Հայկ նահապետի ժառանգներից մեկի՝ Գեղամի անվան հետ:

Նրա անունն են կրում նաև Գեղամա լեռնաշղթան, Գեղամասար լեռը և Գեղամասար գետը, Գեղամավան ու Գեղամաբակ գյուղերը և այլն:



1.3. Ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Սևանա լճի հյուսիս-արևելյան և հյուսիսային ափերով անցնում է ակտիվ տեկտոնական ճեղքվածք՝ 0.5-0.6 սմ/տարի շարժումով: Գրունտների

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում: Կապիտալ շինարարության համար առավել բարենպաստ են մարզի հարավային և արևմտյան հատվածները, որտեղ գրունտների առավելագույն արագացումները տատանվում են 0.5-0.6 սմ/տարի:

Ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (1325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3598 մ): Բարձր լեռներ են Սպիտակասարը (3555 մ), Վարդենիսը (3522 մ), Գեղասարը (3446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ), առկա են նաև խառնարանային լճեր՝ Աժդահակ և Արմաղան (մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ):

Գոգավորության հյուսիսային մասով ձգվում են Արեգունու, հյուսիս-արևելյան մասով Սևանի լեռնաշղթաները, իսկ արևելյան մասով Արևելյան Սևանի լեռնաշղթան, որը օղակ է Սևանի ու Վարդենիսի լեռնաշղթաների միջև: Եթե Արեգունու և Սևանի լեռնաշղթաների Գեղարքունիքի մարզի սահմաններում գտնվող լանջերը զառիթափ են ու կտրտված, ապա Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են, որտեղ այդ լեռների բազմաթիվ հրաբխային կոներից դուրս ժայթքած լավան հրաբխային լեռնալանջերից բացի առաջացրել է նաև սարավանդներ, քարակարկառներ: Մարզի հենց այս հատվածներում էլ՝ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, որոնք շատ հարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Այն կազմում է շուրջ 10000 հեկտար՝ մարզի վարելահողերի մոտ 12.3%:

Սևանա լճի հարավային և արևմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով:



1.4. Բնակլիմայական պայմանները

1.4.1. Կլիմա

Գեղարքունիքի մարզը յուրահատուկ է իր առողջարար կլիմայով:

Կլիման բարեխառն լեռնային է. ձմեռները ցուրտ են, առաջանում է կայուն ձնածածկույթ: Հունվարյան միջին ջերմաստիճանը $-5^{\circ}-10^{\circ}$ է: Ամառները տաք են, արևոտ, գերիշխում են քիչ ամպամած եղանակները:



«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Միջին ջերմաստիճանն հասնում է $+18^{\circ}+20^{\circ}$: Տեղումները շատ չեն՝ 400-450 մմ, իսկ բարձրադիր շրջաններում մինչև 1000 մմ: Գրեթե մշտական և ուժեղ քամիների ազդեցության տակ են Սոթքի, Սեմյոնովկայի, Վարդենյաց լեռնանցքները, մարզի լեռնային և հարթավայրային գոտիները:

Գեղարքունիքի մարզը բնութագրվում է շատ առատ արևափայլով, արևային օրերի քանակը կազմում է 300 օր: Տարեկան արևափայլի միջին տևողությունը հասնում է ավելի քան 2700-2800 ժամ/տարի:

Սևանա լիճը նկատելիորեն մեղմացնում է ավաիներձ գոտու ձմռան սառնամանիքը և ամռան շոգը:

ՀՀԵՆ II-7.01-2011

**ՀԱՎԵԼՎԱԾ 1
(պարտադիր)**

Աղյուսակ 1.1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Գավառ	1961	-7.5	-6.3	-2.5	3.9	8.9	12.5	15.7	15.8	12.0	6.7	0.6	-4.8	4.6	-33	34
Սևան քաղաք (ք.)	1937	-8.2	-7.4	-3.3	3.5	8.8	12.1	15.7	15.7	12.2	6.4	0.6	-5.5	4.2	-33	32
Սեմյոնովկա	2104	-7.4	-7.1	-4.0	2.4	7.3	10.4	13.3	13.3	10.0	5.6	0.3	-4.8	3.3	-26	33

ՀՀԵՆ II-7.01-2011

Աղյուսակ 1.2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Գավառ	71	71	69	66	69	70	70	71	68	69	70	71	70	63	50
Սևան, լճ.	74	75	74	71	74	73	73	73	69	68	71	74	72	67	63
Սևան, ք.	81	80	77	72	73	72	70	68	65	69	76	82	74	75	53
Սեմյոնովկա	82	85	83	80	81	82	84	85	79	77	78	81	81	79	72

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ՀՀՀՆ II-7.01-2011

Աղյուսակ 1.4. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (ԻՊՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %									ըստ ուղղությունների				Անհունությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական տեղումներ, ի/մլ	Միջին տարեկան արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում
			Միջին արագությունը, մ/վ															
			Հյուսիս սահյին (Հս)	Հյուսիս- Արե վելյան (ՀսԱրլ)	Արե վելյա ն (Արլ)	Հարավ- Արե վելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ- Արև մույան (ՀվԱրմ)	Արև մույան (Արմ)	Հյուսիս- Արև մույան (ՀսԱրմ)								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Գավառ	803,2	հունվար	15	6	13	9	14	15	20	8	52	2,1	1,8	31	25	27	29	
			1,2	1,1	1,1	2,6	1,9	2,2	2,0	1,8								
		ապրիլ	18	8	20	9	10	11	18	6	63	2,2						
			1,5	1,5	1,3	2,2	2,9	2,5	2,3	1,5	56	1,6						
		հուլիս	35	15	20	7	5	4	6	8	54	1,7						
			1,4	1,2	1,1	1,3	1,5	1,0	1,0	1,2								
		հոկտեմբեր	21	9	14	6	8	10	23	9								
			1,2	1,1	1,0	1,3	1,4	1,5	1,6	1,4								
Սևան ք.	805,5	հունվար	3	2	2	2	1	7	58	25	13	4,2	3,3	25	24	26	28	
			4,1	4,0	3,3	2,7	2,9	5,3	5,4	3,7	20	3,3						
		ապրիլ	5	9	23	8	4	16	28	7								
			3,9	3,7	3,2	2,5	3,8	6,3	5,5	3,4								
		հուլիս	18	35	31	6	3	2	3	2	33	2,7						
			4,7	4,1	3,2	2,7	2,1	2,5	3,1	2,8								
		հոկտեմբեր	7	5	7	3	4	15	45	14								
			4,0	3,8	2,7	2,2	2,3	5,3	4,3	2,7								

ՀՀՀՆ II-7.01-2011

Աղյուսակ 1.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն , մմ													Ձնածածկույթ		
	ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Գավառ	17	19	33	44	72	72	61	46	40	38	30	17	489	37	96	99
	35	30	52	40	54	56	69	60	74	49	42	23	74			
Սեմյոնովկա	32	41	60	81	116	97	63	49	49	61	50	33	732	124	145	409
	21	30	46	42	54	81	69	41	51	68	48	31	81			
Սևան լճ.	14	19	28	53	87	76	49	37	33	43	29	16	484	71	121	
	13	24	33	29	38	51	56	55	35	55	31	16	56			
Սևան ք.	25	30	40	65	103	79	50	40	37	51	38	25	583	93	136	252
	21	26	26	52	46	45	43	74	44	59	50	26	74			

1.4.2. Մարզի բնական պայմանները և հարստությունները

Գեղարքունիքի մարզը հիմնականում զբաղեցնում է Սևանա լճի ջրհավաքավազանը: Գեղամա և Վարդենիսի լեռներում բազմաձև են տասնյակ հրաբխային կոներ:



«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Հատկապես ուշագրավ են Աժդահակ և Արմաղան հրաբուխները, որոնց ձագարձն խառնարաններում գոյացել են գեղեցիկ լճակներ:

Գլխավոր լեռնաշղթաներն են՝ Գեղամա, Արեգունի, Սևանի, Արևելյան Սևանի, Վարդենիսի:

Վարդենիսի, Գեղամա, Փամբակի, Սևանի, Արեգունու և Արևելյան Սևանի բարձրաբերձ լեռնաշղթաների հսկայական թասի մեջ, ծովի մակարդակից 1900,47 մ բարձրության վրա է գտնվում աշխարհի ամենախոշոր քաղցրահամ լճերից մեկը՝ Սևանը, որի ծավալը 33,2 կմ³ է, մակերեսը՝ 1238 կմ²:

Լիճը.

Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավարևելյան կամ Մեծ Սևան, հյուսիսարևմտյան կամ Փոքր Սևան: Լճի առավելագույն խորությունը 83.3 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.8 մ, ավի շրջագիծը մոտ 230 կմ: Պարկը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա, որի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147,456 հա, իսկ առանց լճի հայելու՝ 19,359 հա (2016թ.): Պահպանական գոտու տարածքը կազմում է 342,920 հա:

5. Պարկը բաժանվում է հետևյալ տարածագործառնական գոտիների. արգելոցային (7,464 հա, որից ցամաքային՝ 4,289 հա), արգելավայրային (2,652 հա, որից ցամաքային՝ 2,359 հա), ռեկրեացիոն (4,753 հա) և տնտեսական (11,266 հա)³:

Այն համարվում է հայ ժողովրդի գլխավոր խորհրդանիշերից և ուխտավայրերից մեկը: Հսկայական է նաև Սևանի համաշխարհային ու համամարդկային նշանակությունը, քանի որ այն մի կողմից խմելու ջրի հսկայական պաշարներով հարուստ ջրամբար կարող է ծառայել Կովկասի ու Մերձավոր արևելքի երկրների համար, մյուս կողմից հանդիսանում է բնական ու անկրկնելի առողջարան՝ իր անսպառ հնարավորություններով, զանազան գրավչություններով:

Սևանա լիճը սնում են 28 գետեր ու գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Առավել ջրառատ գետեր են համարվում Արգիճին, Գավառագետը, Մասրիկը, Ջկնագետը, Մաքենիսը, Վարդենիսը: Սակայն 1981թ.-ից լիճը սնող հիմնական երակը 48 կմ երկարություն ունեցող Արփա-Սևան թունելային ջրատարն է, որով տարեկան լիճ է տեղափոխվում 250 միլիոն մ³ ջուր⁴: Լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը:

Գետի անվանումն առաջին անգամ հանդիպում է հին հայկական հեղինակների՝ մասնավորապես Սեբեոսի (Հուրագղան տեսքով) և Մովսես Խորենացու մոտ (ավելի հին, Հրազդան): Ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ² է (առանց Սևանա լճի): Սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավարևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով ու թափվում Արաքսը:

Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150 մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Բնական պայմաններում Հրազդանի սնումը 62,5%-ով ստորերկրյա է, հորդացումը՝ զարնանային, վարարումները՝ ամռանն ու աշնանը:

³ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=93458>

⁴ <https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%80%D5%B8%D5%BF%D5%A1%D5%B6-%D4%B1%D6%80%D6%83%D5%A1-%D5%8D%D6%87%D5%A1%D5%B6>

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ջրի տարեկան միջին ծախսը 22,6 մ³/վրկ է, առավելագույնը՝ 138 մ³/վրկ, նվազագույնը՝ 9 մ³/վրկ, տարեկան հոսքը 712 միլիոն մ³:

Հրազդանի վրա կառուցվել են Սևանի, Հրազդանի, Արգել, Արգնիի, Քանաքեռի, Երևանի ՀԷԿ-երը, մի շարք ջրանցքներ, Երևանյան լիճը:

Սևանա լճի սնման աղբյուրների մեջ ամենազվազանը գետերն են (28 գետ և գետակ), որոնք տարեկան Սևանա լիճն են լցնում 780 մլն. մ³ ջուր (Արփա գետի հաշվառումով 1016.5 մլն մ³): Մթնոլորտային տեղումների քանակը լճի վրա 380 մմ-ից չի անցնում: Գետերը ստեղծում են բավական խիտ ցանց (խտությունը 0.4-0.6 կմ/կմ²): Գետերի սնման հիմնական աղբյուրներն են ստորերկրյա ջրերը (Գեղամա լեռնավահանի արևելյան լանջի և Վարդենիսի լեռնաշղթայի արևելյան մասերի գետերը) և մակերևութային ջրերը (Արեգունի, Սևանի լեռնաշղթաների գետերը):

Սևանի ավազանի գետերից մեծերն են՝ Գավառագետը, Արգիճին, Վարդենիսը, Մասրիկը, Ձկնագետը, Կարճաղբյուրը, Մարտունին:

Գավառագետն ունի 24 կմ երկարություն, միջին տարեկան ծախսը 3.5 մ³/վրկ, գարնանային վարարումների ժամանակ հասնում է երբեմն 15 մ³/վրկ:

Արգիճի գետի երկարությունը 51 կմ է, տարեկան միջին ծախսը կազմում է 5 մ³/վրկ, գարնանային վարարումների ժամանակ հասնում է մինչև 30 մ³/վրկ:

Վարդենիս գետի երկարությունը 28 կմ է, բազմամյա միջին ծախսը՝ 1.7 մ³/վրկ, գարնանային վարարումների ժամանակ հասնում է 20 մ³/վրկ:

Մասրիկ գետն ունի 45 կմ երկարություն, տարեկան միջին ծախսը 3.76 մ³/վրկ է:

Ձկնագետն ունի 21 կմ երկարություն, տարեկան միջին ծախսը՝ 1 մ³/վրկ, ամռանը և ձմռանը խիստ սակավաջուր է:

Սևանա լիճը իր ֆիզիկական, քիմիական, կենսաբանական ցուցանիշներով համարվում է խմելու համար բարձրորակ բնական ջրամբար և այդ տեսակետից՝ ՀՀ ռազմավարական գերակայական նշանակություն ունեցող բնական պաշար:

Ցավոք⁵, սկսած 30-ական թվականներից Սևանա լճի ջրի ինտենսիվ և ոչ հաշվենկատ օգտագործման հետևանքով խախտվել է լճի հավասարակշռությունը՝ առաջ բերելով ջրակենսաբանական պրոցեսների և ամբողջ էկոհամակարգի խաթարում, որի շարունակման դեպքում վտանգվում է Սևանա լճի՝ որպես քաղցրահամ ջրամբարի գոյությունը:

Հաշվի առնելով Սևանա լճում ընթացող էկոլոգիական և սոցիալ-տնտեսական խիստ բացասական հետևանքները՝ դեռևս 60-ական թվականներից ՀՀ կառավարությունը մշակել և իրականացրել է մի շարք միջոցառումներ Սևանա լճի մակարդակը նվազագույնը 6 մետրով բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով 1961 թ. սկսվել և 1981 թ.-ից շահագործման է հանձնվել Արփա-Սևան 48 կմ-ոց ջրատարի կառուցումը, որի շնորհիվ տարեկան Սևանա լիճ է տեղափոխվում մոտ 300 մլն մ³ ջուր:

Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացումը

Լճի ջրի մակարդակի բարձրացման հիմնական միջոցառումներն են՝

ա) Որոտան-Արփա հիդրոհանգույցի շահագործումը, որի շնորհիվ Սևանա լիճ տարեկան լրացուցիչ կտեղափոխվի մինչև 165 մլն մ³ ջուր:

բ) Արփա-Սևան ջրատարի կայուն աշխատանքի ապահովում, որի շնորհիվ Սևանա լիճ կտեղափոխվի շուրջ 300 մլն մ³ ջուր:

գ) Եղվարդի ջրամբարի շահագործումը, որի շնորհիվ Սևանա լճից կտնտեսվի մինչև 100 մլն մ³ ջուր:

դ) Մարմարիկի ջրամբարի նախագծանախահաշվարկային փաստաթղթերի պատրաստումը:

⁵ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=77102>

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ե) Սևանա լճից ջրառի արդյունավետ մեխանիզմների ներդրումը և ջրառի չափաքանակների աստիճանական նվազեցումը:

Սևանա լիճ թափվող գետերի հիդրոէներգետիկ նշանակությունը փոքր է, միջին և ստորին հոսանքներում գետերը սակավաջուր են:

Գեղարքունիքի մարզը յուրահատուկ է իր լճափնյա հնագույն հուշարձաններով ու մշակույթի օջախներով, բուսական և կենդանական աշխարհի առանձնահատկություններով, բնական միջավայրի գեղեցկությամբ:

Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, բայց առանձնապես ուշագրավ են բնական հուշարձանները՝ խառնարանային լճերը, խարամային կոները, ընդարձակ քարային ծովերը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սևանա ճից ազատված տարածքներում հայտնաբերված մինչև 5000-ամյա հնության դամբարանները:

Սևանի ավազանն արգավանդ հողերով հարուստ է, հատկապես կարևոր է Մասրիկի դաշտը՝ 1900-2200 մ բարձրություններում:

Մարզի 4 քաղաքները՝ Գավառը, Սևանը, Մարտունին, Վարդենիսը տեղակայված են ինտենսիվ յուրացված տարածագոտիներում և շրջապատված են արժեքավոր գյուղատնտեսական հողերով, իսկ Վարդենիս, Գավառ, Մարտունի քաղաքները տեղակայված են արտեզյան, խմելու, հանքային ջրերի ավազանների վրա:

Հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ), որոնցից 180-ը պատկանում են ագարիկալ սնկերին, 55-ը՝ աֆիլոֆորայիններին, իսկ 32-ը՝ գաստերոմիցետներին: Ընդ որում սնկերը հիմնականում հանդիպում են քայքայված բնափայտի, կոճղերի, գոմաղբի և ավազուտների վրա, այսինքն՝ պատկանում են քսիլոտրոֆ և պսամոտրոֆ էկոլոգիական խմբերին, իսկ պահպանական գոտու սնկերը ավելի բազմազան սուբստրատների վրա են զարգանում: Նշված մակրոսկոպիկ սնկերից շուրջ 100 տեսակը ուտելի են, որոնցից առավելապես տարածված են և վաճառվում են շուկաներում հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*), կոճղասունկ մարգագետնային (*Marasmius oreades*), շամպինիոն սովորական (*Agaricus campestris*), շամպինիոն դաշտային (*Agaricus arvensis*), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (*Coprinus comatus*), շարքասնկերից (*Tricholomataceae*)՝ կոճղասունկ աշնանային (*Armillaria mellea*), լեպիստա մանուշակագույն ոտիկով (*Lepista personata*), շարքասունկ հողամոխրագույն (*Tricholoma terreum*): Բացի այդ, հանդիպում են նաև 58 տեսակի մակրոսկոպիկ 14 սնկեր, որոնք ունեն բուժիչ հատկություններ: Դրանք են՝ ագարիկոմիցետներից 28 տեսակներ, աֆիլոֆորոմիցետներից 17 տեսակներ և գաստերոմիցետներից 8 տեսակներ: Բնակչությունը չի օգտագործում այդ սնկերը, քանի որ տեղեկացված չեն դրանց օգտագործման ձևերին և բուժիչ հատկություններին: 24 տեսակի սնկեր թունավոր են: Դրանցից են՝ խոզուկասունկ (*Paxillus involutus*), կեղծ կոճղասունկ (*Hypholoma fasciculare*), ճանճասպան հովազային (*Amanita pantherina*), շամպինիոն դեղնամաշկ (*Agaricus xanthodermus*), գոմաղբասունկ թեփուկավոր (*Coprinus picaceus*), սարդոստայնասնկեր (*Cortinarius*), թելիկասնկեր (*Inocybe*), շարքասնկեր (*Tricholoma*) ցեղերի որոշ տեսակներ և այլն: Տեղացի բնակիչները այդ տեսակները կոչում են զարշասնկեր (պոզանկա), խուսափում են հավաքել և թունավորման դեպքերը հազվադեպ են: Սևանա լիճը շրջապատող լեռների և դրանց լանջերի տարբեր դիրքադրությունների, հողերի տիպերի, ռելիեֆային առանձնահատկությունների և այլ հանգամանքների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ, լավ է արտահայտված նաև ուղղահայաց գոտիականությունը:

Գեղամա և Վարդենիսի լեռների լանջերին ներկայացված են լեռնային տափաստանային համակեցությունները (ծովի մակարդակից 1900-2200 մ), որոնցում գերիշխում են շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*), բարակոտնուկ սանրածն (*Koeleria cristata*), փետրախոտ տխուր (*Stipa tirsa*) և այլ հացազգիները: Դրանցում զգալի են

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

տրագականտային աստրագալների և ուրցի բազմաթիվ տեսակների մասնակցությունը: Բարձրության հետ տափաստանները փոխարինվում են լեռնային մարգագետնատափաստաններով, որտեղ համակեցություններում գերիշխում են շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*), շյուղախոտ ոչխարային (*Festuca ovina*), բոշխ ցածր (*Carex humilis*), դաշտավլուկ մարգագետնային (*Poa pratensis*) և այլ տեսակները:

Ծովի մակարդակից 2300 մ-ից բարձր բուսականության բնույթն աստիճանաբար փոխվում է դեպի մերձալպյան մարգագետինները, որոնց առավել տիպիկ ներկայացուցիչներից են բարակտունուկ սանրաձև (*Koeleria cristata*), դաշտավլուկ ալպյան (*Poa alpina*), գարի մանուշակագույն (*Hordeum violaceum*), բրոմոպսիս խայտաբղետ (*Bromopsis variegata*), քոսքոսիկ կովկասյան (*Scabiosa caucasica*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), զանգակ խմբված (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկ (*Betonica macrantha*), երեքնուկ (*Trifolium*) տարբեր տեսակներ և այլն: 2700-3200 մ բարձրությունները զբաղեցնում են ալպյան ցածրախոտ մարգագետինները և ալպյան գորգերը, ուր հաճախ հանդիպում են զանգակ եռատամ (*Campanula tridentata*), խատուտիկ Ստեննի (*Taraxacum stevenii*), բերենիկե բոգային (*Veronica gentianoides*), շյուղախոտ ոչխարային (*Festuca ovina*), բոշխ տխուր (*Carex tristis*) և մի շարք այլ տեսակներ:

Լեռնային լանջերի որոշ ձորերում հանդիպում են թփուտներ՝ կազմված հիմնականում մասրենու (*Rosa spinosissima*, *R.canina*) և ասպիրակի (*Spiraea crenata*) տեսակներից: Թփուտները լավ են արտահայտված լճի հյուսիս-արևելյան ափին, Սևանի և Արեգունու լեռնաշղթաների լանջերին և Արտանիշ թերակղզում: Այդպիսիք են՝ արոսենու (արոսենի Կուզնեցովի (*Sorbus kuznetsovii*), արոսենի, ծախսնձոր (*S.aucuparia*), արոսենի Հայաստանի (*S.hajastana*), արոսենի հունական, ասպաբ (*S.graeca*)), մասրենու (*Rosa spinosissima*, *R.canina*), ասպիրակի (*Spiraea crenata*), 15 ալոճենու (*Crataegus orientalis*), ուռենու (*Salix caprea*) և մի շարք այլ թփատեսակների համակեցությունները: Արեգունու լեռնաշղթայի լանջերին, ինչպես նաև լճի հյուսիսային մասում (Սևանի լեռնաշղթա) ստորին գոտին կազմում են տրագականտային աստրագալների թփուտները՝ գազ ոսկեգույն (*Astragalus aureus*), գազ մանրագլուխ (*A.microcephalus*), գազ գլունեյի (*A.gjunaicus*) և այլն:

Ավելի բարձր, 2000-2100 մ-ից վերև, մարգագետնատափաստանային բուսականության հետ մեկտեղ տարածված են արևելյան կաղնու (*Quercus macranthera*) մնացորդային կաղնուտները և չորասեր թփերի ու տափաստանային խոտաբույսերի մասնակցությամբ գիհու նոսրանտառները: Վերջիններս բավականին ընդարձակ տարածքներ են զբաղեցնում Զիլ, Դարանակ, Բաբաջան և Արտանիշ գյուղերի մոտ: Գերակայող տեսակներն են գիհի բազմապտուղը (*Juniperus polycarpus*) և գիհի երկարավունը (*J.oblonga*), որոնք կազմում են ինչպես մոնոդոմինանտ այնպես էլ խառը սառցիաղային: Առանձին տարածքներում գիհիներին միանում են այլ թփատեսակներ՝ ասպիրակի (*Spiraea crenata*, *S.hypericifolia*), արոսենի Հայաստանի (*Sorbus hajastana*), արոսենի հունական, ասպաբ (*S.graeca*) և այլն: Գիհի սաբինան (*J. Sabina*) և գիհի փովոդը (*J. depressa*) որոշ տարածություններ են զբաղում նաև մերձալպյան գոտում, երբեմն նույնիսկ տափաստանային գոտում: Սևանա լճի ավազանում բավականին տարածված են նաև բուսականության այնպիսի էքստրագոնալ տիպեր, ինչպիսիք են փլուզուտային, քարացրոնային և ժայռային բուսականությունը: Դրանք առանձին հատվածներով հանդիպում են բոլոր բարձունքային գոտիներում:

Ինչ վերաբերում է ջրային բուսականությանը, ապա անմիջապես Սևանա լճում, ըստ ջրի խորության և պարզության, այն կազմում է երկու արտահայտված գոտի՝ մակրոֆիտների (հիմնականում ծաղկավոր բույսեր) և խարային ջրիմուռների ու ջրային մամուռների: Ծովինար, Նորատուս, Զոլաքար, Մարտունի, Լիճք գյուղերի մերձափնյա տարածքներում կան ոչ մեծ ճահիճներ, ուր աճում են բոշխ կարճամազ (*Carex hirta*), դուն երկար (*Cyperus longus*), դուն թուխ (*C.fuscus*), ճլախոտ թաբերնեմոնթանի (*Schoenoplectus tabernaemontani*) և շատ այլ տեսակներ: «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու ֆլորայի Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 48 տեսակներ, որոնցից հազվագյուտ են և արժանի են ուշադրության միայն 13-ը ընդ որում՝ 6-ը համարվում են անհետացած տեսակներ: «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող 23 էնդեմիկ տեսակներից առավել ուշադրության են արժանի 18-ը: «Սևան» ազգային պարկի տարածքում հայտնաբերված մակրոմիցետներից 10-ը հազվագյուտ են և ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքի թեկնածու սնկերի ցանկում:

1.8. Կենդանական աշխարհը

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են Փափկամարմինների (*Mollusca*) 43 տեսակներ, որոնք պատկանում են խիտունջներին և լորձամույրուսկներին, և Հողվածոտանիների 639 տեսակներ, որոնք պատկանում են միջատներին (անողնաշարավոր կենդանիների): Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որը հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում: Երկարաչանչ խեցգետինը (*Pontastacus leptodactylus*) Սևանա լճում հայտնաբերվել է 70-ական թվականների վերջին՝ պատահական ներմուծման շնորհիվ: Լիճ լցվող գետերում խեցգետին չի հանդիպել, սակայն խեցգետինը բավականին շատ է Սևանից սկիզբ առնող Հրազդան գետում: Երկարաչանչ խեցգետինը, ի տարբերություն այլ տեսակների, չի ձմեռում:

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (*Sevan Trout-Salmo ischchan* Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (*S. ischchan aestivalis*), Ձմեռային բախտակ (*S. ischchan ischchan*), Գեղարքունի (*S. ischchan gegarkuni*), Բոջակ (*S. ischchan danilewskii*): Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը 1920-30-ական թվականներին լճում կլիմայավարժեցված սիգն է (*Whitefish-Coregonus lavaretus*): Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (*Khrami carp-Varicorhinus capoeta sevangi*) և Սևանի բեղլուն (*Sevan 17 barble-Barbus goktschaicus*): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (*Crucian carp-Carassius auratus gibelio*), որը պատահաբար լիճ է ներթափանցել Արարատյան դաշտի ջրային համակարգերից: 1987 թվականից Սևանա լճի երկու էնդեմիկ տեսակ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղլուն, ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Հանդիպում են երկկենցաղների հետևյալ 4 տեսակները, որոնք պատկանում են Ցատկողներ (*Salientia*) կարգին՝ լճագորտ (*Rana ridibunda*), փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*), կանաչ դողոշ (*Bufo viridis*), Շելկովնիկովի ծառագորտ (*H.a.shelkovnikovi*):

Հանդիպում են սողունների 16 տեսակներ, որոնցից 11 տեսակներ պատկանում են մողեսներ (*Lacertilia*) կարգին, իսկ 5 տեսակ՝ օձեր (*Serpentes*) կարգին: Դրանցից

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են խայտաբղետ մողեսիկը (*E.a.transcaucasica*) և փոքրասիական մողեսը (*Lacerta parva*):

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են թռչունների 267 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգաբանական խմբերին՝ սուզակներ (Podicipediformes) - 7 տեսակ, ձկնկուլ (Pelecaniformes) - 4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (*Ciconiiformes*) - 11 տեսակ, ֆլամինգո (*Phoenicopteriformes*) - 1 տեսակ, գիշատիչներ (*Falconiformes*) - 30 տեսակ, սագեր, բադեր, կարապներ (*Anseriformes*) - 28 տեսակ, հավազգիներ (*Galliformes*) - 3 տեսակ, կռունկ, փարփար (*Gruiformes*) - 9 տեսակ, որոր, կտցար, քարադր (*Charadriiformes*) - 49 տեսակ,



աղավնազգիներ (*Columbiformes*) - 4 տեսակ, կկուներ (*Cuculiformes*) - 1 տեսակ, բու (*Strigiformes*) - 3 տեսակ, այծկիթ (*Caprimulgiformes*) - 1 տեսակ, մանգաղաթներ, ծիծեռնակներ (*Apodiformes*) - 5 տեսակ, մեղվակեր, հոպոպ, ալկիոն (*Coraciiformes*) - 5 տեսակ, փայտփոր, վիզգցուլ (*Piciformes*) - 4 տեսակ և ճնճղուկանմաններ (*Passeriformes*) - 102 տեսակ: Թռչնատեսակներից 39-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Դրանցից մեկը՝ Հայկական որորը (*Laurus armenicus*) էնդեմիկ տեսակ է: Ազգային պարկի տարածքում կան 26 տնտեսապես կարևոր նշանակություն ունեցող թռչնատեսակներ: Դրանցից կոնչան բադը, կարմրագլուխ սուզաբադը, քարակաքավը, լորը, սովորական տատրակը, թխակապույտ աղավնին, անտառային աղավնին և այլն հետաքրքրություն են ներկայացնում որսի տեսանկյունից:

Դիտարկվող տարածաշրջանում հանդիպում են կաթնասունների 44 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին՝ միջատակերներ (*Insectivora*) - 7 տեսակ, կրծողներ (*Rodentia*) - 15 տեսակ, նապաստակներ (*Logomorpha*) - 1 տեսակ, չղջիկներ (*Chiroptera*) - 7 տեսակ, գիշատիչներ (*Carnivora*) - 11 տեսակ և սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (*Artiodactyla*) - 3 տեսակ:

Վերը նշված կենդանիների կարգաբանական խմբերից շատ տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, այդ թվում, կաթնասուններից՝ ջրասամույրը, գորշ արջը, անտառային կատուն, բեզուարյան այծը, սողուններից՝ խայտաբղետ մողեսիկը (*E.a.transcaucasica*) և փոքրասիական մողեսը (*Lacerta parva*), իսկ թռչուններից՝ ձկնկուլը, սովորական ֆլամինգոն, Հայկական որորը (*Laurus armenicus*), որը համարվում է էնդեմիկ տեսակ: Սևանա լճի երկու էնդեմիկ ձկնատեսակներ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղլուն նույնպես ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Դիտարկվող տարածքին բնորոշ են և ամենուրեք հանդիպում են՝ խայտալեզաքիսը, ջրասամույրը (գետերի և գետակների հունների երկայնքով): Չնայած դրան, պարկն ունի իրեն բնորոշ կենդանական կազմը, որոնք հաճախ հանդիպում են մեծ պոպուլյացիաներով, ինչպես օրինակ՝ մեծ քնամուկը (*Glis glis*), պարսկական սկյուռը (*Sciurus persicus*), անտառային մուկը (*Apodemus sylvaticus*), այծյամը (*Capreolus capreolus*), լայնականջ ոգնին (*Tadarida teniotis*) և այլն:

1.9. Լանդշաֆտների դասակարգումը և գնահատականը

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ավագանի բնական ցամաքային էկոհամակարգերն են՝ մարգագետինները, մարգագետնատափաստանները, տափաստանները, անտառային և նոսրանտառային մնացորդային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված հողագրունտային համալիրներ: Բազմաբնույթ բուսական էկոհամակարգերի առկայությունը արգասիք է լիճը շրջաերիզող լեռնային բարձրավանդակների նպաստավոր աշխարհագրական դիրքի: Ջրավազանը գտնվում է ֆլորիստական տեսակետից միմյանցից խիստ տարբերվող Կովկասյան մեզոֆիլ, իրանական քսերոֆիլ և միջերկրածովյան ջերմախոնավասեր ֆլորիստիկ մարզերի շփման վայրում: Այդ մարզերի ֆլորաների ազդեցությունների, ջրավազանի բնապատմական ինքնատիպ պայմանների, ծովի մակերևույթի նկատմամբ ունեցած բարձր դիրքի, ռելիեֆի խիստ կտրվածության, երկրաբանական բարդ անցյալի, հողի և կլիմայի բազմազանության պատճառով և տարածաշրջանի բուսական աշխարհի բազմազանությունը լանդշաֆտային էկոհամակարգերը ձեռք են բերել արտակարգ հարուստ ու խայտաբղետ կազմ: Ըստ բիոմորֆ հատկանիշների էկոհամակարգերի մեծ մասը (90%-ով) ունի խոտային կազմ: Ծառաթփային են միայն կաղնու, կեչու և գլխու մնացորդային անտառային խմբավորումները: Բնական էկոհամակարգերի կառուցվածքում գերիշխում են մարգագետինները, տափաստանները, մարգագետնատափաստանները:

1.9.1. Զբոսաշրջություն

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջությունն իր զարգացման տեմպերով և արդյունքներով երկրի առավել դինամիկ զարգացող ճյուղերից է: Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության նպատակները սահմանված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով:



Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում՝ պայմանավորված.

- 1) զբոսաշրջային այցելությունների քանակի աճով,
- 2) զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ,
- 3) աշխատատեղերի ստեղծմամբ:

Զբոսաշրջությունն ինչպես կառավարության, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ճանաչված է որպես տարածաշրջանի տնտեսական զարգացման հիմնական առանցքային ոլորտ:

Մարզի զբոսաշրջությունը հիմնականում կենտրոնացած է Սևանա լճի շրջակայքում և, որպես կանոն, կրում է խիստ արտահայտված սեզոնային բնույթ:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Բնակլիմայական պայմանները, կենդանական ու բուսական աշխարհը, Սևանա լճի անկրկնելի ֆլորան և տարածքի կենտրոնական դիրքը այս հատվածը դարձնում են ամառվա ամենաշատ հաճախումներ ունեցող վայրերից մեկը:

Շնորհիվ աշխարհագրական դիրքի՝ տարածաշրջանը մշտական տրանսպորտային կապի մեջ է ՀՀ գրեթե բոլոր մարզերի հետ: Այն գտնում է մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող մայրուղիների վրա, որը հեշտացնում է տեղափոխումը: Հասանելի է ինչպես միջհամայնքային հանրային տրանսպորտը, այնպես էլ տաքսի ծառայությունները: Գործում է Երևան – Սևան մարդատար երկաթուղին:



Զբոսաշրջությունը հանդիսանում է մարզի բնակչության զբաղվածության հիմնական աղբյուրներից մեկը: Զբոսաշրջությունն ունի մեծ

ներուժ և համապատասխան ենթակառուցվածքներ զբոսաշրջության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցման և սպասարկման համար, մասնավորապես՝ առողջական, էկո, էքստրիմ և ջրային զբոսաշրջության ենթաոլորտներում: Տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման նախադրյալներից մեկը առկա բարենպաստ և մեղմ ամառային կլիման է: Մինչ ամառվա ընթացքում Արարատյան դաշտը և Հայաստանի Հանրապետության հարավային շրջանները տառապում են չափազանց բարձր ջերմաստիճանի հետևանքով (մինչև 40° C), Սևանում օդի ջերմաստիճանը տատանվում է 23-ից 28 աստիճանի միջակայքում (երեկոյան ժամերին ջերմաստիճանը 22-25 ° C է):

Սևան ազգային պարկի պաշտպանական գոտում գրանցված է 1489 պատմական և մշակութային հուշարձան: Այսօր այս հնագիտական և պատմական հուշարձանները ևս մեծապես նպաստում են շրջանում մշակութային, կրթական և գիտական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և այլ զբոսաշրջության տեսակների զարգացմանը:



Միևնույն ժամանակ, տարածաշրջանը հետաքրքիր է ոչ միայն իր պատմության և մշակութային վայրերով. այն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության առավել զարգացած վայրերից մեկն է: Այստեղ են գտնվում բազմաթիվ հյուրանոցներ, տարաբնույթ հանգստի կենտրոններ: Տարածաշրջանը համարվում է ջրային սպորտի և զբոսաշրջության զարգացման լավագույն վայրերից մեկը:

Մարզի տարածքում գործում են 57 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ հյուրանոցային համալիրներ, հյուրանոցային քոթեջներ, քարե և փայտե տնակներ, հյուրընկալության ընտանիքներ և այլն:



«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Սակայն տարածաշրջանի տնտեսական ներուժը բազմազան է: Արագ զարգացող զբոսաշրջությանը զուգահեռ առկա է զարգացած առևտրի ու ծառայությունների ոլորտ:

Առևտրի ոլորտը տարածաշրջանի տնտեսության երկրորդ խոշորագույն ոլորտն է: Աշխարհագրական կենտրոնական դիրքը և ճանաչված տուրիստական վայր լինելը մեծապես նպաստում են այս ոլորտի զարգացմանը: Առևտրի մեջ ներգրավված փոքր ընկերությունները տեղակայված են տարածաշրջանի բոլոր մասերում, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում, ճանապարհային և ափամերձ գոտիներում:

Տարածաշրջանի մրցակցային առավելությունները

- » Սևանա լիճ,
- » «Սևան» ազգային պարկը և պարկի պահպանման տար պատմական, մշակութային և բնական հուշարձանները (12 – 21 դարեր),
- » բարենպաստ կլիմա, միջավայր,
- » արևափայլի տևողությունը 23%-ով բարձր է Հայաստանի միջինից (ժամ/տարի),
- » աշխարհագրական կենտրոնական դիրք, տրանսպորտային խաչմերուկի դեր – Թբիլիսի – Սևան – Իրան, Երևան – Սևան – Արցախ/Սյունիք – Երևան – Երվանդան – Սևան – Արցախ/Սյունիք,
- » զբոսաշրջության ենթակառուցվածքների առկայությունը՝ կազմակերպման մեծ փորձ,
- » նորմաժության մեծ հակվածություն տեղական ՓՄՁ-ների կողմից:

«ԾՈՒՎԱԳՑՈՒՂ» ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ



զբոսաշրջության ոլորտում

Գոստըրջու թյ սն սրժնշղթայ ի հիմնական օղակները



Պու մներ և ժամանց

Այս երկու ոլորտները դեռևս թույլ են զարգացած՝ չնայած տուրիզմի զարգացման գործում դրանց հիմնաքարային նշանակությանը: Գնումներից հիմնականում հասանելի

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսյալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

են սննդի խանութները, որոնք տեղակայված են ինչպես ափամերձ համայնքներում, այնպես էլ ճանապարհամերձ հատվածներում: Հիմնական տեսարժան վայրերի մոտակայքում գործում են փոքր տաղավարներ, որտեղից հնարավոր է գնել փոքր հուշանվերներ: Գնումների ոլորտը կանոնակարգված չէ: Թե՛ գնային, թե՛ որակական և տեսականու առումով հուշանվերների վաճառքը մրցունակ չէ և հիմնականում իրականացվում է սովերային տարբերակով: Հուշանվերների և զբոսաշրջիկների պահանջներից բխող այլ ապրանքների վաճառքի ցանցի զարգացումը կարող է բավականին բարձրացնել զբոսաշրջության ոլորտի արդյունավետությունը՝ զուգահեռ ապահովելով նաև ժամանցի մասնակի կազմակերպումը տարածաշրջանում:

Սևանի տարածաշրջանը, հանդիսանալով նախևառաջ ափամերձ տարածք, առաջարկում է ծովափնյա հանգստի բազմաթիվ տարբերակներ: Բոլոր տարբերակները հիմնականում վերաբերում են պասիվ հանգստին՝ ավազապատ ափամերձ գոտիներ, բացօթյա տաղավարներ և այլն: Զարգացման մեծ պոտենցիալ ունի ջրային սպորտը՝ այս պահին տարածաշրջանում հասանելի են սպորտային մոտորանավակների վարձույթը և մոտորանավակներով շրջագայությունը լճի վրա: Ժամանցի հաջորդ հիմնական հնարավորությունը այցելություններ են դեպի տարածաշրջանի տեսարժան վայրեր: Այցելությունները կազմակերպվում են ինչպես զբոսաշրջիկների կողմից՝ ինքնուրույն տարբերակով, այնպես էլ մասնագիտացված տուրեր կազմակերպող կազմակերպությունների կողմից: Տեսարժան վայրերի, հնավայրերի և բնական հուշարձանների հնարավորությունները օգտագործվում են շատ փոքր քանակությամբ՝ միայն Սևանի ազգային պարկում գրանցված 1489 նման վայրերից այցելության համար օգտագործվում են մոտ երկու տասնյակը:



Հիմնական բացահայտումներն ու առաջարկությունները գնումների և ժամանցի ոլորտում

1. մասնագիտացված վաճառքի տաղավարների և խանութների հիմնում,
2. ջրային սպորտաձևերի զարգացում,
3. քայլարշավների, ճանաչողական և արկածային տուրերի ստեղծում և մատուցում,
4. երեկոյան հանգստի պայմանների ստեղծում՝ ներկայացումներ, համերգներ և այլն:

1.9.1.1. Զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներն ու դրա նշանակությունը մարզի համար

Մարզում զբոսաշրջությունը բնութագրվում է խիստ արտահայտված սեզոնայնությամբ: Ներգնա զբոսաշրջիկների գերակշռող մեծամասնությունը, մասնավորապես հանգստի նպատակով մարզ այցելողները՝ հատկապես Սևանա լիճ են

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ժամանում հունիս-սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում, իսկ տարվա մնացած հատվածում զբոսաշրջիկների թիվը խիստ պակասում է:

Որպեսզի մարզում տարվա բոլոր եղանակներին զբոսաշրջությունը զարգանա, անհրաժեշտ է ներդնել այլընտրանքային զբոսաշրջություն՝ ձմեռային սպորտաձևեր, որսորդություն, ձկնորսություն, նավագնացություն, առագաստանավային սպորտ, ալպինիզմ, որոնց համար կան բոլոր նպաստավոր պայմանները: Սևանում հնարավոր է զարգացնել սպորտային և էքստրեմալ զբոսաշրջությունը, ներառյալ ջրային և ոչ ջրային սպորտաձևերը: Զրային սպորտաձևերից կարելի է առանձնացնել առագաստային սպորտը, թիավարությունը և դայվինգը: Ոչ ջրային սպորտաձևերի ընտրությունն ավելի մեծ է՝ վազքից և հեծանվավազքից մինչև պարազլայդինգ, ալպինիզմ և ձիասպորտ: Հաշվի առնելով Սևանա լճի շրջակայքի ռելիեֆը և եղանակային պայմանները, տարածաշրջանում հնարավոր է զարգացնել դահուկային սպորտը (լեռնային և դահուկավազք): Ձմեռային հանգիստն առավել հրապուրիչ դարձնելու համար կարելի է կազմակերպել սիորդական բիատլոնի մրցումներ, որը կհրապուրի ոչ միայն դահուկավազքի, այլև հրաձգության սիրահարներին: Սպորտային տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ կլինի ստեղծել համապատասխան ենթակառուցվածքներ՝ սպորտային բազաներ, դահուկային վագուղիներ, ճոպանուղի և այլն:

Զբոսաշրջությունը տարբեր միջոցներով կարող է նպաստել համայնքների զարգացմանը: Զբոսաշրջության աճը կմեծացնի բնամթերքի նկատմամբ պահանջարկը, ինչն էլ, իր հերթին, կխթանի գյուղատնտեսությունը: Խիստ քաղաքաշինական նորմերի պահպանումն ու ենթակառուցվածքների զարգացումը կբերի զբոսաշրջության աճին: Բնապահպանական միջոցառումները (Սևանա լճի ջրի, օդի և ափամերձ տարածքի պահպանում) կմեծացնեն տարածաշրջանի գրավչությունը զբոսաշրջիկների համար և այլն:

➤ Զբոսաշրջիկների համար համայնքային բնակիչների կողմից կազմակերպած միջոցառումները կամ տոները, նրանց նկատմամբ ցուցաբերած հյուրասիրությունը նպաստում են համայնքի սոցիալական ակտիվությանը, իսկ զբոսաշրջության որոշոտում ստեղծած աշխատատեղերը և դրանց արդյունքում ստացվող եկամուտները խթան կհանդիսանան տեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելուն:

➤ Զբոսաշրջությունը նպաստում է հանրային ծառայությունների զարգացմանը, և կարող է բարձրացնել բնակչության կենսամակարդակը գյուղական բնակավայրերում: Այն ներառում է բարելավված ճանապարհային և հաղորդակման ենթակառուցվածքները, առողջապահության և տրանսպորտի ոլորտների բարելավումը, նոր սպորտային և հանգստի համար նախատեսված զանազան համալիրները, հանգստի, սպասարկման, զվարճանքի և հասարակության համար նախատեսված այլ վայրեր:

➤ Զբոսաշրջությունը կարող է մեծապես ազդել մշակութային և պատմական ավանդույթների վերականգմանը, պահպանմանն ու փոխանցմանը, ինչը հաճախ իր հերթին նպաստում է բնական ռեսուրսների պահպանմանն ու ռացիոնալ օգտագործմանը, ազգային ժառանգության պահպանմանը, մշակույթի, արվեստի և արհեստագործության զարգացմանը:

➤ Զբոսաշրջությունը նպաստում է բնակչության մոտ բնական և մշակութային ռեսուրսների թե՛ ֆինանսական նշանակության գիտակցության և թե՛ դրանց նկատմամբ հպարտության զգացման բարձրացմանը՝ մեծացնելով դրանք պահպանելու ձգտումը:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

➤ Զբոսաշրջությունից ստացված եկամուտները կարող են ուղղվել ինչպես ենթակառուցվածքների զարգացմանը, այնպես էլ շրջակա միջավայրի պահպանության բարձրացմանը: Զբոսաշրջությունը նպաստում է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, շրջակա միջավայրի պահպանությանը և կենսաբազմազանության վերականգնմանը, շրջակա միջավայրի պահպանության, հասարակության գիտակցության բարձրացմանը:


➤ Երկրի և մարզի նկարագրի ձևավորումը նպաստում է վերջինիս միջազգային ճանաչմանը, միջազգային հարաբերությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանմանը:

1.9.2. Մարզի բնակչությունը

ՀՀ Գեղարքունիքի մարզն իրենից ներկայացնում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը, գյուղական բնակչությունը տեղաբաշխված է անհամամասնորեն: Մարզի գյուղական համայնքներում մեծ տեսակարար կշիռ են կազմում խոշոր գյուղական բնակավայրերը, որտեղ բնակվում են մարզի գյուղական բնակչության՝ 67.7%, խոշոր բնակավայրերի թիվը 21 կամ բնակավայրերի՝ 23.4%, իսկ փոքր գյուղական համայնքներում բնակվում են գյուղական բնակչության մոտ՝ 13%, փոքր բնակավայրերի թիվը՝ 47 կամ գյուղական բնակավայրերի՝ 53.5%:

Բնակչության խտությունը կազմում է 43 մարդ/1կմ²: Ընդ որում մարզի մշտական բնակչության մեծամասնությունը կուտակված է Սևանի, Մարտունու և Գավառի տարածաշրջանում /բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա 76-101 մարդ/, այստեղ են բնակվում մարզի բնակչության շուրջ 77.8%, իսկ ամենացածր խտությունը՝ Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանում է՝ մեկ քառակուսի կիլոմետրի վրա 19-33 մարդ, որտեղ բնակվում են մարզի 22.2% բնակչությունը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՌԱՏԱՐԴԱՅԻՆ ԲՈՒՐՈՎ,
2019թ. հունվարի 1-ի դրությամբ
AGE AND SEX PYRAMID OF GEGHARKUNIK MARZ DE JURE POPULATION 2019 as of
January 1



«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ստորև
տրված
ներառված
ներկա
թվաքանակը.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ		
h/h	Բնակավայրը	2021թ.* հունվարի 1-ի դրությամբ
Գեղարքունիք-1		
1	ք. Սևան (Գագարին գյուղ)	18 959 1 746
2	Գեղամավան	1 804
3	Դոմաշեն	2 692
4	Զովաբեր	1 444
5	Լճաշեն	4 708
6	Ծաղկունք	1 013
7	Ծովագյուղ	4 418
8	Նորաշեն	456
9	Չկալովկա	529
10	Սեմյոնովկա	240
11	Վարսեր	2 034
Ընդամենը		40043

աղյուսակում
միկրոռեգիոնում
բնակավայրերի
բնակչության

* /աղբյուրը՝ <https://www.armstat.am/am/>

Դարերի ընթացքում մեծ փոփոխություններ է կրել մարզի բնակչության թե՛ թվաքանակը, թե՛ ազգային կազմը: Ուշ միջնադարում մարզի տարածք են թափանցել թուրքալեզու խաշնարած ցեղերը, որոնք այստեղ գերազանց արոտավայրեր են գտել: Տեղաբնիկների՝ հայերի թիվը պակասել է: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո մարզի տարածքում վերաբնակեցվել են զգալի թվով հայեր Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև՝ ռուս աղանդավորներ: Ներկայումս Գեղարքունիքի բնակչության ազգային կազմը միատարր է:

Ներկայումս Գեղարքունիքի մարզի բնակչությունը հիմնականում հայեր են, որոնք կազմում է ընդհանուր բնակչության 99.7%-ը: Կան նաև ռուսներ, հույներ, եզդիներ և այլ ազգեր: Ազգային փոքրամասնությունները հիմնականում ունեն ամուսնական կապեր հայերի հետ և տեղի է ունեցել ազգային առանձնահատկությունների միաձուլում հայկական ազգային ավանդույթների հետ:

Բնակչության թվաքանակը համայնքի գյուղական բնակավայրերում տատանվում է նվազագույնը 240-ից մինչև 4418: Փոքր բնակավայրերի թիվը 2-ն է: Բնակչության հեռանկարային թվաքանակի հաշվարկման նախկին մեթոդների անիրատեսական լինելու կապակցությամբ հաշվարկի հիմքում դրվել են նախկին տարիների բնական աճի,

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

միգրացիայի ցուցանիշների համադրումը: Այնուհանդերձ, տվյալ ցուցանիշները ևս ենթակա են փոփոխության:

1.9.3. Հողային ռեսուրսներ

Տնտեսական զարգացման համար հողատարածքն ունի իր որոշիչ նշանակությունը: Համայնքների հողային ֆոնդի առկայության համեմատական վերլուծությունը բացահայտում է գյուղատնտեսության տնտեսական զարգացման ներուժը և դրա առաջնային նախընտրելիության աստիճանը:

Նոր «Հողային օրենսգիրքը» ընդունվել է 2001 թվականի մայիսին, որի համաձայն՝ հանրապետության հողային ֆոնդը դասակարգվում է հետևյալ ենթակարգերի.

1. Գյուղատնտեսական
2. Բնակավայրերի
3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների
5. Հատուկ պահպանվող տարածքներ
6. Հատուկ նշանակության
7. Անտառային
8. Ջրային
9. Պահուստային:

Հայաստանը պատկանում է հողային ռեսուրսներով աղքատ երկրների շարքին: Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը կազմում է 2974.3 հազ հեկտար: Ընդ որում՝ գյուղատնտեսական արտադրության համար հնարավոր է օգտագործող ամբողջի 46.8%-ը:

Քանի որ հայկական լեռնաշխարհը, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, տիպիկ լեռնային երկիր է, ունի խիստ կտրտված մակերևույթ, տարածքի զգալի մասը ժայռեր են, այդ իսկ պատճառով գյուղատնտեսության համար պիտանի հողերը սահմանափակ են:

ՀՀ-ում առանձնացվում է հողերի հետևյալ գոտիները՝ կիսանապատային, չոր տափաստանային, տափաստանային, անտառային, լեռնամարգագետնային: Յուրաքանչյուր գոտում, կապված դրա տարբեր հատկություններից, ձևավորվում է յուրօրինակ հողատիպ:

Կիսանապատային գոտին իր հողատիպերով տարածված է ՀՀ 850-1250 մ բացարձակ բարձրություններում: Այս տիպ հողերի ավելի քան 95 %-ը գտնվում է Արարատի և Արամավիլի մարզերում, որոնք հանդիսանում են ՀՀ գյուղատնտեսական ամենահզոր մարզերը: Մարդածին ներգործության և տարածքի բնական պայմանների (լանջերի թեքություն) փոփոխության հետ կապված մեծանում է հողերի էրոզացվածության աստիճանը: Այստեղ հողերը համարվում են 45-70 %, տեղ-տեղ 70 %-ից ավելի էրոզացված:

Տափաստանային գոտին տարածված է ՀՀ 1300-2450 մ բացարձակ բարձրություններում: Այս տարածքներն օգտագործվում են որպես արոտավայրեր և վարելահողեր: Այս գոտում հողերը համարվում են միջին և ուժեղ էրոզացված:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Անտառային գոտին տարածված է ՀՀ 400-2400 մ բացարձակ բարձրություններում: Գոտին գյուղատնտեսական նպատակներով օգտագործվում է որպես արոտավայր և խոտհարք: Այստեղ էրոզացվածությունը բարձր է՝ 45 % և ավելի:

Լեռնամարագեղենային գոտին տարածված է ՀՀ 1900-3500 մ բացարձակ բարձրություններում: Այս գոտու հողերը օգտագործվում են որպես արոտավայրեր և խոտհարքներ: Գոտու հողերի էրոզացվածությունը հասնում է 15-20 %, տեղ-տեղ 45 % և ավելի, որը հիմնականում կապված է լանջերի մեծ թեքությունների հետ:

1.9.3.1. Հողային ռեսուրսների պահպանումը

Հողերի պահպանման գլխավոր ուղղությունը էրոզիայի դեմ պայքարն է: Էրոզիայի դեմ պայքարը բազմաբնույթ միջոցառումների համալիր է, որի նպատակն է պաշտպանել հողի վերին՝ առավել բերրի շերտը տեղատարումից, վերականգնել և բարելավվել հողատարածությունները: Հակաէրոզիոն և բարելավման միջոցառումների շարքում առանձնանում են հետևյալ առավել կարևորները.

- Առաջավոր ագրոտեխնիկան
- Հողաբարելավումը
- Հողերի վերականգնումը
- Պայքարը հողերի աղտոտման դեմ

Առաջավոր ագրոտեխնիկան հատուկ նշանակություն է տալիս հողի մշակմանը, որի ընթացքում ոչ միայն բացառվում է դրա քայքայումն ու տեղատարումը, այլև բարելավում է հողի վերին շերտի կառուցվածքը, հողը դառնում է ավելի արգավանդ: Լավ արդյունք է տալիս, օրինակ, թեք լանջերի հերկումը ոչ թե վերից վար, այլ լայնակի: Լայնակի վարուցանքի դեպքում դանդաղում է ջրի հոսքը, հետևաբար և նվազում հողի էրոզիան:

Միջոցառումների մի ամբողջ համալիր է իրենից ներկայացնում հողաբարելավումը՝ հողերի մելիորացիան: Հողաբարելավման բոլոր միջոցառումների հիմնական նպատակն ու արդյունքը նույնն է՝ հողային շերտի պահպանություն և բերրիության բարձրացում:

Հողերի մելիորացիայի տեսակները բազմազան են՝ մինչև 30 տեսակ: Դրանցից մի քանիսն ունեն նաև կարևոր հողապաշտպան, հակաէրոզիոն նշանակություն: Հատկապես աչքի է ընկնում ագրոանտառամելիորացիան, երբ ստեղծվում են դաշտապաշտպան անտառաշերտեր, կատարվում է զառիթափ լանջերի, ձորակներ և ավազուտների անտառապատում: Ագրոանտառամելիորացիան լավ արդյունք է տալիս հատկապես տափաստանային և անտառատափաստանային գոտիներում:

Հողերի պահպանության տարածված եղանակ է հողերի վերականգնումը (ռեկուլտիվացիա): Հողերի ռեկուլտիվացիան միջոցառումների մի համալիր է, որն ուղղված է մարդու կողմից խախտված հողերի վերականգնմանը: Հողաշերտը ամենից շատ խախտվում է բաց հանքերի շահագործման և լայնածավալ շինարարական աշխատանքների ժամանակ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո և արդեն սպառված հանքերի տեղում կատարում են հողի ռեկուլտիվացիա: Հողերի ռեկուլտիվացիան բաղկացած է երկու փուլից՝ տեխնիկական և կենսաբանական: Տեխնիկական ռեկուլտիվացիայի փուլում կատարվում է տարածքի հատակագծում և հարթեցում, այն ծածկվում է բերրի հողաշերտով: Դա այլ վայրերից բերվող կամ էլ նախկինում, շինարարական աշխատանքներն սկսելուց առաջ հավաքված ու տեղում կուտակված բերրի հողն է: Կենսաբանական փուլում կատարվում է քարերի հավաքում, հարթեցում, հողի վարուցանք, պարարտացում: Վերջնական փուլում կատարվում է ծառատունկ, բույսերի մշակում և խոտացանություն:

Հողային ռեսուրսները պահպանելու և վերականգնելու հետ միասին մարդիկ շահագրգռված են այդ ռեսուրսների ռացիոնալ օգտագործումով: Դա հողերի այնպիսի օգտագործումն է, երբ ոչ միայն պահպանվում ու բարելավվում են հողի հատկությունները,

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

այլև ստացվում է տնտեսական բարձր արդյունք: Հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ռացիոնալ միջոցներից են արհեստական ոռոգումը (իռիգացիա), գերխոնավ հողերի ցամաքեցումը, աղակալած հողերի լվացումը (քիմիական մելիորացիա), հողերի մաքրումը քարերից, ծառերի ու թփուտների կոճղերից:

1.9.3.2. Հողային ռեսուրսների պահպանության հեռանկարները Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունում մշակովի հողատարածքների սակավության պատճառով յուրացվում են նաև մեծ թեքության լանջեր, կտրտված ռելիեֆով, սելավավտանգ, ողողվող, ջրածածկման ենթակա հողամասեր, որի հետևանքով ուժեղանում է հողերի դեգրադացիան և ինտենսիվանում են սողանքային երևույթները: Արտոնավայրերի գերծանրաբեռնվածությունը, ճանապարհների բացակայությունը կապված վաղ զարնանը անասուններին լեռնային արոտները բարձրացնելու հետ, բարելավման միջոցառումների գրեթե բացակայությունը, անսիստեմ արածեցումը բերում է լանջերի խիստ թեքության պայմաններում բուսածածկույթի նվազմանը և հողերի աստիճանաբար քայքայմանը:

Տարբեր պատճառներով դեգրադացված հողերը հեշտությամբ են կորցնում վերականգնման հատկությունը, որն առաջացնում է կենսաբանական և տնտեսական արտադրողականության անկում և կորուստ:

Հողերի դեգրադացիայի դեմ պայքարելու հարցը Հայաստանում համարվում է առաջնակարգ խնդիր: Այն ճիշտ հիմքերի վրա դնելու համար ավելի արդյունավետ է դեգրադացիայի առաջացման կանխումը, քան պայքարել դրա հետևանքների դեմ, որն ավելի դժվար է ու պակաս արդյունավետ:

Վերը նշված խնդիրներից բացի, հարկ է անդրադառնալ նաև հողերի սեփականաշնորհման արդյունքում գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածությանը, որը մեծապես խոչընդոտում է այդ հողերի՝ որպես արտադրական գործոն կայացմանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության առանձին տարածաշրջաններում 1 տնատիրությանը բաժին հասնող հողատեսքերը տրոհված են 5-ից ավել հողամասերի միջև: Բացի այդ, առանձին տարածաշրջաններում մեկ տնտեսության հասանելիք հողաբաժնի ընդհանուր չափը չի գերազանցում 1 հեկտարը, որը նույնպես խոչընդոտում է արդյունավետ գյուղատնտեսական արտադրության կազմակերպմանը: Կարգավորման կարիք ունի նաև ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի, հատկապես անօգտագործելի հողերի պահպանությունը:

Հայաստանում հողերի վիճակի համակարգված, նպատակային լիարժեք մոնիտորինգ չի իրականացվել և ներկայումս էլ գրեթե չի իրականացվում: Այն կրում է էպիզոդիկ բնույթ, կատարվում է տարբեր կազմակերպությունների կողմից և բացակայում է ցուցանիշների հավաքագրման և վերլուծության համակարգումը:

1.9.3.3. Օրգանական և էկոլոգիական հողագործություն

Օրգանական և էկոլոգիական գյուղատնտեսությունը գյուղատնտեսական արտադրության բարելավմանն ու խրախուսմանը նպատակաուղղված համակարգ է, որը հողի բարելավումը դիտարկում է որպես հիմնական առանցք՝ որակյալ, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության գործում:

Օրգանական և էկոլոգիական գյուղատնտեսությունը բացառում է տոքսիկ պարարտանյութերի՝ պեստիցիդների, քիմիական պարարտանյութերի կիրառումը: Դրանց փոխարեն օգտագործվում են օրգանական պարարտանյութեր (հիմնականում՝ գոմաղբ) և վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարն իրականացվում է միայն բուսական

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

պատրաստուկներով, իսկ օրգանական սննդամթերքի արտադրության մեջ չեն կիրառվում արհեստական նյութեր և ճառագայթում:

Էկոլոգիական և օրգանական հողագործությունում ընդունված է, որ գոմադրը նպաստում է հողի ֆիզիկաքիմիական, կենսաբանական բնութագրերի և միկրոօրգանիզմների կոմպլեքսի բարելավմանը, հանդիսանում է բույսերին անհրաժեշտ սննդատարրերի հիմնական մատակարարը, իսկ այլ պարարտանյութերի օգտագործումը գյուղատնտեսության այս համակարգում ունի երկրորդական դեր: Հողի մշակման այս տեխնոլոգիաների հիմնական նպատակն է նպաստել նրա կենսաբանական ակտիվության բարձրացմանը: Օրգանական գյուղատնտեսության համակարգի արդյունավետության մակարդակն ավելի ցածր է, քան սովորական, ընդունված համակարգերում և կայուն գյուղատնտեսությունում: Այդ իսկ պատճառով օրգանական գյուղատնտեսությունից ստացված արտադրանքի վաճառքի գներն ավելի բարձր են:

Էկոլոգիական և օրգանական հողագործության հիմնական նպատակներն են. ապահովել սննդամթերքի առողջական անվտանգությունը, ստանալ որակյալ արտադրանք՝ բավարար քանակով և ողջամիտ արժեքով, պահպանել շրջակա միջավայրի բոլոր ռեսուրսների որակը և նվազագույնի հասցնել հողերի աղտոտումը:

Այս առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը բարենպաստ պայմաններ է ստեղծում սննդամթերք արտադրողների համար: Երաշխավորում է հասարակության առողջության պահպանումը, ապահովում է զարգացման համար անհրաժեշտ արտադրանքի ծավալները, աշխատանքային միջավայրի անվտանգությունը:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը խթանելու նպատակով 2015 թվականի սեպտեմբերից մեկնարկել է ԵՄ-ան կողմից ֆինանսավորվող Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն /ՕԳԱՆ/ դրամաշնորհային եռամյա ծրագիրը, որը համաֆինանսավորվում և իրականացվում է Ավստրիայի զարգացման գործակալության /ԱԶԳ/ կողմից: Ծրագրի հատուկ նպատակներն են Հայաստանում օրգանական արտադրանքի հավելյալ արժևորումը և համապատասխան պետական և մասնավոր հատվածի արդյունավետության բարձրացումը, բաղադրիչները՝ իրավական դաշտի բարելավումը, ֆինանսական աջակցության տրամադրումը և մարքեթինգային գործունեության բարելավումը:

Օրգանական գյուղատնտեսության զարգացումը մեծ կարևորություն ունի էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության համար, որին նպաստում է նաև պահանջարկի աճը:

Միկրոռեգիոնի բնակավայրերի հողերի բաշխումը տրված է ստորև աղյուսակում.

NN	Անվանումը	Չափման միավոր	Քանակ
1	2	3	4
1	Սևան ք.	հա	1784.68
2	Գեղամավան գ.	հա	3128.37
3	Դղմաշեն գ.	հա	4345.22
4	Զովաբեր գ.	հա	2876.54
5	Լճաշեն գ.	հա	5953.96
6	Ծաղկունք գ.	հա	3789.28
7	Ծովագյուղ գ.	հա	7314.92
8	Նորաշեն գ.	հա	1303.95
9	Չկալովկա գ.	հա	2585.21
10	Մեմյոնովկա գ.	հա	2947.55
11	Վարսեր գ.	հա	3659.59
Ընդամենն ըստ միկրոռեգիոնի		հա	39689.27

1.9.4. Բնակելի ֆոնդ

Տնային տնտեսությունների ապահովվածությունը բնակմակերեսով գյուղական համայնքներում գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա, իսկ քաղաքային համայնքներում մոտ է հարակից մարզերի ցուցանիշներին և շուրջ 25% գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը:

Բացի այդ, բնակելի ֆոնդը ըստ տեխնիկական վիճակի գտնվում է խարխուլից մինչև գերազանց վիճակում գտնվող նորակառույց առանձնատների վիճակում:

Բազմաբնակարան շենքերում առկա է 12277 բնակարան, որից՝ 11679-ը՝ քաղաքներում: Բազմաբնակարանային բնակելի ֆոնդը կազմում է 1 մլն 157 605 հազ. քմ.: Մարզում բազմաբնակարան շենքերի թիվը քաղաքային համայնքներում կազմում է 488, որից՝ ք. Գավառ՝ 73, ք. Սևան՝ 224, ք. Մարտունի՝ 35, ք. Ճամբարակ՝ 24, ք. Վարդենիս՝ 43:

218 բազմաբնակարան շենքեր ընդգրկված են 6 համատիրությունների մեջ:

Մարզի մի քանի բնակավայրերում առկա են ևս 54 բազմաբնակարանային շենքեր (2-4 բնակարաններով):

1.9.5. Տնտեսություն⁷

1.9.5.1. Գյուղատնտեսություն

ՀՀ Գեղարքունիքի մարզն ունի առավելապես գյուղատնտեսական ուղղվածություն:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 16.9%-ը:



Մարզում գյուղատնտեսությունում աշխատում է շուրջ 66 000 մարդ: Տարածաշրջանում լայն տարածում է գտել անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնարդյունաբերությունը (հիմնական հենքը Սևանա լիճն է), և բուսաբուծությունը՝ հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի մշակությունը: Մարզի գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի հանրապետության համար: Մարզում արտադրվում է հանրապետությունում արտադրվող հացահատիկի 20.3%-ը և կարտոֆիլի շուրջ 50%: Անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթի և մսամթերքի արտադրությունն է:

Զարգանում և տարածվում է այգեգործությունը: Մրգատու ծառերի ներկրված ցրտադիմացկուն տեսակներն ապահովում են բավականին բարձր արդյունավետություն:

Մարզի տարածքում գործում են մոտ 40 հազար գյուղացիական փոքր, միջին կամ խոշոր տնտեսություններ:

1.9.5.2. Արտադրություն



⁷ <http://>

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Գեղարքունիքի մարզում գործում են 27 արտադրական ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկությունների մեջ տեսակարար կշիռ ունեն ԳեոՊրոՄայնինգ, Աքվատիկ, Սևանի հացի գործարան, Հրանդ Կարապետյան, Ակունքի Էկոկաթ, Գավառի Սևան, Լճաշենի Արա-Արեգ և մի շարք այլ արտադրական ձեռնարկություններ:

Մարզում գործում են 529 առևտրային ձեռնարկություններ, այդ թվում՝ 2 սպառողական ապրանքների և 2 գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

1.9.5.3. Արդյունաբերություն

Արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Օգտակար հանածոներից մեծ արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), տորֆի, բազալտի, բնական շինանյութերի, հանքային ջրերի (Գավառ, Լիճք) և այլ պաշարները:

Հանքարդյունաբերության ոլորտում շահագործվում է 28 հանքավայրեր, որից՝ մեկ մետաղական (Սոթքի ոսկի), մեկ հանքային ջուր («ՄԵՎԱՆ» հանքային ջրերի գործարան), երկու ածխաթթվային հանքային ջրի (կորզվում է ածխաթթու գազ, մեկ քաղցրահամ ջուր, մեկ մերգելային կրաքար («Հրագդան ցեմենտ», 12 քարի, 6 ավազ, ավազակուպիչներ, մեկ գիպսաքար, երկու հրաբխային խարամ և մեկ տորֆ՝ Մասրիկի տորֆ),

Մարզում է գործում հանքահումքային արդյունաբերության մեջ մեծ կշիռ ունեցող «ԳԵՈՊՐՈՄՄԱՅՆԻՆԳ ԳՈՒԴ» ՍՊԸ-ն, որը մասնագիտացված է թանկարժեք մետաղների հանքարդյունահանմամբ, վերամշակմամբ և հանդիսանում է հանրապետության խոշոր կազմակերպություններից մեկը:

Արդյունահանվում է նաև որոշակի քանակությամբ շինանյութ՝ բազալտ, ավազ, կրաքար: Տորֆի առատ պաշարներ կան Վարդենիսի տարածքում: Տարիներ շարունակ հանրապետության տարբեր շրջաններ (հատկապես ջերմոցային տնտեսություններ ունեցողները) օգտագործել և օգտագործում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնքում գտնվող հանքավայրի տորֆը՝ որպես բնական անփոխարինելի պարարտանյութ:

1.9.5.4. ձկնաբուծություն

Սևանա լիճն իր եզակի ու հարուստ ֆլորայով և ֆաունայով կարևոր տեղ ունի հանրապետության կենսաբազմազանության համակարգում, իսկ կենսապաշարները՝ մասնավորապես ձկնային պաշարները, կարևոր տեղ են գրավում մարզի և հանրապետության բնակչության սննդաբաժնում: Սևանա լճի ավազանում ձկնաբուծության և ձկնարդյունաբերության զարգացումը կարող է ունենալ շատ կարևոր ռազմավարական նշանակություն ավազանի բնակավայրերի համար, որտեղ այն կարող է դառնալ հազվագյուտ եկամտաբեր ճյուղերից մեկը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել ոլորտի նորարարական զարգացումը՝ հիմնված ջրային, հողային և կենսաբանական ռեսուրսների պահպանության, վերարտադրության և բանական օգտագործման վրա, ինչպես նաև ապահովել հայրենական ձկնարդյունաբերության միջազգային մրցունակությունը:

Սևանա լճում սկզբնավորվել է ցանցավանդակային ձկնաբուծությունը: 2017թ. դրությամբ լճում տեղադրված է 12 օղակաձև ցանցավանդակներ՝ 25 մ տրամագծով, որտեղ բուծվում է շուրջ 50 տոննա Գեղարքունի և Ամառային իշխանի արդյունագործական պաշար, ինչի արդյունքում տարեկան կարտադրվի 50 հազար տոննա ձուկ:

Կարճադրյուր համայնքում արդեն կառուցվել և գործում է գերժամանակակից սարքավորումներով հագեցած ձկնաբուծարան: Իր արտադրողականությամբ գործարանը մի քանի անգամ գերազանցում է ԽՍՀՄ տարիներին Սևանա լճի ավազանում գործող չորս մանրածկան գործարանների արտադրողականությունը:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Սևանա լճի ավազանի հարակից տարածքներում գյուղատնտեսության և անասնապահության արդյունքում պարարտանյութերի և գոմաղբի միջոցով ագոտային և ֆոսֆորային արտանետումները զգալիորեն ճնշում են լճի ջրային ռեսուրսները:

Սևանի հարակից բնակավայրերի կենցաղային կեղտաջրերն առանց մաքրվելու լցվում են լիճ՝ վնասելով ջուրը, ավազանի բուսական ու կենդանական աշխարհը: Ջրի մաքրման կայաններ կան Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում: մյուս բնակավայրերը չունեն կոյուղիների հեռացման համակարգ: Բացասական ազդեցություն ունեն նաև Սոթքի հանքի ցրված ջրերը, որոնք պարունակում են մեծ քանակությամբ ծանր մետաղներ՝ հատկապես վնասելով Սոթք ու Մասրիկ գետերի ավազանները: Այս տարածքում լրացուցիչ մաքրման կայանների ստեղծումն ու կիրառումն անհրաժեշտություն է լիճ մուտք գործող ջրերը հնարավորինս ֆիլտրելու համար: Բացի դա, հարկավոր է աղբահանության այնպիսի համակարգ ստեղծել, որ բնակիչներն իրենց համայնքներով հոսող գետերը չդիտարկեն իբրև աղբը մեկուսացնող միջոց:

Սևանա լճի ջրավազանի ջրօգտագործման ավելի քան 40%-ը կազմում է ձկնաբուծությունը: Այն ևս բացասաբար է անդրադառնում ավազանի վրա, եթե կանոնակարգված ու գրագետ չի իրականացվում:

Սևանա լճի պահպանման հարցում լճի մակարդակի բարձրացումը չափազանց կարևոր է, իսկ այդ գործընթացը պետք է մշտապես իրականացնել: Միաժամանակ կարևոր է կառավարելի դարձնել ջրի մակարդակի բարձրացումը և կատարել համապատասխան նախապատրաստական աշխատանքներ՝ ազատել, ծառահատել և մաքրել ջրի տակ մնացող տարածքները:

Սևանի պահպանման համար անհրաժեշտ քայլերը



Ջրի մակարդակի բարձրացում



Ֆոսֆորի քանակի նվազեցում



Կոյուղաջրերի մուտքի կանխում



Ձկնորսության ճիշտ կազմակերպում

Աղբյուրը՝ ՀՀ ԱՄԿ / Թեմառնիկ ամփոփագիր. Սևանի ջրավազանային կառավարման տարածք, 2018թ.

1.9.6. Կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն

Գեղարքունիքի մարզում գործում է մեկ պետական համալսարան, միձնակարգ մասնագիտական ութ հաստատություն, 125 հանրակրթական դպրոց, 39 առողջապահական ձեռնարկություն՝ 3 բժշկական կենտրոն, 2 պոլիկլինիկա, 1 ստոմատոլոգիական պոլիկլինիկա, 1 հիվանդանոց, 1 ծննդատուն, 1 առողջության կենտրոն, 30 բուժամբուլատորիա և առողջության առաջնային պահպանման կենտրոն, մեկ պետքատրոն, 3 թանգարան, Հայաստանի պետական պատկերասրահի 2 մասնաճյուղ, 1 մարզային, 5 քաղաքային, 63 գյուղական գրադարաններ, 8 երաժշտական, 1 դուդուկի, 6 արվեստի, 3 գեղարվեստի դպրոցներ, 3 մանկական ստեղծագործական կենտրոն, 1 գեղագիտական կենտրոն, 1 երաժշտական քոլեջ, 9 մարզադպրոց, 73 մշակույթի տներ և



«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ակումբներ, չորս տասնյակիվ ավելի մանկապարտեզներ և նախակրթարաններ:

Թատերական հարուստ ավանդներ ունեցող Գավառ քաղաքում գործում է Լ. Քալանթարի անվան պետատրոնը, որի նորակառույց շենքն ունի գերժամանակակից պայմաններ:

1.9.7. Տրանսպորտ

ՀՀ Գեղարքունիքի մարզով են անցնում Մ4 Երևան-Սևան-Իջևան-Աղբբեջանի սահման, Սևան-Մարտունի-Գետափ, Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման և Մ4-Շորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհները:

ՀՀ Գեղարքունիքի մարզի տնտեսության զարգացումն ամբողջապես կախված է ճանապարհային և երկաթուղային փոխադրումներից:

Երևան-Սևան-Իջևան-Աղբբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի երթևեկությունը ինտենսիվ է, ծանրաբեռնված է աշխատում հատկապես հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին, կապված Սևանա լճի հանգստյան գոտիների հետ:

No	Ճան. կող	Ճանապարհ	Կմ	Թեթև մարդատար	Բեռնատար	Բեռնատար կցորդով	Ընդամենը
1	Մ-4	Երևան - Սևան - Իջևան - Աղբբեջանի Հանրապետության սահման	63	17220	447	180	17847
2			78	8055	410	178	8643
3			80,3	7052	358	170	7580
4	Մ-10	Սևան-Մարտունի - Գետափ - /Մ-2/	3	7031	325	24	7380
5			32	6694	288	22	7004
			64	7763	369	22	8154
6	Մ-11	Մարտունի - Վարդենիս -	2	5696	235	14	5945
7							
8	Մ-14	Մ-4/ - Շորժա - Վարդենիս	35	403	97	4	504
9			75	486	124	4	614

Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական ավտոճանապարհների ավտոտրասպորտի միջին օրեկան ինտենսիվությունը

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

10			96	2783	142	4	2915
11			1	1537	38	0	1575
12	<-29	Սևան - Ծաղկունք – Զովաբեր	8	793	24	0	817
13			17	1024	31	0	1055

Մարզի տարածքում գործում են 816.4 կմ ավտոճանապարհներ, որից միջպետական նշանակության 283.1 կմ, հանրապետական նշանակության 113.4 կմ և մարզային (տեղական) նշանակության 419.9 կմ: Հիմնանորոգված են միջպետական նշանակության ճանապարհներից 269.6 կմ, հանրապետական նշանակության ճանապարհներից 86.3 կմ և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներից 151.6 կմ: Ընդհանուր առմամբ հիմնանորոգված է մարզի պետական նշանակության ճանապարհներից 499.5 կմ, որը կազմում է ճանապարհային ցանցի 61.2%-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզում բեռնափոխադրումներն ու ուղևորափոխադրումները իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով: Մարզի տարածքում գործում են 15 միջմարզային երթուղիներ, որոնք մարզի բնակավայրերից ուղևորափոխադրումներ են իրականացնում դեպի Երևան, Վանաձոր, Վեդի քաղաքներ և մարզի այլ բնակավայրեր: Գործում են նաև 25 ներմարզային երթուղիներ, որոնք մարզի համայնքները կապում են նախկին շրջկենտրոնների հետ: Մարզի 73 համայնքներ ապահովված են միջմարզային, ներմարզային կամ ներհամայնքային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով, իսկ 19 համայնքներ, որոնք ընդհանուր ունեն 15336 բնակիչ կամ մարզի բնակչության՝ 6.6%-ը ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտից չի օգտվում:

Միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհների զգալի մասը անցնում է ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային և բարձր լեռնային գոտիներով, ձմեռը հաճախակի դառնում են դժվարանցանելի, երթևեկության տևողությունը էապես ավելանում է:

Երկաթուղի

Մարզի տարածքով է անցնում Սոթք տանող երկաթգիծը, որի Ծաղկունք-Սոթք վազքուղու երկաթուղունը կազմում է 141 կմ: Մարզում գործում են Սևանի, Շորժայի, Վարդենիսի և Սոթքի երկաթուղային կայարանները, որոնք մարզի տնտեսության

Աղյուսակ 6. Մարզում ճանապարհային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ. ք հաշվով (կմ /կմ ք)	Խտությունը 10 000 բնակչի հաշվով, (կմ/10 000 բնակիչ)
Միջպետական	283.1	0.05	12.1
Հանրապետական	113.4	0.02	4.8
Մարզային (տեղական)	419.9	0.078	18.0
Ընդհանուր	816.4	0.15	35.0

Աղբյուր՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին

ակտիվացման ժամանակ կարող են մեծ խթան հանդիսանալ շահավետ բեռնափոխադրումների իրականացման համար: Երկաթուղային կայարանները ներկայումս օգտագործվում են իրենց հնարավորությունների շուրջ 50%-ը: Սևան-Շորժա-Վարդենիս ուղղությամբ ներկայումս գործում է երկու գնացք՝ որոնցով

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

հիմնականում իրականացվում են բեռնափոխադրումներ, իսկ ամռան ընթացքում նաև ուղևորափոխադրումներ:

Օդային տրանսպորտ

Մարզում առկա է Գավառի օդանավակայանը, որը սակայն ներկայումս չի գործում: Գավառի օդանավակայանում կան շենքային պայմաններ, սակայն թռիչքուղին գրունտային է:

1.9.8. Քաղաքային զարգացում

Մարզկենտրոն **Գավառը** (2019թ. տարեսկզբին՝ 18.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է: Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է:

Սևան քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 19.0 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը զբոսաշրջությունն է:

Մարտունի քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 11.5 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

Վարդենիս քաղաքի (2019թ. տարեսկզբին՝ 12.5 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Ճամբարակ քաղաքի (2019թ. տարեսկզբին՝ 5.6 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած: Կրասնոսելսկի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Մարզի միայն Ճամբարակ քաղաքն է գտնվում թույլ յուրացված գոտում, ունի տարածքային զարգացման հնարավորություններ իր համայնքի սահմաններում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ինտենսիվ յուրացված գոտու քաղաքների համար (Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս) առանձնահատուկ նշանակություն ունի քաղաքների տարածքային զարգացման նպատակային սահմանափակումների ամրագրումը, որի կարևորագույն չափանիշը շրջակա միջավայրի պահպանման խնդիրն է:

Քաղաքների հետագա զարգացումը հիմնականում նախատեսվում է ներքին ռեզերվների և տարածքների քաղաքաշինական յուրացման ինտենսիվության մակարդակի բարձրացման հաշվին, քանի որ քաղաքների տարածքների 30-35%-ը դեռևս շատ էքստենսիվ է օգտագործվում:

Քաղաքային բնակավայրերի զարգացումը պայմանավորված է նաև Գավառի օդանավակայանի վերագործարկմամբ, նախատեսված երկաթուղու կառուցման

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

աշխատանքները ավարտին հասցնելը, սննդի ու տեքստիլ արդյունաբերական կազմակերպությունների աշխատանքը:

1.10. Համայնքների դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում

Քանի որ էկոլոգիական իրավիճակի սրությունը հիմնականում պայմանավորված է բնության տարրերի և ուրբանիզացված միջավայրի փոխկապակցվածությամբ (որպես տարածքային կազմակերպման սկզբունքային միջոցառում) Սևանա լճի անմիջական ազդեցության գոտու տարաբնակեցման համար պիտանի տարածքում տարանջատված են տարբեր քաղաքաշինական-տնտեսական յուրացվածություն ունեցող գոտիներ՝ քաղաքաշինական զարգացման ռեժիմների սահմանումով՝ էկոլոգիական հավասարակշռության պահպանման պայմանով:

Այսպիսով, Գեղարքունիքի մարզի տարածքը բաժանվում է հետևյալ ուրբաէկոլոգիական գոտիների.

- Կենտրոնական գոտի, ընդգրկում է Սևանա լճի ափամերձ շերտը, բարենպաստ է ռեկրեացիոն նպատակներով օգտագործելու: Գոտին բաժանված է 10 տեղամասերի՝ ըստ ռեկրեացիոն ուղղվածության: Ընդ որում Մարտունու տարածաշրջանում առանձնացված է հարավ-արևելյան, հարավային ափամերձ տարածաշրջանը (Երանոս-Կարճաղբյուր հատվածը):

Տեղամասի ռեկրեացիոն կապիտալ շինարարությունն արգելվում է մինչև լճի հեռանկարային բարձրացման նիշը (1903.5 մ և ալիքի ազդեցության գոտին՝ 1905 մ):

- Տարաբնակեցման համար պիտանի տարածքն ընդգրկում է կենտրոնական գոտուց մինչև տարաբնակեցման համար անբարենպաստ՝ սկսած 2100 մետրից մինչև 2350 մ (2100 մետրից բարձր տարածքը բնորոշ է Սևանա լճի ջրհավաք ավազանի Վարդենիսի լեռնաշղթայի լճահայաց լանջերին, որոնք աչքի են ընկնում հարթեցված ռելիեֆով՝ սարահարթերով և բնակավայրերը գետահովիտներով տեղաբաշխվել են 2100-2350 մ տարածքներում): Տարաբնակեցման համար պիտանի տարածքն ըստ տնտեսական-քաղաքաշինական յուրացվածության աստիճանի բաժանվում է.

- Ինտենսիվ յուրացված գոտին ընդգրկում է Սևանա լիճը երիզող ցածր լեռնալանջերը մինչև 2100 մ նիշը: Գոտու բնակչության խտությունները (500-860 մարդ/կմ²) գերազանցում են էկոլոգիական շեմային չափանիշները մի քանի անգամ: Այս գոտում է գտնվում նաև Մարտունի քաղաքը և գյուղական խոշոր բնակավայրերը: Ինտենսիվ յուրացված գոտու համար առաջարկվում է սահմանել զարգացման սահմանափակման ռեժիմ, որը հիմնականում բխում է էկոլոգիական հավասարակշռության խախտման վտանգից (համաէկոլոգիական միջոցառում) և նկատառում է.

- Քաղաքների, գյուղական բնակավայրերի տարածքային աճի սահմանափակում, որը պետք է ընթանա բնակավայրերի տարածքների ինտենսիֆիկացումով (թեք լանջերի, անհարմար հողերի օգտագործում), հատակագծային կառուցվածքի ռացիոնալիզացումով, բնակավայրերի շուրջը կանաչ համակարգի ձևավորումով, առաջավոր տեխնոլոգիաներով (փակ ցիկլերով) արտադրության, գիտատեխնիկական օբյեկտների տեղադրումով, շրջակա միջավայրն աղտոտող օբյեկտների տեղադրման արգելումով, գյուղական բնակավայրերի կառուցապատման կանոնակարգումով, գյուղատնտեսական հողերի կառուցապատման արգելումով:

- Թույլ յուրացված գոտին ընդգրկում է 2100 մ-ից մինչև 2350 մ և հարում է ինտենսիվ յուրացված գոտուն: Բնակչության խտությունը չի գերազանցում 50 մարդ/կմ² վրա: Թույլ յուրացված գոտին օժտված է էկոլոգիական պոտենցիալով՝ քաղաքաշինության նպատակների ռեզերվային տարածքների ամկայություն, ռեսուրսային չօգտագործված

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

պոտենցիալ (ռեկրեացիոն՝ հիմնականում ձմեռային հանգիստ և գյուղատնտեսական): Այս գոտում են գտնվում սահմանամերձ բոլոր բնակավայրերը:

Քաղաքաշինորեն-տնտեսապես թույլ յուրացված գոտում նախագծով առաջարկվում է սահմանել առաջնահերթ զարգացման ռեժիմ:

Տարաբնակեցման համար անբարենպաստ գոտին ընդգրկում է 2100-2350 մ բացարձակ բարձրություններից մինչև Սևանա լիճը շրջափակող լեռնաշղթաների ջրբաժանները (ամենաբարձր կետը 3598 մ): Գոտու տարածքն օգտագործվում է որպես ամառային արոտներ:

Այս գոտին ունի բարենպաստ պայմաններ ձմեռային սպորտի տարբեր ձևերի կազմակերպման համար: Ընդ որում մշակված է լեռնադահուկային սպորտուղի (Արագածի լանջեր-Ծաղկաձոր-Հրազդան-Գեղամա լեռնաշղթայի արևելյան Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային լանջեր): Ձմեռային ռեկրեացիայի կազմակերպմանը կնպաստի Մարտունի-Մելիմ-Եղեգնաձոր և Գավառ-Սևաբերդ (Կոտայքի մարզ) ճանապարհների բարեկարգումը: Գոտու քաղաքաշինական ռեժիմն ընդգրկում է.

- Արոտների օգտագործման նորմերի մշակում և կիրառում:

- Ձմեռային ռեկրեացիայի կազմակերպման պայմանների ստեղծում^ա ճանապարհային ցանցի բարելավումով, արշավախմբային, հերթափոխային բնակավայրերի ձևավորումով:

- Միջհամայնքային միավորումների ստեղծում՝ թույլ յուրացված գոտու բնակավայրերի խմբով^ա ռեկրեացիոն, գյուղատնտեսական ռեսուրսների համատեղ օգտագործմամբ:

Տարածաշրջանն ապահովված է տրանսպորտային ցանցով: Տարածքով անցնում են Երևան-Սևան-Վրաստանի սահման, Սևան-Մարտունի-Եղեգնաձոր միջպետական ճանապարհները:

Սահմանափակող գործոն է Սևան-Մարտունի-Վարդենիս և Մարտունի-Եղեգնաձոր ավտոմայրուղիների սանիտարական պահպանման գոտու քաղաքի տարածքում գտնվելը: Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ ավտոմայրուղիների աղմուկի և աղտոտվածության մակարդակը փոքրացնելու համար:

Սևան քաղաքն ընկած է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին, ծովի մակերևույթից 1900-1950մ բարձրության վրա: Քաղաքի և լճի միջակայքով է անցնում Մ-4 միջպետական նշանակության I կարգի Երևան-Սևան-Իջևան-Աղբբեջանի սահման մայրուղին:

Քաղաքին չհասած, Մ-4-ից սկսվում է Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ ճանապարհը: Ծովագյուղի մոտակայքը՝ Մ-4 մայրուղուց սկսվում է մեկ այլ միջպետական նշանակության Մ-14 Ծովագյուղ-Վարդենիս ճանապարհը:

Սևան քաղաքից դուրս են գալիս երկու տեղական նշանակության ճանապարհներ՝ դեպի հարևան գյուղերը:

Քաղաքի տարածքով է անցնում Երևան-Սևան-Շորժա-Վարդենիս-Սոթք միագիծ էլեկտրիֆիկացված երկաթուղին:

Մոտակա օդանավակայանը Երևանի 'Զվարթնոցն' է, 74կմ հեռավորությամբ: Խորհրդային իշխանության օրոք գործում էր գավառի օդանավակայանը, որն ուներ գրունտային թռիչքուղի, որտեղից իրականացվում էին տեղական թռիչքներ: Սակայն անկախացումից հետո այդ օդանավակայանը բարձիթողի վիճակում է և առանց լուրջ վերականգնման աշխատանքների գործել չի կարող:

Քաղաքը ավտոբուսային երթուղիներով կապված է հանրապետության շատ բնակավայրերի հետ, քանի որ այն տեղավորված է մայրուղային ճանապարհների հանգույցում:

Երկաթուղին, հիմնականում, ծառայում է բեռնափոխադրումների համար: Ուղևորափոխադրումներ կատարվում են միայն մինչև Շորժա բնակավայր, այն էլ ցածր

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

արդյունավետությամբ, քանի որ երկաթգիծին անմիջապես վաճակում է, շարժակազմը նույնպես, որի հետևանքով էլ գնացքների հաղորդակցության արագությունը կազմում է 20-25կմ/ժամ՝ անչափ ցածր արագություն: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնությունում մարդատար մերձքաղաքային գնացքների հաղորդակցության արագությունը կազմում է 50-60կմ/ժամ, իսկ արևմտյան եվրոպական երկրներում՝ 90-100կմ/ժամ:

Գեղարքունիք-1» միկրոռեգիոնի բնակավայրերի առկա վիճակի վերլուծություն

Գեղարքունիք-1 միկրոռեգիոնն ընդգրկում է թվով 11 բնակավայր՝

- Սևան քաղաք (Գագարին գյուղ),
- Գեղամավան,
- Դրմաշեն,
- Զովաբեր,
- Լճաշեն,
- Ծաղկունք,
- Ծովագյուղ,
- Նորաշեն,
- Չկալովկա,
- Սեմյոնովկա,
- Վարսեր գյուղեր:

1.10.1.1. Սևան քաղաք (Գագարին գյուղ),

Սևանը քաղաք գտնվում է Սևանա լճի հյուսիսարևմտյան ափին, մայրաքաղաք Երևանից 66 կմ հյուսիս-արևելք և մարզկենտրոն Գավառից 35 կմ հյուսիս: Գտնվում է ծովի մակերևույթից 1925 մ բարձրության վրա և զբաղեցնում է 17,75 քկմ տարածք: Ըստ 2011 թվականի մարդահամարի արդյունքների համայնքում բնակվում է 19229 մարդ: Սևանը հնում անվանել են Գեղամա ծով: Բնակավայրը հիմնադրվել է 1842 թվականին և կոչվել է Ելենովկա՝ ի պատիվ Պավել 1-ին ցարի դուստր Ելենայի: 1935 թվականին այն վերանվանվեց Սևան: 1961 թվականին բնակավայրին շնորհվեց շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ /մեկ ավանով և տասը գյուղով/, իսկ 1967 թվականին՝ հանրապետական ենթակայության:

Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ Սևանը դարձավ ինքնուրույն համայնք և ներառում է Սևան քաղաքը, Ցամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը, Գագարին բնակավայրը: 2005 թվականին հաստատվեցին համայնքի վարչական սահմանները, որի արդյունքում Սևան համայնքը զբաղեցնում է 1784.68 հա հողատարածք:

2012 թվականի նոյեմբերի 10-ին մեծ շուքով նշվեց քաղաքի 170 ամյակը:

Համայնքային ոչ առևտրային 11 կազմակերպությունների՝ 5 նախակրթարանների, Հովի. Այվազովսկու անվան արվեստի, երաժշտական դպրոցների, Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի, Վ. Ստեփանյանի անվան Գրադարանների կենտրոնացված համակարգի /7 գրադարան/, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի, համայնքային մշակութային կենտրոնի գործունեության շնորհիվ նախադպրոցական կրթության իրականացումը, մարզամշակութային առօրյան,

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

երեխաների արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը իրականացվում է համակարգված ու նպատակային:

Համայնքում գործում են 6 հիմնական և 1 ավագ դպրոց, արհեստագործական ուսումնարան, քոլեջ, բժշկական ուսումնարան: Սևանում է գտնվում «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, որի բնագիտական թանգարանն էլ Սևանա լճի, տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի, ժողովրդագրության, ավանդույթների ամբողջական ցուցանմուշների և ցուցադրությունների եզակի վայր է:

Տնտեսություն

Անցյալ դարի 90-ական թթ-ին փակվեցին և սեփականաշնորհվեցին քաղաքի խոշոր ձեռնարկություններն ու գործարանները, որոնք այսօր չեն գործում:

Համայնքի բնակարանային տնտեսության պահպանումն իրականացվում է գործող 4 համատիրությունների միջոցով, որոնք ընդգրկում են 201 բազմաբնակարան շենք:

Ներկայումս զարգացման առաջնահերթություններից է փոքր և միջին բիզնեսի, զբոսաշրջության գործի զարգացումը, որոնց ուղղությամբ իրականացվում են ծրագրեր: Բնակչության մի մասը զբաղված է կրթության, մշակույթի, ծառայությունների մատուցման ոլորտներում:

Վերջին տարիների ընթացքում համայնքում միջազգային և տեղական կազմակերպությունների և համայնքային ներդրումների միջոցով իրականացվել են մի շարք ծրագրեր: Համայնքում գործունեություն են իրականացնում մի շարք հասարակական կազմակերպություններ, ասոցիացիաներ, հիմնադրամներ:

Աշխարհագրություն

Իր աշխարհագրական դիրքով Սևանը Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է. գտնվում է Արեգունի, Փամբակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում: Համայնքն իր ավամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է: Այն առանձնանում է ջրային ռեսուրսներով, բնապահպանական և մշակութային հուշարձաններով:

Բարենպաստ աշխարհագրական դիրքի շնորհիվ արևոտ օրերի քանակը հասնում է 250-ի: Ամառային ամիսների ընթացքում օդի միջին ջերմաստիճանը տատանվում է 20 °C- 30 °C: Ձմեռները ձյունառատ են, իսկ ապրիլ-նոյեմբեր ամիսներին բավական ցուրտ է: Սևանի կլիման նման է Արևելյան Ֆինլանդիայի կլիմային:

Կլիմա

Սևանի կլիման լեռնային և խիստ է՝ երկար ցուրտ ձմեռներով և զով ամառներով: Չնայած համեմատաբար ցածր լայնությանը, միջին ամսական ջերմաստիճանը համեմատելի է Կարելիայի և Լենինգրադի մարզի ջերմաստիճանների հետ: Դա պայմանավորված է քաղաքի բարձր դիրքով ծովի մակարդակից բարձր: Սևանա լիճն ամբողջությամբ սառչում է միայն խիստ ջերմաստիճաններում (-20 ° C- ից ցածր), դա պայմանավորված է նրանով, որ դրա մեջ կան հսկայական քանակությամբ աղբյուրներ: Քաղաքում և շրջակայքում խոնավությունը բարձր է, լճից ուժեղ քամիներ են հաճախակի: Ձմեռը տևում է նոյեմբերի կեսերից մինչև ապրիլի սկզբին (ձյունը գալիս է նոյեմբերի վերջից մինչև ապրիլի կեսը), իսկ ամառը տևում է հունիսի կեսերից մինչև սեպտեմբերի կեսը: Գարունը զով է, աշունը՝ բավականին երկար:

Ժողովրդագրություն

Քաղաքի բնակչությունը, որը ներառում է նաև Սևանի մաս կազմող Գագարին գյուղը:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

1989 թվական - 27000 մարդ

2001 թվական - 18800 մարդ

2008 թվական - 23200 մարդ

2021 թվական տար է ս կ գ ի ն ` 19000 մարդ

Տեսարժան վայրեր

Սևանի թերակղզում, որը գտնվում է քաղաքից 3 կմ , գտնվում է միջնադարյան հայկական հոգևոր ճարտարապետության ամենահայտնի օրինակներից մեկը՝ Սևանավանքի վանքը (IX դար): Վանքը հիմնականում նախատեսված էր մեղք գործող էջմիածնից եկած վանականների համար: Ներկայումս վանքը բաղկացած է երկու եկեղեցիներից՝ Սուրբ Առաքելոցից և Սուրբ Աստվածածին եկեղեցուց՝ տարբեր խաչքարերով: Սկզբում վանքը կառուցվել է փոքրիկ կղզու հարավային ափին: Սևանա լճի արհեստական ջրահեռացումից հետո, որը սկսվել է ստալինյան ժամանակաշրջանում, ջրի մակարդակը նվազել է 20 մետրով, և կղզին վերածվել է թերակղզու:

Թերակղզում գտնվող մեկ այլ կարևոր կրոնական կառույց է Վազգենյան աստվածաբանական ակադեմիան (Ճեմարան), որը հիմնադրվել է 2004 թվականին:

Քաղաքից 4 կմ հեռավորության վրա, Լճաշեն գյուղի մոտակայքում է գտնվում նախաուրարտական շրջանի հնագիտական հուշարձանների համալիրը (Կենտրոնական կովկասյան հնագիտական մշակույթ, մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև միջնադար):

Մշակույթ

Սևանում լույս են տեսնում «Սևան» թերթը, «Ափ» ամսագիրը, գործում է «Գեղամա» հեռուստաընկերությունը: Համայնքային մշակութային կյանքի ռիթմն ապահովում են «Սևան» ժողովրդական ու «Սուինա-Սևան» ժամանակակից պարերի և «Ակորդներ» էստրադային համույթները:

Սևանի բնագիտական թանգարան

Սևանի բնագիտական թանգարանում ներկայացված են Սևանա լճի և նրա շրջակայքի, ֆլորայի և ֆաունայի, ինչպես նաև հայերի ավանդական կյանքի տարրերի երկրաբանական առանձնահատկությունները:

Բուսաբանական այգի

Բուսաբանական այգին գտնվում է ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: Այգում կարելի է գտնել եվրոպական և ասիական ավելի քան 420 բուսատեսակներ:

Քույր քաղաքներ

Սևանը գործնական-ընկերային ապակենտրոնացված հարաբերությունների ոլորտում ունի լուրջ հաջողություններ:

«Սևան-Գրենոբլ» քույր քաղաքներ համագործակցությունը ներառում է զբոսաշրջային, կրթական և առողջապահական ոլորտները ամրապնդելով հայ-ֆրանսիական բարեկամությունը գործնական ծրագրերի տեսքով:

Սևանի և Լեհաստանի Բրոդնիցա քաղաքի միջև համագործակցության ոլորտներն են տեղական ինքնակառավարման մարմինների միջև փորձի և տեղեկատվության փոխանակումը, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառները, զբոսաշրջության և երիտասարդների փոխանակման ծրագրերի իրականացումը:

Գագարին, գյուղ Գեղարքունիքի մարզում: Հիմնադրվել է 1955 թվականին և կոչվել տիեզերագնաց Յուրի Գագարինի անունով: Գյուղը ներառված է Սևան քաղաքային համայնքի մեջ

Բնակչություն



«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

1970	1979	1989	2001	2011
604	953	1643	1489	1379

1.10.1.2. Գեղամավան

Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզի հյուսիս-արևմտյան մասում: Համայնքը բնակեցվել է 1828 թվականին Մակու գավառից եկած գաղթականներով: Համայնքի վարչական տարածքը կազմում է 3128.37 հա և գտնվում է ծովի մակերևույթից 1800-2450 մ բարձրության վրա:

Համայնքի տնային տնտեսությունները և բնակչության սեռատարիքային կազմը ունի հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Վարչական տարածքը, հա	Առկա բնակչության թվաքանակը	Մշտական բնակչության թվաքանակը	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը
2947,9	2069	1972	483	525

Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Իգական	Արական
	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	2069	1031	1038
	մինչև 1 տարեկան	26	12	14
	1-2 տարեկան	48	23	25
	3-4 տարեկան	51	25	26
	5-6 տարեկան	47	23	24

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

	7-10 տարեկան	96	48	48
	11-14 տարեկան	98	48	50
	15-17 տարեկան	92	46	46
	18 և ավելի տարեկան	1611	807	804
2.	Կենսաթոշակառուներ(ներառյալ հաշմանդամներ)այդ թվում՝	324	169	155
	Տարիքային և աշխատանքային	294	149	145
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	4	2	2
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	1	1	-
5.	Հաշմանդամ երեխաներ	2	1	1
9.	Հաշմանդամներ	30	14	16
10.	Զբաղվածներ	598	242	256
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	70	-	-

Համայնքի բնակարանային ֆոնդը կազմում է 33678 քմ ընդհանուր մակերեսով թվով 330 անհատական բնակելի տները և 6152 քմ մակերեսով 26 բազմաբնակարան շենքերը: Համայնքում գործում է Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը, որտեղ սովորում են 154 աշակերտ: Արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողել նաև համայնքի դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազել է: Դպրոցում կան 30 աշխատող, որոնցից 22 -ը մանկավարժներ են: Դպրոցին կից գործում է նախակրթարան, ուր հաճախում են 4-5 տարեկան թվով 26 երեխաներ: Համայնքում գործում է բուժակ- մանկաբարձական բուժ. կետ:

Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Լինելով լեռնային գոտու գյուղական համայնք, տնտեսության հիմնական ուղղությունը համարվում է անասնապահությունը, իսկ բուսաբուծությունը հիմնականում ուղղված է կերի բազայի ապահովմանը: Մշակվում են նաև հացահատիկային մշակաբույսեր և կարտոֆիլ: Փոքր տարածությունների վրա՝ հիմնականում տնամերձ հողամասերում աճեցվում են բանջարանոցային մշակաբույսեր: Համայնքում մշակվող հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և միջին բերքատվության ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և նրանց միջին բերքատվությունը

Մշակաբույսի անունը	Զբաղեցրած տարածությանը (հա)	Միջին բերքատվությունը(ց)
Աշնանացան ցորեն	30	24.5
Գարնանացան գարի	35	21.4
Հաճար	25	21.0
Կարտոֆիլ	45	225.0
Հնդկացորեն	10	9.3
Բազմամյա բակլագգի խոտաբույսեր	65	38.0

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Համայնքի գյուղատնտեսության հիմնական ճյուղը համարվում է անասնապահությունը: Գյուղատնտեսական կենդանիների անասնազվիսաքանակի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են այդուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Համայնքում առկա անասնազվիսաքանակը

Խոշոր եղջերավոր անասուններ՝ որից	1361
Կովեր	477
Մանր եղջերավոր անասուններ՝ որից	1643
մաքիներ	906
Խոզեր՝ որից	290
Մայր խոզեր	48
Թռչուններ՝ որից	3584
Ածան հավեր	2945

Համայնքում իրականացվում է նաև կենտրոնացված աղբահանություն, որի ծախսերը նույնպես կատարվում են համայնքապետարանի կողմից, համայնքի բյուջեի միջոցներով, իսկ ծառայությունը բնակչությանը մատուցվում է անվճար:

Համայնքը հարևան համայնքներին կապող միջհամայնքային ճանապարհները ասֆալտապատ են և գտնվում են լավ վիճակում: Համայնքի գլխավոր փողոցը, որը համարվում է նաև միջհամայնքային չանապարհ, նույնպես ասֆալտապատ է:

Ներբնակավայրային փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 8 կմ, որից 5կմ-ը՝ խճապատ և 3 կմ-ը՝ ասֆալտապատ: Ճանապարհների մի մասը կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման:

Գերեզմանատուն տանող ճանապարհը նույնպես գտնվում է ոչ բարվոք վիճակում և ունի վերանորոգման խիստ կարիք:

1.10.1.3. Դոմաշեն

Դոմաշեն, գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում: Հարևան Գեղամավան գյուղի հետ հիմնվել է Մակուի վերաբնակիչների կողմից 1828 թվականին: Հայտնի է 7-րդ դարում կառուցված Սուրբ Թադևոս եկեղեցիով: 1970-ական և 90-ական թվականներին գյուղում գործել է ձիաբուծարան, որտեղ բուծվել են անգլիական գոտարյուն ցեղի ձիեր: Տարածքի մակերեսը կազմում է 4345.22 հա:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, պատմական թանգարան, գրադարան, մշակույթի տուն, բուժ ամբուլատորիա:

Գյուղի անվան ստուգաբանության վերաբերյալ կան տարբեր վարկածներ: Ոմանք պնդում են, որ ձկնառատ Հրազդանի ափի Դոմաշենը Մակվից եկած հայերը կոչել են իրենց նախկին բնօրրանի՝ Դուդմա կամ Տուտմա (Դուդմա պարսկերեն նշանակում է ձուկ) անունով: Մակայն ակադեմիկոս Լևոն

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Խաչիկյանի գտած 1494 թվականի մի ավետարանում ասվում է. «Արդ գրեցավ սուրբ ավետարանս ի գյուղս Դեմդեմաշեն, ընդհովանով սուրբ Աստվածածինս և Սևանա Սուրբ Առաքելոյն»: Գիտնականի կարծիքով, Դեմդեմաշենը նույն Դդմաշենն է: Դդմաշենցի հայտնի բանահավաք Գուրգեն Ստեփանյանը ժխտել է Երվանդ Լալայանի այն վարկածը, թե գյուղի անունը առաջացել է դդում բառից:

1.10.1.4. Զովաբեր

Գյուղը տարածված է Փամբակի լեռնաշղթայի հարավարևմտյան բազուկների ստորոտում, Հրազդան գետի վերին հոսանքի աջ ու ձախ ափերին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1890 մ բարձրության վրա: տարածքն զբաղեցնում է 2876.54 հա:

Բնակչություն

Գյուղի բնակչությունն անցած 165 տարիների ընթացքում ավելացել է բացառապես բնական աճի հետևանքով, որի վրա էապես ազդել են բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, երկրի քաղաքական իրավիճակը և օբյեկտիվ ու սուբյեկտիվ բազմաթիվ այլ գործոններ: Հատկանշական է, որ բնակչությունը բոլոր տարիներին պահպանել է իր միատարր կազմը, գյուղում ապրել են միայն հայեր, շատ հազվադեպ դեպքեր են եղել, որ ժամանակավորապես բնակվել են 1-2 քրդեր, որոնք հարուստների մոտ անասնապահ կամ հոտաղ են եղել:

Գրեթե բոլոր տարիներին բնակչության մեջ գերակշռել է արական սեռը: Միջին հաշվով տղամարդիկ կազմել են 51.7%, կանայք՝ 48.3%: Այդ միտումը խախտվեց Հայրենական մեծ պատերազմից հետո, երբ գյուղի բնակիչների մեծամասնությունը ներգաղթեց Մակու քաղաքից ու նրա շրջակա գյուղերից, մասնավորապես Արտազ գավառի Ալաջուղ գյուղից:

Բնակչության աճը նվազել է միայն առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների տարիներին: Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի և քաղաքացիական կռիվների տարիներին գյուղի բնակչությունը նվազել է 76 մարդով: 1931-1959 թվականներին ոչ միայն բնակչության աճ տեղի չունեցավ, այլև դրա թվաքանակը խիստ պակասեց՝ 1931 թվականի 1430 մարդուց հասավ 900-ի:

Այս տարիներին բնակչության միգրացիայի միտումը պետք է բացատրել կոլտնտեսային շարժման հետ. այս կամ այն չափով ունևորներին կուլակաթափ էին անում, նրանց նկատմամբ կիրառում էին զանազան սահմանափակումներ և քաղաքական տարբեր հոսանքներին մասնակից լինելու անհիմն մեղադրանքներ հարուցում, որի պատճառով մարդիկ հարկադրաբար հեռանում էին գյուղից: Իսկ ավելի ուշ՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, ռազմի դաշտ մեկնեց բնակչության վերաբրտադրությունն ապահովող հիմնական կազմը՝ 400-ից ավելի զովաբերցիներ:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ներքևի աղյուսակում բերված տվյալները խոսում են այն մասին, որ գյուղի բնակչությունը 165 տարում աճել 463 տոկոսով: Գյուղը վերաբնակեցման առաջին տարիներին բաղկացած է եղել 56 ընտանիքից, իսկ այսօր՝ 165 տարի անց, գյուղում ապրում է 427 ընտանիք, 1570 բնակչով:

Ձուվաբերի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1873	1886	1897	1908	1914	1916	1922	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2004	2011
Բնակչության թիվը	339	598	905	989	1186	1237	1652	1161	1133	1412	900	1230	1299	1422	1603	1660	1683

Տնտեսություն

Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Դաշտավարությունը, միշտ էլ տուժել է կարկտահարությունից, որը գրեթե ամեն տարի կրկնվում է հունիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ բույսերի ծաղկման, հասկակալման ու հասունացման շրջանում, բուսաբուծությունը հաճախ տուժում է երաշտից ու ցրտահարությունից: Ձուվաբերցիները հիմնականում մշակում են կարտոֆիլ, լոբի, կաղամբ, վարունգ:

Բնական պայմաններ և ռեսուրսներ

Կլիման չափավոր ցամաքային է, երկրագործության համար ոչ այնքան նպաստավոր: Տարեկան տեղումները 500-600 մմ են, ձմեռը երկարատև է, կայուն ձնածածկույթով, ամառը մեղմ է ու զով: Առանց քամիների օրերը հազվադեպ են լինում: Հյուսիսից թուխալ ամպերի ուղեկցությամբ հաճախ փչում են սառը քամիներ, իսկ հարավից՝ այսպես կոչված «Արանի չոր քամիները», որոնք արագորեն չորացնում են դաշտերն ու արոտները: Տարեկան միջին ջերմությունը բարձրադիր վայրերում 2 °C է, ցածրադիր վայրերում՝ 6 °C: Հունվարի միջինը համապատասխանաբար - 12-ից -7 °C է, հուլիսինը՝ +10-ից +20 °C:

Գյուղի լանդշաֆտին բնորոշ են բարձրադիր սարահարթները, երոզիայի ենթարկված ուղղաձիգ լեռնալանջերը՝ ոչ շատ խոր ձորակներով, որոնցով ջուր է հոսում միայն ձնհալի ու հորդառատ անձրևների ժամանակ:

Չնայած բազալտ քարի առատությանը, գյուղացիներն այն որպես շինաքար գրեթե չեն օգտագործում՝ խիստ կարծր, դժվար մշակելի, ծանր ու հողմահարված լինելու պատճառով:



Պատմամշակութային կոթող

Գյուղում հայտնաբերվել է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի բնակատեղի⁸:

1.10.1.5. Լճաշեն

Համայնքի տարածքը կազմում է 5954 հեկտար: Համայնքը գտնվում է Գեղամա և Փամբակի լեռնաշղթաների գոգավորությունում Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին, ունի համեմատաբար բարենպաստ կենսապայմաններ: Գեղամա կանաչ լեռները որոշակի թեքություններով իջնում են գյուղի արևմտյան մասերը՝ կազմելով օղակաձև լեռնաբազուկներ: Ընդարձակ և հարթ սևահողային տափաստանը գյուղի հացի շտեմարանն է: Իսկ արևելյան մատույցներում Սևանա Լիճն է, որը ոչ պակաս կենսական դեր է ունեցել լճաշենցու կյանքում: Լիճը կյանք ու բարիք է գյուղի բնակչության համար: Տարածքը՝ 5953.96 հա:

Սևանի ավազանը հայտնի է իր խայտաբղետ կլիմայով: Սևանա լիճը՝ Լճաշենի կլիման ձևավոնող հիմնական գործոններից մեկն է: Տարվա ընթացքում առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը բավական մեծ է: Հունվար ամսին օդի ջերմաստիճանը կարող է իջնել -30 աստիճան, իսկ օգոստոսին ստվերում օդի ջերմաստիճանը երբեմն բարձրանում է +30 աստիճան: Մթնոլորտային տեղումների քանակը կարող է հասնել մինչև 600 մմ:

Հարուստ է Լճաշենի բուսաշխարհը /բացված գրունտների բույսեր, արմատական ավամերձ բույսեր, ալպյան գոտու բույսեր/, հաշվվում է շուրջ 1600 բուսատեսակ, որոնցից 1500-ը ծաղկավոր բույսեր են: Գյուղում, բացի հայկական և իրանական տեսակներից, կան նաև բույսերի էնդեմիկ տեսակներ: Դրանց մեջ քիչ չեն նաև դեղաբույսերը:

Հացագգի մշակաբույսերից գյուղում աճեցնում են աշնանացան ցորեն, գարնանացան գարի, վարսակ, հաճար, աճեցնում են նաև կարտոֆիլ:

Գյուղի պատմությունն սկիզբ է առնում վաղնջական ժամանակներից: Որպես բնակավայր սկզբնավորվել է մ. թ. ա. 4-րդ հազարամյակի վերջին: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին այն վերածվել է ամրոցի: Հնագույն քաղաք- ամրոցի /միջնաբերդերով/ պարիսպների մնացորդները պահպանվել են գյուղից 2 կմ հարավ և հարավ-արևելք, ունեն 3-4 մետր, որոշ տեղերում՝ 5-7 մետր հաստություն: Հնագիտական պեղումների և երկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերվել են 3-2-րդ հազարամյակի գտածոներ:

Գյուղի տարածքը իսկական թանգարան է բաց երկնքի տակ: Գյուղի արևելյան կողմում, նախաուրարտական բնակատեղի մոտ, մեծ ու անտաշ քարաժայռի վրա փորոգրված է գյուղի մասին առաջին գգրավոր հիշատակումը Արգիշտի Առաջինի մ.թ.ա. 776թ այստեղ թողած սեպագիր արձանագրությունը:

Գյուղում և նրա շրջակայքում կան ինչպես արամեան շրջանի, Արարատյան թագավորության, այնպե էլ Արտաշեսյան, քրիստոնեական ժամանակաշրջանների

⁸ Ամբողջական ցանկը տրված է Հավելված 4-ում:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

հուշարձաններ, պաշտամունքային կոթողներ: Լճաշենի հուշարձանախումբը, իշտիկունիու հավաքածուն մեր նախնիների, նախաուրարտական և ուրարտական հայկական հարուստ մշակույթի պերճախոս ապացույցն է՝ լայնորեն հայտնի տարբեր երկրների գիտական շրջաններում:

Գյուղը վերակենդանացել է 1928թ-ին, երբ հիմնավորվել են Մակուից, Դիադենից, Բայազետից գաղթած 58 հայ ընտանիքներ: Գյուղը կոչվել է Պորտակ, Օրդակլու, Էրդակլու, Օրդաքլու: 1946թ ապրիլին գյուղն անվանվել է Լճաշեն:

Համայնքի առկա բնակչության թիվը 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 4329 մարդ: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմերը բերված են աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 1. Համայնքի բնակչությունը ըստ տարիքային խմբերի և սեռերի

Հ/Հ	Տարիքային խմբեր	Արական	Իգական	Ընդամենը
1	0-6 տարեկան	225	191	416
2	7-17 տարեկան	326	346	672
3	18-63 տարեկան	1391	1401	2792
4	63-ից բարձր տարեկան	194	255	449
	Ընդամենը	2136	2193	4329

Համայնքի գլխավոր ճանապարհները ապահովված են փողոցային լուսավորությամբ:

Համայնքի տարածքում առկա են գերեզմանատներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 8 հա:

Հիմնախնդիրներ՝

- համայնքի գլխավոր հատակագծի դրույթների իրականացում ըստ ժամանակացույցի
- համայնքի փողոցային ցանցի անբարեկարգ իրավիճակ
- գերեզմանատան որոշ տարածքների պարիսպների բացակայություն
- սպասարկման օբյեկտների ոչ համաչափ տեղաբախշում
- զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայություն
- համայնքում կենցաղային աղբի տեսակավորման և վերամշակման բացակայություն

Համայնքի վարչական տարածքում կան 5 բազմաբնակարան շենքեր և բնակելի առանձնատներ:

Բնակելի առանձնատների թիվը կազմում է 831 տուն և դրանց ընդհանուր մակերեսը կազմում է 71720 քմ:

Համայնքի առանձնատների կառուցումը սկսվել է անցած դարի 60-ական թվականներից, մեծ մասը արդեն վերանորոգման կարիք ունեն:

Վթարային առանձնատների թիվը - 60

Կիսակառույց առանձնատների թիվը - 100

Գյուղատնտեսություն

Համայնքում բնակիչները իրենց տնամերձ հողամասերում հիմնականում աճեցնում են կարտոֆիլ, բանջարաբուստանային կուլտուրաներ, ինչպես նաև զբաղվում պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, սալոր), իսկ վարելահողերում մշակում են հացահատիկային, կերային մշակաբույսեր՝ հիմնականում սեփական կարիքները հոգալու համար:

Համայնքի ոռոգելի հողատարածքները կազմում են 60.0 հեկտար: Իրականացվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցապատման աշխատանքներ, որն իր դրական ազդեցությունն է թողել թե անասունների մթերատվության, կաթնատվության և թե դրանց քանակի ավելացման գործում: Համայնքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում է 4228, այդ թվում կովեր՝ 2656, մանր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 2112, մեղվաբնուսանիքների քանակը կազմել է 452, հավերի և այլ թռչուններին՝ 11245: Համայնքում հիմնականում արտադրվում են կարտոֆիլ, կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Համայնքի բնակիչները լուրջ խնդիրներ ու դժվարություններ ունեն արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում: Դաշտամիջյան ճանապարհները գտնվում են բավարար վիճակում, յուրաքանչյուր զարնանը պարբերաբար դաշտամիջյան ճանապարհները ընթացիկ նորոգման աշխատանքների միջոցով վերանորոգվում են: Համայնքում առկա են 25 տրակտոր իրենց կցվող գյուղատնտեսական գործիքներով, գյուղատնտեսական տեխնիկաները հիմնականում խորհրդային ժամանակաշրջանի արտադրության են՝ գտնվում են ֆիզիկապես և բարոյապես մաշված վիճակում: Խիստ անհրաժեշտություն է նոր տեխնիկաների ձեռք բերումը: <<Լճաշենի արոտագտագործողների միավորում>> ՄԿ-ի կողմից ձեռք բերվեց 2 անվավոր նոր տրակտորներ, իրենց կցվող գյուղատնտեսական գործիքներով, սակայն զգացվում է ժամանակակից տեխնիկայի խիստ կարիք:

Շրջակա բնական միջավայրի պահպանում

Համայնքում աղբահանությունը իրականացվում է Լճաշենի համայնքապետարանի միջոցներով կենցաղային աղբը ու թափոնները տեղափոխվում են համայնքի աղբավայր և տոփանվում են հողային շերտով: Բնության և շրջակա միջավայրի պահպանումը տարբեր տեսակի աղտոտումներից նվազեցնելու համար տարվում են լայն բացատրական աշխատանքներ համայնքի բնակչության հետ: Արոտավայրերի կառավարումը իրականացվում է <<Լճաշենի համայնքի արոտագտագործողների միավորում>> ՄԿ-ի կողմից՝ խստորեն պահպանվում են արոտարածեցման հաստատված գրաֆիկը: Անասունների ջրման գործընթացը կիրականացվի արոտավայրերում գոյություն ունեցող ջրարբիացման ցանցի միջոցով: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 195.78 հեկտար հատուկ պահպանվող տարածքի պահպանումն ու խնամքը իրականացվում է <<Սևան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի կողմից: Համայնքի ոռոգման ջրի ջրամատակարարման համակարգերը գտնվում է բավարար վիճակում, խմելու ջրի ջրամատակարարման համակարգը գտնվում է լավ վիճակում, համայնքը ջրահեռացման համակարգ (կոյուղի) չունի, ջրահեռացումը հիմնականում կազմակերպվում է բնակիչների կողմից իրենց հողամասերում

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսյա մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

սեպտիկ հորեր կառուցելու միջոցով: Համայնքի վարչական սահմաններում տարածված կենդանիներն են՝ գայլը, աղվեսը, գորշուկը, կզաքիսը, բեզուարյան այծը, կրծողներից՝ ճագարամուկը, գետնյասկյուռը, թռչուններից՝ անգղը, արծիվը, կռունկը, լորը, արտույտը, սարյակը, կկուն, ճնճղուկը, սողուններից՝ վահանագլուխ իժը, գյուրգան: Բուսականությունից հանդիպում են վայրի ցորեն, վայրի կորնգան, մասրենու և ասպիրակի թփուտներ, ինչպես նաև հանդիպում են նաև դեղաբույսերի զանազան տեսակներ:

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 100000 քմ, կենտրոնական ճանապարհը 10-րդ փողոցը ամբողջությամբ մայրուղուց մինչև վերջ՝ 1.7 կմ ասֆալտապատված է, ասֆալտապատված է նաև 1 և 2-րդ փողոցները՝ 6 կմ: Համայնքի մնացած ճանապարհներն ու փողոցները հիմնականում խճապատ են: Համայնքի կառուցված են կամրջակներ, որոնք գտնվում են վատ վիճակում: Համայնքում 30 րոպե պարբերականությամբ աշխատում է Լճաշեն – Սևան միկրոավտոբուսները, մարզկենտրոնի հետ տրանսպորտային կապ չկա: Համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշաններ տեղադրված են մայրուղուց գյուղ մտնող ճանապարհի սկզբնամասում:

Առևտուր և ծառայություններ

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների թիվը կազմում է 18 հատ, այդ թվում՝

- առևտրի փոքր օբյեկտներ-17 հատ, որոնք հիմնականում զբաղվում են ալկոհոլային խմիչքների, ծխախոտի և այլ տնտեսական ապրանքների վաճառքով
- հանրային սննդի (հանդիսությունների սրահ) օբյեկտ – 1 հատ

Կրթություն

Համայնքի տարածքում գործում է 1 դպրոց՝ <<Լճաշենի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ(24 փողոց 1 նրբանցք, թիվ 3), աշխատողների թվաքանակը՝ 65, դպրոցականների քանակը՝ 454, շենքային պայմանները գտնվում են բավարար վիճակում, վերանորոգման և գույք ձեռք բերելու կարիք ունի:

Նախադպրոցական հիմնարկի <<Մանչուկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ն (22 փողոց թիվ 10) ունի 2 խումբ, 70 սան, 13 աշխատող, կարիք ունի շենքի հիմնանորոգման ու նոր գույքի ձեռք բերման:

Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Համայնքում գործում է <<Լճաշենի մշակույթի տուն>>-ը (2-րդ փողոց թիվ 28), որը որը որպես առանձին միավոր չի գործում, այլ մտած է համայնքապետարանի աշխատակազմի մեջ, գործում է պարի, կարատեի խմբեր, ծերերի համար առանձնացված սենյակներ, շենքային պայմանները լավ են, 2012-2013թթ կապիտալ վերանորոգվել է պետական բյուջեի միջոցների հաշվին, <<Քաունթերփարթ ինթերնեշնլ>> միջազգային կազմակերպության և համայնքի

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

համատեղ ներդրումների հաշվին ձեռք է բերվել համապատասխան գույք, համայնքապետարանի միջոցներով անցկացվել է լոկալ ձեռռըցման համակարգ:

Համայնքքում գործում է գրադարան, որը նույնպես որպես առանձին միավոր չի գործում, այլ գտնվում է համայնքապետարանի աշխատակազմի մեջ, 2013թ-ին համայնքապետարանի միջոցներով կապիտալ վերանորոգվեց և <<Քաունթերփարթ ինթերնեշնլ>> միջազգային կազմակերպության և համայնքի համատեղ ներդրումների հաշվին ձեռք է բերվեց : 2016թ.-ին համայնքապետարանի գրադարանում առկա գրքերի քանակը կազմում է 12000հազ. կտոր: Ընթերցողների թիվը ընթացիկ տարվա 3 եռամսյակում կազմել է 258 մարդ (հավելված 6):

Համայնքում գործում է <<Լճաշենի մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ը, 70 սան, 11 աշխատատեղ: Այդ դպրոցն իրականացնում է արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն:

Համայնքում առկա է մարզադաշտը իր վթարային տրիբունայով, որը պահանջում է հրատապ լուծում: Հավելենք, որ Լճաշենի մարզադաշտը համարվում է մարզի ամենամեծ մարզադաշտը և չափերը համապատասխանում է միջազգային չափերին:

Համայնքում չկա մարզադպրոց, սակայն գործում են բոնցքամարտի, թեքվանդոյի, շախմատի խմբակներ, որտեղ հաճախում են մոտ 65 երեխա: Վերջերս մեր շախմատի խմբի 3 երեխաներ գրավեցին I կարգային տեղերը, բոնցքամարտիկները և թեքվանդոյի մարզիկները հանրապետության մաշտաբով գրավել են բազմաթիվ առաջին պատվավոր տեղեր և արժանացել համայնքապետարանի խրախուսմանը:

Հիմնախնդիրներ՝

- Մարզադաշտի կապիտալ վերանորոգում

- մարզադպրոցների շենքի կապիտալ վերանորոգման կարիք.
- մարզագույքի կարիք
- մարզադպրոցի ջեռուցման համակարգի կարիք.
- ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի արմատավորման ոչ բավարար մակարդակ:

Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ, բակային տարածքներ

Համայնքի տարածքում հենց կենտրոնում 2012-2013թթ կառուցվեց զբոսայգի <<Քաունթերփարթ ինթերնեշնլ>> կազմակերպության և Լճաշենի համայնքապետարանի համատեղ ներդրումներով և համայնքի բնակչության համատեղ ուժերով: Այստեղ երեկոյան ժամերին կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, այսինքն լուծվել է համայնքի բնակչության ազատ ժամանցի անցկացման վայրի հարցը:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Համայնքում գործում է նաև արարողությունների սրահը, որը 2010թ-ին ձեռք բերվեց համայնքապետարանի միջոցներով և համայնքապետարանի միջոցներով էլ վերանորոգվեց, ձեռք բերվեց համատասխան գույք և մինչև օրս բնակչությանը տրամադրվում է անվճար:

1.10.1.6. Ծաղկունք

Ծաղկունք գյուղը գտնվում է Հրազդան գետի աջափնյակում, մարզկենտրոնից 40 կմ հյուսիս-արևմուտք, Սևան քաղաքից 7 կմ հյուսիս-արևմուտք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1850 մետր բարձրության վրա, փոված Փամբակի լեռների բազուկը կազմող Սուրբ Հովհաննես, Աբազանց դռ, Խաչիդռ սարերի և Թափիդռ բլրի ստորոտին: Տարածքը՝ 3789.28 հա:



Պատմ ակ ան ակ ն ար կ

Ծաղկունքը հնագույն բնակավայր է՝ Վարաժնունիք - Ծաղկունք - Ծաղկունեաց (Ծաղկունիք) - Ծաղկաձոր գավառի շուրջ 40 հնագույն բնակավայրերից մեկը, դեռևս մեր թվագրությունից առաջ 520 թ., ունեցել է 45 տուն, ճանաչվել Վարաժնունիք մեծածավալ գավառի վարչական կենտրոն։ Գյուղի տարածքը ընդհատումներով շուրջ 4 կմ երկարություն է ունեցել։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ գյուղից դեպի արևելք ձգվող տարածքներում կան տնատեղեր, գերեզմաններ, խաչքարեր։ «Բոստաններ» և «Կորոբել» հանդամասերում հայտնաբերել են զինվորական տարբեր տեսակի նշտարներ, սրեր, շեփորանման գործիքներ, կճուճներ, պուտուկներ, քասաներ, աղամաններ և այլ գործիքներ։ 1976 թ. տրակտորիստները կալատեղերի գոմերի մոտ փորելիս հայտնաբերել էին կանացի զարդեր։ Զարդերը ներկայումս գտնվում են Երևանի ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում, որոնք 3.5 հազար տարվա պատմություն ունեն։

Շատ ավելի ուշ՝ 1828 թվականին, Թուրքմենչայի պայմանագրով Վարաժնունիք-ն անցնում է Ռուսաստանին։ Հենց այս թվականն էլ համարվում է Ծաղկունք ներկայիս գյուղի հիմնադրման պաշտոնական թվականը։ Այդ թվականին է, որ Իրանի Մակու քաղաքից գաղթած 17 ընտանիք՝ 102 հոգի, հաստատվում է Ծաղկունքում, ինչպես նաև ընտանիքներ են գաղթում Խոյից և Վանից 1828 - 29 թթ։ Ծաղկունքի բնակչությունն աճում է՝ 1831 թ. ուներ 512, 1897 թ.՝ 1457, 1926 թ.՝ 1561, 1939 թ.՝ 1675, 1959 թ.՝ 846, 1970 թ.՝ 871, 1979 թ.՝ 836, 1989 թ.՝ 1057, 2001 թ.՝ 1014, 2004 թ.՝ 1096 բնակիչ։ 1849 թվականից մինչև 1917 թվականը գավառն ընդգրկվում է Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի կազմում։ 1918-1920 թթ. առաջին անկախ Հայաստանի Ն. Բայազետի կազմում, 1920-1930 թթ. եղել է հայկական ԽՍՀ Ն. Բայազետի գավառի կազմում, 1930 թ. սեպտեմբերի 9-ին մտել է նոր կազմավորված Ներքին Ախտայի վարչական կազմի մեջ, 1937 թ. դեկտեմբերի 31-ից անցել է Սևանի շրջանի վարչական տարածքի մեջ, 1991 թ. սեպտեմբերի 21-ից հանդիսանում է անկախ Հայաստանի հանրապետության բնակավայր Սևանի շրջանում, իսկ արդեն 1996 թվականից՝ գյուղ Գեղարքունիքի մարզում։

Այժմյան Ծաղկունքի հողատարածքի երկարությունը հյուսիսից հարավ շուրջ 25 կմ է, իսկ լայնությունը տատանվում է 1-6 կմ սահմաններում։

Բնակ լ ի մ այ ակ ան պայ մ ան ն ե ր ը

Փամբակ լեռնաշղթայի Ծաղկունք լեռնաբազուկի փեշերի այս տարածքը, ուր տարածված է գյուղը իր արբանյակներ՝ Կոռորլե և Բոստաններ բնակատեղերով, հարուստ է բնական ոչ ջրառատ աղբյուրներով։ Ջուրը սառնորակ է, փափուկ, հանքային նյութեր քիչ են պարունակում, խմելու համար պիտանի է։ Զանգու գետի ձախ ափը, գյուղի տարածքից միջև Ցորնուկ (Մոլոկան) սարի մոտակայքը, զուրկ է բնական աղբյուրներից։ Այդ տարածքում քարացրոններ են (չինգիլ)։ Հողը սևահող է։ Ծաղկունք լեռնաբազուկի արևահայաց լեռնալանջերը հողագուրկ են և լվացված։

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Բուսածածկը նպաստավոր է ոչխարաբուծության համար, իսկ սարալանջերի արևելյան և հյուսիսային թեքություններում փարթամ բուսականություն է աճում և նպաստավոր պայմաններ է ստեղծում խոշոր եղջերավոր անասնապահության համար:

Գյուղի հողատարածքի ամենաբարձր գագաթը Զիարատ լեռն է (2233 մ): Մեյդանների գոգավորությունները ճահճուտներ են:

Հողերը լեռնատափաստանային և լեռնամարգագետնային սևահողեր են: Հարուստ են կարբոնատներով, առատ հումուս են պարունակում: Հզորության շերտը Մեյդաններում և Դարվեշալիքում (Երևան-Սևան մայրուղու մոտ) երբեմն հասնում է 50-70 սմ, հումուսի քանակը կազմելով 5-12%, իսկ առանձին հողատարածքներում հատկապես «Քրջոտ խաչից» դեպի արևմուտք, մինչև «Շողանի քար» սահմանները հողի հզորությունը նվազում է՝ հասնելով 15-20 սմ սահմաններին:

Վարելահողերի «Ալափափաղ» և «Խտորիք» հողակտորներում գերիշխում է կավահողը, հումուսի պակասի պատճառով այս տարածքների բերքատվությունը համեմատական կարգով պակաս է: «Գյուղի տակ», «Չիմաններ», «Բոստաններ» վարելահողերը կավ-ավազային են՝ մեծ ջրաթափանցելիությամբ: Այս հողերում ակոսային ջրման եղանակը իրեն չի արդարացնում: Ջրման աշխատանքներ նման հողատարածքներում անհրաժեշտ է կատարել անձրևացման եղանակով:

Սևանի բնաշխարհում ըստ պրոֆեսոր Գ. Աղաջանյանի տվյալների, հաշվվում է 1600 բուսատեսակ, որոնցից 1500-ը ծաղկավոր են: Ծաղկունքի հողատարածքում այն քիչ պակաս է: Որոշ, բայց ուրույն տեղ են գրավում դեղաբույսերը՝ հազարատերևուկը, երիցուկը, անթառամը, ուրցա, խավրծիլը, խատուտիկը, մայրամի ծաղիկը, ալբերանց արյունը, խոնդատը՝ կղմուխը, տատրակը, տերեփուկը և այլն:



Տարեկան միջին ջերմաստիճանը բարձրադիր վայրերում 2 °C է, ցածրադիր վայրերում՝ 5 °C: Հունվարի միջին ջերմաստիճանը -13 °C -18 °C է, հուլիսինը՝ +15 °C – +20 °C: Տարեկան տեղումները 500-600 մմ է, սակայն եղել են տարիներ, երբ տեղումներ չլինելու պատճառով աշնանացանները չեն ծլել: Հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին, գրեթե ամեն տարի կրկնվում է կարկտահարությունը, որը մեծ վնաս է հասցնում գյուղատնտեսությանը: Նաև վնաս են հասցնում գարնանային և աշնանային ցրտահարությունները: Եղել են տարիներ, որ ցրտահարությունները սկսվել են սեպտեմբերին սկզբին, երբեմն երկարել հասել մինչև հոկտեմբերի 10-15-ը: Գարնանային ցրտահարության վերջին ժամկետ է համարվում հունիսի վերջին օրերը, սակայն եղել են տարիներ, երբ ցրտահարության վերջին օրերը հասել են հուլիսի 4-10-ը: Գյուղատնտեսությանը մեծ վնաս է հասցրել նաև երաշտը:

Ծաղկունքի դարեր շարունակ բացի խմելու ջրից, նաև ոռոգման ջրի պակաս են զգացել: Սաքոնց, Աբազանց և Խաչի ձորերի ջրերը, որոնք բնական աղբյուրների ջրեր են, ձմռան ընթացքում գյուղացիներն օգտագործել են խմելու նպատակով, ամռանը՝ որոշ ընտանիքներ՝ ոռոգման նպատակներով: Ներկայումս ձորերի և մղիչ

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

պոմպերի ջրերի պակասի հետևանքով չորացել են մրգատու և դեկորատիվ ծառերը:

1970 թ. պետության հովանավորությամբ կառուցվեց էլեկտրական ջրամղիչ կայան, որն ապահովում էր ոռոգելի 120 հա տարածք՝ Ալափափախ և Գյուղատակ տարածքները, ներառյալ ազգաբնակչության պանանջները: Այնուհետև, երբ կոլտնտեսությունը վերացվեց պետական տնտեսության, ջրարբիացվեց «Դիմաց» հանդիմասի Դարվեշալիք, Մադեյ-գյուլ, Փոսեր և Դալիբուդա կոչվող վարելահողերը, որտեղ ջրումը նախատեսված էր ակոսային եղանակով, ջրամատակարարումը մղիչ պոմպերի օգնությամբ:

Խորհրդային միության փլուզումից հետո դադարեցվեց ջրամատակարարումը, ապակումլեկտավորվեց կայանները և այժմ գյուղը ամբողջապես դեռևս ապահովված չէ ոռոգման ջրով:

Բնակչություն

Ներկայիս բնակչության նախնիները գաղթել են Մակուից, Խոյից և Վանից 1828-1829 թթ.:

Ծաղկունքի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2011
Բնակիչ	512	1457	1561	1675	846	871	836	909	1014	901

Տնտեսություն

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային մշակաբույսերի և կարտոֆիլի մշակությամբ:

Պատմական հուշարձաններ

Սուրբ Հարություն եկեղեցի

Սուրբ Հարություն եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնական մասում: Կառուցման մասին պատմական տեղեկություններ չեն պահպանվել: Արտաքուստ ուղղանկյուն հատակագծով եռանավ բազիլիկ շինություն է, արևելյան մասում կա կիսաշրջանաձև խորան, դրա կողմերում կան 2 ավանդատներ: Խորանն աղոթասրահից անջատված է բեմով, հյուսիսային պատի արևելյան մասում մկրտարանն է: 1921 թ. «կարմիրների» կողմից գյուղը ուրբակոծումից հետո եկեղեցին վերանորոգվել է և արևմտյան պատին (արտաքուստ) պառկած վիճակում ագուցված է (շարված) երկու 13-րդ դարի խաչքար, իսկ հարավային պատին՝ մեկ խաչքար: Եկեղեցին ունեցել է գմբեթավոր զանգակատուն: Փլված՝ եկեղեցին վերանորոգել են առանց զանգակատան: Խաչքարերը պատի մեջ՝ պառկած վիճակում դնելը, վկայում է բոլշևիկյան կուսակցության վերաբերմունքը եկեղեցու նկատմամբ: Շինանյութը բազալտից է: Ըստ ճարտարապետական հորինվածքի և շինարարական տեխնիկայի 19-րդ դարի գործ է: Եկեղեցու առաջ կան 7 կանգուն խաչքար և մեկ տասնյակից ավելի գերեզմանաքարեր (10-19-րդ դդ):

Մուրբ Սարգիս մատուռ և եկեղեցի

Մուրբ Սարգիս մատուռը գտնվում է գյուղից 0,5 կմ արևելյան բլրի վրա: Թվագրվում է 7-19 դդ. ըստ ճարտարապետական վերլուծության և կատարման տեխնիկայի: Հատակագիծը խիստ խախտված է, այն հավանաբար եղել է եռախորան կենտրոնագմբեթ կառույց: Մուտքը արևմտյան կողմից է: Ներսում և արտաքուստ կան խաչքարեր, կառուցված է սրբատաշ գորշ բազալտից, մատուռի չափսերն են՝ 6.5x4.2մ): Ներսում և դրսում կան 10-15 դդ. խաչքարեր: Մատուռը վերականգնվել է և նրա կողքին 2006 թ. ավարտվել է նաև Մուրբ Սարգիս եկեղեցու կառուցումը՝ ճարտարապետ Վաչագան Թադևոսյանի նախագծով և բարերար Արսեն Աղաջանյանի հովանավորությամբ: Եկեղեցու օծման արարողությունը տեղի ունեցավ 2006 թ. հոկտեմբերի 7-ին: Մուտքի առաջ տեղադրված է գոհասեղան և ծակ քար, շրջակայքի գերեզմանները թվագրվում են 10-13-րդ դդ.:



Մատուռ Մուրբ Հովհաննես

Մատուռը կառուցվել է 10-13-րդ դարերում, գտնվում է գյուղի հյուսիսային մասում, բլրի գագաթին, ավերված է: Խաչքարերը թվագրվում են 12-13-րդ դդ., գտնվում են պատվանդանի վրա: Ասում են, որ մատուռը եղել է երդման արարողության վայր: Գյուղ այլևս չվերադարձողները, մանավանդ երբ մարդը վատ բան է կատարել և երես չի ունեցել գյուղ վերադառնալու գնացել է Մուրբ Հովհաննես, երդվել, որ այլևս չի վերադառնալու, իսկ եթե հանկարծ վերադարձել է՝ չոքեչոք մոտեցել է խաչերին՝ երդվել, որ վատ արարք այլևս չի կատարի և նոր վերադարձել է գյուղ:

Մատուռ Ծիրանավոր

Թվագրվում է 12-13-րդ դդ., այժմ ավերված է: 12-13-րդ դդ. խաչքարերի վրա դրված բազալտե սալը, ըստ գյուղի մեծերի, տեղադրել է հաշտարար Միմոնը, որպեսզի խաչերին չոքեչոք մոտենան:

Մատուռ Ծաղկվանք

Մատուռն ավերված է, գտնվում է գյուղի հարավային մասում: Ըստ մեծամեծերի պատմածի դրա տեղում կառուցված է եղել գմբեթավոր եկեղեցի, սակայն 1604 թ. Շահ Աբասը ազգաբնակչությանը տեղահան անելու ժամանակ ավերել է: Հետագայում դրա տեղում կառուցվել է մատուռ: 1940 թ. մատուռը

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսյալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

քանդել և խաչերն ու քարերը, լցրել են գյուղի տակ կառուցվող դպրոցի պատերի հիմքը: Ներկայումս տանիքը պատված է ագրոթիթեղով:

Սաքունց գերեզմանոց

Գերեզմանոցը գտնվում է հյուսիսարևմտյան մասում, թվագրվում է 10-20-րդ դդ: Կան ոչ անվանական խաչքարեր, կա ութաձև, երևի եկեղեցու կամ կատուռի ինքնատիպ, քարերով լեցուն հիմք, որը պեղման կարիք է զգում:



Թաք խաչ

Կառուցվել է 12-13-րդ դդ., գտնվում է Ծաղկունք-Դդմաշեն տանող ճանապարհի ձախակողմյան մասում, Ծաղկունք-Դդմաշեն հանդամասերը բաժանող գծից շուրջ 40 մ դեպի Ծաղկունք: Դրանից դեպի հարավ՝ Զանգու գետի ափին է գտնվում Ծաղկունք գյուղի արբանյակ Չիչակլի գյուղատեղը: Գյուղատեղում կան գերեզմանաքարեր, ջրաղացների մնացորդներ:

Քրջոտ խաչ

Խաչը թվագրվում է 12-13-րդ դդ, կոտրված է, գտնվում է Զանգու գետի ձախ ափին, ջրաղացների տեղից հարավ, գետից նույն հեռավորության վրա, որտեղ «Թաք խա»-ն է: «Քրջոտ խաչ» են անվանել այն պատճառով, որ քարափի մեջ աճել է մասրենին, որի ճյուղերին ուխտավորները իրենց շորերից, թաշկինակներից, գլխաշորերից մի պատառիկ են կպցրել և մինչև օրս էլ կպցնում են՝ հավատալով, որ ցավը ծվենի պես մարմնից դուրս կթռչի և կհեռանա:

Մեծ Հայրենականում զոհված ծաղկունքցիների հիշատակի հուշահամալիր

Համալիրը կառուցվել է Գագիկ Ավագյանի նախագծով ու նախաձեռնությամբ՝ նվիրված 1941-1945 թթ Մեծ Հայրենականում զոհված ծաղկունքցիների հիշատակին: Ռաֆիլ Մկրտչյանի խորհրդով ու նախաձեռնությամբ պայմանագիր կնքվեց քանդակագործ Սամվել Մանասյանի հետ, որը ձեռքի տակ ուներ ներկայիս կառույցի արծվի փոքրիկ գիպսաքանդակ մակետը: Բազալտեկոփ արծվի թևերի հովանու ներքո, հաղթանակած հայրենի զինվորը ձախ ձեռքով սուրը խրել է հողի մեջ. Պատերազմին ասելով՝ ոչ և հայացքը ողողել է դեպի աջ ձեռքում բռնած խաղաղության ջահին: Արծվի հայացքը ուղղված է դեպի արևելք՝ սպասելով արևի արարող ճառագայթներին և միաժամանակ պաշտպանելով հաղթանակած զինվորի թիկունքը՝ հայրենի հողը:

Կոթողից ներքև կառուցված է «Պատմության անիվի հետագիծ» պատը իրենից ներկայացնում է աշխարհում տեղի ունեցած հասարակական-քաղաքական ուժերի բախումից, ֆաշիստական Գերմանիայի կողմից առաջ քաշած աշխարհը վերաբաժանելու հարցը և իր վայրենի, մարդակեր բնույթով փոխում է պատմության անիվի հետագիծը: Արծվամարմին զինվորի առջև բխում են 2 ցայտաղբյուր՝ բնութագրելով դրանց հոգիներից բխող պարզությունն ու

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսլ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

գույլալությունը: Խորհրդանշող պատը շարված է 2 ճանապարհը բաժանող սահմանագծի վրա: Նախքան մուտքի աստիճաններով բարձրանալը մի պահ կանգ առեք և նայեք արծվի գլխին և ձեր առջև կհանդիպեք «Խաչի դռ» և «Սև արոտ» բլուրների համադրումից ստացված լեռնային թներով արծվի տեսք՝ թռչելիս: Ճակատամասում բազալտե սալիկի վրա փորագրված է՝ «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել»:

Դպրոցը

19-րդ դարավերջին մեկ կամ երկդասյա դպրոցներ են բացվում Ծաղկունքում, իսկ 1907 թ. ցարի կողմից հրաման է տրվում Ծաղկունքում բացել մեկ դասարան 44 աշակերտներով: Արդեն 1919 թվականին, ըստ նշված վկայությունների, դպրոցն անջատվել է եկեղեցուց: 1920 թ. դասասենյակներ են ծառայել Նավոնց օթախները, Գևորգյան Արամի, Էլիզբարանց, Գևորգյան Գևորգի, Սառանց Գրիգորի, Մնացականանց Հովհաննեսի, Պուճուրանց Գրիշի, Գոքորի Աղոյի և ուրիշ բնակարաններ: Գյուղի երիտասարդությունը կրթությունը շարունակում է Դիլիջանում, Քանաքեռում և Երևանում: 1939-1940 թթ. գյուղխորհրդի նախագահ Գարեգին Ավագյանի և կոլեկտիվ տնտեսության նախագահ Մուշեղ Հովսեփյանի ջանքերով Երևանում նախագծվում է 320 աշակերտների համար դպրոցական շենք, որը իրականացվելու էր Սևանի կոմունալ բաժնի կողմից: Շենքը շահագործման է հանձնվել 1942 թ: Ավելի ուշ «Դար» հիմնադրամի միջոցներով 2007 թ. հոկտեմբերի 7-ին շահագործման հաձնվեց գյուղի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը:



1.10.1.7. Ծովագյուղ

Ծովագյուղ (մինչև 1935 թ. Չիբուխլու) գյուղը գտնվում է Սևանա լճի ափին՝ Սևան քաղաքից 10 կմ հյուսիս-արևմուտք: Ծովագյուղում և շրջակայքում պահպանվել են Քառատափ գյուղատեղին, եկեղեցի, ամրոցի ավերակներ (Ք. ա. առաջին հազարամյակ), գերեզմանոցներ, խաչքարեր: Գյուղում վերաբնակվել են Բայազետի Արծափ գյուղից եկածները՝ 1830 թ: Գյուղն ունի 4030 բնակիչ: Տղամարդիկ կազմում են բնակչության 49 տոկոսը: Համայնքի վարչական տարածքը՝ 7314.92 հա:

Բնակչության

Ըստ ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքների՝ Ծովագյուղի մշտական բնակչությունը կազմել է 3943, առկա բնակչությունը՝ 3624 մարդ: Գյուղը բնակեցված է հայերով,

Տարի	Բնակչություն
1831	845 մարդ
1873	1102 մարդ
1897	1808 մարդ
1926	2354 մարդ
1939	2647 մարդ
1959	2005 մարդ
1970	2886 մարդ
1979	3221 մարդ
1989	3412 մարդ
2001	4018 մարդ
2011	3943 մարդ

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

որոնց նախնիները 1830 թ. եկել են Բայազետի Արծափ գյուղից: Ծովագյուղի բնակչության փոփոխությունը ժամանակի ընթացքում՝ ստորև.

Պատմությունը

Ծովագյուղը մինչև 1935 թվականը կոչվել է Չիբուխլու, որը Ճիպոտիկ կամ Ճապոտիկ անվան թուրքական արտահայտություն էր՝ սկսած 17-րդ դարի վերջերից: Գյուղը մշտական կապերի մեջ է եղել Սևանա վանքի հետ:

Վերաբնակեցված գյուղի առաջին վերաբնակիչների մեջ մեծ թիվ էին կազմում արհեստավորները: Տեղավորվելով հայկական հինավուրց գյուղի ավերակներում՝ վերաբնակիչները հենց առաջին տարում կատարեցին ցորենի, գարու, վուշի, կտավատի ցանք, մշակեցին ծխախոտ: Սևանի շրջանի մյուս գյուղերի համեմատությամբ Չիբուխլուի բնակիչներն իրենց հետ բերել էին ավելի շատ ոչխար, մոտ 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և 110 ձի: Նրանք վերակառուցեցին չորս ջրաղաց և երկու ձիթհան, մշակելի դարձրին ընդարձակ խոտհարքներ, օգտվում էին անտառի բարիքներից և Ձկնագետի ու Սևանա լճի ձկան առատ որսից:

1873 թվականի տվյալներով գյուղում կար 114 ծուխ՝ 1112 բնակիչներով, որոնցից 554-ը տղամարդ:

1921 թվականի սկզբին կազմակերպվեց գյուղխորհուրդ:

1923 թվականին գյուղում գործում էր առաջին բատրակկեմը, որի ղեկավարն էր Վիրաբ Բաղդասարյանը:

Կոլտնտեսությունը ստեղծվել է 1929 թվականին, խորհոնտեսության է վերածվել 1964 թվականին: Դա Հայաստանում կազմակերպված առաջին անասնապահական տնտեսություններից էր, որը զբաղվում էր նաև հացահատիկի, կերային կուլտուրաների, կարտոֆիլի, կաղամբի մշակությամբ:

Շուկայ ու ոլորների մասնակցությունը Հայ բենակնս պարտազմին

784 ծովագյուղացիներ մեկնեցին Հայրենական պատերազմ: Նրանցից 202-ը զոհվեց ռազմի դաշտում, իսկ 29-ը մնացին անհետ կորած: Ծովագյուղի զավակները փայլուն մարտիկներ և հրամանատարներ էին: Ճարտարապետ Շավարշ Մանուկյանը 1938 թվականին զորակոչվում է բանակ, ծառայում է նախ Կալինում, ապա լատվիական Ռեժիցա քաղաքներում: Նա զոհվեց առաջին մարտերից մեկում:

Պատերազմին մասնակցեցին Բալաբեկ Սանեյանը և նրա որդիներ Սոկրատն ու Հրանտը: Բալաբեկն ու Սոկրատը զոհվեցին Կովկասի համար մղված մարտերում, իսկ Հրանտը՝ Ուկրաինայում: Քաջ կովոդներից էր սերժանտ Սուրեն Թովմասյանը: Նա հերոսական 89-րդ Թամանյանի կազմում Կովկասից հասավ Բեռլին:

Անմոռաց է կոլտնտեսության առաջին գյուղատնտես Ավետիք Հակոբյանի կերպարը: Նա մեկնեց բանակ, դարձավ տանկիստ և քաջի մահով ընկավ

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

մարտադաշտում: Քաջաբար կովեց և զոհվեց դասակի հրամանատար Համազասպ Պողոսյանը:

Նարոցը

Գյուղի առաջին դպրոցը հիմնադրվել է 1902 թվականին՝ չիբուխեցի Խաչատուր Տեր-Միսնասյանի ջանքերով: Երկսեռ, եռամյա ծխական դպրոցը հիմնականում պահպանվում էր հայ եկեղեցու ծախսերով: Աշակերտների թիվը մշտապես տատանվել է: 1912 թվականին սովորում էր 104 աշակերտ, որից 10-ը աղջիկ, դպրոցը զբաղեցնում էր երկու սենյակ: 1914 թվականին սովորողների թիվը դարձել է 55, որից՝ 5-ը աղջիկ: Գյուղի դպրոցի առաջին շենքը կառուցվել է 1930 թվականին, երկրորդը՝ 1937 թվականին, իսկ վերջին հոյակերտ շենքը՝ 1937 թվականին: Դպրոցը տվել է փայլուն շրջանավարտներ՝ գյուղատնտեսներ, մեխանիզատորներ, անասնաբույժներ, բժիշկներ:



1.10.1.8. Նորաշեն

Նորաշեն, գյուղ Սևանի տարածաշրջանում, Սևան քաղաքից մոտ 7 կմ հարավ-արևելք, Սևան լճի ափին, ծովի մակարդակից 1920-1940 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոն Գավառից ճանապարհով կազմում է մոտ 24 կմ: Վարչական տարածքը՝ 1303.95 հա:

Նախկինում գյուղն ընդգրկված է եղել Ցարական Ռուսաստանի Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում: Խորհրդային տարիներին մասն է կազմել Հայկական ԽՍՀ Նոր Բայազետի գավառի, 1930 թվականից՝ Ախտայի (հետագայում՝ Հրազդանի), իսկ 1937 թվականից՝ Սևանի շրջանի: 1995 թվականից մտնում է ՀՀ Գեղարքունիքի մարզի մեջ: Վերանվանվել է Նորաշեն 1938 թ. հունվարի 4-ին:

Բնակչություն

Նորաշենի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	Բնակչություն
1831	28 մարդ
1897	422 մարդ
1926	269 մարդ
1939	428 մարդ
1959	308 մարդ
1970	331 մարդ
1979	324 մարդ
1989	367 մարդ
2001	460 մարդ
2011	475 մարդ

1.10.1.9. Չկալովկա

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Չկալովկա (նախկինում՝ Ալեկսանդրովկա, Ադեկսանդրովկա, Զեյնալ [Աբեդին], Զեյնալ Ադալի, Պալա Պոստնիկ), գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում: Նախկինում Ալեքսանդրովկա անվան տակ ընդգրկված է եղել Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում: Աչքի է ընկնում խիստ կլիմայով: Չկալովկա է կոչվել (26.04.1946թ) ի հիշատակ ականավոր օդաչու Վ. Չկալովի: Հիմնադրել են Ցարական Ռուսաստանի Պոլովոժիեի, Սարտովի, Տամբովի նահանգներից

Եկած ռուսները 19-րդ դարի 1-ին կեսին և մինչև 1926 թվականը ռուսաբնակ էր: 04.12.1995 թվականին մտել է Հայաստանի Գեղարքունիքի մարզի մեջ: Վարչական տարածքը՝ 2585.21 հա:

Բնակչություն

Չկալովկայի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	Բնակչություն
1831	45 մարդ
1897	204 մարդ
1926	377 մարդ
1939	491 մարդ
1959	491 մարդ
1970	479 մարդ
1979	424 մարդ
1989	455 մարդ
2001	503 մարդ
2011	516 մարդ

1.10.1.10. Մեմյոնովկա

Մեմյոնովկա, գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում: Համայնքը հիմնադրվել է 1845 թվականին, Ռուսաստանից արքայական աղանդավորների՝ մոլոկանների կողմից: Գյուղը կոչել են ռուս ճանապարհորդ Մեմյոնովի անունով: Այն բնակեցված է եղել մոլոկաններով, ռուսներով, հայերով և քրդերով: Վարչական տարածքը՝ 2947.55 հա:

Մեմյոնովկա գյուղը գտնվում է Արեգունի և Գեղամա լեռների արանքում, ծովի մակարդակից 2114 մ բարձրության վրա: Հարավային մասով անցնում է Ձկնգետը, որը թափվում է Սևանա լիճը:

Համայնքը ունի դպրոց, օդերևութաբանական կայան, գյուղապետարան, համայնքային գրադարան, բուժկետ: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է: Կապված կլիմայական ցուրտ պայմանների հետ հողագործությունը զարգացած չէ:

Բնակչություն

Տարի	Բնակչություն
1873	298 մարդ
1897	509 մարդ
1926	232 մարդ
1959	495 մարդ
1970	442 մարդ
1979	375 մարդ
1989	290 մարդ
2001	291 մարդ

Ըստ ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքների՝

2011	253 մարդ
------	----------

 Մեմյոնովկայի մշտական բնակչությունը կազմել է 253, առկա բնակչությունը՝ 233 մարդ: Մինչև 1950-ական թվականները գյուղը բնակեցված է եղել գերազանցապես ռուսներով, այնուհետ՝ հայերով: Մեմյոնովկայի բնակչության փոփոխությունը ժամանակի ընթացքում՝ ստորև.

1.10.1.11. Վարսեր

Վարսեր, Չրոչրո, Չըրջըր, Չրչըր, Չրչու, Սուրթոքյան, Սուտուկույան, Վարսել, Վարսեր-Սուտուկյան), գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, նախկին Սևանի շրջանում, Սևան քաղաքից փոքր-ինչ հարավ-արևմուտք, Հրազդանի ցամաքած հունի հովտում, լեռնալանջի վրա: Նախկինում մտել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Գեղարքունի գավառի, այնուհետև Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի մեջ: Մայրաքաղաք Երևանից գտնվում է 50 կմ հեռավորության վրա: Վարչական տարածքը՝ 3659.59 հա:

Անվան ստուգաբանությունը

Դեռևս մեր թվարկությունից առաջ այս տարածքում եղել է հին բնակատեղի: Մի քանի տասնամյակ առաջ Հրազդան գետը հոսում էր այս գյուղի մատույցներով: Հորդառատ գետի ջրերը այստեղ հասնելով մեծ սահանքին՝ գահավիժում էին բարձրաբերձ բարձունքից, զարնվում բազալտե ժայռերին և վերածվում ջրափռշու սպիտակ ամպի՝ շրջապատը լցնելով խուլ ու զարհուրելի դղրդյունով: Բնության այդ հրաշքը իր հազարամյա գոյության ընթացքում մի քանի անգամ տարբեր առումներով հիմք է ծառայել գյուղի անվանակոչման համար: Այս գյուղի պատմական անունը, որ գրավոր աղբյուրներից հիշատակվում է 10-րդ դարից, Վարսեր է: Վարս նշանակում է ոչ հյուսածո, արձակ ծամ: Ըստ մեզ հասած ավանդազրույցի, արաբական տիրապետության ժամանակներում մի քանի արաբ զորականներ այստեղ հետապնդել են մի գեղեցիկ հայուհու: Վերջինս, խուսափելով հարբած զինվորներից՝ այլ բան չի գտնում նրանցից ազատվելու և իրեն նետում է գահավեժ անդունդը: Հարազատները նրան փնտրելիս ջրվեժի անմատչելի քարերի արանքում նկատում են նրա մազերը՝ Վարսերը... Կան գյուղի անվանակոչման մի քանի այլ տեսակետներ: Ըստ դրանցից մեկի, հավանական է, որ գյուղի անունը առաջացել է Վարսել բառից, որը նշանակում է ուժգնորեն հարվածելով՝ խփելով թակով ծեծելով մտցնել (գետնի մեջ): Այստեղ ևս նկատի է առնվել ահռելի ուժով գետնի մեջ մխրճվող ջրի հարվածը: Տեղացիները ջրվեժն անվանել են Չոռ, որից էլ գյուղը անվանակոչվել է Չոչո:

Պատմական տեղեկանք

Վարսեր գյուղը ունի դարերի պատմություն: Վարսեր գյուղը, որպես բնակավայր, առաջին



«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

անգամ հիշատակվել է 9-րդ դարում: Մինչև 1947 թ. կոչվում է Չոչո: Սակայն գյուղն ունի ավելի վաղ պատմություն: Դրա ապացույցն են 1960-ական թվականներին հարավ-արևմտյան մասում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված հնագիտական նյութերը: Դեռևս մ.թ.ա. այստեղ եղել է բնակատեղի: 874 թվականին Վարսերը եղել է վանքապատկան գյուղ, պատկանելով Սևանա կղզու Սբ. Առաքելոց և Սբ. Աստվածածին եկեղեցիներին: 925 թվականին վարսերցիները մասնակցել են արաբ Բեշիրի դեմ ուղղված հայոց Աշոտ Երկաթ թագավորի ճակատամարտին: Այնուհետև Վարսերի պատմությունը հիմնականում կապված է վանքի գործունեության հետ: Սակայն հետագա դարերում թուրք-թաթար և պարսկական նվաճումների ժամանակ գյուղի տարածքը 1600 թ-ից մինչև 1928 թվականը ամբողջովին ամայանում է: 1928 թվականին ռուս -պարսկական պատերազմից հետո կնքված Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ: Պարսկաստանում ապրող հայերին իրավունք է տրվում իրենց շարժական գույքով տեղափոխվել ռուսական տիրապետության տարածքներ: Այդ ժամանակ շուրջ 9 հազ ընտանիք վերաբնակեցվում է Զանգու գետի ափին և նախկին Վարսերի փլատակների վրա հիմնում նոր Չոչո գյուղը: Մինչև 1895 թվականը գյուղում տնտեսությունների թիվը հասնում է 64-ի: Այդ ժամանակաշրջանում, Վարսերը և շուրջ 23 գյուղեր մտնում էին Դարաչիչակ գավառի կազմի մեջ: 1936 թվականին (ըստ գյուղացիների թուրքերի կողմից) գյուղում կառուցվում է հիդրոէլեկտրակայան և շուրջ 13 ջրաղաց, որոնք գործում են մինչև 1949 թվականը:

Բնակչությունը

Թվականը	1831	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2004	2008	2010	2011	2016
Բ.Թ	126	778	1225	1452	1458	1616	1474 (295ընտ.)	1524 (305ընտ.)	1738	2010	2017	1850 (414ընտ)	2024	2030 (490ընտ)

Բնակչությունը մեծ մասամբ հայ են որոնց մի մասի նախնիները 1828 թ-ին գաղթել են Պարսկահայաստանի Խոյի ու Մակուի շրջանների գյուղերից և 1829 թ-ին Արմ Հայաստանի Բայազետ քաղաքից: Ըստ 2001 թվականի մարդահամարի տվյալների գյուղում առկա բնակչությունը՝ 1626 է, իսկ մշտական բնակչությունը՝ 1738, որոնցից կանայք՝ 880 են, տղամարդիկ՝ 858-ը:

Նշանավոր տոհմերը

Արդության տոհմ—միջնադարյան Հայաստանի հին, ազնվական ու նշանավոր տոհմերից մեկն էր 10-14-րդ դարերի հատվածում, որը համարվում էր Զաքարյան իշխանների հետնորդը: Հիշատակվող ժամանակաշրջանում տիրում է Հայաստանի հյուսիսարևելյան շրջանի գյուղերին: Այս տոհմից էր նշանավոր մանրանկարիչ Առաքե Գեղամեցին, ով իր հիշատակարաններից մեկում հաստատում էր իր ազնվական սերումը: 16-17-րդ դարերում տոհմն արդեն կորցրել էր իր նախկին նշանակությունը:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Միսարգրձելի և Դորգոլուկներ- միջնադարյան Հայաստանի հին ու նշանավոր հուսորից է ովքեր 10-րդ դարում համարվում էին Զաքարյան ների հետնորդները:

Գափոենց տոհմ-Վարսեր գյուղի ամենամեծ տոհմն է: Պապերը գաղթել են Պարսկահայքից դեռևս 1828 թվականին: Տոհմի Նախապապ Գաբրիելը Մակուից վերադառնալիս գետից ջուր է ցանկացել վերցնել: Այդ ժամանակ քուրդ ասքյարները նրան սպանել են, իսկ աղջկան առնանգել: Գաբրիելի երկու որդիներից մեկը խմբից հետ է մնացել, գտել քրոջը և վերադարձել ու հաստատվել Զանգուի հովտում:

Տնտեսությունը

Վարսերցին զբաղվում է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և հողագործությամբ: Անասնապահական տնտեսություններն զբաղվում են նաև հացահատիկի (գարնանացան գարի, ցորեն, հաճար), կերային կուլտուրաների (առվույտ, կորնզան) և կարտոֆիլի մշակությամբ: 1991 թվականին անցել է գյուղացիական-մասնավոր և կոլեկտիվ տնտեսվարման:

	Հյուղի անվանումը	Համայնքի մարդկանց/ տնտեսությունների ներգրավվածությունը հյուղի մեջ
1.	Անասնապահություն	70%
2.	Հողագործություն	50% մշակում են վարելահողերի 30%-ը
3.	Այգեգործություն	միայն տնամերձերում
4.	Մեղվաբուծություն	4-5 տնտեսություն

Հողային ֆոնդ

Գյուղի հողերի ընդհանուր մակերեսը 3659,59 հա: Մշակվում է 332 հա վարելահող, որից 180 հա՝ գարի, 50 հա՝ աճար, 10 հա՝ ցորեն, 92 հա՝ կարտոֆիլ և 13 հա՝ բանջարաբուստանային կուլտուրաներ: Մարզի հողային ծածկույթի էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են արևելյան և հյուսիսային հատվածներում՝ 46-70%-ի սահմաններում, առանձին հատվածներում այն նույնիսկ գերազանցում է 70%:

Անասնապահություն

Տարածված է կաթնատու և կաթնամսատու տավարաբուծությունը: Կաթը մթերվում է, և ամբողջ արտադրության կեսից ավելին ենթարկվում է արդյունաբերական վերամշակման: Գյուղում գործում է կաթի վերամշակման գործարան:

Խորոք եղջերավոր անասուններ

Դասակարգումը	Ֆերմաների քանակը	Գլխաքանակը
Խոշոր	0/5	20 և ավելի
Միջին	15/3	10-20

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Մանր	356/348	մինչև 10
------	---------	----------

Մանր եղջերավոր անասուններ

Տարածված է էքստենսիվ ոչխարաբուծությունը: Քիչ թվով տնտեսություններ պահում են նաև այծեր:

Դասակարգում	Ֆերմերների քանակը	Գլխաքանակը
Խոշոր	0/5	50 և ավելի
Միջին	15/3	20-50
Մանր	256/348	--

Բնալի իսկա սկսն ադ մանները

Ընկած է Սևան քաղաքից փոքր-ինչ հարավ-արևմուտք, 3.6 կմ հեռավորության վրա, Հրազդանի ցամաքած հունի հովտում, լեռնալանջի վրա: Լեռը տեղացիները կոչում են `Բարոժ: Ռելիեֆը գերազանցապես լեռնոտ է, միայն արևմտյան մասն է հարթ: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը` զով: Միջին տարեկան ջերմաստիճանը 6 ° C է: Ամենատաք ամիսը օգոստոսն է, երբ միջին ջերմաստիճանը 20 ° C է, իսկ ամենացուրտը` հունվարը, երբ ջերմաստիճանը հասնում է մինչև -10 ° C-ի: Տարեկան միջին տեղումների քանակը կազմում է 749 մմ: Ամենախոնավ ամսին (մայիս ) տեղումները կազմում են 109 մմ, իսկ ամենաչոր ամսին (օգոստոս )` 26 մմ: Հողի սառցակալման խորությունը կազմում է 72 սմ, իսկ առավելագույնը` 114 սմ: Քամիներն հիմնականում արևմտյան ու արևելյան են `2,6-4,6 մ/վրկ արագությամբ: Արևոտ օրերի թիվը ամռան ամիսներին տատանվում է 25,0% ի սահմաններում: Ամենաբարձր կետը գտնվում է գյուղից 2,4 կմ հյուսիս-արևելք: Բարձրությունը կազմում է 2281 մ: Գյուղի հարավային մասից, շուրջ 6 կմ հեռավորության վրա ձգվում է Գեղամա լեռնաշղթան:

Բնակավայրի սահմանները և դիրքը

Բնակավայրի ողջ տարածքը գտնվում է Հրազդան գետի նախկին հովտում և սահմանակից է հետևյալ համայնքներին.

- Արևմուտքից և հյուսիսից- Գեղամավան գյուղին (ընդհանուր երկարությունը 10154 մ է)
- Հյուսիս արևելքից- սահմանակից է Ծովագյուղ (ընդհանուր երկարությունը 2275 մ է)
- Անմիջապես արևելքից և հարավ-արևելքից-Սևան քաղաքին (ընդհանուր երկարությունը 3496 մ է)
- Հարավ-արևելքից և հարավից-Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղին (ընդհանուր երկարությունը 802 մ)
- Արևելքից-Լճաշեն գյուղական համայնքին (ընդհանուր երկարությունը 21229 մ է)
- Հարավից-Չկալովկա համայնքին (ընդհանուր երկարությունը 1326 մ է):

Կառուցապատման համար նախատեսված հողատարածքները չի գերազանցում գյուղի տարածքի 4,85%-ը, իսկ մնացած հատվածները արժեքավոր գյուղատնտեսական հողեր են և արոտավայրեր: Վերջին տարիներին բնակավայրը

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

գարգացել է դեպի հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք և արևմուտք: Գտնվելով լեռնային և բարձր լեռնային գոտում, գյուղը սարահարթային մասում հաշված գետահովտից, հասնում է 2200-2300 մ բարձրության: 1997 թվականից Վարսեր գյուղի հսկողության տակ են գտնվում "Սևան" ազգային պարկի հողային ֆոնդի մի հատվածը:

Գեոմորֆոլոգիական պայմանները և տարածքի երկրաբանական կառուցվածքը

Վարսեր գյուղի տարածքը ընկած է Գեղամա լեռների, Փամբակ լեռնաշղթայի հյուսիսարևմտյան լանջերին, բավական պարզ ռելիեֆային պայմաններում: Հիմնական հարթությունները գտնվում են գետի հունի դարավանդում, իսկ ընդհանուր առմամբ տարածքը ներկայացված է մինչև 15 աստիճան լանջերից և գետաձորակային համակարգից: Ռելիեֆի նիշերը տատանվում են ոչ մեծ ինտերվալում՝ արևմուտք-հյուսիս-արևմուտքում 2010-2030, հարավ-արևելքում 2020-ից մինչև 2030, իսկ հյուսիս-արևելքում հասնում է մինչև 2040 մետրի: Գյուղի տարածքի բարձրադիր հատվածներում մերկանում են ստորին չորրորդական ժամանակի անդեզիտներ, անդեզիտադաշտներ, բազալտները, որոնք ծածկում են տեկտոնա-հրաբխային զանգվածքներին: Այլուվիալ կուտակումները մեծ տարածքներ են զբաղեցնում: 1981 թվականին Հայկական գեոդեզական ինստիտուտի երկրաբանների կողմից, գյուղում անցկացվել է երկրաբանական ուսումնասիրություններ: Կատարվել է հորատանցքերի հորատում, գրունտների ֆիզիկաքիմիական բնույթի որոշում: Արդյունքում կազմվել է գյուղի երկրագիտական քարտեզը:



Լանդշաֆտային գոտիների դասակարգումը

Վարսեր գյուղի տարածքը ընկած է բնական լանդշաֆտային գոտում: Հիդրոերկրաբանական տեսանկյունից առկա են գրունտային ջրեր:

Հաշվի առնելով բնակավայրի լանդշաֆտային գոտու լեռնայնությունը, հետագա դասակարգման տասքսոնոմիկ միավոր է ընդունվել լանդշաֆտի քաղաքաշինական օգտագործման ձևերը՝

- կառուցապատված լանդշաֆտներ
- կառուցապատման ենթակա լանդշաֆտներ
- գյուղատնտեսական նշանակության հողահանդակներ
- անտառտնտեսության հողեր
- անօգտագործելի տարածքներ և ենթատարածքներ

Կառուցապատման ենթակա լանդշաֆտների օգտագործման ռեժիմը նախատեսում է՝

- Կառուցապատման կանոնակարգում՝ բնակչության և կառուցապատման համապատասխան խտությունների կիրառումով:
- Հարմարավետ կապերի ստեղծումը:
- Ճարտարագիտական նախատեսման միջոցառումների կիրառում

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

- Տարբեր օբյեկտների և ենթակառուցվածքների սանիտարական գոտիների պահպանման պահանջների կիրառում, որը իր մեջ ընդգրկում է՝
 - ագրոտեխնիկական միջոցառումներ,
 - մարգագետինների հողաբարելավման միջոցառումներ
 - ջրատեխնիկական միջոցառումներԱնտառտնտեսության գոտում նախատեսվում են՝
 - անտառածածկ տարածքների բարենպաստ պայմանների ստեղծում
 - անտառների բուսիտետի բարելավվում

Էկոլոգիական հիմնախնդիրները և շրջակա միջավայրի պահպանությունը

Արտադրական համալիրի ամբողջական քայքայման, արտադրության, ընդ որում վտանգավոր արտադրական օբյեկտների բացակայության պայմաններում բնակավայրում էկոլոգիական վիճակի սրություն չկա: Համայնքի տարաբնակեցման համար պիտանի տարածքներում տարանջատված են տարբեր քաղաքաշինական-տնտեսական յուրացվածություն ունեցող գոտիներ, սակայն տարերային կառուցապատման համար հաճախ՝ քաղաքաշինական զարգացման ռեժիմի սահմանափակումները հաշվի չեն առնված, որը հանգեցրել է նաև էկոլոգիական հավասարակծության դանգարման: Սակայն ինչպես ողջ մարզում, այնպես էլ համայնքի կամ նրան կից տարածքներում տրանսպորտային ենթակառուցվածքների տեղադրվածությունը բնակեցման համար պիտանի տարածքներում, բնության հատուկ պահպանվող տարածքների առկայությունը (արգելավայրեր, արգելոցներ, ազգային պարկ), գեոդինամիկ պրոցեսների (սահքեր, հեղեղներ), առկայությունը, Սևանա լճի էկոլոգիական իրավիճակը, ապօրինի կառուցապատումները նվազեցրել են գյուղատնտեսական, հատկապես՝ դաշտավարության նպատակներով օգտագործվող հողատարածքները: Վարսեր բնակավայրի համար՝ արժեքավոր գյուղատնտեսական հողերի, տնկովի անտառային զանգվածի առկայության, տարածքի քաղաքաշինական-տնտեսական անհամամասն յուրացվածության պատճառով: Տարաբնակեցման համալիրը կարող է մասամբ զարգանալ մեծ թեքություն ունեցող, գյուղատնտեսության համար ոչ պիտանի տարածքներում՝ շրջակա միջավայրի պահպանության, ինժեներական նախապատրաստման միջոցառումների, կենսագործունեության համար հարմարավետ միջավայր ստեղծելու նկատառումով: Վարսեր բնակավայրի տեղանքի և շրջակա միջավայրի տարրերի նկարագրությունը, ինչպես նաև բնակչության կենսագործունեության ազդեցության վերլուծությունը ցույց է տալիս, որ բնապահպանական իրավիճակը հիմնականում բարվոք է: Զարգացման ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող ազդեցության գնահատումը նույնպես հիմնված է գոյություն ունեցող իրավիճակի և միջոցառումների ազդեցության հետևանքների համադրման և համեմատական վերլուծության վրա: Ըստ նախորդ բաժիններում բերված հաշվարկների արդյունքների և ցուցանիշների, զարգացման ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա բեռը չի ավելանա:

Տարածքի ճարտարագիտական կառուցվածքը

Վարսեր գյուղի տարածքը ըստ ճարտարագիտական ենթակառուցվածքների պաշտպանական միջոցառումների կարելի է բաժանել երեք մասի՝

1. Առաջին մաս—կառուցապատման համար բարենպաստ տարածք է համարվում, որը ընդգրկում է գյուղի բուն տարածքի 50 տոկոսը և ունի առավելագույն 3-8 աստիճան թեքություն:
2. Երկրորդ տեղամասը—կառուցապատման համար պայմանական բարենպաստ տարածք է, որը ընդգրկում է գյուղի տարածքի 35 տոկոսը և ունի 5-8 աստիճան թեքություն:
3. Երրորդ մաս—կառուցապատման համար անբարենպաստ տարածք է, որը զբաղեցնում է գյուղի տարածքի 15 տոկոսը և ունի 8-12 աստիճան թեքություն:

Ճար տար ազ ի տակ ան է ն թակ առ ու ց վ ած ք ն ե ր

- Բնակավայրը խմելու ջուր ստանում է երկու 750 մ³ ՕԿՁ –ներից, որոնք գտնվում են 1961 մ նիշի վրա: Գյուղն ունի խմելու ջրի ցանց, իսկ խողովակների մի մասը ժամանակի ընթացքում մաշվել են ու վնասվել են: Բնակչության ջրապահանջը կազմում է 400 մ³ /օր + 329 մ³/օր հաշված անասունների, մեքենա-մեխանիզմների և չնախատեսված ծախսերի ջրապահանջը: Միջին վայրկենական ծախսը կազմում է 8.4լ/վրկ
- Բնակավայրի տարածքով է անցնում Սևան-Երևան կոլեկտորը: Տնտեսական, արտադրական և կոյուղու կեղտաջրերի մի մասը միացված են կոլեկտորին, իսկ մնացած մեծ մասը հողամասերում փորված հորերին: Ջրահեռացման նորման ընդունվել է 8.4 լ/վրկ կամ 729 խմ/օր: Գյուղը չունի ընդհանուր կոյուղու համակարգ և յուրաքանչյուրը անհատապես ինքն է լուծում իր խնդիրները:
- Վարսեր բնակավայրում տնամերձերը և գյուղատնտեսական հողերը ներկա դրությամբ ոռոգվում են գյուղից վերև գտնվող ջրամբարից: Նախատեսվում է բարելավել ոռոգման ցանցը:
- Ներկայումս Վարսերում ջերմամատակարարում գոյություն չունի: Դպրոցների և մանկապարտեզների տարածքներում կառուցված կաթսայատուների մի մասը չեն գործում: Մշակույթի կենտրոնի, գյուղապետարանի շենքը ջեռուցվում են գազի վառարաններով: Անհատական տները ջեռուցվում են սովորական և գազային վառարաններով: Միեմայով կենտրոնական ջեռուցում և տաք ջրամատակարարում է նախատեսվում կուլտուր - կենցաղային, հասարակական և արտադրական շենքերի համար, որոնց ջերմամատակարարման կարիքները բավարարելու համար նպատակահարմար էր վերանորոգել մեկ ընդհանուր կաթսայատուն: Գյուղի հեռանկարային զարգացման համար նախատեսված մեկ և երկու բնակարանանոց տները կունենան տեղական ջեռուցում և տաք ջրամատակարարում: Ջեռուցման համար դրսի օդի հաշվարկային ջերմաստիճանն ընդունվել է $\leq 8.0\text{ }^{\circ}\text{C}$:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

- Վարսեր բնակավայրը ներկայումս գազաֆիկացված է: Թաղամասերում կան գազաբախշիչ կետեր: Ներկա դրությամբ շարունակվում է գյուղի բնակչությանը գազամատակարարման ցանցով ապահովելու գործընթացը:
- Գյուղի կառուցապատված մասը էլեկտրաֆիկացված է: Ներկայումս գյուղի էլեկտրոմատակարարումը կատարվում է ենթաշրջանի 10 կվ օդային ցանցից: Բարձր լարման օդային ցանցի երկարությունը կազմում է 2.2 կմ: Համաձայն “Հայէլեկտրոցանցեր” ընկերության կողմից տրված տեղեկանքի, Վարսեր գյուղի էլեկտրամատակարարման սխեման կազմվելու է 500 կվա տրանսֆորմատորային հզորություն: Ցածր լարման օդային գծերի (0.4 կվ) ցանցի երկարությունը 6.8 կմ է: Օդային գծերը տարված են ալյումինե լարերով՝ փայտյա հենարանների վրա, իսկ նոր կառուցվող թաղամասերում՝ ե/բ հենարաններով: Արտաքին լուսավորության ցանցը անցկացվելու է ցածր լարման գծերի հենարանների վրա:

Կենսապահպանության և բնության պահպանում

Վարսեր գյուղի շրջակայքին բնորոշ է մարգագետնատափաստանային, անտառային- դարչնագույն և գորշ անտառային հողերի առկայությունը: Հիմնական ծառատեսակներից տարածված են ուռենին, բարդին, սոճին, թեղին, արջընկույզը, և մրգատու ծառատեսակները (խնձորենի, բալենի, սալորենի, տանձենի, ընկուզենի, մամուխը, մասրենին): Թփատեսակներից տարածված են՝ չիչխանը, ազնվամորին, հաղարջը, տեղ-տեղ նաև բարբարիսը: Գյուղի բարձրադիր գոտիները բնութագրվում են ալպիական բուսականությամբ, որոնք օգտագործվում են որպես արոտավայր: Մյուս բուսական գոտին մերձալպիան է: Դրանց համար բնորոշ են բարձրահասակ բուսականությունը՝ հատիկաբուսային տարբեր կանաչները: Տարածված բուսատեսակներից է՝ այծամորուք, անճիտան, առյուծագի (մեղրածուծային), աստղաբույս, ավելուկ, արմավաթուփ, աղվեսագի, ձիասամիթ (բոխի), բոխնի (դեղատու), գնարբուկ, դաղձ, երիցուկ (դեղատնային), եզան լեզու, եղինջ, լերդախոտ, լոշտակ, խնկածաղիկ, մատուտակ, ոգնենի (կլորագլուխ), ուրց, ուրցադաղձ, վիրախոտ, տատրակ, հավախոտ, սրճիկ, եղիսպակ, սիբեխ:

Կաթնասուններից լայն տարածում ունեն՝ սովորական դաշտամուկը, գորշ գերմանամուկը, սովորական խլուրդը, որոնք ապրում են ժայռերի, քարակույտերի վրա և չվարած հողաշերտերի մացառուտների մեջ: Տարածքում անհամեմատ քիչ են հանդիպում աքիսները: Մեծ տարածում ունեն սողունները, հիմնականում՝ ճարպիկ ժայռային մողեսները: Հրազդանի կիրճում տարածված են օձերի որոշ տեսակներ: Լեռնային գոտիներում հանդիպում են՝ աղվեսներ, գայլեր, իսկ թռչուններից՝ արծիվներ, հոպոպներ, խաղտոտիկներ, դեղնավոր սարյակներ, ծիծեռնակներ:

Պատմական և բնության հուշարձաններ



Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց, 1 մշակույթի տուն, 2 գրադարան, 1 մսուր-մանկապարտեզ, 1 բուժկայան, կենցաղսպասարկման տաղավար: Ունի անշուք եկեղեցի՝ ս Ստեփանոս անունով (կառուցված 19-րդ դարում), որի պատերի մեջ ագուցված են 12-14-րդ դարերի բարձրարվեստ խաչքարեր: Գերեզմանոցում կան 1593, 1661, 1679, 1705, 1708 թվականների խաչքարեր ու գերեզմանաքարեր: Գյուղն ունեցել է հին ջրանցք: Գյուղում կան հուշարձան-կոթողներ նվիրված արցախյան ազատամարտի հերոսներ՝ Վահան Աղամալյանին և Ռաֆիկ Պետրոսյանին: 2013 թվականին օծվեց Սբ. Գրիգոր Նարեկացի մատուռը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Ս. Մարկոս եպս. Հովհաննիսյանի ձեռամբ: 1970-ական թվականներին կառուցվել է երկրորդ աշխարհամարտում զոհվածներին նվիրված հուշահամալիր:



Հին ջրանցքը

Վարսեր գյուղի տարեց բնակիչների հետ ունեցած զրույցներից և ջրային տնտեսության մասնագետների տեղեկանքներից պարզվեց, որ ջրանցքի մնացորդները գոյություն ունեն «անհիշելի» ժամանակներից: Եղած տեղեկությունները վերջին հարյուրամյակում ջրանցքը վերականգնելու փորձերին, վերաբերող կցկտուր հիշողություններ են: Վարսերի ոռոգիչ ջրանցքը կառուցվել է 990-ական թվականներին և գործել հավանաբար մինչև 1550-ական թվականները: Մնվում էր Հրազդան գետից և հոսում Վարսերով, Գեղամավանով և Բալթիձոր կոչվող վայրով: Ջրանցքը երկար մոտ 6500 մ էր և ոռոգում էր մոտ 3000 հա հողատարածություն: Ըստ մասնագիտական հաշվումների՝ շինարարության վրա կատարվել է մոտ 40000 մ խոր. հողային և 25000-30000 մ խոր. ժայռային աշխատանք: Ջրանցքը լավ է պահպանված և հատկապես տպավորիչ է 1 մեծ ոլորանի հատվածում, որտեղ այն անցնում է ժայռեղեն կտրվածք ունեցող բազալտե լավային հոսքի տակով: Այնուհետև ջրանցքը հասնում է Վարսեր գյուղ, ուր նրա հունի վրա կառուցված են բազմաթիվ հին շինություններ: Մինչև գյուղի կենտրոն, ջրանցքի մի մասը լավ տեսանելի է, իսկ այնտեղից մինչև դպրոցի նորակառույց շենք ջրանցքի հատվածներ չեն պահպանվել: Հունի լայնությունը մոտ 8 մ է: Ջրանցքի խորությունը հաշված կից հողաթմբից կազմում է 1,7-1,8 մ: Վարսերի ջրանցքը 2300 մ երկարությամբ հատվածում 100 մ-ին ունի 0,1 մ միջին անկում, 8-9 մ խոր. աշխատանքային միջին մակերես, վայրկյանում մոտ 8 մ խոր. թողունակություն: Ջրանցքի անբարենպաստ երկրաբանական պայմանները անխուսափելի պետք է դարձնեին ջրի մեծ կորուստները, և ստորին հզոսանքում ջրի առավելագույն քանակությունը կարող էր լինել 5-6 մ խոր.: Ջրանցքի լքման ամենահավանական ժամանակահատվածը կարելի է համարել 14-րդ դարի երկրորդ կեսը և 15-րդ դարի սկիզբը, երբ թյուրքական ցեղերը, մասնավորապես Լենկթեմուրի արշավախմբերը մեծ ավերածություններ հասցրին երկրին:

Վարսերի ջրամբարը

Վարսեր գյուղի ծայր արևելյան եզրին, Հրազդանի ցամաքած հունի վրա է գտնվում գյուղի արհեստական ջրամբարը: Ջրամբարն ունի ավելի քան 230 մ երկարություն, ներքին մասում՝ 50 մ, իսկ վերին հատվածում՝ 35 մ լայնություն, կենտրոնում մոտ 4 մ առավելագույն խորություն, և 35-40 հազար մ խոր. տարողություն: Մնվում ջրանցքից, որտեղ նրա բարձրությունը հասնում է 1909 մ- ի: Հատկանշական է հողապատնեշի կենտրոնական մասի խորը լվացվածությունը (մոտ 2 մ), որն առաջացել է ջրանցքի անօգտագործելի դառնալուց հետո: Ջրամբարի հարավարևելյան եզրին բացված է նորագույն ժամանակների քարհանք (հիմա լքված), որով ավերվել է ջրամբարի փոսորակի մի մասը:



Չոչո-հէկ

Հրազդան գետի հին հունը ջրամբարի տեղամասից մինչև Վարսեր գյուղի հյուսիսարևմտյան եզրը ունի մեղմ լանջերով հովտի ձև, որտեղ գտնվում է Չոչո ջրվեժը: Այստեղ, խորհրդային տարիներին՝ 1934 թ.-ին, կառուցվել է Չոչո-հէկը, որը սնվում էր Հրազդան գետի ջրերով: Հրազդանի հին հունի առանձնահատկությունները և ջրամբարի առկայությունը ցույց են տալիս, որ ջրի ազատելը Սևանա լճից եղել է ջրանցքի



թողունակությունից փոքր, ըստ երևույթին ոչ ավելի 5—6 մ³/վրկ:

Վարսերի լճային գոգավորությունը

Գոմաձորի գոգավորությունից արևմուտք ոչ շատ պարզ, բայց որոշակիորեն առանձնանում է մի երրորդ Վարսերի գոգավորությունը, որը նույնպես հարավից եզրափակվում է հրաբխային կառուցվածքի աղեղնաձև բլրաշարով: Գոգավորությունների այս շարքին զուգահեռ հարավում առանձնանում են երկու այլ գոգավորություններ: Լճի մակարդակի ժամանակակից իջեցումներից հետո բացվել է երկրորդ գոգավորության հարավային եզրը կազմող աղեղնաձև բլրաշարը: Դրանցից արևելյանն ունի պարզ արտահայտված սահմաններ և մինչև 1950 թ. լցված էր լճի ջրերով, կազմելով Սևան քաղաքի ծոցը: Այս գոգավորությունները նույնպես եզերվում են հրաբխային բլրաշարերով: Նշված կառուցվածքային միավորները, այսպիսով, կազմում են մի ընդհանրություն և ծագումնաբանորեն կապված են աղեղնաձև բլրաշարերով տեղադրված նորագույն հրաբխային փոքր կենտրոնների գործունեության հետ, որոնց արտավիժումներն

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ուղեկցվել են երկրակեղևի համապատասխան ճկումներով: Այն բնորոշ է Վարսեր գյուղի տարածքին և հնում Սևանա լճի ջրերի բարձր մակարդակի շնորհիվ ստեղծվել է Սևանա լճի Վարսերի լճային գոգավորությունը:

Սրբավայրեր

- «Օխնություն»-սրբավայրը գտնվում է գյուղի հյուսիսում
- «Նարեկ»-հնագույն սրբավայրը կառուցված է Սբ. Գրիգոր Նարեկացի մատուռի հարևանությամբ:
- «Ծաղկավանք»-ձորի արևմտյան եզրին
- «Խաչեր»-գտնվում է ձորի արևելյան եզրին
- «Ժամ»-Սբ. Ստեփանոս եկեղեցին
- Սբ. Գրիգոր Նարեկացի մատուռ



Սբ. Ստեփանոս եկեղեցին

Սբ. Ստեփանոս կիսավեր եկեղեցին թվագրված է որպես 19-րդ դարի կառույց: Նրա պատերի մեջ ագուցված են 12 ից 14-րդ դարերի բարձրարվեստ խաչքարեր: Ըստ երևույթին եկեղեցու տեղում հնում եղել է միջնադարյան եկեղեցական այլ կառույց, որի աստիճանավոր պատվանդանն է միայն պահպանվել:

Գերեզմանատունը

Եկեղեցուն կից հին գերեզմանատանը կան մի քանի անշուք խաչքար, առանց արձանագրության, հարթ և օրորոցաձև մի քանի տապանաքար՝ թվագրված 1593, 1661, 1679, 1705, 1708 թթ-ին: Ավերվել է աթեիստ բոլշևիկների կողմից:

Խաչքարը	Թվագրման թվականը	Գտնվելու վայրը և դիրքը
տապանաքար Խեչումի	17դ	եռհարկանի տապանաքար, գերեզմանոցի կենտրոնում, եկեղեցու շրջակայքում
տապանաքար Մարանի	1654թ	եկեղեցու հարակից գերեզմանատանը, զույգ դաշքարերից ձախակողմյանը
տապանաքար Սարգսի	1691թ	եկեղեցու հարակից գերեզմանատանը, զույգ խաչքարերից աջակողմյանը
տապանաքար Գրիգորի	1688թ	եկեղեցու հարակից գերեզմանատանը
տապանաքար Սարուխանի	1691թ	եկեղեցու հարակից գերեզմանատանը
տապանաքար Պետրոսի	1693թ	եկեղեցու հարակից գերեզմանատանը
տապանաքար Բարսեղի	17-18-րդ դար	եկեղեցու հարակից գերեզմանատանը
տապանաքար Առաքելի	1704թ	եկեղեցու հարակից գերեզմանատանը

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

տապանաքար տեր Հովհաննեսի	1709թ	եկեղեցու հարակից գերեզմանատանը, եռհարկանի
խաչքար	15-16-րդ դար	կիսով խրված հողի մեջ, գույգ խաչքարերից աջակողմյանը
խաչքար	15-րդ դար	կիսով չափ խրված հողի մեջ
խաչքար	14-15-րդ դար	կիսով չափ խրված հողի մեջ, գույգ խաչքարերից ձախակողմյանը
տապանաքար	1722թ	

Ծաղկավանք մատուռը

Գտնվում է գյուղի արևմտյան եզրին, կիսավեր է, որտեղ գտնվում են անթվակիր մի քանի խաչքար: Վերականգնվել է 1984 թվականին: Խաչքարերից մեկը շրջված վիճակում ագուցված է եկեղեցու հյուսիսային պատին, իսկ մնացածը պատրաստված են բարձրարվեստ, տաշված բազալտե քարերից, նորորս տեղափոխվել և տեղադրվել են պատվանդանի վրա: Սրանց մեջ կա խաչքարի վիմագիր մի բեկոր, բայց բարձրարժեք է դրանցից հին, պարզ ոճով քանդակված մի խաչքար, որը թվագրվում է 995 թվականին և պատրաստված է հայոց Աշոտ Ա Բագրատունու կնոջ՝ Կատրանիդե Ա թագուհու պատվերով, ոմն



ԵՍ ԽԱՉԻԿ(Ս), ՈՐ ԱԾԻ ԶԱՌՈՒԱ Ի ՀԱՐԵՍ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱՏԹԱՆԻԴԵԻ ՀԱՈՑ ԹԱԳՈՒՀՈՑ ՔՍ ԱԾ ՈԳՆԵ ԻՆԶ: ՆԽԴ(995)

Սբ. Գրիգոր Նարեկացի մատուռ

Մատուռ-սրբավայրը կառուցվել է հնագույն սուրբ Նարեկ սրբավայրի հարևանությամբ: Կառուցումը սկսվել է 2010 թվականին, բարերար Ազատ Պետրոսյանի և նրա որդիների հովանավորությամբ: Օծվել է 2012 թվականի հուլիսի 25-ին, Գեղարքունյաց թեմի առաջնորդ ՆՍՕՏՏ Մարկոս եպիսկոպոս Հովանիսյանի ձեռամբ: Մակուի շրջանից Վարսեր գաղթելու ժամանակ բարերարների պապերն իրենց հետ բերել են հայոց սուրբ գիրք Նարեկը և մատյանի պահպանության համար ստեղծել են սրբավայրը: Խորհրդային տարիներին սուրբ գիրքն անհետացել է, սակայն մատուռը պահպանել է իր նշանակությունը: Մատուռը կառուցվել է Կոտայքի մարզի գլխավոր ճարտարապետ Վաչիկ Թադևոսյանի նախագծով:

«Խաչ եր» Մատուռ

Գտնվում է ձորի արևելյան եզրին: Կառուցվել է 2009 թվականին, Վարսերի բնակիչներ Գեղամ և Վահագ Առաքելյանների ջանքերով : Կառուցողներն են՝ Սուրիկ Պողոսյանն ու Լյովա Գալստյանը: Մատուռում կան 10-11-րդ դարում թվագրվող խաչքարեր, որոնք նաև ագուցված են մատուռի պատերի մեջ, որի համար ել մատուռը ստացել է «Խաչեր»



«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսյալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

անվարումը:

Աշխարհագրական օբյեկտներ

Բլուրներ և լեռներ	հանդեր	աղբյուրներ	կիրճեր և ձորեր
Խառնարան բլուր	Բեսեդկա (Տաղավարաց)	Քոսաղբյուր	Վերին սար ձոր
Կարմիր լեռ	Պոլ փոշտ (Թիկնահանդ)		Հրազդանի կիրճ
Սուրբ լեռ	Դոլդարոգ (Համփեզրյա)		
Կլոր դար բլուր	Հագոյի չնգլ(Հագոյի քարուտ)		
Յլուզլուխ լեռ	Անկի լանջեր		
Բարոժ(Արեգի) լեռ	Առյուծաձոր		
Սևսար բլուր	Բլիժնի (Մերձահանդ)		
	Պեշկեր (Փուռք)		
	Արեգունի		
	Խորեր		
	Սաքոյի		
	Սարի հետև		
	Միկանցե(Վերջնահանդ)		

Դպրոցը

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին գյուղում գործել է եռամյա դպրոց: Ներկայումս դպրոցը կոչված է ի պատիվ արցախյան ազատամարտի հերոս Ռաֆիկ Պետրոսյանի: Այն նախատեսված է 350 աշակերտի համար, սակայն ներկայումս ունի 157 աշակերտ: Երիտասարդների կեսից ավելին ուսումը շարունակում են բարձրագույն ուսումնական հաստատություններում, առավելապես՝ ԵՊՀ-ում, ԵՊԲՀ-ում, Ոստիկանության ակադեմիայում, ԵՊԼՀ-ում և ՀՊՃՀ-ում: Դպրոցի սաները 2014 թվականի սեպտեմբերի 15-ին մասնակցեցին «Հայ ասպետ» գիտամարտին և հաղթանակ տարան (68 միավոր)՝ ցուցաբերելով ազնիվ ու հիմնալի խաղ, իսկ թիմի ավագը մասնակցեց «Ասպարեզ խաղին»: Դպրոցի ավագ դասարանների աշակերտները ակտիվ մասնակցում են «Հուսո ճանապարհ» հասարակական կազմակերպության և Գեղարքունյաց թեմի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կազմակերպած միջոցառումներին ու սեմինար-քննարկումներին: Մեծ մասնակցություն են ցուցաբերում նաև առարկայական օլիմպիադաներին՝ արժանանալով հանրապետական ու մարզային փուլերի մրցանակների և դրամական պարգևների: Իսկ տարրական և հիմնական դպրոցի դասարանի աշակերտները հատուկ մրցանակներով և գավաթներով են վերադառնում «Մեղու», «Կենգուրու» և ֆիզկուլտուրայի տարածքային մրցույթ-օլիմպիադաներից: Գյուղում գործում է



«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

«ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ» հայրենասիրական հասարակական կազմակերպության մասնաճյուղը, որի ղեկավարն է Վահե Հարությունյանը: Արդեն մի քանի տարի է որ երեխաներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում կազմակերպության կազմակերպած միջոցառումներին: Միջոցառումների կեսից ավելին նվիրված է հայրենասիրության, ռազմահայրենասիրության դաստիարակությանը, ինքնաճանաչողության, ազգային- պետական- հայրենասիրական գաղափարախոսության քարոզչությանը, իսկ մյուս մասը՝ մշակույթի, արվեստի, սպորտի, բնապահպանության, կրթության, գիտության, և այլ բնագավառներին:



ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

2.1. Հեռանկարային բնակչություն

Բնակչության հեռանկարային քանակի հաշվարկների նախկին կանխատեսումային և աշխատանքային հաշվեկշռի մեթոդներով տարբերակներն այլևս կիրառելի չեն:

Այնուհանդերձ, քաղաքային բնակավայրի համար բնակչության հաշվարկի համար առաջարկվում է հետևյալ մեթոդաբանությունը՝

Միկրոռեգիոնի քաղաքային բնակչության հեռանկարային աճը (բնակչության առավելագույն չափը) որոշված է ըստ ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի՝ հիմնադրությունների՝ ելնելով հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից (քաղաքապետական տարածքի դեմոգրաֆիական տարրդոնակության որոշման մեթոդով): Ըստ այդ հաշվարկի և հաշվի առնելով համայնքի նպաստավոր դիրքը, ռելիեֆից հետևող ռեսուրսները և արտակարգ գեղատեսիլ բնությունը հարմար են հանգստի, զբոսաշրջության, սպորտի գործառույթների հիմնման և զարգացման համար՝ հիմնական բնակչության հեռանկարային աճը որոշելու համար որպես առաջնային գործոն ընդունվել են համայնքի տարածական զարգացման հնարավորությունը, դեմոգրաֆիական զարգացումների միտումները, արտադրական ձեռնարկությունների հեռանկարային ծրագրերը, նախատեսվող ռելիեֆից հետևող ռեսուրսներից հստակ առաջացող աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները համայնքի բնակչության առավելագույն հեռանկարային թիվը ընդունվել է 40000 մարդ: Քաղաքի բնակչության առավելագույն չափի ապահովման համար ժամկետներ չեն նախատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր զարգացման տեմպերից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Մոտակա հեռանկարի՝ գլխավոր հատակագծի գործողության ժամկետի շրջանակում քաղաքի և գյուղական բնակավայրերի հեռանկարային հաշվարկները կատարվել են՝ հաշվի առնելով առկա միտումները (բնական աճի և միգրացիայի): Ստորև աղյուսակում ներկայացված են բնակավայրերի առկա և հեռանկարային բնակչության թվքանակը և դրանց հիման վրա հաշվարկվել սոցիալական հաստատությունների պահանջարկը:

Միկրոռեգիոնի ներկա և հեռանկարային բնակչության թվաքանակը տրված է ստորև աղյուսակում.

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

h/h	Բնակավայրը	2021թ.* հունվարի 1-ի դրությամբ	Հեռանկարային
Գեղարքունիք-1			
1	ք. Սևան (Գագարին գյուղ)	18 959 1 746	20 855 1921
2	Գեղամավան	1 804	1985
3	Դրմաշեն	2 692	2961
4	Զովաբեր	1 444	1588
5	Լճաշեն	4 708	5179
6	Ծաղկունք	1 013	1114
7	Ծովագյուղ	4 418	4860
8	Նորաշեն	456	502
9	Չկալովկա	529	582
10	Սեմյոնովկա	240	264
11	Վարսեր	2 034	2238
Ընդամենը		40043	44049

2.2. Հեռանկարային զարգացման հայեցակարգ

Բնակավայրերի տարածքների հատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները՝

- 1) քաղաքի առկա հատակագծային կառուցվածքի կատարելագործում, հին և նոր թաղամասերի միջև հարմարավետ և ներդաշնակ հատակագծային կապերի ստեղծում,
- 2) համայնքի զարգացումը խթանող նոր գործառնական գոտիների ստեղծում՝ հիմք ընդունելով առկա ռեսուրսային հնարավորությունները,
- 3) արտադրական և կոմունալ օգտագործման տարածքների կանոնակարգում, սանիտարական պահպանական գոտիների պահանջների ապահովում և կանաչ տարածքների ընդլայնում:

Հաշվի առնելով տարածքի գերակշռող գործառնական օգտագործումը և, միևնույն ժամանակ, կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, առաջարկված են հետևյալ կառուցվածքահատակագծային սկզբունքները՝

- 1) առավելապես տնամերձ հողամասերով՝ ցածրահարկ առանձնատնային կառուցապատման նոր բնակելի տարածքային հատվածների կազմակերպում,
- 2) հասարակական սպասարկման գործառնական կանոնակարգում, սպասարկման օբյեկտների համալիր ձևավորում սպասարկման մատչելիության գոտիներում՝ ընդգրկելով նոր և գոյություն ունեցող կառուցապատումը,
- 3) նոր առողջարանային-ռեկրեացիոն գոտու ձևավորում.
- 4) ճանապարհափողոցային ցանցի կատարելագործում,
- 5) անտառպուրակային և կանաչ գոտիների ընդլայնում:

Սևան քաղաք, Ռելիեֆը հիմնականում հարթ է, կտրտված հեղեղատներով: Միջին բացարձակ բարձրություններն են՝ 1900-1950 մ: Արձանագրվում է գրունտային ջրերի բարձր մակարդակ, թույլ անկայուն կարբոնատային ավազների առկայություն, մակերեսային հոսքեր: Տարածված են լճային կարբոնատային ավազներ, կավեր, ավազակավեր, խճեր: Սևան քաղաքային բնակավայրի զարգացումը հիմնականում նախատեսվում է քաղաքի տարածքում անօգտագործելի հողատարածքների

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

կառուցապատման միջոցով: Մ-4 մայրուղուն կից, նախատեսվում է հանգստի և սպորտի ռեկրեացիոն գոտու կազմակերպում, որտեղ կլինեն հիմնականում քոթեջներով և քոթեջատիպ հյուրատներով կառուցապատված տեղամասեր, սպորտային հրապարակներ և ժամանցի տարածքներ: Նոր ռեկրեացիոն գոտին տարանջատվել է որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Համայնքի ուսումնակրթական ոլորտը ներկայացված է համայնքում առկա 6 դպրոցով, 1 ավագ դպրոցով և ևս մեկով՝ Գագարինում, համապատասխանում են հասանելիության շառավիղներին, և դպրոցականների ներկա քանակին: Դպրոց հաճախող աշակերտների թիվը ներկայումս 2675-է (ներառյալ Գագարինը), դպրոցների գումարային տարողունակությունը՝ 6273 տեղ(ներառյալ Գագարինի դպրոցը):

Մանկապարտեզների քանակը 5 են, ինչը բավարարում է երեխաների ներկայիս քանակին: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը 680-է, մանկապարտեզների ընդհանուր տարողունակությունը՝ 825 տեղ:

Կատարելով հեռանկարային բնակչության համար մանկապարտեզների և դպրոցների տեղերի անհրաժեշտ նորմիով քանակի հաշվարկ՝ հաշվի առնելով բնակչության ներկայիս դեմոգրաֆիական կազմը և հեռանկարային զարգացման միտումները և հեռանկարային բնակչության 400000 թվաքանակը, կստացվի հետևյալը.

- Մանկական նախադպրոցական տարիքի երեխաների քանակը (400000 բնակչության դեպքում) կազմում է մոտ 3000 (2925) երեխա, ներկայիս միտումները, այն է՝ որ երեխաների ընդհանուր թվաքանակի մոտ կեսն է հաճախում մանկապարտեզ, կստացվի մոտ 1500 տեղ, որից գոյություն ունեցող մանկապարտեզներում առկա հզորություններում ապահովված է 825-ի համար տեղ (առկա է մոտ 650 տեղի անհրաժեշտություն),

- դպրոցական տարիքի երեխաների քանակը (400000 բնակչության դեպքում) կազմում է մոտ 7300 աշակերտ, որից 6273-ի համար ապահովված են աշակերտական տեղեր գոյություն ունեցող դպրոցական շենքերի հզորություններում, ուստի առկա է մոտ 1000 տեղի ապահովման անհրաժեշտություն:

Համայնքի բնակարանային տնտեսության պահպանումն իրականացվում է գործող 4 համատիրությունների միջոցով, որոնք ընդգրկում են 201 բազմաբնակարան շենք:

Համայնքային ոչ առևտրային 11 կազմակերպությունների՝ 5 նախակրթարանների, Հովհ. Մյվազովսկու անվան արվեստի, երաժշտական դպրոցների, Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի, Վ. Ստեփանյանի անվան Գրադարանների կենտրոնացված համակարգի /7 գրադարան/, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի, համայնքային մշակութային կենտրոնի գործունեության շնորհիվ նախադպրոցական կրթության իրականացումը, մարզամշակութային առօրյան, երեխաների արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը իրականացվում է համակարգված ու նպատակային:

Համայնքային մշակութային կյանքի ոլորտն ապահովում են «Սևան» ժողովրդական և «Սուլինա-Սևան» ժամանակակից պարերի և «Ակորդներ» էստրադային համույթները:

Համայնքում գործում են արհեստագործական ուսումնարան, քոլեջ, բժշկական ուսումնարան: Սևանում է գտնվում «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, որի բնագիտական թանգարանն էլ Սևանա լճի, տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի, ժողովրդագրության, ավանդույթների ամբողջական ցուցանմուշների և ցուցադրությունների եզակի վայր է:

Սևանը գործնական-ընկերային ապակենտրոնացված հարաբերությունների ոլորտում ունի լուրջ հաջողություններ: «Սևան-Գրենոբլ» քույր քաղաքներ

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

համագործակցությունը բոլորում է իր 7-ամյա կենսագրությունը և ներառում է զբոսաշրջային, կրթական և առողջապահական ոլորտները՝ ամրապնդելով հայ-ֆրանսիական բարեկամությունը գործնական ծրագրերի տեսքով:

Սեկամյա կենսագրություն ունեն Սևանի և Լեհաստանի Բրոդնիցա քաղաքի միջև հաստատված հարաբերությունները: Համագործակցության ոլորտներն են՝ տեղական ինքնակառավարման մարմինների միջև փորձի, տեղեկատվության փոխանակում, համագործակցություն կրթության, մշակույթի, սպորտի բնագավառներում, զբոսաշրջության, երիտասարդների փոխանակման ծրագրերի իրականացում:

Վերջին տարիների ընթացքում համայնքում միջազգային և տեղական կազմակերպությունների և համայնքային ներդրումների միջոցով իրականացվել են մի շարք ծրագրեր:

Սևանում լույս են տեսնում «Սևան» թերթը, «Ափ» ամսագիրը, գործում է «Գեղամա» հեռուստաընկերությունը:

Համայնքում գործունեություն են իրականացնում մի շարք հասարակական կազմակերպություններ, ասոցիացիաներ, հիմնադրամներ:

Նախագծի հիմնական նպատակն է համայնքի հեռանկարային զարգացման, տարածքային աճի ուղղությունների, տարածքների ֆունկցիոնալ նշանակության որոշումը՝ տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, բնապահպանական լայն համալիրի կիրառումով, տարածքների հեռանկարային օգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանում:

Արդի փուլի վերափոխումները լայն հնարավորություններ են ընձեռում համայնքի բնական (առողջարանային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) հարուստ ռեսուրսների օգտագործման և տնտեսության բազային ճյուղերի, տարածաշրջանի գյուղատնտեսական, ագրոարդյունաբերական արտադրության զարգացման, փոքր և միջին բիզնեսի խթանման և աջակցման համար: Կապված գյուղատնտեսական հողերի, բնապահպանական անտառների առկայության հետ հեռանկարային զարգացման և կառուցապատման համար բարենպաստ նոր ռեզերվային տարածքները սակավ են: Վարչական սահմաններում ընդգրկված ռեկրեացիոն գոտին ունի ռեզերվային տարածքներ՝ ռեկրեացիոն օբյեկտների զարգացման համար: Ռեկրեացիոն տարածքներ կան նաև քաղաքի կառուցապատման սահմանում:

Ինչպես ամենուրեք Հայաստանում, այստեղ նույնպես շարունակվում է արտադրական տարածքների սեփականաշնորհման և վերապրոֆիլավորման գործընթացը: Մյուս կողմից այսօր, դեռևս բացակայում է տնտեսական առաջընթացի միասնական հեռանկարային ծրագրավորումը և առանձին ձեռնարկությունների բիզնես պլանավորումը: Այդ պատճառով հեռանկարային բնակչության որոշումը ընդունված՝ ավանդական մեթոդների աշխատանքային հաշվեկշռի, նպատակային կանխատեսումների և այլ մեթոդներ) կիրառմամբ այս փուլում դեռ հնարավոր չէ: Հետևապես, ներկայումս քաղաքի բնակչության հեռանկարային աճը որոշելու համար առաջնային են դառնում տարածքային զարգացման հնարավորությունը և ժողովրդագրական տարրորոնակության որոշումը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, համայնքի հեռանկարային առավելագույն բնակչության թիվը ընդունվել է՝ 40 հազար մարդ, որը սահմանվել է ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով՝ ի նկատի ունենալով տարածքի դեմոգրաֆիական լրիվ տարրորոնակության պայմանը: Մինևնույն ժամանակ, քաղաքի բնակչության առավելագույն քանակի ապահովման համար ժամկետների նախատեսումը, կախված է հանրապետության ընդհանուր զարգացման տեմպերից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

«Քաղաքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Հատակագծատարածական զարգացման գաղափարի հիմնական կորիզն է հանդիսանում՝ քաղաքում նոր զարգացած համաքաղաքային կենտրոնի կազմավորումը: Այստեղ պետք է տեղադրվեն բարձրակարգ հյուրանոցային և հասարակական սպասարկման օբյեկտներ, որոնք նախատեսվում են ոչ միայն տեղական բնակչության, այլ նաև բազմաթիվ հանգստացողների և զբոսաշրջիկների համար: Այս գաղափարը եղել է նաև նախորդ գլխավոր հատակագծերում, և նոր համաքաղաքային կենտրոնի համար ռեզերվացված տարածքները հիմնականում դեռևս չեն իրացվել:

Հատակագծային կառուցվածքը և գործառական գոտևորումը մշակվել են բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանման, ինժեներական նախապատրաստման միջոցառումների իրականացման փոխկապակցված խնդիրների համընդհանուր լուծումներով՝ համայնքի տարածքի նպատակաուղղված քաղաքաշինական կազմակերպմամբ: Վերլուծության և համալիր գնահատականի արդյունքում ընտրվել են կառուցապատման ենթակա տարածքները և որոշվել են այդ տարածքների կառուցապատման համար բարենպաստության աստիճանը, տրվել են պահանջվող ինժեներական նախապատրաստման միջոցառումները և դրանց իրականացման ուղիները:

Ճանապարհների, գերեզմանների, էներգետիկայի և այլ կոմունալ օբյեկտների այն պաշտպանիչ գոտիների տարածքները, որոնք այսօր արդեն զբաղված են բնակելի և հասարակական կառույցներով վերափոխվում են բուֆերային գոտիների, որտեղ մինչև հաշվարկային ժամկետի ավարտը, պետք է արգելվեն բոլոր նոր բնակելի և հասարակական կառուցապատման և վերանորոգման աշխատանքները:

Մշակվել են Սևանի հատակագծային - տարածական զարգացման հիմնական ուղղությունները և առանձնացվել են տարածքի նպատակային օգտագործման ռեժիմները: Նախագծով առավելագույնս կանոնակարգվել է քաղաքի հատակագծային կառուցվածքը այն է՝ թաղամասերի հասարակական օբյեկտների հավասարակշռված բաշխում, փողոցային ցանցի ձևավորում, հասարակական կանաչի ապահովում, ներքին տարածքների համապատասխան գործառական նշանակության սահմանում: Հաշվի առնելով տարածքի գերակշռող գործառական օգտագործումը, կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, քաղաքի տարածքում առաջարկված են հետևյալ կառուցվածքահատակագծային սկզբունքները.

- փողոցային ցանցի կատարելագործում,
- տարածքում հասարակական սպասարկման օբյեկտների համալիր ձևավորում՝ սպասարկման մատչելիության գոտիներում ընդգրկելով բնակելի թաղամասերը,
- անտառպուրակային և ռեկրեացիոն գոտիների ձևավորում,

Քաղաքի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները.

- կառուցապատման խտությունների կանոնակարգում,
- ներքին ռեզերվային տարածքների քաղաքի միասնական հատակագծային կառուցվածքում ընդգրկում, հին և նոր թաղամասերի օրգանական հատակագծային կապերի ստեղծում,
- սանիտարական գոտիների պահանջների պահպանում և կանաչ գոտիների ընդլայնում,
- սեյսմիկ վտանգի, սողանքների պայմաններում քաղաքի կառուցվածքային-հատակագծային տարրերի հուսալիության և կայունության ապահովում:

Անասնապահական ֆերմաների և ձկնաբուծարանների տարածքները և մասնաշենքերը գտնվում են անմիջապես վիճակում, նախատեսվում է վերակառուցել, պահպանելով պահանջվող սանիտարապաշտպանիչ գոտիը:

Примечание [U1]: ավելացնել սոցիալական ոլորտը

Примечание [U2]: էսքան մասն է հատակագծային կառուցվածք

Примечание [U3]: եղ ինչպե՞ս

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ընդլայնվել են համայնքի կանաչապատ տարածքները: Գլխավոր հատակագծով ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նորմատիվ պահանջը կազմում է 32 հա, որը նախատեսվում է

իրականացնել կենտրոնական հատվածում նախատեվող հասարակական գոտու կանաչապատման հաշվին, ինչպես նաև կառուցապատմանը հարող լեռնալանջերի ստորոտներին: Սահմանափակ օգտագործման կանաչապատ տարածքները մեկ մարդու համար հասցնել **45.8 քմ /հանգստացողների հետ միասին/**, որը մի քանի անգամ գերազանցում է նորմատիվային նվազագույն ցուցանիշը: Ստորև աղյուսակ 7-ում երևում է Սևան համայնքի կանաչ տարածքների հեռանկարային բաշխումը

Աղյուսակ 7

/Հ	Կանաչապատ տարածքների նկարագիր	Տարածք /հա/
	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	40.0
	Սանիտարական կանաչապատում, գերեզման, տրանսպորտային կանաչ	177.8
	Անտառ /ազգային պարկի հատված/	51.21
	Ընդհանուր	269.0

Примечание [U4]: ի՞նչ թիվ է սա

2.2.1. Տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացում

Չնայած քաղաքի շրջակայքով անցնում են երեք միջպետական նշանակության ճանապարհներ, սակայն կան ճանապարհային մի քանի հիմնախնդիրներ, որոնք պետք է իրենց լուծումը գտնեն մոտ ապագայում: Դրանցից են.

1. Մ-4 Երևան Սևան-Իջևան-Աղբբեջանի սահման մայրուղին անցնում է Սևան քաղաքի և Լճափի միջակայքով՝ կտրելով քաղաքը լճից: Բացի այդ, ճանապարհը 12կմ երկարությամբ անցնում է անմիջապես լճափով, զբաղեցնելով առանց այն էլ նեղ ափի 30մ լայնությամբ մի շերտ: ՇՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով՝ նախատեսված է Գագարին բնակավայրից մինչև Ծովագյուղ ճանապարհի ծրագիծն անցկացնել Վարսեր և Գեղամավան գյուղերի միջակայքով, իսկ այնուհետև Փամբակի լեռնաշղթայի տակով կառուցելով 2.4կմ երկարությամբ մի թունելով ճանապարհը դուրս բերել դեպի Ծովագյուղ: Այսպիսով, Մ-4 ճանապարհը կկարճանա 9 կիլոմետրով, իսկ գործող ճանապարհը, որն I կարգի է, կարելի է դարձնել II կարգի և հողային պաստառի նեղացման հաշվին լճափը կլայնանա 15 մետրով: Այդ միացման շնորհիվ կլուծվի նաև մեկ այլ խնդիր, այն է. քաղաքի հարավով անցնող մի քանի հատվածներում Մ-4 ճանապարհն անցնում է 1904 մետրից ավելի ցածր նիշերով և այդ հատվածներին սպառնում է ջրածածկ լինելու վտանգը: Հետևաբար, ծրագծի փոփոխման հետ մեկտեղ կլուծվի նաև այս խնդիրը:

2. Նույնը՝ ՇՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով՝ նախատեսվում է նաև Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ ճանապարհի Սևան-Գավառ հատվածը լճից հեռացնել: Արդեն այսօր իսկ Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով ճանապարհի մի քանի հատվածներում լիճն ընդիույ մոտեցել է հողային պաստառին:

3. Պետք է հիմնովին նորոգել և վերականգնել Երևան-Սևան-Վարդենիս երկաթուղային՝ տեղ-տեղ նաև վերանախագծման պայմանով: Բանն այն է, որ երկաթգծի մի քանի հատվածներում, հատկապես Չարենցավան քաղաքի մոտակայքում, գծի երկայնական թեքությունները շատ մեծ են, որի պատճառով ևս ընկնում է գնացքների արագությունը: Եթե հաջողվի երկաթուղին այնպես վերակառուցել, որպեսզի

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

հաղորդակցության արագությունները կազմեն 50-60 կմ/ժամ, ապա երկաթուղային մրցակից կդառնա ուղևորափոխադրումների բնագավառում ավտոմոբիլային տրանսպորտի նկատմամբ, հատկապես ամառային ամիսներին: Դա նաև կնպաստի Հրազդանի, մինչև Վարդենիս երկաթուղու երկարությամբ գտնվող բնակարանների տնտեսական զարգացմանը և դրանց առևտրային հրապույրը:

2.2.2. Ներքին տրանսպորտ

Հին Սևան բնակավայրն ընկած է Երևան-Սևան երկաթուղուց հյուսիս, Փամբակի լեռնաշղթայի լճահայաց լանջերին: Բնակավայրի ամբողջ երկարությամբ անցնում էր հին Երևան-Սևան-Դիլիջան խճուղին: Լճի մակարդակի իջեցումից քաղաքը տեղափոխվեց լճափի հարթավայր և հիմնականում սահմանափակված է երկաթուղով և Մ-4 միջպետական նշանակության Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման մայրուղով:

Նոր քաղաքի փողոցային ցանցը ուղղանկյունաձև հատակագիծ ունի: Որպես կենտրոնական համարվում է Նաիրիի (նախկին Կիրովի) փողոցը, որը ձգվում է Մ-4 մայրուղուց մինչև քաղաքի մյուս, արևելյան ծայրը և վերջանում մի փոքրիկ հրապարակով:

2.3. Հասարակական սպասարկման ոլորտ

Ներկայումս միկրոռեգիոնում/համայնքում առկա է սոցիալական ոլորտի միջին զարգացվածություն: Սոցիալական ենթակառուցվածքից գրեթե բոլոր բնակավայրերում առկա են հանրակրթական դպրոցների շենքերը՝ հիմնականում ապահովված ջրամատակարարման և կոյուղու համակարգերով, գրեթե բոլոր բնակավայրում առկա են բուժկետ, մշակույթի տան, մսուր-մանկապարտեզի շենք: Շենքերը տեխնիկական տարբեր վիճակներում են՝ որոշները կարիք ունեն նորոգման, մյուսները՝ հիմնանորոգման: Առկա են նոր մասնաշենքերի իրականացման անհրաժեշտություն և/կամ շենքերի արդիականացման՝ նոր պամաններին համապատասխանեցման անհրաժեշտություն: Որոշ դեպքերում նոր շենքի իրականացումն առավել նպատակահարմար է քանի գոյություն ունեցողի հիմնանորոգումը:

Նոր սոցիալ-տնտեսական փուլում մշակութային-կենցաղային օբյեկտների ցանցն ընդլայնվում է շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան:

Նոր սոցիալ-տնտեսական փուլում հասարակական սպասարկման ոլորտի օբյեկտների նպատակաուղղված զարգացումը տարվել է հիմնականում բուժական և կրթական շենքերի ցանցի վերականգնման ուղղությամբ, մեծ մասամբ արտասահմանյան ներդրողների միջոցներով: Կուլտուր-կենցաղային օբյեկտների ցանցը ընդլայնվում է, չնչին բացառությամբ, շուկայական տնտեսության պայմաններին համապատասխան: (Հասարակական սպասարկման օբյեկտների ցուցանիշները տրված են ստորև աղյուսակում):

Հասարակական սպասարկման օբյեկտների հեռանկարային տեղադրման գոտիները տրված են գոտիավորման նախագծում:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման
նախագիծ

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Անվանումը	Չափ. միավ.	Սևան ք.		Գագարին		Գեղամավան		Դդմաշեն		Զովաբեր		Լճաշեն	
		Բնակչությունը մարդ		Բնակչությունը մարդ		Բնակչությունը մարդ		Բնակչությունը մարդ		Բնակչությունը մարդ		Բնակչությունը մարդ	
		Գոյ. Ուն.	Հեռ.	Գոյ. Ուն.	Հեռ.	Գոյ. Ուն.	Հեռ.	Գոյ. Ուն.	Հեռ.	Գոյ. Ուն.	Հեռ.	Գոյ. Ուն.	Հեռ.
		18959	20855	1746	1921	1804	1984.4	2692	2961	1444	1588	4708	5179
		Քանակը	Զբաղեցրած տարածքը (հա)	Քանակը	Զբաղեցրած տարածքը (հա)	Քանակը	Զբաղեցրած տարածքը (հա)	Քանակը	Զբաղեցրած տարածքը (հա)	Քանակը	Զբաղեցրած տարածքը (հա)	Քանակը	Զբաղեցրած տարածքը (հա)
Կրթության հիմնարկություններ													
Մանկական նախադպրոցական հիմնարկություններ, այդ թվում	տեղ	2503	10.0	230	0.9	238	1.0	355	1.4	191	0.8	621	2.5
Նախադպրոցականների համար ծածկած լողավազաններ	օբյեկտ	ըստ նախագծային առաջադրանքի	*-/-	*-/-	*-/-	*-/-	*-/-	*-/-	*-/-	*-/-	*-/-	*-/-	*-/-
Հանրակրթական դպրոցներ,	աշակերտ												
			(կանաչ)	
ԲԲ-11	Այլ հողեր	0.08	Հասարակական կառուցապատման	0.08
Ընդհանուր		9.1		
	Անտառային հողերից			
ԱնԲ-1	Այլ հողեր	1.11	Հասարակական կառուցապատման	1.11
ԱնԲ-2	Այլ հողեր	1.14	Հասարակական կառուցապատման	1.14
ԱնԲ-3	Այլ հողեր	1.64	Հասարակական կառուցապատման	1.64
Ընդհանուր		3.89		
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից՝			
ԱԲ-1	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	0.13	Հասարակական կառուցապատման	0.13
ԱԲ-2	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	0.34	Հասարակական կառուցապատման	0.34
Ընդհանուր		0.47		
	Գյուղատնտեսական նշանակության հողեր,			
ԳԲ-1	արոտավայր	5.18	Հասարակական կառուցապատման	5.18
ԳԲ-2	արոտավայր	0.5	Հասարակական կառուցապատման	0.5
ԳԲ-3	վարելահող	10.1	Հասարակական կառուցապատման	10.1
ԳԲ-5	վարելահող	0.19	Ընդհանուր օգտագործման (փողոցներ)	0.19
ԳԲ-6	վարելահող	0.78	Ընդհանուր օգտագործման (փողոցներ)	0.78
Ընդհանուր		16.75		
	Հատուկ պահպանվող հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ՀԷ-1	պատմության և մշակույթի	1.22	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	1.22
ՀԷ-2	պատմության և մշակույթի	0.35	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	0.35
Ընդհանուր		1.57		
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Բնակավայրերի հողերից			
			Բնակավայրերի	
ԲԲ-12	Այլ հողեր	1.40	Բնակելի կառուցապատման	1.4
ԲԲ-13	Այլ հողեր	0.87	Բնակելի կառուցապատման	0.87
ԲԲ-14	Այլ հողեր	0.09	Ընդհանուր օգտագործման (փողոցներ)	0.09

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսլ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ԲԲ-15	Այլ հողեր	0.44	Հասարակական կառուցապատման	0.44
ԲԲ-16	Այլ հողեր	0.08	Հասարակական կառուցապատման	0.08
ԲԲ-17	Այլ հողեր	1.92	Ընդհանուր օգտագործման (կանաչ)	1.92
Ընդհանուր		4.80		
	Գյուղատնտեսական նշանակության հողեր,			
ԳԲ-4	արոտավայր	4.94	Խառը կառուցապատման	4.94
ԳԲ-7	վարելահող	8.4	Հասարակական կառուցապատման	8.4
ԳԲ-8	արոտավայր	0.73	Ընդհանուր օգտագործման (փողոցներ)	0.73
ԳԲ-9	արոտավայր	4.87	Խառը կառուցապատման	4.87
ԳԲ-10	արոտավայր	4.36	Խառը կառուցապատման	4.36
ԳԲ-11	այլ հողատեսք	0.26	Ընդհանուր օգտագործման (փողոցներ)	0.26
Ընդհանուր		23.56		
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ԳԷ-1	վարելահող	1.11	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	1.11
Ընդհանուր		1.11		
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-18	Այլ հողեր	0.71	Բնակելի կառուցապատման	0.71
ԲԲ-19	Այլ հողեր	0.96	Հասարակական կառուցապատման	0.96
Ընդհանուր		1.67		

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ					
Ցուցանիշը	Զափման միավորը	Փաստացի	Առաջնահերթ	Հեռանկարային	
1	2	3	4	5	
Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	հա	3659.59	3659.59	3659.59	
Բնակավայրերի հողեր, որից՝	հա	186.97	208.08	231.64	
բնակելի կառուցապատման	հա	116.01	124.70	127.68	
հասարակական կառուցապատման	հա	25.98	46.20	56.08	
խառը կառուցապատման	հա		0.00	14.17	
ընդհանուր օգտագործման,	հա	20.14	21.11	22.19	
Ընդհանուր օգտագործման	հա		0.33	2.25	

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

	կանաչապատ տարածքներ				
այլ տարածքներ	հա		0.00	0.00	
այլ հողեր	հա	24.84	15.74	9.27	
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	հա	28.22	27.75	27.75	
արդյունաբերական օբյեկտների	հա		0	0	
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	25.85	25.38	25.38	
պահեստարանների	հա		0	0	
ընդերքի օգտագործման	հա	2.37	2.37	2.37	
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	հա	36.12	37.69	38.8	
Էներգետիկայի	հա	9.75	9.75	9.75	
կապի	հա	0.65	0.65	0.65	
տրանսպորտի	հա	25.72	25.72	25.72	
կոմունալ ենթակառուցվածքների	հա		1.57	2.68	
Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	հա	2.84	1.27	1.27	
բնապահպանական	հա		0	0	
առողջարարական			0	0	
հանգստի համար նախատեսված	հա		0	0	
պատմական և մշակութային	հա	2.84	1.27	1.27	
Հատուկ նշանակության հողեր	հա		0	0.00	
Գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	3376.27	3359.52	3334.85	
վարելահող	հա	1439.24	1428.17	1418.66	
բազմամյա տնկարկներ	հա		0	0	
խոտհարքներ	հա	194.74	194.74	194.74	
արոտավայր	հա	1512.41	1506.73	1491.83	
այլ հողատեսքեր	հա	229.88	229.88	229.62	
Անտառային հողեր	հա	27.61	23.72	23.72	
Ջրային հողեր	հա	1.56	1.56	1.56	
գետեր	հա		0	0	
ջրամբարներ	հա	0.88	0.88	0.88	
լճեր	հա	0.63	0.63	0.63	
ջրանցքներ	հա	0.05	0.05	0.05	
հիդրոտեխ. և ջրոնտ. այլ օբ.	հա		0	0	

Ձվաբեր

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները				
Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

	Բնակավայրերի հոդերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-1	Այլ հողեր	1.58	Բնակելի կառուցապատման	1.58
ԲԲ-2	Այլ հողեր	1.24	Բնակելի կառուցապատման	1.24
ԲԲ-3	Այլ հողեր	0.05	Բնակելի կառուցապատման	0.05
ԲԲ-4	Այլ հողեր	0.2	Բնակելի կառուցապատման	0.2
ԲԲ-5	Այլ հողեր	0.52	Հասարակական կառուցապատման	0.52
ԲԲ-6	Այլ հողեր	0.24	Հասարակական կառուցապատման	0.24
ԲԲ-7	Այլ հողեր	0.40	Խառը կառուցապատում	0.4
ԲԲ-8	Այլ հողեր	0.18	Հասարակական կառուցապատման	0.18
ԲԲ-9	Այլ հողեր	0.27	Բնակելի կառուցապատման	0.27
ԲԲ-10	Այլ հողեր	0.52	Ընդհանուր օգտագործման (փողոցներ)	0.52
ԲԲ-19	Այլ հողեր	0.37	Ընդհանուր օգտագործման (կանաչ)	0.37
ԲԲ-20	Այլ հողեր	0.43	Բնակելի կառուցապատման	0.43
Ընդհանուր			6.00	
	Գյուղատնտեսական նշանակության հողեր			
ԳԲ-1	Վարելահող	0.37	Խառը կառուցապատման	0.37
Ընդհանուր			0.37	
	Հատուկ պահպանվող հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ՀՆ-1	պատմության և մշակույթի	2.11	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	2.11
ՀՆ-2	պատմության և մշակույթի	0.3	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	0.3
Ընդհանուր			2.41	
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Բնակավայրերի հոդերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-11	Այլ հողեր	0.22	Բնակելի կառուցապատման	0.22
ԲԲ-12	Այլ հողեր	0.24	Բնակելի կառուցապատման	0.24
ԲԲ-13	Այլ հողեր	0.10	Բնակելի կառուցապատման	0.1
ԲԲ-14	Այլ հողեր	0.85	Ընդհանուր օգտագործման (կանաչ)	0.85
ԲԲ-15	Այլ հողեր	0.11	Ընդհանուր օգտագործման (կանաչ)	0.11
ԲԲ-16	Այլ հողեր	0.28	Բնակելի կառուցապատման	0.28
Ընդհանուր			1.80	
	Բնակավայրերի հոդերից՝			
			Անտառային հողեր	
ԲԱն-1	Այլ հողեր	0.85	Անտառային հողեր	0.85

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ԲԱն-3	Այլ հողեր	0.45	Անտառային հողեր	0.45
ԲԱն-4	Այլ հողեր	1.35	Անտառային հողեր	1.35
Ընդհանուր		2.65		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից			
			Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	
ԳԱ-1	արոտավայր	0.81	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	0.81
ԳԱ-2	վարելահող	2.23	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	2.23
ԳԱ-3	արոտավայր	1.12	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	1.12
Ընդհանուր		4.16		
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-17	Այլ հողեր	0.31	Ընդհանուր օգտագործման (կանաչ)	0.31
Ընդհանուր		0.31		
			Անտառային հողեր	
ԲԱն-2	Այլ հողեր	0.47	Անտառային հողեր	0.47
Ընդհանուր		0.47		

Տեխնիկանտեսական ցուցանիշներ				
Ցուցանիշը	Զախման միավորը	Փաստացի	Առաջնաիեթ	Հեռանկարային
1	2	3	4	5
Համա՝ նրի, համակցված վատաբոլի դեպքու մ նախագծվող համա՝ նրների վաբչ սկսն սանմաններու մ ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը ընդամենը	հա	2876.54	2876.54	2876.54
Բնակավայրերի հողեր, որից՝	հա	130.38	130.75	127.63
բնակելի կառուցապատման	հա	90.84	94.606	95.45
հասարակական կառուցապատման	հա	2.74	3.68	3.68
խառը կառուցապատման	հա	0.24	1.006	1.01
ընդհանուր օգտագործման,	հա	15.1	15.62	15.62
Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա		0.37	1.64
այլ տարածքներ	հա		0	0.00
այլ հողեր	հա	21.47	15.468	10.24
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	հա	56.19	56.19	60.35
արդյունաբերական օբյեկտների	հա		0	0
գյուղատնտեսական	հա	56.19	56.19	60.35

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

արտադրական օբյեկտների				
պահեստարանների	հա		0	0
րնդերքի օգտագործման	հա		0	0
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հոդեր, որից՝	հա	6.58	8.99	8.99
Էներգետիկայի	հա	0.11	0.11	0.11
կապի	հա		0	0
տրանսպորտի	հա	5.97	5.97	5.97
կոմունալ ենթակառուցվածքների	հա	0.50	2.91	2.91
Հատուկ պահպանվող տարածքների հոդեր, որից՝	հա	3.67	1.26	1.26
բնապահպանական	հա		0.00	0.00
առողջարարական			0.00	0.00
հանգստի համար նախատեսված	հա		0.00	0.00
պատմական և մշակութային	հա	3.67	1.26	1.26
Հատուկ նշանակության հոդեր	հա	0		
Գյուղատնտեսական նշանակության հոդեր,	հա	2663.86	2663.49	2659.33
վարելահող	հա	473.92	473.55	471.32
բազմամյա տնկարկներ	հա		0	0
խոտհարքներ	հա	230.67	230.67	230.67
արոտավայր	հա	1825.04	1825.04	1823.11
այլ հողատեսքեր	հա	134.23	134.23	134.23
Անտառային հոդեր	հա		0	3.12
Ջրային հոդեր	հա	15.86	15.86	15.86
գետեր	հա	3.63	3.63	3.63
ջրամբարներ	հա		0	0
լճեր	հա	0	0	0
ջրանցքներ	հա	11.88	11.88	11.88
հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա	0.35	0.35	0.35

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման
նախագիծ

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսլ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Տեխնիկական համալսարանի ցուցանիշներ		Պատկեր 1. Շինարարական		Բ. Սահման		Մոլորակ		Դրամական		Պատկեր		Պատկեր		Լճային		Առկա ռեսուրսներ		Մոլորակ		Պատկեր		Պատկեր		Պատկեր	
Ցուցանիշներ	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ	Պատկեր	Չափման միավորներ
Համալսարանի, համակցված փաստաթղթի դեպքում մ նախագծավոր համալսարանի վարչական սահմաններում մ ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը ընդամենը	հա	39689.29	39689.29	1784.68	1784.68	3789.28	3789.28	4345.22	4345.22	3128.37	3128.37	3659.59	3659.59	2876.54	2876.54	5953.96	5953.96	2947.55	2947.55	7314.92	7314.92	2585.21	2585.21	1303.95	1303.95
ԲՆԱԿԱՎԱՅՐՆԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	հա	2437.44	2715.765	812.05	812.385	235.45	299.54	205.28	244.89	186.27	217.65	186.97	231.64	130.39	127.27	296.89	309.37	27.45	43.2	219.45	268.44	66.22	73.18	71.02	83.725
Բնակելի ի կառուցվածքներ	հա	1445.88	1666.26	237.22	322.24	198.59	215.63	156.3	161.91	139.79	162.76	116.01	127.68	90.84	95.45	220.68	235.91	14.81	22.68	167.88	202.1	50.97	57.59	52.79	62.31
հասարակական կառուցվածքներ	հա	148.11	295.47	68.5	125.54	6.37	9.41	4.32	24.21	11.78	19.96	25.98	56.08	2.74	3.68	10.82	14.37	1.1	11.77	3.03	11.9	9.91	9.91	3.56	8.64
խառը կառուցվածքներ	հա	6.15	92.295	5.73	14.52		45.05		16.3				14.17	0.24	0.64						0.75	0.18	0.18		0.685

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

գետեր	հա	ԽՄ	ԽՄ	պ և հողատարեր	արտալպ ը	խոտարքներ	բսզմալ ասնկարկներ
40.02	հա	ԽՄ	ԽՄ	հա	հա	հա	հա
		155.82	633.33	4146.71	14877.66	4705.99	65.08
40.02		156.032	694.43	4040.767	13988.339	4695.61	65.87
2.29		63.13		103.83			
2.29		63.13		103.49			
4.95		5.04	13.53	593.93	1509.82	556.68	
4.95		5.04	23.93	559.73	1507.86	554.08	
10.33		15.94	3.38	485.89	1956.77	691.22	63.62
10.33		15.94	54.85	477.56	1864.05	691.22	63.62
		17.06	30.37	632.18	1000.38	351.36	1.46
		17.06	30.37	620.980	1000.19	350.8	1.46
		1.56	27.61	229.88	1512.41	194.74	
		1.56	23.72	229.62	1491.83	194.74	
3.63		15.86		134.23	1825.04	230.67	
3.63		15.86	3.12	134.23	1823.11	230.67	
		1.28		948.74	2036.96	549	
		1.28		948.74	1407.5	549	
4		9.4		70.2	1458.96	848.2	
4		9.4		65.53	1444.73	820.45	
14.82		24.28	557.34	699.28	1492.99	872.53	
14.82		24.28	557.34	652.6	1387.18	893.06	
		2.27	1.1	226.85	1311.25	411.59	
		2.27	1.1	226.85	1303.5	411.59	0.79
		0		21.7	773.08		
		0.212		21.45	758.389		

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

հիդրոտեխ. և ջրատ. պ. և օբ.	գրանցներ	լ ձևը	ջրաբեր
հա	հա	հա	հա
9.67	30.62	73.23	2.28
9.67	30.62	73.442	2.28
6.52		53.47	0.85
6.52		53.47	0.85
0.04	0.05		
0.04	0.05		
0.73	4.66		0.22
0.73	4.66		0.22
1.34	15.39		0.33
1.34	15.39		0.33
	0.05	0.63	0.88
	0.05	0.63	0.88
0.35		11.88	
0.35		11.88	
0.48		0.8	
0.48		0.8	
		5.4	
		5.4	
0.21	8.2	1.05	
0.21	8.2	1.05	
	2.27		
	2.27		
		0.212	

**2.17. Գեղարքունիք-1 ՄՄՀՏՊ տարածքային զարգացման
այլընտրանքային, /այդ թվում գրոյական/ տարբերակի կիրառման
գործնականության վերաբերյալ**

Ինչպես ներկայացված է «Գեղարքունիք-1» տարածքային զարգացման հատակագծային կազմակերպում բաժնում, զարգացման ուղիվածության ընտրությունը առաջարկված է հիմնվելով և հաշվի առնելով տարածքների բնական պայմանները և երկարաժամկետ զարգացման ընթացքում ձևավորված ենթակառուցվածքը: Դրանք են բաժնի կազմում գետեղված ենթաբաժինները՝ տարաբնակեցման համակարգը, քաղաքային և գյուղական բնակավայրերը, բնակարանային ֆոնդը և բնակարանային ապահովվածությունը, բնակչության հասարակական սպասարկման համակարգը, ճանապարհային ցանցը, էլեկտրամատակարարումը, գազամատակարարումը և այլն: Այս առումով, այսպես կոչված «գրոյական տարբերակ» դիտարկումը տվյալ մշակումների շրջանակներում որևէ տրամաբանական կամ կառուցողական իմաստ չի պարունակում, քանի որ ամբողջ համակարգերի հեռանկարային զարգացումը մնում է «սառեցված» վիճակում:

«Զրոյական տարբերակ» նշանակում է, որ միկրոռեգիոնալ տարածքում բնակավայրերի տարածքային զարգացում, բնակչության թվի, բնակարանային ֆոնդի, բնակչության հասարակական սպասարկման համակարգի, ինժեներական ենթակառուցվածքների աճը և զարգացումը բացառվում է: Այստեղից հետևում է, որ մշակվող հիմնադրության փաստաթղթում ամրագրվում են ելակետային հարաչափերը առանց զարգացման հեռանկարների, փաստորեն ներկայացվող հատակագծային զարգացում չի նախատեսվում, բնակավայրի զարգացման ծրագրեր չեն առաջարկվում և բնակավայրի հետագա կենսագործունեությունը շարունակվում է նույն ընթացքով:

Զրոյական տարբերակի բնութագրերը՝ բնակավայրի շրջակա միջավայրի բնական բաղադրիչների բնութագրերը, բնակչության սոցիալական պայմանները մանրամասնորեն ներկայացված են սույն հաշվետվության նախորդ բաժիններում: Զրոյական տարբերակի դեպքում բնական միջավայրի իրավիճակը և բնակչության սոցիալական պայմանները կմնան անփոփոխ:

2.18. Քննարկվող տարբերակներ

Բնակավայրի սոցիալտնտեսական զարգացման ծրագրերի քննարկման ժամանակ դիտարկվել են երկու հիմնական տարբերակ.

-բնակավայրի զարգացումը կընթանա հիմնականում գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացման ուղիով,

- բնակավայրի զարգացումը կլինի բազմակողմ (դիվերսիֆիկացված):

Առաջին տարբերակի դրական կողմն այն է, որ չեն իրականացվի այնպիսի շինարարական կամ ենթակառուցվածքային աշխատանքներ, որոնք բացասաբար կազդեն բնակավայրի բնական միջավայրի վրա:

Սակայն այս դեպքում բնակավայրի կենսական պայմանների բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար չեն լինի անհրաժեշտ խթաններ:

Երկրորդ տարբերակը նախատեսում է բնակավայրի ինտենսիվ զարգացում, այդ թվում ինչպես գյուղատնտեսական ոլորտներում, այնպես էլ տուրիզմի, առողջարարական և այլ:

Այս տարբերակը կարող է ապահովել իրական և զգալի սոցիալ-տնտեսական արդյունքներ: Միննույն ժամանակ տարբերակը կապված է ավելի բարձր բնապահպանական ռիսկերի հետ, որոնցից հիմնականները.

- շինարարական աշխատանքներ, որոնք կարող են բացասաբար ազդել շրջակա միջավայրի, բուսական և կենդանական աշխարհի վրա,

- ակտիվ զբոսաշրջության պայմաններում կարող են վտանգվել տեղանքի բնական էկոհամակարգերը:

Սակայն, եթե մշակվեն և լիարժեքորեն իրականացվեն անհրաժեշտ բնապահպանական, քաղաքաշինարարական և անվտանգության ապահովման միջոցառումներ, այդ ռիսկերը կլինեն նվազագույն և կառավարելի:

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները, ընտրվել է երկրորդ տարբերակը:

2.19. ԻՆՏԵՆՏՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

2.19.1. Զրամատակարարում

Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքներում ջրամատակարարումն իրականացվում էր օրական 2-4 ժամ: 2011-2015 թվականներին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն միջազգային ներդրումների հաշվին կառուցվեց շուրջ 805 կմ երկարության խմելու ջրի ջրագծեր, որի արդյունքում մարզի բնակչության 57%-ը (հիմնականում քաղաքային համայնքներում բնակվող) ապահովված է 24 ժամյա ջրամատակարարումով, իսկ 43%-ը ըստ ջրամատակարարման ժամանակացույցի:

Ըստ Զրային կոմիտեի տրամադրած տեղեկատվության՝ «Վեոլիաջուր» ընկերության կողմից սպասարկվում են դիտարկվող միկրոռեգիոնում ներառված՝ Սևան քաղաքը /Գագարին գյուղ/ և Լճաշեն, Նորաշեն, Չկալովկա, Վարսեր գյուղերը: Նշված բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է ժամային գրաֆիկով, համապատասխանաբար՝ 8, 11, 24, 12, 24 ժամ տևողությամբ:

Գագարին բնակավայրի համար կառուցվել է նոր ջրագիծ, որը շուտով կհանձնվի շահագործման:

Չկալովկա և Լճաշեն բնակավայրերի ջրամատակարարման համակարգերն ամբողջության փոխարինվել են նոր, պ/է խողովակներով: Նորաշեն բնակավայրի ջրամատակարարման համակարգի մի մասը փոխարինվել է նոր խողովակներով, մի

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

մասը հին է: Վարսեր բնակավայրի ջրագծերի հիմնական մասը ևս փոխարինվել է նոր խողովակաշարով:

Բնակավայրերի տարածքում չկան օրվա կարգավորիչ ջրամբարներ:

Ստորև աղյուսակում տրված է «Վեղիաջուր» ընկերության կողմից տրամադրված տեղեկատվություն վերը նշված բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի վերաբերյալ:

Միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի վերաբերյալ տեղեկատվություն

Միկրոռեգիոն	բնակավայր	խմելու ջրի աղբյուրներ		Սնող ջրատարները				ՕԿՁ-ների						կոյուղացման աստիճանը	վեղտաջրերի մասին տեղեկատվություն
		քանակը	հզոր- նը	երկար- նը	տրամագիծը	տեխն. Վիճակը	մատ-ը(ինքն- ս/մեխ-ն)	քանակը	ծավալները	հատակի նիշերը	բլորակայանի առկա- ը	սան—վաշտ—իչ գոտիներ	ջրամատակարարման գոտիների առկա- նը		
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-1	1	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
	Սևան քաղաք (Գագարին գյուղ)	1			500	Բավարար	Ինքն-ս							Կոյուղաֆիկացված է մոտ 70%	
	Լճաշեն	1			150	Լավ	Մեխ-ն							Ոչ	
	Նորաշեն	1			100	Լավ	Մեխ-ն							Ոչ	
	Չկալովկա	1			100	Լավ	Մեխ-ն							Ոչ	
	Վարսեր	1			100	Բավարար	Ինքն-ս							Ոչ	

Միկրոռեգիոնում ներառված մյուս բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից:

Լոկալ աղբյուրներից սնվող, համայնքի կողմից շահագործվող ջրամատակարարման ցանցերի զգալի մասը գտնվում է ոչ բարվոք վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում:

Թեև աղբյուրների հզորությունները ըստ համայնքապետարանի ներկայացրած տեղեկատվության, ունեն բավարար հզորություններ, սակայն կան բնակավայրեր, որոնք ջուր են ստանում ժամային գրաֆիկով:

Համայնքի կողմից շահագործվող ջրամատակարարման համակարգերով բնակիչներին մատակարարվող ջրի հաշվառում չի իրականացվում, սպառողների մոտ ջրաչափեր տեղադրված չեն:

Գոյություն ունեցող վիճակի վերլուծության ամփոփում

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Առկա վիճակի վերլուծության արդյունքում արձանագրվել են խմելու ջրամատակարարման ոլորտին առնչվող հետևյալ խնդիրները.

- ջրատարների և ջրամատակարարման բաշխիչ ցանցերի մաշվածություն (կորուստների բարձր տոկոս) կամ բացակայություն,
- խմելու ջրի հաշվառման բացակայություն, ոչ արդյունավետ օգտագործում,
- անհրաժեշտ քանակով ջրապաշար ամբարելու համար համապատասխան ծավալով, պահանջվող նիշերի վրա տեղակայված ջրամբարների բացակայություն,
- ջրամատակարարման կառավարման ոչ բավարար իմացություն:

Ջրամատակարարման նորմերը և հաշվարկային ջրապահանջը

Բնակավայրերի համար խմելու ջրամատակարարման համակարգը նախատեսվում է՝

- բնակչության խմելու-տնտեսական նպատակով,
- արտադրական այն օբյեկտների համար, որոնց արտադրական կարիքների համար անհրաժեշտ է խմելու որակի ջուր,

- բնակավայրի հակահրդեհային կարիքների բավարարման համար:

Բնակչության խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակը որոշելու համար որպես ելակետային տվյալ ընդունվել է 200 լ/օր/մարդ (ըստ ՇՆևԿ 2.04.02.84) : Սույն նորմը գյուղական բնակչության համար ընդգրկում է բնակչության խմելու-կենցաղային ջրապահանջը, ինչպես նաև ընտանի կենդանիների ջրման պահանջարկը՝ բերված մեկ բնակչի հաշվարկով :

Արտադրական կարիքների համար պահանջվող խմելու որակի ջրաքանակն ընդունվում է բնակչության ջրապահանջի 15%-ի չափով:

Հակահրդեհային կարիքների (արտաքին և ներքին հրդեհներ) համար պահանջվող ջրաքանակը հաշվարկվում է համաձայն գործող նորմերի պահանջների (ՇՆևԿ 2.04.02.84):

Ստորև աղյուսակում տրված է Գեղարքունիք-1-ում ներառված բնակավայրերի խմելու-տնտեսական, արտադրական և հակահրդեհային կարիքների համար պահանջվող հաշվարկային ջրապահանջը (ներառյալ նաև հոսակորուստները).

Հաշվարկային ջրապահանջն՝ ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանկարային բնակչության քանակը	Ջրապատման նորմը	Ջրապահանջը				
				Խմելու-տնտեսական	Արտադրական (15 %)	Հակահրդեհային կարիքներ	Հոսակորուստներ (30 %)	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Սևան քաղաք	20900	200	4180.0	627.0	216.0	1254.0	6277.0
	Գազարին գյուղ	1832		366.3	54.9	162.0	109.9	693.1
2	Գեղամավան	1878	-/-	375.5	56.3	162.0	112.7	706.5
3	Դդմաշեն	2940	-/-	588.1	88.2	162.0	176.4	1014.7
4	Զովաբեր	1621	-/-	324.3	48.6	162.0	97.3	632.2

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

5	Լճաշեն	4770	-//-	953.9	143.1	162.0	286.2	1545.2
6	Ծաղկունք	1114	-//-	222.9	33.4	162.0	66.9	485.1
7	Ծովագյուղ	4596	-//-	919.2	137.9	162.0	275.7	1494.8
8	Նորաշեն	502	-//-	100.3	15.0	81.0	30.1	226.5
9	Չկալովկա	582	-//-	116.4	17.5	81.0	34.9	249.8
10	Սեմյոնովկա	262	-//-	52.4	7.9	81.0	15.7	156.9
11	Վարսեր	1912	-//-	382.4	57.4	162.0	114.7	716.4

Ջրամատակարարման նախատեսվող համակարգերը և գոտիները

Ջրամատակարարման համակարգերը նախատեսվում են կենտրոնացված, բնակչության խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են մեկ ջրատարով:

Ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով՝ անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար նախատեսելով ճնշման կարգավորիչներ կամ նոր ՕԿՋ-ներ, որտեղից խմելու ջուրը բնակչությանը կտրվի ինքնահոս եղանակով:

Շուրջօրյա ջրամատակարարում, ինչպես նաև անհրաժեշտ հակահրդեհային ելք ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր բնակավայրում ունենալ որոշակի ջրապաշար, որն իր մեջ ներառում է ծավալային երեք բաղադրիչ՝ $W_{\text{կ}}$ (կարգավորման), $W_{\text{հհ}}$ (հակահրդեհային), $W_{\text{վթ}}$ (վթարային): Պահանջվող ընդհանուր ծավալը ($W_{\text{ընդ}}$), որն անհրաժեշտ է նախատեսել յուրաքանչյուր բնակավայրում, ձևավորվում է այս երեք բաղադրիչների հաշվարկային արժեքների գումարից՝ $W_{\text{ընդ}} = W_{\text{կ}} + W_{\text{հհ}} + W_{\text{վթ}}$: Ստորև աղյուսակում տրված է միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքները.

Խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքները

N	Բնակավայրը	Կարգավորման ծավալ $W_{\text{կ}}$	Հակահրդեհային կարիքներ $W_{\text{հհ}}$	Վթարային ծավալ $W_{\text{վթ}}$	Ընդհանուր պահանջվող ծավալ $W_{\text{ընդ}}$
մ³					
1	Սևան քաղաք	1883.1	216.0	2090.0	4189.1
	Գագարին գյուղ	207.9	162.0	183.2	553.1
2	Գեղամավան	212.0	162.0	187.8	561.7
3	Դոմաշեն	304.4	162.0	294.0	760.4
4	Զովաբեր	189.7	162.0	162.1	513.8
5	Լճաշեն	463.6	162.0	477.0	1102.5

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

6	Ծաղկունք	145.5	162.0	111.4	419.0
7	Ծովագյուղ	448.4	162.0	459.6	1070.0
8	Նորաշեն	67.9	81.0	50.2	199.1
9	Չկալովկա	74.9	81.0	58.2	214.1
10	Սեմյոնովկա	47.1	81.0	26.2	154.3
11	Վարսեր	214.9	162.0	191.2	568.1

Ջրամատակարարման գլխավոր փողոցային ցանցերն անհրաժեշտ է նախատեսել օղակային՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով: Փակուղային կարող են լինել 200 մ-ից պակաս երկարություն և 100 մ-ից պակաս տրամագիծ ունեցող ջրագծերը:

Խողովակաշարերի թեքություններն ընդունել ոչ պակաս 0.001, հարթ ռելիեֆի պայմաններում՝ 0.0005:

Խմելու որակի ջուր տեղափոխող խողովակների տեղադրման խորությունը պետք է նախատեսել.

- 0.5 մ-ով ավելի, քան գրունտ ներթափանցող զրոյական ջերմաստիճանի հաշվարկային խորությունն է,
- կոյուղու խողովակաշարերից ուղղաձիգ ուղղությամբ 0.4 մ-ով բարձր:

Հաշվի առնելով, որ ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է, օղակային խողովակաշարերի տրամագծերը պետք է նախատեսել 100 մ-ից ոչ պակաս:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ջրամատակարարման համակարգերի համայնքային կառավարումն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել այդ համակարգերի պատշաճ շահագործման և պահպանման կազմակերպություն (ՇևՊ), որը կունենա համապատասխան վերապատրաստում անցած աշխատակիցներ:
- Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում:
- Բնակչությանն անհրաժեշտ քանակի խմելու ջրով բավարարելու նպատակով առաջարկվում է բնակավայրերի տարածքում պահանջվող ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարների նախատեսում՝

h/h	Բնակավայրը	Նախատեսվող ՕԿՋ-ի ծավալը	Հատակի նիշը
1	Սևան քաղաք /Գազարին գյուղ/		
2	Գեղամավան	2x500+2x500	
3	Դդաշեն		
4	Զովաբեր		
5	Լճաշեն		
6	Ծաղկունք		
7	Ծովագյուղ		
8	Նորաշեն		
9	Չկալովկա		
10	Սեմյոնովկա		
11	Վարսեր		

- Բոլոր բնակավայրերում խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով:
- Ջրամատակարարման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿՁ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում:
- Խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում:
- Խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն:
- Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ:
- Հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐՄՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Ջրային ռեսուրսների պահպանություն, տնտեսում և կայուն օգտագործում:
- ✓ Ջրամատակարարման համակարգի հուսալիություն:
- ✓ Հոսակորուստների կրճատում:
- ✓ Ջրի սպառման արդյունավետության բարձրացում:
- ✓ Բնակչության ջրամատակարարման տևողության ավելացում:
- ✓ Խմելու ջրի հաշվառում, ինչը կբերի ջրօգտագործման կուլտուրայի բարելավման, ինչպես նաև կխթանի բնակիչների ջրօգտագործման ռեժիմի փոփոխությանը:
- ✓ Խմելու ջրի բարձր որակի ապահովում և աղտոտման վտանգի նվազում:

2.19.2. Ջրահեռացում

2.19.2.1. Կենցաղային և արտադրական կոյուղի

Ինժեներական ենթակառուցվածքներով (հիմնականում կոյուղացման) ցածր մակարդակները ստեղծում են ստորերկրյա և Սևանա լճի ջրերի ռազմավարական նշանակության պաշարների աղտոտման վտանգ:

Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքների կեղտաջրերն անարգել լցվում էին Սևանա լիճ: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով 2011 թվականից մարզի Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կառուցվեցին կեղտաջրերի մաքրման կայաններ, որի շնորհիվ մասամբ /իրականացվում է միայն մեխանիկական մաքրում/ լուծվեց կեղտաջրերի մաքրման խնդիրը՝ Գավառ քաղաքում 36%-ով, Մարտունի քաղաքում 47%-ով, Վարդենիս քաղաքում 41%-ով: Եվրոպական ներդրումային բանկի միջոցներով Սևան քաղաքում ևս նախատեսվում է կառուցել կեղտաջրերի մաքրման նոր կայան:

Մարզի քաղաքների և առանձին գյուղական բնակավայրերի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայքայված վիճակը, որը հղի է մեծ վտանգներով՝ շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար:

Մարզի բնակչության շուրջ 40%-ը չի օգտվում կեղտաջրերի մաքրման կայաններից և կեղտաջրերը լցվում են հատուկ այդ նպատակով փորված կեղտաջրերի հորատանցքեր՝ առանց մաքրման և վարակազերծման՝ մեծ վտանգ ներկայացնելով վարակիչ հիվանդությունների տարածման տեսանկյունից:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Դիտարկվող տարածաշրջանի գյուղական բնակավայրերը չունեն կոյուղու հոսքաջրերի հեռացման համակարգ: Կրթական, վարչական, առողջապահական հիմնարկների կոյուղու հոսքաջրերի հեռացման համար հիմնականում նախատեսված են լոկալ սեպտիկ հորեր: Բնակչությունն օգտվում է բակային հորատիպ զուգարաններից:

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը՝ նախատեսելով կենսաբանական մաքրման կայաններ /սարքավորումներ/: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Ինքնահոս ջրահեռացման խողովակների տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս.

- փողոցային ցանցի համար՝ 200 մմ, թեքությունը՝ 0.007,
- ներթաղամասային կենցաղային և արտադրական կոյուղու ցանցի համար՝ 150 մմ, թեքությունը՝ 0.008:

Կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը նախատեսվում է մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքեր:

Այն արտադրական օբյեկտներում, որոնց հեռացման ենթակա հոսքաջրերը կարող են պարունակել կոյուղու համակարգը վնասող կամ դրա աշխատանքը խոչընդոտող նյութեր, նախատեսվում է (նախքան կոյուղու միասնական համակարգին միանալը) իրականացնել կեղտաջրերի նախնական մաքրում:

Ստորև աղյուսակում տրված է Գեղարքունիք-1 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի կոյուղու (կոմունալ-կենցաղային և արտադրական) հեռացման ենթակա հոսքաջրերի հաշվարկային ելքերը:

Կոյուղու հաշվարկային ելքերն՝ ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանակարային բնակչության քանակը (մարդ)	Հեռացման ենթակա հոսքաջրերի քանակը մ ³ /օր		
			Կոմունալ-կենցաղային	Արտադրական	Ընդամենը
1	2	3	5	7	9
1	Սևան քաղաք	20900	4180	3762.0	7942.0
	Գագարին գյուղ	1832	366.3	329.7	696.0
2	Գեղամավան	1878	375.5	338.0	713.5
3	Դդմաշեն	2940	588.1	529.3	1117.3
4	Զովաբեր	1621	324.3	291.9	616.1
5	Լճաշեն	4770	953.9	858.5	1812.4
6	Ծաղկունք	1114	222.9	200.6	423.4
7	Ծովագյուղ	4596	919.2	827.2	1746.4
8	Նորաշեն	502	100.3	90.3	190.6

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

9	Չկալովկա	582	116.4	104.7	221.1
10	Սեմյոնովկա	262	52.4	47.1	99.5
11	Վարսեր	1912	382.4	344.1	726.5

2.19.2.2. Հեղեղատար կոյուղի

Հեղեղատար կոյուղու նպատակը համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի կազմակերպված հեռացումն է, ինչը հնարավորություն կստեղծի համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Սույն նախագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:

Հեղեղատար ցանցերը՝ կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով: Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե, թուջե խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Անձրևաջրերի հեռացման փակ համակարգի դեպքում խողովակաշարերի տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս՝ 250 մմ փողոցային ցանցի համար, 200 մմ՝ ներթաղամասային ցանցի համար:

Անձրևաջրերի հեռացման բաց համակարգի դեպքում երթևեկելի ասֆալտապատ ճանապարհների ճամփեզրերի, առանձին խրամառունների (կյուվետ) և ջրահեռացման առվակների թեքությունները համապատասխանաբար ընդունել ոչ պակաս 0.003, 0.005 և 0.003:

Սեղանաձև հատվածքով կյուվետների և ջրահեռացման առվակների նվազագույն չափերն անհրաժեշտ է ընդունել՝

- հատակի լայնությունը՝ 0.3 մ,
- խորությունը՝ 0.4 մ:

Այն համայնքներում, որտեղ սույն նախագծի շրջանակներում նախատեսված են կոյուղու մաքրման սարքավորումներ, անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս կարող է ենթարկվել մաքրման: Անձրևաջրերի մաքրումը կարող է իրականացվել ինչպես առանձին մաքրման սարքավորումներով, այնպես էլ կենցաղային և արտադրական կոյուղու հոսքաջրերի հետ համատեղ՝ նախատեսելով կարգավորող ջրավազաններ՝ որոնք հնարավորություն կստեղծեն մակերեսային հոսքաջրերը կուտակել և միայն կենցաղային կոյուղու ամենաքիչ հոսքի ժամերին մղել կոյուղու համակարգ՝ դրանք մաքրման կայանում լրիվ մաքրման ենթարկելու համար:



Նախագծային առաջարկություններ

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

- Բնակավայրերի լրիվ կոյուղացում, կոյուղու ինքնահոս համակարգերի նախատեսում, կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի կառուցում:
- Կենցաղային կոյուղուն զուգահեռ հեղեղատար կոյուղու նախատեսում:
- Կոյուղու կեղտաջրերի լրիվ մաքրում և վարակազերծում՝ հաշվի առնելով մակերևութային ջրերն աղտոտումից պաշտպանելու պահանջները: Ըստ ՇՆՆԿ 2.04.02-85-ի 6.1 կետի պահանջների՝ կեղտաջրերը պետք է անցնեն լրիվ կենսաբանական մաքրում և ունենան հետևյալ ցուցանիշը՝ ԹԿՊ_{լրիվ}=6 մգ/լ:
- Սևան քաղաքի կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը մաքրելու նպատակով ժամանակակից տեխնոլոգիաներով կենսաբանական մաքրման կայանի նախատեսում:
- Գյուղական բնակավայրի հեռացման ենթակա հոսքաջրերը մաքրման ենթարկելու նպատակով առաջարկվում է տեղադրել լոկալ, ժամանակակից տեխնոլոգիաներով, գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման սարքավորումներ՝ /հզորություններն ըստ Զրահեռացում բաժնի «Կոյուղու հաշվարկային ելքերն ըստ բնակավայրերի» աղյուսակի:
- Հաշվի առնելով, որ ազգային պարկի տարածքում գործող օբյեկտները տեղակայված են ավելի ցածր նիշերի վրա, /դրանց հեռացման ենթակա հոսքաջրերը չեն կարող ինքնահոս եղանակով հասցվել մաքրման կայան/, առաջարկվում է դրանց հոսքաջրերը մաքրելու նպատակով տեղադրել լոկալ, փոքր հզորության մաքրման սարքավորումներ՝ նախատեսված մեկ կամ մի քանի օբյեկտների համար:
Վերոնշյալ սարքավորումները բաղկացած են շղթայաբար իրար միացված տեխնոլոգիական տարրաների ցանցից, որոնցում իրականացվում են կոյուղու հոսքաջրերի փուլային մաքրման գործընթացներ: Կոյուղու հոսքաջրերը հաջորդաբար մուտք գործելով բազմաշերտ պոլիմերային ծածկույթով մետաղից, պոլիէթիլենից կամ պոլիպրոպիլենից պատրաստված տարրաների մեջ, ենթարկվում են կենսաբանական մաքրման (98 %), որից հետո կարող են բաց թողնվել բաց ջրահոսքեր կամ ուղղվել ոռոգման համակարգեր՝ խթանելով կրկնակի ջրօգտագործումը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածաշրջանի ոռոգման, բնապահպանական խնդիրները և նախատեսվող միջոցառումները

Բաժինը մշակելիս որպես ելակետային նյութ ընդունվել է.

1. ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին ՀՕ-232 օրենքի հիման վրա կազմված «ՀՀ ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայացակարգը»;
2. «Սևանի մասին ՀՀ օրենքը» - 2001թ. 15 մայիսի;
3. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» 2001թ. դեկտեմբերի 14 -ի ՀՀ օրենքը;
4. Տարածաշրջանում մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաներն ու ռեժիմները;
5. Գեղարքունիքի մարզի տարածաշրջանի համար ոռոգման աղբյուր հանդիսացող գետերի և սելավատարների հիդրոլոգիական դիտարկումների տվյալները;
6. Ծրագրի մշակման գործընթացում Գեղարքունիքի մարզում կատարված ուսումնասիրությունների ընթացքում հավաքագրված տվյալները:

Մարզի բնակլիմայական պայմանները

Գեղարքունիքի մարզի ընդհանուր տարածքը կազմում է 5348 կմ², այդ թվում Սևանա լճի մակերեսը 1260 կմ² :

Տարածաշրջանի ջրային ռեսուրսներ են հանդիսանում Սևանա լիճը 33.2 կմ² և նրա մեջ թափվող 28 գետերը 26.8 մ³/վրկ միջին տարեկան հոսքով :

Սևանա լճից ազատված հողերը ավազային են հումուսի աննշան պարունակությամբ: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը, իսկ Արտանիշ թերակղզու Բլրապատ և Լեռնոտ հատվածներում տարածված են լեռնատափաստանային հողեր:

Մարզի վարելահողերը կազմում են շուրջ 85.7 հազ.հա, այդ թվում ոռոգելի հողատարածքները կազմում է շուրջ փաստացի 12 հազ.հա:

Ոռոգման նպատակով մարզում կառուցված է 7 ջրամբար գումարային 4.28 մլն.խմ ծավալով:

Ոռոգման և ջրամատակարարման նպատակով մարզում գործում է ոչ մեծ հզորության 23 պոմպակայան, խորքային հորերից ջուրը արտամղելու նպատակով:

Մարզում բացի վարելահողերից առկա են նաև խոտհարքներ շուրջ 35 հազ.հա և արոտավայրեր շուրջ 181 հազ.հա:

Մարզի առավել խոշոր ջրանցքներն են Մասրիկի, Ծովակի և Վարդենիսի ՀԷԿ-ի ջրանցքները:

Սևանա լիճ

Սևանա լիճը իր կեսաբանական ցուցանիշներով դասվում է խմելու ջրաղբյուրների դասին և նրա ջրի պաշարները հանրապետության համար ունեն ռազմավարական խոշոր նշանակություն:

Սևանա լճի ռելիեֆային բարձր դիրքից ելնելով նրա ջրային 58.4 կմ³ նախնական ռեսուրսները 1930 թվականից հանրապետությունում օգտագործվել են գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգման, էլեկտրաէներգիայի արտադրման և ջրամատակարարման նպատակով:

Լճի ջրային ռեսուրսների գումարային շուրջ 25.2 կմ³ ծավալի օգտագործումը բերեց՝

Լճի ծավալի փոքրացմանը -43%

Լճի մակարդակի իջեցմանը -20 մետրով

Լճի մակերեսի պակասեցմանը – 900 կմ²

Լճի թափանցելիության նվազեցմանը 2.5-3 անգամ

Նվազեց լճի ձկնատվությունը շուրջ 15 անգամ

Ելնելով ստեղծված իրավիճակից 1982 թվականից որոշվեց լճի ջրային ռեսուրսներն օգտագործել միայն ոռոգման նպատակով, տարեկան ոչ ավել 170 մլն.խմ և դոտացիայի նպատակով կառուցվեց Կեչուտի ջրամբարը իրեն մոտեցնող Արփա-Սևան թունելով, հաշվարկային 22 խմ/վրկ ելքով:

Լճի ջրային ռեսուրսները տարեկան կազմավորվում են ի հաշիվ լճի ջրավազանի 28 գետերի միջին տարեկան 770 մլն.մ³ հոսքի, մթնոլորտային տեղումների տարեկան շուրջ 545 մլն.մ³, Արփա-Սևան թունելով տարեկան շուրջ 250 մլն.մ³ /ներկայումս տեղափոխվում է 120-150 մլն.մ³/: Երկրաբանական լճա նստվածքային կառուցվածքից առաջացած հոսքերը տարեկան շուրջ 94 մլն.մ³:

Սևանա լճի և ջրաղբյուրների ներկա վիճակը – լճի առափնյա տարածքում գործող շուրջ 2400 հանգստի և սննդի օբյեկտներից /որոնցից 300 մշտական գործող/ առաջացած կենցաղային և կոյուղու ջրերն առանց կենսաբանական մաքրման թափվելու, լճի իրացված տարածքներում անտառահատումներից մնացած կոճղ-արմատների, իրացված շենք

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

շինությունների մնացորդների ազդեցության հետևանքով լճի ջրավազանում անբարենպաստ կլիմայական պայմանների դեպքում առաջանում է լճի ջրի կանաչապատում /ծաղկում/ լճի որակի վրա բացասական ազդեցություններով:

Լճի ջրի որակի վրա բացասական ազդեցություն է թողնում Գավառում, Մարտունիում և Վարդենիսում կառուցված կոյուղու մաքրման կայանների անարդյունավետ գործունեությունը, որոնցից կոյուղու ցանցի բացակայության և վթարի պատճառով կեղտաջրերը լիճ են թափվում առանց կենսաբանական մաքրման /աղ. N1/:

Աղ. N1

h/h	Բնակավայրի անվանումը	Չափման միավորը	Կոյուղու ցանցի երկարությունը	Որից շահագործվում է
1	Սևան քաղաքի	կմ	100	67
2	Գավառ --"-	"-	34	14
3	Մարտունի -- " --	"-	19	8
4	Վարդենիս -- " --	"-	35	26
5	87գյուղական համայնք	"-	-	-

Ջրավազանում կենցաղային կոյուղու ջրերի քանակությունը կախված բնակչության թվից/միջին հաշվով 250 հազ. մարդ/ գնահատվում է շուրջ 12մլն.մ³ տարեկան:

Լճի ջրավազանում գործում է 173 խորքային հոր 5-30 լ/վրկ արտադրողականությամբ, բացի այդ կան խորքային հորեր 1-5 լ/վրկ արտադրողականությամբ, որոնք հաշվառման մեջ չեն ընդգրկված:

Սևանա լճում ձկնարդյունաբերության ընդլայնման նպատակով տեղադրված են ցանցավանդակներ, որոնք ըստ նախնական տվյալների նույնպես ջրի որակի վրա թողնում են բացասական ազդեցություն:

Ջրավազանի տարածքում առկա են 20-ից ավելի շինանյութի /ավազի, խճակոպճի, քարի/ հանքավայրեր, որոնց թափոնների անկազմակերպ տեղակայման և չօգտագործվող հանքերի չկոնսերվացման հետևանքով, շրջակա միջավայրի և լճի ջրի վրա թողնում են բացասական ազդեցություն:

Ջրավազանի գետերը և նրանց ջրաֆիզիկական և ջրաքիմիական Բնութագիրը

Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակներ, որոնցից 4-ը փոքր Սևան, իսկ 24-ը մեծ Սևան: Գետերի միջին տարեկան հոսքը կազմում է 26.8 խմ/վրկ, իսկ միջին ծավալը 770 մլն.մ³:

Լճից դուրս է գալիս միայն Հրազդան գետը բնականը՝ 110 մլն.մ³, ջրթողումներով մինչև 170 մլն.մ³ հոսքով:

Ջրավազանի առավել ջրատար, ձվադրման վայր հանդիսացող գետերի միջին և առավելագույն ելքերը տված է N2 աղյուսակում:

աղ. N2

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

h/ h	Գետի անվանումը	Ավազան ի մակերեսը, կմ ²	Միջին տարեկան ելքը, մ ³ /վրկ	Առավելագույն ելքը, մ ³ /վրկ	Նվազագույն ելքը, մ ³ /վրկ
1	Գավառագետ	467	3.5	72.5	2.17
2	Վարդենիս	110	1.67	30.6	0.12
3	Արգիշի	366	5.50	265.0	1.35
4	Արծվանիստ	80	0.33	15.3	-
5	Մարտունի	85	1.74	26.7	0.17
6	Բախտակ	144	0.65	31.5	0.05
7	Շողվակ	59	0.44	18.2	-

Սևանա լճի մակարդակի իջեցմանը զուգահեռ ջրահավաք ավազանի տնտեսության տարբեր ճյուղերից գետերի հոսքերով լիճ են թափվում և թունաքիմիկատներով հարուստ ջրեր:

Ջրավազանի ջրառատ գետերում, կառուցված են ՓՀԷԿ-ը որոնց ուսումնասիրության ընթացքում գրանցվել է, որ գլխամասային ջրառ կառուցվածքներում նախատեսված բնապահպանական թողքերի հանգուցները գտնվում են տեխնիկապես անբավարար վիճակում, կամ գետի նվազագույն հոսքերը լրիվ ուղորդվում են ՓՀԷԿ-ի ագրեգատները:

Գիլի լճի վերականգնման էկոլոգիական անհրաժեշտությունը

Գիլի լիճը մինչև 1950 թվականը ունեցել է 3.5-4.0 կմ. տրամագիծ, առավելագույն խորությունը 2մ և իր հիդրոքիմիական ռեժիմով տարբերվել է Սևանա լճից:

Լիճը կարևոր նշանակություն ուներ ջրաճահճային թռչունների բնադրման, ինչպես նաև Սևանի ձկների՝ Կողակի, Բեղլուի ձվադրման համար:

Լիճը սնվել է Մասրիկ գետի և մասամբ Սևանա լճի ջրերով: Հաշվի առնելով Գիլի լճի հատակի և Սևանա լճի փաստացի մակարդակի տարբերությունը /շուրջ 10 մետր/, լիճը "կծաղկի" ջրիմուռներով, որոնք հոսքային ջրերով կտեղափոխվեն Սևանա լիճ և կավելացնեն լճի օրգանական աղտոտվածությունը:

Ելնելով վերոհիշյալից մասնագիտացված Գ.Հ. ինստիտուտի կողմից առաջարկվել է լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել Գիլի լճի վերականգնման խնդրի շուրջ:

Սևանա լճի էկոհամակարգի բարելավմանն ուղղված բնապահպանական միջոցառումները

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Սևանա լճի, նրա ջրավազանի և նրան սնող ջրաղբյուրների էկոհամակարգի փաստացի վիճակը բարելավելու բնապահպանական նորմերով պահանջվող իրավիճակը վերականգնելու նպատակով նախատեսված է՝

Ապահովել Սևանա լճի հորիզոնի բարձրացումը մինչև 1903.5մ նիշը համաձայն N3 աղյուսակում բերված ժամանակացույցի և N1 գրաֆիկի:

աղ. N3

Տարեթիվը	Լճի մակարդակը, մ	Լճի մակարդակի բարձրացման ջրի քանակը, մլն.մ³	Լճի ակտիվ ջրատվությունը, մլն.մ³	Արվա – Սևանով ջրի ծավալը, մլն.մ³	Ընդամենը մուտք գործող ջրի քանակը, մլն.մ³	Ոռոգման ջրի պահանջարկը, մլն.մ³
2020	1900.40	300	220	250	470	170
2021	1900.50	–"–	–"–	–"–	–"–	–"–
2022	1900.75	–"–	–"–	–"–	–"–	–"–
2023	1901.00	–"–	–"–	–"–	–"–	–"–
2024	1901.25	–"–	–"–	–"–	–"–	–"–
2025	1901.50	–"–	–"–	–"–	–"–	–"–
2026	1901.75	–"–	–"–	–"–	–"–	–"–
2027	1902.00	–"–	–"–	–"–	–"–	–"–
2028	1902.25	–"–	–"–	–"–	–"–	–"–
2029	1902.50	–"–	–"–	–"–	–"–	–"–
2030	1902.75	–"–	–"–	–"–	–"–	–"–
2031	1903.00	–"–	–"–	–"–	–"–	–"–
2032	1903.25	–"–	–"–	–"–	–"–	–"–
2033	1903.50	–"–	–"–	–"–	–"–	–"–
Ընդամենը		4200	3080*	3500	6580	2380

*Լճի ակտիվ ջրատվությունը ենթակա է փոփոխման կախված նրա ջրատվությունից



«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

- Ավարտել Արփա-Սևան թունելի վերականգնման աշխատանքները և ապահովել միջին տարեկան 250 մլն.մ³ հոսքը Սևանա լիճ;
- Իրականացնել ինչպես Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների /նաև հարակից համայնքների/ մաքրման կայաններին միացող կոյուղու ցանցերը, այնպես էլ համայնքների տարածքում կոյուղու ցանցերը՝ ապահովելու հոսքաջրերի լրիվ կենսաբանական մաքրում, անհրաժեշտության դեպքում տեղադրելով բիոմաքրման մոդուլներ;
- Իրականացնել Սևանա լճի ջրավազանում գործող հանգստի և սննդի օբյեկտներում լոկալ կենսաբանական մաքրման կայանների տեղադրումը;
- Ապահովել շուրջ 500 հա տարածքում մնացորդային կոճղարմատների և իրացված շենք շինությունների թափոնների մաքրումը;
- Իրականացնել գործող ոռոգման պոմպակայանների փոխարեն 4 ջրամբարների շինարարությունը շուրջ 150 մլն.մ³ ծավալով;
- Ապահովել բնակավայրերին հարակից տարածքներում գետերի հունների մաքրում կենցաղային աղբից և բարեկարգել լճի հետ լծորդվող հատվածները;
- Ապահովել ՓՀԷԿ-ի գլխամասային կառուցվածքներում բնապահպանական թողքերը;
- Բարեկարգել ջրավազանի տարածքում գոյություն ունեցող շուրջ 20 շինությունների հանքավայրերի և նրանց թափոնների տարածքները;
- Բնապահպանական միջոցառումների պահանջներին համապատասխան բարեկարգել չգործող աղբավայրերը:

Արփա-Սևան թունելը

Սևանա լճի ջրային ռեսուրսները վերականգնելու և Արփա գետի ջրային ռեսուրսները արդյունավետ օգտագործելու նպատակով, Արփա գետի վրա Կեչուտի ջրամբարում ջրերը կարգավորելուց հետո 1982 թվականին շահագործման հանձնվեց Արփա-Սևան թունելը հետևյալ ցուցանիշներով՝

աղ. N4


h/h	Թունելի չափանիշները	Չափման միավորը	Չափանիշների արժեքները
1	Թունելի կտրվածքի մակերեսը	մ ²	7.6 - 9.6
2	Ջրթողունակությունը նորոգման ընթացքում	մ ³ /վրկ	14.0
3	Ջրթողունակությունը նորոգումից հետո	մ ³ /վրկ	20.0
4	Թունելի երկարությունը	կմ	42.0
5	Թունելի ելքի հատակի նիշը	մ	1902.6
6	Տեղափոխվող ջրի միջին ծավալը	մլն.մ ³	200 – 250

Հաշվի առնելով, որ Սևանա լճի Էկոհամակարգի վերականգնման համար /լճի մակերեսի հաշվարկային նիշը պետք է լինի 1903.5 մ, իսկ Արփա-Սևան թունելի ելքի նիշը փաստացի 1902.6մ է/ առաջարկվում է առաջացող շուրջ 0.9 դիմհարի ժամանակ թունելի

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

շահագործման համար նորմատիվ պայմաններ ստեղծելու նպատակով, թունելի վերջնամասում կառուցել երկկողմանի վաքեր բետոնյա բլոկներից 0.9 – 0.2 մետր բարձրությամբ, 1.1 մետր լայնությամբ, որը կծառայի որպես մայթ շահագործվող անձնակազմի և ուղորդող գիծ տրանսպորտային միջոցների համար:

/Գրաֆիկ N2/



Ջրամբարաշինարարության խնդիրները

Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգման նպատակով կառուցված են 7 ջրամբար՝ գումարային 4.28 մլն.մ³ ծավալով, 5.38 մլն.մ³ ջրատվությամբ, այդ թվում՝

աղ.N5

h/h	Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ծավալը, մլն.մ³	Ջրատվությունը, մլն.մ³
1	Լանջաղբյուր -1	0.21	0.26
2	Լանջաղբյուր -2	0.35	0.42
3	Գեղարքունիքի -1	0.07	0.09
4	Հովտի	0.29	0.36
5	Ջիլի լճի	0.65	0.81

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

6	Խազիգյուլի	0.21	0.26
7	Արծվաշենի	2.5	3.10
Ընդամենը		4.28	5.38

Գեղարքունիքի մարզում տարածքի ջրային ռեսուրսները կարգավորելու և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող գյուղատնտեսական հողատեսքերը ոռոգելու նպատակով մարզում ուսումնասիրվել է ևս 16 ջրամբարների շինարարության հնարավորությունները /աղյուսակ N6/՝ գումարային 39.41 մլն.մ³ ծավալով:

աղ. N6

/h	Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ծավալը, մլն.մ³
1	Ախպրաձորի	1.50
2	Նորաբակի	1.55
3	Մասրիկի	5.33
4	Սոթքի	1.68
5	Կարճաղբյուրի	3.50
6	Գեղհովտի	4.00
7	Վարդենիկի	4.60
8	Արծվանիստի	1.00
9	Ծակքարի	1.35
10	Ծաղկաշենի	2.83
11	Գրիձորի	2.40
12	Գեղարքունիքի	2.82
13	Լանջաղբյուրի	1.75
14	Ծաղկունքի	1.80
15	Յայջիի	1.50
16	Գեյսուի	1.50
Ընդամենը		39.41

Առաջին հերթում նախատեսվում է կառուցել.

Արգիճիի ջրամբար – նախատեսվում է Գեղարքունիքի մարզում, Արգիճի գետի 2260 մ նիշ ունեցող գետահատվածում: Ջրամբարը նախատեսվում է 6.5 մլն.մ³ ծավալով

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսլ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

տարածքի 10 համայնքների 3390 հա գյուղատնտեսական հողատեսքերը, այդ թվում 824 հա մեխանիկական եղանակով ոռոգվող հողատեսքերն ինքնահոս եղանակով ոռոգելու համար:

Ջրամբարի տեխնիկատնտեսական ցուցանիշները բերված են N7 աղյուսակում:

աղ. N7

ՀՀ ը/կ	Տեղնիկատնտեսական ցուցանիշները	Չափման միավորը	Արժեքները
1	Ոռոգելի տարածքը	հա	3390
2	Ջրամբարի ծավալը	մլն.մ³	6.5
3	Պատվարի բարձրությունը/բետոնյա/	մ	16.5
4	Տնտեսված էլեկտրաէներգիան	մլն.դրամ	132.0
5	Ջրամբարի շինարարության նախնական արժեքը	մլն. ԱՄՆ \$	4.21
6	1մ³ ջրի արժեքը	ԱՄՆ \$	0.77
7	1հա ինքնահոս ոռոգման արժեքը	ԱՄՆ \$	1240
8	Ընդհանուր գուտ եկամուտը	մլրդ. դրամ	2225

Արգիճիի ջրամբարի շինարարությունը կնպաստի նաև՝

- Սևանա լճի կենդանական աշխարհին սպառնացող վտանգի վերացմանը /պոմպակայանների չաշխատեցման արդյունքում/;

- կապահովվի "Լիճք-Արգիճի" արգելոցի ֆունկցիոնալ գործընթացները /ջրային բուսականության, թռչունների, հազվագյուտ ձկնատեսակների, հանքային աղբյուրների պաշտպանությունը/;

- բույսերի մեխանիկական եղանակով ոռոգումը կփոխարինվի ինքնահոս եղանակով;

- Արգիճի գետի ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և ջրավազանում ճահճակալման երևույթների վերացմանը;

- կնվազի 1 հա ոռոգման համար պահանջվող ջրի արժեքը:

Ջրամբարի համար մշակված է տեխնիկատնտեսական հիմնավորումներ:

Աստղաձորի ջրամբար – նախատեսվում է Գեղարքունիքի մարզում, Աստղաձոր գետի 2120 մ նիշ ունեցող գետահատվածում:

Ջրամբարը նախատեսված է 1.25մլն.մ³ ծավալով տարածքի 4 համայնքների 1440 հա գյուղատնտեսական հողատեսքերը, այդ թվում 320 հա մեխանիկական եղանակով ոռոգվող հողատեսքերը ինքնահոս եղանակով ոռոգելու համար:

Ջրամբարի պատվարը քարահողային է 32մ բարձրությամբ:

Ջրամբարի տեխնիկատնտեսական ցուցանիշները բերված են N 8 աղյուսակում:

աղ. N 8

ՀՀ	Տեխնիկատնտեսական ցուցանիշները	Չափման	Արժեքները
----	-------------------------------	--------	-----------

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ը/կ		միավորը	
1	Ոռոգելի տարածքը	հա	1440
2	Ջրամբարի ծավալը	մլն.մ³	1.25
3	Պատվարի բարձրությունը /քարահողային/	մ	32
4	Տնտեսված էլեկտրաէներգիան	մլն.դրամ	91.3
5	Ջրամբարի շինարարության նախնական արժեքը	մլն ԱՄՆ \$	2.0
6	1 մ³ ջրի արժեքը	ԱՄՆ \$	1.6
7	1 հա ինքնահոս ոռոգման արժեքը	ԱՄՆ \$	1390
8	Ընդհանուր գուտ եկամուտը	մլրդ. դրամ	1420

Աստղածորի ջրամբարի շինարարությունը կնպաստի նաև

- պոմպակայանների չաշխատեցման արդյունքում կվերանա Սևանա լճի կենդանական աշխարհին սպառնացող վտանգը;

- կնվազի 1 հա ոռոգման համար պահանջվող ջրի արժեքը;

- առավել արդյունավետ կօգտագործվի Աստղածոր գետի ջրային ռեսուրսները;

- կվերանա Աստղածոր գետի ջրավազանի կենցաղային աղբով աղտոտման հնարավորությունները;

- գյուղատնտեսական մշակաբույսերի մեխանիկական եղանակով ոռոգումը կփոխարինվի ինքնահոս եղանակով և կապահովվի կայուն բերքատվությունը;

Ջրամբարի համար մշակված է տեխնիկատնտեսական հիմնավորումներ:



Գառուցման ենթակա ջրամբարների ոռոգելի տարածքները.

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

h/h	Ջրամբարի անվանումը	Ոռոգելի տարածքը հա
1	Լանջաղբյուր -1	3.3
2	Լանջաղբյուր -2	5.3
3	Գեղարքունիքի -1	1.1
4	Հովտի	4.6
5	Ջիլլի լճի	10.0
6	Խազիգյուլի	3.3
7	Արծվաշենի	39.0
Ընդամենը		66.6

Բնապահպանական միջոցառումներ

Համաձայն ՀՀ օրենքով և իրավական այլ փաստաթղթերով Սևանա լճի առափնյա տարածքի կառուցվածքը, ըստ կենտրոնական գոտու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի դասակարգվում է՝

Ա. Հատուկ պահպանվող տարածքներ հանգստի համար – 30.4 հա, այդ թվում՝

- կանաչապատված և սպասարկման համար – 9.8 հա
- լողափնյա տարածք – 14.1 հա
- ներքին ճանապարհներ, ավտոկանգառներ – 6.5 հա

Բ. Պատմության ու մշակույթի և բնական լանդշաֆտի պահպանման տարածքներ- 39.2հա

Կենտրոնական Էկոլոգիական գոտին ընդգրկում է Շորժա – Սևան թերակղզի – Հայրիվանք տիրույթի տարածքները և հանդիսանալով որպես հատուկ պահպանվող տարածք նախատեսված է օգտագործել միայն բնապահպանական, առողջարարական, պատմամշակութային, բնակչության հանգստի համար:

Հաշվի առնելով, որ լճի մակարդակի բարձրացումը մինչև հաշվային 1903.5 մ նիշը կնպաստի նրա Էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը նախատեսված է՝

- ապամոնտաժել 1908մ նիշից ցածր գտնվող կառույցները և տարածքը մաքրել շինարարական և այլ աղբից;
- հանգստի համար ակտիվ օգտագործման նպատակով նախատեսված է կառուցապատման ենթակա տարածքների միջև ստեղծել "բուֆերային" շերտեր, բնական լանդշաֆտը պահպանելու համար;
- կենտրոնական գոտու ամբողջ երկարությամբ 1903.5մ նիշից բարձր 100մ լայնությամբ տարածքը ամրագրված է որպես լանդշաֆտի պահպանման շերտ և ենթակա չէ կառուցապատման;
- առաջնահերթ կառուցապատման ենթակա տարածքներում գոտիների միջև նախատեսվում է.
 - 5-10մ լայնությամբ կանաչապատման շերտեր;
 - ինժեներական և կոմունալ կահավորման հարթակներ, մեկ հանգստացողին 6մ² հաշվարկով;
 - աղբակուտակման տարողություններ կոշտ թափոնների և կեղտաջրերի կուտակիչ ջրաթափանց հորեր, կենտրոնական գոտու սահմաններից դուրս;

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

- ավտոկայանները տեղադրել ավտոմայրուղու ճանապարհամերձ գոտիներում և կահավորել պարբերաբար դատարկվող յուղակուտակիչ սարքերով:

2.19.2.3. Տեխնիկական այլ առաջարկություններ

Ոլորտում առկա խնդիրների լուծման համար հատկապես կարևոր է ոռոգման արդյունավետ եղանակների ներդրումը, ինչը կնպաստի ոռոգման ջրի նպատակային օգտագործմանը:

Ոռոգման համակարգերը պետք է բաղկացած լինեն ջրամբարներից (գլխամասային հանգույց), ջրանցքների համակարգից (մայրուղային ջրանցք, առանձին ճյուղավորումներով բաշխիչ ցանց), որոնց միջոցով հնարավոր կլինի կանոնավոր ոռոգում իրականացնել տարբեր եղանակներով (մակերեսային՝ ակոսներով, շերտերով, խողովակաշարերի միջոցով, անձրևացման, կաթիլային):



ԱՌԱՋԱՐԿ – 1

Ոռոգման փակ համակարգ

Նախկինում և այժմ նույնությամբ գործող ոռոգման ջրի բաց տիպի համակարգերի (մետաղական կամ ասբեստե կիսախողովակներ, բետոնե կամ հողային հունով առուներ) գործարկումը դարձել է անարդյունավետ, քանի որ դրանցով տեղափոխվող ջրի 25-30 տոկոսը կորուստներն են կազմում:

Իրավիճակի լիցքաթափման, այն է՝ կանոնավոր ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև համակարգի վերահսկման և ոռոգման ջրի կորուստների դեմն առնելու նպատակով նախատեսվում է ոռոգման «ԲԱՅ» համակարգից անցում կատարել ոռոգման «ՓԱԿ», ջրաչափերով կահավորված ջրամատակարարման համակարգին, ինչը հնարավորություն կտա ապահովել ջրի արդյունավետ օգտագործումն ու հավասարաչափ բաշխումը:



Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը գրեթե բոլոր համայնքներում, ոռոգման ջրի անհարկի կորուստներից խուսափելու, ինչպես նաև տնամերձ հողատարածքների արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով նպատակահարմար է բնակավայրերի տարածքում նախատեսել փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանց, որոնք կանցնեն փողոցներին զուգահեռ՝ յուրաքանչյուր հողակտորի համար ունենալով մեկ ջրթող կառուցվածք:

ԱՌԱՋԱՐԿ – 2

Կաթիլային ոռոգման համակարգ


«Գեղարքունիք-1» միկրոռեգիռնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Մի շարք երկրներում ոռոգելի երկրագործության մեջ լայնորեն կիրառվող կաթիլային ոռոգումը հիմնված է բույսի արմատային համակարգին ջրի անմիջական մատուցման սկզբունքի վրա, ինչը բացառում է ջրի անհարկի վատնումը:

Կաթիլային ոռոգումը հորինվել է որպես բերքի ավելացման հիմնական միջոց՝ ջրի ոչ մեծ ծախսերի դեպքում: Ոռոգման այս տիպն իդեալական է ցանկացած տիպի բույսերի համար և կիրառվում է ինչպես մասնավոր ֆերմերային տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբներում:



Կաթիլային ոռոգման համակարգի հիմնական տարրը հանդիսանում է կաթիլային խողովակը, որն իրենից ներկայացնում է բացվածքներով խողովակ:



Կաթիլային ոռոգման խողովակներն, ի տարբերություն սովորական խողովակների, տնտեսող են, ջուրն անմիջապես հասնում է արմատներին, ինչն ապահովում է որակյալ ոռոգում:

Ջրի ծախսերը 3-4 անգամ քիչ են, կորուստները՝ երեք անգամ քիչ, իսկ դրա յուրացման արդյունավետությունը՝ կրկնակի անգամ ավելի:

Խողովակները կարող են լինել տարբեր, բայց էությունը մեկն է. Կայունացված պոլիէթիլենից խողովակն ընկած է հողի վրա ակոսների երկայնությամբ, և մատակարարում է ջուր կաթոցիկի միջոցով: Փոքր ճնշման դեպքում՝ կաթիլային, մեծի դեպքում՝ միկրոշիթերով:

Կաթիլային ոռոգումը զգալիորեն խթանում է գյուղատնտեսական արտադրության ծավալների մեծացումը: Կաթիլային ոռոգման համակարգը կարող է օգտագործվել.



- Բոլոր տեսակի մրգատու այգիների համար (խաղող, սեխ, ձմերուկ և այլն):
- Բոլոր տեսակի բույսերի (բամբակ, արևածաղիկ, և այլն) և ծաղիկների աճեցման համար:
- Բոլոր տեսակի բանջարեղենների աճեցման համար (վարունգ, սմբուկ, լոբի, կարտոֆիլ, պղպեղ, և այլն):
- Հատկապես ջերմոցներում, որտեղ կաթիլային համակարգը թույլ կտա իրագործել կայուն, տարիների ընթացքում խնդիր չհարուցող ոռոգում:

Կաթիլային ոռոգման առավելությունները.

➤ **Հողի օդափոխություն (քամահարում)**

Կաթիլային համակարգի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչը արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո: Հողում եղած թթվածինը հնարավորություն է տալիս արմատային համակարգին ակտիվորեն գործելու:

➤ **Արմատային համակարգ**

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Արմատային համակարգը զարգանում է զգալիորեն ավելի լավ, քան ցանկացած այլ ոռոգման դեպքում՝ կենտրոնանալով կաթոցիկների շրջանում և վերածվելով ակտիվ արմատային թելիկները բաղկացած առատ զանգվածի:

➤ **Մնուցում**

Լուծված պարարտանյութերը ոռոգման հետ տրվում են անմիջապես արմատային համակարգին, ինչի արդյունքում տեղի է ունենում սնուցող նյութերի ինտենսիվ յուրացում: Սա շոգ տարածաշրջաններում պարարտացման ամենարդյունավետ եղանակն է:

➤ **Բույսերի պահպանություն**

Բույսերի տերևները չեն խոնավանում ինչպես անձնացման ժամանակ: Փոքրանում է հիվանդությունների տարածման հնարավորությունը, քանի որ մանրէասպան միջատները չեն լվացվում տերևներից:


➤ **Ագրոտեխնոլոգիա**

Կաթիլային ոռոգումը թույլ է տալիս հողի մշակում, սրսկում և բերքահավաք իրականացնել ցանկացած ժամանակ՝ անկախ ոռոգումից, քանի որ շարքերի միջև ընկած հողատարածքները սեզոնի ողջ ընթացքում չոր են մնում:

Որոշ երկրներ հաջողությամբ անցում են կատարել կաթիլային ոռոգման համակարգին, որը թեև զգալիորեն տնտեսում է ջրային ռեսուրսները, սակայն դեռևս բավականին ծախսատար միջոց է:

Հաշվի առնելով, որ երկրի պարենային անվտանգության երաշխավորը՝ գյուղատնտեսությունն է, ուստի ոռոգման համակարգը կարգավորելը պետության կայացման լուրջ նախադրյալ է, հետևաբար և կաթիլային ոռոգման համակարգի նախատեսումը ևս արդարացված է:

2.19.3. Էներգամատակարարում



2.19.3.1. Էլեկտրամատակարարում

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ՀՀ Գեղարքունիքի մարզի վարչական տարածքով անցնող վերոնշյալ ընկերության տնօրինության 110-400 կվ լարման էլեկտրահաղորդման օղային գծերի վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ստորև աղյուսակում.

Հ/Հ	Գծի կարգավարական անվանումը	Լարումը /կվ/	Ընդհանուր երկարությունը /կմ/	Որից Գեղարքունիքի մարզում /կմ/	Ուղեգծի	
					սկիզբը	վերջը
1	«Նորատուս»	220	42.42	32.5	Կոտայքի մարզ «Հրազդան» ՋԷԿ	ք. Կամո «Կամո» ԵԿ
2	«Լիճք»	220	29.34	29.34	ք. Կամո «Կամո» ԵԿ	ք. Լիճք «Լիճք» ԵԿ
3	«Վարդենիս»	220	25.01	26.2	ք. Լիճք «Լիճք» ԵԿ	ՀՀ Վայոց Ձորի մարզ
4	«Սևան»	110	20.9	9.4	ք. Սևան «Սևան» ՀԷԿ	«Հրազդան» ՀԷԿ/Կոտայքի մարզ
5	«Գագարին»	110	12.4	0.35	գ. Գագարին «Գագարին» ԵԿ	«Հրազդան» ՀԷԿ/Կոտայքի մարզ
6	«Իրան-Հայաստան» կառուցվող ՕԳ –ի «Նորավան» հատված	400	-	82.5	ՀՀ Վայոց Ձորի մարզ	ՀՀ Լոռու մարզ

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաձյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում:

Ըստ «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաձյուղի կողմից տրամադրված տեղեկատվության՝ դիտարկվող տարածքով անցնում են վերոնշյալ ընկերության տնօրինության էլեկտրամատակարարման հետևյալ բարձր լարման օղային գծերը.

110 կվ լարման՝ «Ալիք-1», «Ալիք-2», «Ախթամար», «Ծովագյուղ», «Կապուտակ»,

35 կվ լարման՝ «Լճաշեն», «Կամո», «Արևիկ», «Իշխան», «Մելկոմբինատ» էլեկտրահաղորդման գծերը:

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին:

Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է 10 (6)/0.4կՎ լարման տրանսֆորմատորային էլեկտրական ենթակայանների միջոցով:

Էլեկտրահաղորդման օղային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Որոշ բնակավայրերում իրականացվել են էլեկտրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ: Էլեկտրական հաղորդալարերի հին, փայտե հենասյուները փոխարինվել են նոր, բետոնե սյուներով, գլխավոր փողոցներում անցկացվել է արտաքին լուսավորություն:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ստորև աղյուսակում տրված են ներկայումս բնակավայրերում առկա էլեկտրամատակարարման համակարգերի տեխնիկական բնութագրերն ու էլեկտրաէներգիայի օգտագործման վերաբերյալ քանակական ցուցանիշներն ըստ բնակավայրերի.

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի էլեկտրամատակարարման առկա համակարգերի տեխնիկական բնութագրերն ու էլեկտրաէներգիայի օգտագործման վերաբերյալ քանակական ցուցանիշներ

h/h	Բնակավայր	Գլխավոր սնուցող ենթակայաններ				10 (6)/0.4 ենթակայան			Էլ.էներգիայի տարեկան գումարային ծախսը, այդ թվում	
		Անվանումը	Լարումը կՎ	Հզորությունը կՎԱ	Տեղակայման վայրը	Առկա տրանսֆ-ի քանակը	Հզորությունը կՎԱ	Տեղակայման վայրը	Կոմունալ կենցաղային	Արտադրական
1	Սևան քաղաք	110/10Ալիք, 35/6 Սևան, 35/10 Սևան-1, Սևան-2, Իշխան	110/10, 35/6, 35/10-5 հատ	42900	ք.Սևան	52	117700	ք.Սևան	420	
	Գագարին գյուղ	110/10 Գագարին	110/10	26000	գ.Գագարին	4	723	գ.Գագարին	26.4	
2	Գեղամավան	110/10 Գագարին	110/10	26000	գ.Գագարին	3	960	գ.Գեղամավան	26	
3	Դդմաշեն	110/10 Գագարին	110/10	26000	գ.Գագարին	5	1040	գ.Դդմաշեն	32.4	
4	Զովաբեր	110/10 Գագարին	110/10	26000	գ.Գագարին	4	520	գ.Զովաբեր	30	
5	Լճաշեն	35/10 Լճաշեն	35/10	8000	գ.Լճաշեն	6	1650	գ.Լճաշեն	55.2	
6	Ծաղկունք	110/10 Գագարին	110/10	26000	գ.Գագարին	2	320	գ.Ծաղկունք	16.8	
7	Ծովագյուղ	35/6 Ծովագյուղ	35/6	2500	գ.Ծովագյուղ	7	2720	գ.Ծովագյուղ	62.2	
8	Նորաշեն	35/10 Լճաշեն	35/10	8000	գ.Լճաշեն	2	223	գ.Նորաշեն	8.4	
9	Չկալովկա	35/10 Լճաշեն	35/10	8000	գ.Լճաշեն	1	250	գ.Չկալովկա	10.2	

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսլ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

10	Սեմյոնովկա	35/6 հրվ. Շքամուտք	35/6	6300	գ.Սեմյոնովկա	1	63	գ.Սեմյոնովկա	4.2	
11	Վարսեր	35/10 Սևան-2, 35/10 Լձաշեն	35/10	8000	ք.Սևան	4	783	գ.Վարսեր	25.2	

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Էլեկտրական բեռնվածքների հաշվարկը

Հաշվարկային առավելագույն հզորությունը հաշված է որպես հզորությունների գումար՝

- կոմունալ-կենցաղային պահանջներ, հասարակական, կուլտուր-կենցաղային շինություններ, հանգստի օբյեկտներ, արտաքին լուսավորություն,
- արտադրական օբյեկտների բեռնվածություններ:

Առավելագույն հզորությունների քանակի որոշման համար հաշվարկները կատարվել են ըստ հեռանկարային բնակչության քանակի:

Համաձայն ՇՆԿ 2.07.01-89-ի՝ գյուղական բնակչության համար մեկ մարդու էլեկտրաէներգիայի սպառման տարեկան խոշորացված ցուցանիշը 950 կվտ.ժամ է, տարվա օգտագործվող ժամերի քանակը՝ 4100 ժամ, քաղաքային բնակչության համար համապատասխանաբար՝ 1700 կվտ/ժամ և 5200 ժամ:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի էլեկտրամատակարարման հեռանկարային կարիքները բավարարելու համար պահանջվող առավելագույն հզորությունների, ինչպես նաև այդ համայնքներում ներկայումս առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները:

Բնակավայրերի հեռանկարային պահանջվող առավելագույն հզորություններն ու առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները:

N	Բնակավայրերի անվանումները	Հեռանկարային բնակչության քանակը (մարդ)	Մեկ մարդու համար պահանջվող էլ. էներգիայի քանակը (կվտ.ժամ /տարի)	Էլ. էներգիայի գումարային ծախսը (հազ. Կվտ.ժամ/տարի)			Տարվա օգտագործվող ժամերի քանակը (ժամ)	Պահանջվող առավելագույն հզորությունը (կՎԱ)	Առկա Տրանսֆորմատորային ընդհանուր հզորությունը (կՎԱ)
				Բնակչ	Արտադր 15 %	Կորուստ 30 %			
1	ք. Սևան	20900	1700	35530	5329.5	10659	5200	9907.4	117700
2	Գագարին	1832	950	1739.9	261.0	522.0	4100	615.3	723
3	Գեղամավան	1878	-/-	1783.8	267.6	535.1	-/-	630.9	960
4	Դրմաշեն	2940	-/-	2793.3	419.0	838.0	-/-	987.9	1040
5	Զովաբեր	1621	-/-	1540.3	231.0	462.1	-/-	544.8	520
6	Լճաշեն	4770	-/-	4531.1	679.7	1359.3	-/-	1602.5	1650
7	Ծաղկունք	1114	-/-	1058.6	158.8	317.6	-/-	374.4	320
8	Ծովագյուղ	4596	-/-	4366.0	654.9	1309.8	-/-	1544.1	2720
9	Նորաշեն	502	-/-	476.5	71.5	143.0	-/-	168.5	223
10	Չկալովկա	582	-/-	552.8	82.9	165.8	-/-	195.5	250
11	Մեմյոնովկա	262	-/-	248.7	37.3	74.6	-/-	88.0	63

«Գեղարքունիք-1» միկրոէլեկտրակայանի համակցված տարածական պլանավորման նախագիծ

12	Վարսեր	1912	-/-	1816.2	272.4	544.9	-/-	642.3	783
----	--------	------	-----	--------	-------	-------	-----	-------	-----

Առկա և հաշվարկային ժամանակաշրջանի համար պահանջվող տրանսֆորմատորային հզորությունների համեմատությունից երևում է, որ միկրոէլեկտրակայանի գրեթե բոլոր բնակավայրերն ունեն բավարար պահուստային հզորություն՝ հեռանկարային պահանջարկը բավարարելու համար, բացառությամբ Զովաբեր, Ծաղկունք, Սեմյոնովկա բնակավայրերի, որտեղ անհրաժեշտություն կառաջանա հզորության ավելացման:

Շահագործվող ՀԷԿ-երը

Հիդրոէներգետիկան համարվում է վերականգնվող էներգետիկայի կարևորագույն ճյուղ, և այն ողջ աշխարհում համարվում է այլընտրանքային, էկոլոգիապես մաքուր ու բնապահպանական առումով քիչ ռիսկային:

ՀՀ կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի 836-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության էներգետիկական

անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թթ. միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը»:

Վերոգրյալ հայեցակարգով Հայաստանի համար հրամայական է համարվել էներգիայի վերականգնվող աղբյուրների լայնածավալ օգտագործումն ու լիակատար ներառումը



երկրի վառելիքաէներգետիկ հաշվեկշռի մեջ, որի ապահովման համար վերոգրյալ ծրագիր-ժամանակացույցով նախատեսվել են նաև հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) կառուցման միջոցառումներ: ՀՀ տարածքում արդեն գործում է 169 փոքր ՀԷԿ (ՓՀԷԿ), իսկ շուրջ 60-ը գտնվում են կառուցման փուլում: Ներկայումս ՓՀԷԿ-երն արտադրում են ՀՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի պահանջարկի շուրջ 10 %-ը, ինչը գալիք տասնամյակի ընթացքում աճելու միտում է ունենալու:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն ներկայումս մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 14 փոքր ՀԷԿ-եր: Ստորև աղյուսակում տրված են դրանց տվյալները.

Գեղարքունիքի մարզում գործող ՀԷԿ-երը

N	Անվանումը	Դրվածքային հզորությունը	Հաշ. ճնշումը
1	«Անի» փոքր ՀԷԿ	1x60=60	22.0
2	«Ձորագյուղ-1» փոքր ՀԷԿ	2x200=400	545.4
3	«Ձորագյուղ-3» փոքր ՀԷԿ	2x315=630	300.7
4	«Էրիկ» փոքր ՀԷԿ	2x1000+1x500=2500	96.0
5	«Այրք ՀԷԿ-1» փոքր ՀԷԿ	1x300=300	110.0
6	«Այրք ՓՀԷԿ-1» փոքր ՀԷԿ	1x630=630	126.9

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

7	«Մարտունի» փոքր ՀԷԿ	3x800=2400	174.4
8	«Այրք ՓՀԷԿ-2» փոքր ՀԷԿ	2x315=630	95.0
9	«Գետիկ-1» փոքր ՀԷԿ	2x2000+1x1600=5600	152.0
10	«Արգիշի» փոքր ՀԷԿ	3x1600+1x2000+1x3150=9950	274.8
11	«Ծովակ» փոքր ՀԷԿ	2x120=240	72.0
12	«Վահան» փոքր ՀԷԿ	1x800+1x500=1300	450.0
13	«Վարդենիկ» փոքր ՀԷԿ	2x3240=6480	163.3
14	«Դարանակ» փոքր ՀԷԿ	1x300+1x200=500	148.7/163.4
Ընդամենը		31.620 Մվտ	

Սակայն ՀՀ ՓՀԷԿ-երի գործունեության արդյունքում արդեն իսկ ի հայտ են եկել մի շարք խնդիրներ և խոչընդոտներ, որոնք մեծացնում են ՓՀԷԿ-երի ռիսկայնությունը բնապահպանական տեսանկյունից: ՓՀԷԿ-եր կառուցելիս գետերի էկոլոգիային հսկայական վնաս է հասցվում, քանի որ դրանք խախտում են գետերի ջրային և ջերմային ռեժիմները, խոչընդոտում են ձկների բազմացմանը, նպաստում են գետերի ծանծաղացմանը:

- Գործադիրը նոր կանոններ է սահմանում ՓՀԷԿ-երի կառուցման համար: Նոր ՓՀԷԿ-ի կառուցման համար ԶԹ չի տրամադրվի, եթե այն նախատեսվում է կառուցել այն գետերի վրա՝ որոնցում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր,
- որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է,
- որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման նիշերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը:

Կարգելվի ՓՀԷԿ-երի կառուցումը Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում, բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում, ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում, գետերի հոսքի ձևավորման տարածքներում, գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ, անտառային տարածքներում, որոնք հատվելու են շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ կառուցելիս, բացառությամբ պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի:

«Մշակվել է նաև «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար արգելված՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվի փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար արգելված գետերի ցանկը»:

Որպես օրինագծի հիմնավորում նշված է. «Վերջին տարիներին փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման ընթացքում առաջացել են էկոլոգիական ու սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում: Փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարությունը էական վնաս է հասցնում բնությանը, իսկ փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց նկատվում է կենսաբազմազանության կորուստ, վտանգվում են Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակները,

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

գետերը ծանրաբեռնվում են դերիվացիոն խողովակներով և հայտնվում ճգնաժամային վիճակում»:

2.19.4. Գազամատակարարում

ՀՀ Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից մեկը: Մարզի 92 համայնքներից գազաֆիկացված են 61-ը կամ մարզի համայնքների՝ 66.3%-ը: Մարզի բնակչության շուրջ 77.6%-ը բնակվում են գազաֆիկացված բնակավայրերում:

Ըստ «Գազպրոմարմենիա» ՓԲԸ-ի տրամադրած տեղեկատվության՝ դիտարկվող տարածաշրջանի բոլոր բնակավայրերը գազաֆիկացված են:



Օպերատիվ տեղեկություններ գազաբաշխիչ ցանցի վերաբերյալ

ՀՀ	ԳԳ մասնաճյուղի տեղամասի (տարածք) ԳԲԿ-ի բնակավայրի անվանումը	Գազատարներ /կմ/			
		Այդ թվում «Գազպրոմարմենիա» հաշվեկշռում և անհատույց պայմանագրով շահագործվող մ/ճ գազատարներ			
		Ընդամենը	Վերգետնյա	Ստորգետնյա	
			մ/ճ	մ/ճ	
				ՊԷ	Մետաղ
1	2	3	5	8	9
Մեանի ԳԲԿ		121.842	12.116	5.531	15.731
1	Սևան քաղաք	20.859	9.091	3.578	8.19
2	Վարսեր	4.807	0.191	0.680	3.936
3	Գեղամական	6.289	2.684	0.000	3.605
4	Ծաղկունք	1.423	0.15	1.273	0.000
Գազարիսի ԳԲԿ		53.539	1.659	1.026	21.960
5	Գազարիս գյուղ	3.444	0.15	0.000	3.294
6	Լճաշեն	6.56	0.06	0.000	6.5
7	Չկալովկա	8.225	1.449	1.026	5.75
8	Նորաշեն	6.416	0.000	0.000	6.416
Հրազդանի ԳԲԿ		24.007	1.508	0.000	0.000
9	Դղմաշեն	2.2	1.2	0.000	1.0
10	Զովաբեր	1.69	0.308	0.000	1.382
Ծովագյուղի ԳԲԿ		45.781	3.649	0.822	20.493
11	Ծովագյուղ	1.984	1.435	0.000	0.549
12	Սեմյոնովկա	6.585	0.602	0.393	5.59

Բնակավայրերի տարածքում գազամատակարարումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ միջին և ցածր:

2.19.4.1. Ջերմամատակարարում

Հայաստանում կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերը տարբեր պատճառներով դադարել են գոյություն ունենալ դեռևս վաղ 2000-ականներին: Վերջին ժամանակահատվածում ավելի փոքր համակարգեր են սկսել կառուցվել առանձին կամ խումբ նորակառույց բազմաբնակարան շենքերի ջեռուցման և տաք ջրի պահանջարկն ապահովելու համար, սակայն դրանք որևէ էական կշիռ ընդհանուր պահանջարկի կառուցվածքի մեջ չունեն:

Դիտարկվող տարածաշրջանի քաղաքային և որոշ գյուղական բնակավայրերի դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում գործում են կենտրոնացված ջեռուցման համակարգեր: Գյուղական բնակավայրերի զգալի մասում կրթական, վարչական, առողջապահական հաստատությունների ջեռուցումն իրականացվում է ջեռուցման կաթսաների միջոցով:

Բնակչության ջեռուցման և տաք ջրի ստացումը ևս իրականացվում է անհատական ջեռուցման կաթսաների կամ վառարանների միջոցով՝ բնական գազով, որը միկրոռեգիոնի գազիֆիկացման բարձր աստիճանի արդյունք է:

2.19.4.2. Գազի հեռանկարային ծախսը

Գազի ընդհանուր պահանջարկի նախնական հաշվարկները կատարելիս հաշվի է առնված բնական գազով ապահովել:

- Բոլոր բնակելի և հասարակական նշանակության շենքերի (կրթական, առողջապահական, մշակութային, վարչական) ջեռուցման համար անհրաժեշտ կարիքների բավարարումը:
- Բնակչության տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ պահանջարկը:
- Արտադրական ձեռնարկությունների ջեռուցման, օդափոխության և տեխնոլոգիական կարիքների համար պահանջարկը:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված հաշվարկների (ըստ ՇՆՁ IV-12.101-04) ցուցանիշները.

Գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված ցուցանիշներն ըստ բնակավայրերի¹⁰

N	Բնակավայրերը	Հեռանկարային բնակչությունը	Գազի հեռանկարային տարեկան պահանջարկը հազ. մ ³
1	Սևան քաղաք	20900	6270.0
2	Գազարին	1832	402.9
3	Գեղամավան	1878	413.1
	Դդմաշեն	2940	646.9

¹⁰ Միջինացված ցուցանիշներում ներառված են կոմունալ-կենցաղային, հասարակական և այլ կազմակերպությունների, արտադրական ձեռնարկությունների գազասպասարման պահանջը

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

4	Զովաբեր	1621	356.7
5	Լճաշեն	4770	1049.3
6	Ծաղկունք	1114	245.1
7	Ծովագյուղ	4596	1011.1
8	Նորաշեն	502	110.4
9	Չկալովկա	582	128.0
10	Սեմյոնովկա	262	57.6
11	Վարսեր	1912	420.6
12	Սևան քաղաք	20900	6270.0
Ընդամենը			11111.7

Ըստ կատարված մոտավոր հաշվարկների, Գեղարքունիք-1 միկրոռեզիդենցիալ ներառված բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան ընդհանուր պահանջարկը կկազմի մոտ 11 մլն մ³:

Նախագծային առաջարկություններ

➤ Էլեկտրական համակարգի արդիականացում, վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխան:

➤ Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար անցում երկտրանսֆորմատորային ենթակայանների:

➤ Զովաբեր, Ծաղկունք և Սեմյոնովկա բնակավայրերում տրանսֆորմատորային հզորության ավելացում՝ 100-ական ԿՎԱ-ով:

➤ Համակարգերի համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:

➤ Հին փայտյա հենասյուների փոխարինում նոր, բետոնե սյուներով:

➤ Արտաքին լուսավորության նախատեսում բոլոր փողոցներում:

➤ Բնակավայրերի տարածքով անցնող բարձր լարման հոսանքալարերի անվտանգության գոտիների առանձնացում, դրանց օգտագործման սահմանափակումների, ռեժիմների սահմանում:

➤ Վարչական, հասարակական, կրթական, առողջապահական հաստատությունների, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի ջեռուցումը նպատակարար է իրականացնել լոկալ կաթսայատների միջոցով: Արտադրական օբյեկտների, ինչպես նաև անհատական տների ջեռուցումը կիրականացվի ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգերով՝ հիմնականում փոքր հզորության անհատական գազի կաթսաներով կամ վառարաններով: Տաք ջրի ստացումը՝ գազային ջրատաքացուցիչների, սննդի պատրաստումը՝ գազօջախների միջոցով:

➤ Գազի արդյունավետ և անվտանգ շահագործման նպատակով անհրաժեշտ է գազամատակարարման ներտնային ցանցի տեխնիկական վիճակի ապահովում:

➤ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարաններում բնական գազ ունենալը մշտապես մարտահրավեր է հանդիսանալու մարդկանց կյանքի և գույքի անվտանգության ապահովման տեսանկյունից, ջերմամատակարարման և տաք ջրի արտադրության առումով անհատական ջեռուցման կաթսաներին այլընտրանք կարող են հանդիսանալ արևային ջրատաքացուցիչները և էներգիայի սեփական կարիքների արտադրության համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերը:

2.19.4.3. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ

➤ 21-րդ դարի սկզբին ողջ աշխարհը գնում է հանքային ռեսուրսների խիստ տնտեսման և միաժամանակ այլընտրանքային էներգիայի աղբյուրների հայտնաբերման ուղղությամբ: Ընդ որում որոշ զարգացած երկրներ վաղուց են անցել այլընտրանքային էներգետիկ աղբյուրների օգտագործման պրակտիկային ոչ միայն տնտեսական, այլև՝ բնապահպանական դրդապատճառներով:

Հայաստանի Հանրապետություն արտադրվող էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուրներ համարվում են ատոմակայանը և ջերմային էլեկտրակայանները: Եթե հաշվի առնենք, որ ջերմակայանները աշխատում են գազով, ինչը ներկրվող էներգետիկ ռեսուրս է և կախվածություն է առաջացնում արտաքին աշխարհից, ապա էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական աղբյուրի՝ ատոմակայանի, աշխատանքի դադարեցման արդյունքում ողջ հանրապետությունը կարող է կանգնել էներգետիկ սովի առջև:

Հաշվի առնելով տարածաշրջանի մարզի կլիմայական պայմանները /արևափայլի տևողությունը՝ 2700-2800 ժամ/ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր կարելի է դիտարկել արևային էներգիան:

Արևային ճառագայթմամբ աշխատող համակարգերի անվնաս ու անաղմուկ տեխնոլոգիայի հուսալիությունը, բաղադրամասերի երկարակեցությունը հաստատվել են տարիների ընթացքում և սկզբնական մեծ ներդրումները, որոնք պահանջվում են արևային համակարգերի գործարկման համար, արդարացնում են իրենց, ինչով էլ հենց հիմնավորվում է դրանց կիրառման նպատակահարմարությունը:

Որպես առավելություն հարկ է նշել նաև, որ արևային կոլեկտորների կիրառման համար առանձին տարածքներ հարկավոր չէ զբաղեցնել, քանի որ դրանք կարելի է տեղադրել անմիջապես շենքերի տանիքներին:

Հաշվի առնելով, որ ածխաջրածնային վառելիքը տարեցտարի թանկանում է, ուստի այլընտրանքային էներգետիկայի զարգացումն ավելի ձեռնտու է:

Արեգակնային էներգիան անսպառ և հուսալի աղբյուր է, որը տալիս է էներգետիկ անկախություն և չի աղտոտում շրջակա միջավայրը:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերի տեղակայման նպատակով արդեն իսկ իրականացվում են որոշ ծրագրեր, մասնավորապես՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» մասնակցությամբ Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում իրականացվում է «Էներգաարդյունավետ» վարկային ծրագիրը: Ծրագրի շրջանակներում 2019 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ տարբեր համայնքներում արդեն իսկ տեղադրվել են թվով 2896 ջրատաքացուցիչներ:

Հայաստանի կառավարությունը նախատեսում է աստիճանականորեն ընդլայնել այսպիսի ծրագրերի իրականացումը, խրախուսելով որ յուրաքանչյուր շինություն ունենա ջեռուցման և տաք ջրի արտադրության իր անհատական համակարգը՝ հիմնված վերականգնող էներգետիկ ռեսուրսների վրա:

Արևային օրերի երկար տևողությունը և մշտական քամիների առկայությունը նպաստավոր են մարզում այլընտրանքային էներգետիկայի արտադրության կազմակերպման համար:



«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ըստ ՀՀ Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040թ.) նախատեսվում է վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործում, որը, հաշվի առնելով դրանց՝ նվազագույն ծախսումներով էլեկտրաէներգիայի արտադրական հզորությունների զարգացման պլանի մաս կազմելու հանգամանքը, հանդիսանում է էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթություններից մեկը: Արևային կայանների կառուցումը, հանդիսանալով տնտեսապես ամենաշահավետը Հայաստանի պարագայում, հաշվի առնելով առկա ռեսուրսները և այս տեխնոլոգիայի զարգացման միտումները ողջ աշխարհում, կլինի գերակա մնացած տեսակների նկատմամբ՝ հաշվի առնելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշներով պայմանավորված սահմանափակումները:

Սույն թվականի նոյեմբերի մեկի դրությամբ ցանցին է միացված մինչև 500 կՎտ հզորության 1640 արևային ինքնավար կայաններ՝ ընդհանուր 25.9 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Ներկա զարգացման տեմպերը թույլ են տալիս կանխատեսելու, որ մինչև 2023 թվականը օրենքով սահմանված սահմանափակումների ուժի մեջ մտնելը դրանց ընդհանուր դրվածքային հզորությունը կհասնի 100 ՄՎտ-ի:

ՀՀ կառավարությունը նպատակ ունի մինչև 2026 թվականները արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ հասցնել 10%-ի, ինչը նշանակում է, որ կունենանք 1.2 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրանք արևային կայաններից, ինչի համար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր 700 ՄՎտ արևային կայանների դրվածքային հզորություններ՝ ներառյալ ինքնավար կայանները:

2.19.4.4. Հեռահաղորդակցություն

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապն ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ Տելեկոմ Արմենիա (Team ապրանքանիշ), Վիվա սելլ /USU ապրանքանիշ/ և «ՅՈՒՔՈՍ» (Ucom ապրանքանիշ): Տելեկոմ Արմենիա ընկերությունը ՀՀ Գեղարքունիքի մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Նշված օպերատորների բջջային կայանների վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է Հավելվածներ փաթեթի Հավելված 1-ում:

ՀՀ Գեղարքունիքի եթերային հեռուստահաղորդումները հեռարձակվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Գեղարքունիքի տարածքային բաժնի կողմից սպասարկվող թվային կայանների միջոցով: Մարզի տարածքում հեռարձակվում են «Հ1», «Հ2», «RTR-PLANETA», «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Շողակաթ» և մարզի տարածքում տեղակայված՝ «ՔյավառTV», «ԶանգակTV» և «STV1» հեռուստաընկերությունների ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթով: Մարզի բնակավայրերը գրեթե ամբողջությամբ ապահովված են ինտերնետ ծածկույթով և կաբելային հեռուստատեսությամբ:

Հայաստանի Հանրապետության փոստային կապի «Հայփոստթրաստ» ԲԲԸ ՀՀ Գեղարքունիքի մարզի հինգ փոստային մասնաճյուղերը սպասարկում են մարզի 92 համայնքներին:

2.19.4.5. Կոշտ թափոններ

Մարզի 34 համայնքներում, որոնցում բնակվում են մարզի բնակչության 60%-ը, աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Բոլոր 5 քաղաքներն ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկվում են մարզի բնակչության՝ 29.8%-ը: Աղբահանություն

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: ՀՀ Գեղարքունիքի մարզի 5 քաղաքները՝ Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս, Ճամբարակ, ընդգրկվել են «ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ թափոնների կառավարման ծրագրում», որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Եվրոպական Միության հարևանության ներդրումային գործիք (EUNIF) կազմակերպության և Արևելյան Եվրոպայի էներգիայի արդյունավետության և բնապահպանության գործընկերության կողմից (E5P):

«Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են թափոնների փոխաբեռնման կայանների կառուցման աշխատանքները, որի շրջանակներում նախատեսվում է մարզում առկա բոլոր աղբավայրերի փակում, աղբահանության արդյունավետ համակարգի ներդնում և առաջացող աղբի տեղափոխումը դեպի Հրազդան համայնքում կառուցվող սանիտարական աղբավայր:

ԳԼՈՒՏ 3

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԼԱՆՊԵՐՍԵԿՏԻՎ ԻՆՓԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆՍԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի մշակման հիմնական նպատակը, տարածքային պլանավորման միջոցով, համայնքների համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման ու կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է:

ՀՀ Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ Գեղարքունիք 1 համակցված տարածքի ինժեներա-երկրաբանական նախապատրաստումը, տարերային և տեխանիկական վտանգավոր երևույթներից պաշտպանությունը (այդ թվում՝ երկրաշարժից), ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ինժեներա-տեխնիկական միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, սեյսմիկ ռիսկի նվազեցման անհրաժեշտ միջոցառումների իրականացում կարգավորվում են համապատասխան իրավական ակտերով, համայնքային և մարզային մակարդակներում մշակված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններով և այլ նորմատիվա-իրավական ակտերով, որոնք նպատակաուղղված են բնակավայրի տարածքում անվտանգ, բարենպաստ, կայուն կենսամիջավայրի ձևավորմանը:

Արտակարգ իրավիճակներում համայնքների տարածքի ռացիոնալ օգտագործման և կենսագործունեության կայունության բարձրացման համար նախագծում նախատեսված է տարբեր ֆունկցիոնալ գոտիների և միջհամայնքային տրանսպորտային ցանցի մանրամասն լուծումներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքը գտնվում է սեյսմիկ ռիսկի գոտում, նախատեսել բնակելի շենքերի և բնակչության կենսաապահովման օբյեկտների պաշտպանության սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման և ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 261-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1351-Ն որոշման»:

Փողոցների նախագծային լայնությունը, կարմիր գծերում, նախատեսվում է նվազագույնը 3.0 մ, որպեսզի շենքերի և շինությունների փլուզման գոտիներում հնարավոր լինի փրկարարական ստորաբաժանումների առաջխաղացումը:

Ինժեներական հաղորդակցության ուղիների նախագծման հիմքում դրվում է բնակավայրերի կենսագործունեության հուսալի ապահովումը, ինչպես խաղաղ, այնպես էլ արտակարգ իրավիճակներում և ռազմական գործողությունների ժամանակ:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Անհրաժեշտ է նախատեսել բնակավայրերի կենտրոնացված ազդարարման համակարգի վերականգնում:

Համայնքում կենտրոնացված ջերմամատակարարման, կեղտաջրերի հեռացման համակարգեր չկան:

Նախատեսված է համայնքի կենտրոնացված ազդարարման համակարգի վերականգնում:

3.1. Տեխնաժին վտանգներ

Գեղարքունիք 1 համակցված տարածքում ընդգրկված համայնքներում տեխնաժին արտակարգ իրավիճակների օջախներ են համարվում կոմունալ-էներգետիկ ցանցը՝ կենցաղային գազատարները, կոյուղու և խմելու ջրագծերը, էներգամատակարարման համակարգերը, ինչպես նաև հրդեհապայթյունավտանգ օբյեկտները:

3.2. Պաշտպանական կառույցներ

Վթարի դեպքում բնակչության պատսպարումն իրականացվում է հակաճառագայթային թաքստոցներում, որոնք առկա և հաշվառված են պլաններում և ամրակցված են պատսպարվողների ցուցակները: Հակաճառագայթային թաքստոցներ կառուցվում են ծառայել բնակելի, առտադրական և հասարակական շենքերի նկուղներն ու կիսանկուղները, որոնց հերմետիկությունը կլինի ապահովել ձեռնահաս միջոցներով:

Բնակչության պատսպարումն իրականացվում է նաև այլ դեպքերում՝ խոշոր աղետների և ռազմական գործողությունների ժամանակ: Այս դեպքերում բնակչության պատսպարումն իրականացվում է ապաստարաններում, հակաճառագայթային թաքստոցներում և պարզագույն թաքստոցներում, վերջիններս կարող են հանդիսանալ նկուղներ, կիսանկուղներ, գետնանցումներ, հանքախորշեր և այլ:

Գեղարքունիք 1 համակցված տարածքում քիմիապես վտանգավոր օբյեկտներ չկան:

3.3. Բնակչության պատսպարում

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

ա) պաշտպանական կառույցների վաղօրոք շինարարությունը.

բ) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

գ) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.

դ) արագ կառուցվող թաքստոցների շինարարության կազմակերպումն (անհրաժեշտ շինանյութերի պահեստավորում և պահանջվող տեխնիկա) ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Խաղաղ ժամանակ, պաշտպանական կառույցները, համաձայն քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի պահանջների, կարող են օգտագործվել տնտեսական նպատակներով կառույցի ծավալի 40%-ի չափով, ազատման ժամանակը պետք է լինի ոչ ավելի 6 ժամից, օգտագործման ժամանակ պետք է ապահովվի շինությունների և կառուցվածքների պահպանությունն ավերածությունից ու խոնավությունից:

Պաշտպանական կառույցները տարբերվում են կառուցման ժամկետներով՝

ա) խաղաղ ժամանակ կառուցվող թաքստոցներ.

բ) պատերազմի սպառնալիքի ժամանակ կառուցվող պաշտպանական կառույցներ՝

- արագ կառուցվող թաքստոցներ,

- պարզագույն թաքստոցներ:

Արագ կառուցվող թաքստոցները կառուցվում են ամենասեղմ ժամկետներում առավելագույնս օգտագործելով առկա հավաքովի կառուցվածքներն ու նյութերը, պարզեցված սարքավորումները:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Արագ կառուցվող պաշտպանական կառույցների տեղակայման վայրը և թիվը որոշվում են քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից՝ ելնելով խաղաղ ժամանակ դրանցով բնակչության փաստացի ապահովվածությունից:

Պարզագույն թաքստոցները կառուցվում են արտակարգ իրավիճակների ու պատերազմի սպառնալիքի ժամանակահատվածում բնակչության այն մասի համար, որն ապահովված չէ պաշտպանական կառույցներով, որոնց շինարարության պլաններն ու ժամանակացույցերը վաղորոք մշակվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից:

Պարզագույն թաքստոցների կառուցման բոլոր աշխատանքները համապատասխանեցվում են արագ կառուցվող շինությունների շինարարության, ինչպես նաև բնակչության տարահանման պլաններին:

3.3.1. Համայնքի բնակչության պաշտպարումը

Համայնքի բնակչության պատսպարումը պետք է իրականացվի պարզագույն պաշտպանական կառույցներում՝

- Ստորգետնյա հատուկ նախապատրաստված շինություններում՝ նկուղներում, կիսանկուղներում, խորացված այլ տարածքներում.
- Բնակելի ֆոնդի տարածքներում՝ առաջին հարկի տարածքներ, հարմարեցված որպես պատսպարաններ:

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

- պարզագույն պաշտպանական կառույցների վաղորոք կառուցումը.
- պարզագույն պաշտպանական կառույցների պահեստարանները պատրաստի վիճակում.
- պարզագույն պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը (սննդամթերքի և այլ նպատակային պահեստարաններ).
- արագ կառուցվող պատսպարանի (կառավարման կետի) շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Սևան համայնքի հեռանկարային բնակչության թիվը կազմում է 40000 մարդ: Գլխավոր հատակագծով հանգստացողների թիվը կազմում է 10000 մարդ՝ հաշվի առնելով սահմանամերձ գոտու մասնակի տարահանման ենթարկված բնակչության ընդունման հնարավորությունը:

Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումն իրականացվում է նախապես մշակված և հաստատված պլանների համաձայն՝ համայնքի սեփական ուժերով:

3.3.2. Բնակչության իրազեկումը և ազդարարումը

Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումը տեղի է ունենում քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով՝

Շչակի անընդհատ հնչեցման դեպքում (‘Ուշադրություն բոլորին’ ազդանշան) բնակչությունը պարտավոր է միացնել հեռուստացույցները և ռադիոընդունիչները, որոնցով տրվում են հաղորդագրություններ ԱԻ սպառնալիքի կամ դրանց առաջացման և բնակչության գործողությունների մասին.

- շչակի ընդհատվող հնչեցման դեպքում (‘Օդային տագնապ’ ազդանշան) բնակչությունն անմիջապես պատսպարվում է պաշտպանական կառույցներում:

Պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմիններն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների հետ համատեղ կազմակերպում են բնակչության ազդարարման համալիր միջոցառումներ:

Համայնքի բնակչության յուրաժամանակ ազդարարման, ԱԻ մասին տեղեկատվության ապահովման համար անհրաժեշտ է վերականգնել համայնքի կենտրոնացված

Примечание [U5]: նախորդ բաժինը սեպտեմբերի 1-ին և քաղաքացիական պաշտպանության բաժինների միջև

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ազդարարման համակարգը: Ապահովել էլեկտրաշահանքների հուսալի էլեկտրամատակարարում և հուսալի կապ:

3.3.3. Բնակչության տարահանումը

Տարահանումն իրականացվում է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով:

Համայնքի տարածքից բնակչության տարահանումը նախատեսվում է՝

Ա. երկրաշարժի հետևանքով տուժած (ավերված և բնակվելու համար վտանգավոր բնակատարածքներից) ու անօթևան մնացած բնակչության համար,

Բ. ատոմային էլեկտրակայանի ԱԷԿ ընդհանուր վթարի դեպքում՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը,

Գ. ռադիոակտիվ կամ թունավոր նյութերի տրանսպորտային փոխադրումների ժամանակ տեղի ունեցած վթարի հետևանքով առաջացած վտանգավոր տարածքից,

Դ. զենքի տեսակների կիրառման դեպքում մասնակի տարահանում վտանգավոր տարածքներից:

Տարահանումն իրականացվում է ավտոտրանսպորտով պետական և սեփական կամ հետիոտն:

Համայնքի բնակչության տարահանման կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ է.

ա) բնակչությանը գրանցել ստեղծված համապատասխան տարահանման կետերում,

բ) ուժեղ երկրաշարժի դեպքում որոշել ապահով, ոչ փուլված տեղամասեր, որոնց վրա կարելի է տեղակայել տուժած բնակչության համար հավաքակայաններ: Այդ տեղերում նախատեսել բուժկետեր, տրանսպորտային միջոցների կայանատեղեր և տարահանվող բնակչության նստեցման հրապարակներ: Այդ տեղամասերի քանակը պետք է ապահովվի տուժած բնակչության քայքայված մոտեցումը համայնքի ամբողջ տարածքից (առնվազն 1 տեղամաս՝ դպրոցի բազայի վրա),

Քիմիական վթարի կամ դրա անմիջական սպառնալիքների դեպքում բնակչությունը պետք է տարահանվի բնակելի զանգվածների վրա քամու ընթացքին ուղղահայաց ուղղությամբ:

3.3.4. Բնակչության տարահանման ձևերն ու միջոցները

Բնակչությունը կարող է տարահանվել հետիոտն շարապույուններով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարապույուններով:

Առանձին դեպքերում տարահանման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել նաև օդային տրանսպորտային միջոցներ:

Տարահանման համար տրամադրվող տրանսպորտային միջոցների հատկացումն ու վառելիքաքսության նյութերով ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Առաջին հերթին տրանսպորտով դուրս են բերվում հղի կանայք, հիվանդները, փոքրահասակ երեխաներ (մինչև 14 տարեկան) ունեցող կանայք, երեխաները և տարեցները, բժշկական հաստատությունները, բնակչության այն մասը, որը չի կարող տեղաշարժվել հետիոտն կարգով: Պլանավորվում է տրանսպորտային միջոցների անբավարարության դեպքում՝ մնացած բնակչությանը դուրս բերել հետիոտն կարգով:

Տարերային, տեխնաձին կամ էկոլոգիական աղետների և այլ բնույթի վթարների դեպքում ընդհանուր կամ մասնակի տարահանման մասին որոշում ընդունում են, Հայաստանի Հանրապետության մարզպետները՝ մարզի բնակչության համար, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները՝ համայնքի բնակչության համար և

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

կազմակերպությունների ղեկավարները՝ իրենց աշխատողների համար: Նրանց բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց փոխարինող անձինք: Պատերազմական գործողությունների ժամանակ օգտագործվող զենքի տեսակների կիրառման կամ դրա սպառնալիքի դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

Բնակչության տարահանման պլանավորումը և կազմակերպումը, տարահանված բնակչության տեղաբաշխումը ու բազմակողմանի կենսաապահովումը և արտակարգ իրավիճակների վերացումից հետո նրա վերադարձը մշտական բնակչության վայրերն իրականացնում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տարահանման հանձնաժողովների միջոցով:

Տարահանման հանձնաժողովները նախապես որոշում և տարահանման միջոցառումներին մասնակցող կազմակերպություններին տեղեկացնում են տարահանումն իրականացնող մարմինների, տարահանման և ընդունման հավաքակալայինների, կարճաժամկետ տեղակայման կետերի, երկարատև բնակչության կետերի գտնվելու վայրի մասին:

Տարահանման հավաքակետերը ծավալվում են դպրոցների տարածքներում:

Տարահանման միջոցառումները կանոնակարգվում են նախապես մշակված տարահանման պլաններով, որոնք ներառում են՝

1) բնակչության տարահանման անցկացման կարգն ու ժամկետները, տարահանման համար տրամադրվող ուժերն ու միջոցները, տարահանման երթուղին:

2) տարահանման և ընդունման հավաքակալայիններում աշխատանքների կազմակերպումը:

3) տարահանման հաշվարկը՝ ըստ տրանսպորտային տեսակների ու տարահանման երթուղիների:

4) ընդունող բնակավայրերում տարահանվողների տեղաբաշխման կազմակերպման և սնունդով ապահովման կանոնակարգը:

5) նյութական և մշակութային արժեքների դուրսբերման կարգը:

Բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանները մշակում են տարահանման համապատասխան հանձնաժողովները՝ լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանման հետ համատեղ:

Տարահանման հավաքակալայիններն ստեղծվում են հանրակրթական և հասարակական կազմակերպությունների տարածքներում, ապահովվում կապի միջոցներով, բուժսպասարկման կետով, մոր ու մանկան և հանգստի սենյակներով: Տարահանման երթուղիները ճշգրտվում են տարահանման հավաքակալայիններում:

Բնակչության տարահանումն իրականացվում է տարահանման հավաքակալայիններից, որտեղ տարահանման ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում են տարահանվողները:

3.3.5. Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը

Համայնքների բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 25-ի 679 որոշման համաձայն: Սահմանամերձ՝ մինչև 10 կմ շառավղով գոտու համայնքների բնակչությունը առաջին հերթին՝ զտող հակազագերով և համազորային պաշտպանական լրակազմերով միջոցներով:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Բնակչության պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները կուտակվում են նախապես զորահավաքային պահուստում դրանց պահեստավորմամբ և կազմակերպություններում համապատասխան պաշարների ստեղծմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջոցների հաշվին:

Պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում անհատական պաշտպանության միջոցների բաշխման կարգը սահմանվում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության պլաններով:

. Նշված պլաններով որոշվում են անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետերը, ժամանակը, քանակը և հերթականությունն ըստ համայնքների ու կազմակերպությունների:

Անհատական պաշտպանության միջոցների հաշվարկը կատարվում է ըստ տարիքային խմբերի՝ բնակչության քանակ գումարած 10%:

1. Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ

Միջոցառումներն իրականացվում են նախապես և ուղղված են արտակարգ իրավիճակների առաջարման ռիսկը նվազագույնի հասցնելուն, իսկ դրա առաջարման պարագայում՝ մարդկանց առողջության պահպանմանը, շրջական բնական միջավայրին պատճառվող վնասի և նյութական կորուստների չափերի նվազեցմանը:

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումները անհրաժեշտ է ընդգրկել մարզի և համայնքների զարգացման ծրագրերում, ինչպես նաև համայնքների աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու պլաններում:

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների հիմնական պահանջներն են՝

ա) բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում, մանրամասն հատակագծման նախագծերում և գոտևորման նախագծերում վտանգավոր ձեռնարկությունների ու արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխումը՝ բնակչության պաշտպանության տեսանկյունից և դրանց շուրջ սանիտարական գոտիների նախատեսում:

ա) կենսապահովման օբյեկտների անխափան աշխատանքի ապահովումը,

բ) արտակարգ իրավիճակների կանխումն ու հնարավոր հետևանքների նվազեցումը,

գ) հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացումը:

3.4. Հրդեհային անվտանգություն

Բնակավայրերում պետք է կազմակերպվեն հրդեհային պահպանությունը՝ շինարարական և հրդեհային անվտանգության նորմերով նախատեսված ջրավազանների և հիդրանտների առկայությունը, շենքերին շինություններին հարող ավտոճանապարհների անցանելիությունը, կապի և ազդարարման միջոցների առկայությունը:

Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի՝ պետության պատվիրակած լիազորություններն են՝

1. հրդեհների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը,

2. հրդեհային անվտանգության միջոցառումների կատարման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցումը:

Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի կամավոր լիազորություններն են՝

1. հրդեհային անվտանգության ապահովման միջոցների ու կանոնների ուսուցումը բնակիչներին և նրանց ընդգրկումը հրդեհների կանխման ու հրդեհաշիջման

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

աշխատանքներում՝ կամավորական խմբերի ստեղծում, ուսուցում և գույքով ու հանդերձանքով ապահովում,

2. հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը,

3. հրդեհային իրավիճակի վատթարացման դեպքում անհրաժեշտ ռեժիմի ապահովումը:

Քաղաքաշինության բնագավառում հրդեհային անվտանգության կանոնները սահմանվում են համապատասխան իրավական ակտերով և շինարարական նորմերով և կանոններով, որոնց կիրառումը նախատեսված է դեռ բնակավայրի նախագծման փուլում:

3.5. ՔՊ և ԱԻ բնակչության պաշտպանության տեսանկյունից համայնքի կառուցման և վերակառուցման կազմակերպումը

Աղետի սպառնալիքի կամ առաջացման վտանգի դեպքում կառավարումն իրականացվելու է համայնքի հիմնական կառավարման կետից (համայնքապետի աշխատասենյակ), իսկ պատերազմական ժամանակահատվածի համար անհրաժեշտ է նախատեսել նաև պահեստային կառավարման կետ՝ ապահովված ինֆորմացիայի մշակման և փոխանակման ժամանակակից միջոցներով:

- Նոր շինարարության կամ հին օբյեկտների վերակառուցման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել՝
- շենքերի վերակառուցման աշխատանքներում դեղին գծերի պլանները՝ շենքերի հնարավոր փլուզման դեպքում անարգել երթևեկության ապահովման ու փրկարարական ուժերի անարգել մուտքը ապահովելու նպատակով,
- նախատեսել համայնքի օրեկան ջրի կարգավորման լրացուցիչ ջրավազան՝ համայնքի անխափան ջրամատակարարման ապահովման համար,
- հասարակական ու կենսաապահովման օբյեկտների համար նախատեսել լրացուցիչ էլեկտրամատակարարման աղբյուրներ, ինչպես նաև վթարային ելքեր,
- սահմանել մարդկային անվերադարձ կորուստների հուղարկավորման տեղերը,
- սահմանել շինարարական աղբի թափման տեղերը,
- սահմանել և նախապատրաստել անկաճ գյուղատնտեսական կենդանիների սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխանող գերեզմանոցներ:

ԳԼՈՒԽ 4

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Գոտևորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ

Գոտևորման նախագիծը բնակավայրի գլխավոր հատակագծի իրագործման հիմնական ծրագրային քաղաքաշինական փաստաթուղթն է: Այն անմիջականորեն կապված և համաձայնեցված է բնակավայրի գլխավոր հատակագծում նախանշված գաղափարների, զարգացման ուղղությունների, կառուցապատման ինտենսիվության և բնակչության տեղաբաշխման իրականացման գործընթացի հետ:

4.2. Գոտևորման համակարգի կառուցվածքը

Գոտևորման նախագիծը հիմնվում է ընդունված գոտի-թույլատրելի օգտագործման ձև՝ սկզբունքի վրա: Նախագծում, ըստ առանձին գոտիների, սահմանվում են հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման տեսակները, որոնց համապատասխանող քաղաքաշինական գործունեության իրականացման համար լրացուցիչ պահանջներ, քննարկումներ, համաձայնեցումներ չեն նախատեսվում: Սահմանվել են թույլատրության հետևյալ ձևերը՝

թույլատրվում է

չի թույլատրվում

Պահանջները տարբերակվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են յուրաքանչյուր գոտու ներսում:

4.3. Գոտևորման նախագծի կիրառման բնագավառը

Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են՝

- Բնակավայրի տարածքում կատարվող վերակառուցողական, շինարարական, վերականգնողական, վերանորոգման, բարեկարգման, կանաչապատման աշխատանքների, ինչպես նաև հողերի և առանձին օբյեկտների նպատակային օգտագործմանը և շահագործմանը վերագրվող պահանջները գործնականում իրականացնելու և պահպանելու համար:

- Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը կարգավորում են նաև շենքերի և շինությունների ներսում կատարվող գործունեության այն հետևանքները, որոնք ազդում են շրջակա միջավայրի բնականոն վիճակի վրա, այն է՝ աղմուկին, վնասակար արտանետումներին, տրանսպորտային և հետիոտն հոսքերի մեծ զանգվածներ առաջացնող գործունեության տարբեր տեսակներին վերաբերող հատուկ պահանջների սահմանումը և այլն:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

• Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են նաև կառուցապատման և հողամասերի օգտագործման ինտենսիվության, շենքերի և շինությունների հարկայնության, դրանց արտաքին ճակատների ձևավորման, հարդարանքի, գովազդների, ցուցանակների, փոքր ճարտարապետական ձևերի տեղադրման համար:

4.4. Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հիմնական բնութագրեր

Սահմաններ

Նախագծվող տարածքի սահմանները համապատասխանում են գլխավոր հատակագծում առանձնացված գոտիավորման տարածքի սահմաններին:

Գոտևորման շրջանների (գոտիների) սահմանները

Նախագծվող գոտևորման շրջանների (գոտիների) սահմանները որոշվում են հետևյալ կերպ՝

Եթե գոտևորման շրջանի սահմանը համընկնում է հողամասի սահմանի հետ, ապա այդ հողամասի սահմանը համարվում է գոտիավորման շրջանի սահմանը,

Եթե գոտևորման շրջանի սահմանը անցնում է փողոցով, ճեմուղով, երկաթգծի ուղիներով, գետով կամ այլ գծային ծրագիծ ունեցող տարածքային միավորներով, ապա գոտիավորման շրջանի սահման է համարվում դրանց առանցքային գիծը,

Եթե գոտևորման շրջանի սահմանը անցնում և կիսում է ինչ որ մի առանձին տիրույթ, ապա գոտևորման շրջանի սահմանը որոշվում է գծագրում բերված համապատասխան եզրագծով, կամ հեռավորության նշումով:

Գոտևորման նախագծի կազմը

Գոտևորման նախագծի կառուցվածքային հիմնական բաղկացուցիչներն են գոտիավորման գծագրական ու տեքստային մասերը:

Նախագիծը ներառում է

Գործառական գոտևորումը՝ հողատարածքների առանձնացումն ըստ գործառական օգտագործման՝ սահմանելով թույլատրելի օգտագործման տեսակները, ամրագրելով ընդհանուր տարածքի մակերեսի նկատմամբ վերջիններիս սահմանային չափաբաժինները:

Ծավալատարածական գոտևորումը՝ ամրագրելով կառուցապատման բնույթն արտահայտող ցուցանիշները (կառուցապատման խտություն, շենքերի, շինությունների բարձրություն, կառուցապատված և կանաչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն), տվյալ տարածքում թույլատրելի չափաբաժինների հաշվառումը:

Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները

Հողերը գոտևորված են ըստ հիմնական և օժանդակ գոտիների:

Հիմնական գոտիներ*

Հիմնական է համարվում հողերի գոտևորումը ըստ նպատակային նշանակության և ըստ քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ինժեներաերկրաբանական և այլ բնույթի սահմանափակումների:

Միևնույն տարածքային միավորին համապատասխանում է միայն մեկ հիմնական գոտի:

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Տարածաշրջանի գոտևորման տարածքում ըստ նպատակային նշանակության առանձնացված են հետևյալ հիմնական գոտիները.

Բնակավայրերի հողեր,

Գյուղատնտեսական հողեր,

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր,

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր,

Հատուկ պահպանվող տարածքների հողեր,

Հատուկ նշանակության հողեր:

Օժանդակ գոտիներ¹¹

Օժանդակ է համարվում հողամասերի գոտիավորումը՝ ըստ գործառական նշանակության, հողատեսքերի և թույլատրված օգտագործումների, ինչպես նաև հողամասերի ծավալատարածական գոտիավորումը՝ ըստ կառուցապատման չափորոշիչների:

4.5. ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ

ԱՂՅՈՒՍԱԿ

Ստորև տրված են հողերի օժանդակ գոտիավորումը և թույլատրելի օգտագործման ձևերը¹²

Գործառնական գոտու անվանումը	Թույլատրելի օգտագործման ձևերը
ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ	

11 Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք՝ ընդունված ՀՀ ԱԺ կողմից 05.05.98 թ., վավերացված ՀՀ նախագահի կողմից 26.05.98 թ., Գլուխ VI, հոդված 14 :

12 Ծանոթություն. Յուրաքանչյուր գոտու վրա տարածվում են նաև լրացուցիչ սահմանափակումներ, կապված քաղաքի հատակագծային կառուցվածքում առանձնակի կարևորություն ունեցող գոտիների (համապատասխանաբար պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման և առավելագույն ընկալման հնարավորությունների բացահայտման, հասարակական կենտրոնի, քաղաքային մուտքի ազդեցության տարածման) առաջադրած պահանջների, սանիտարահիգիենիկ կամ բնապահպանական պահանջների բավարարման (բնական լանդշաֆտի արժեքավոր ձևերի վերականգնման, էկոհամակարգերի տարբեր խախտումների փոխհատուցման գործընթացների կանոնակարգման, ինժեներական նախապատրաստման համալիր միջոցառումների պարտադիր իրականացման ապահովման հետ պայմանավորված կառուցապատման սահմանափակումների և այլն), տարբեր տիպի կառուցապատումների, հաղորդակցության ուղիների, դրանց կառուցվածքների և ինժեներական ենթակառուցվածքների ազդեցության, սանապահպանման կամ օտարման գոտիների ապահովման պահանջների հետ (ծածկող գոտիներ)»

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Գյուղատնտեսական գոտի	
Վարելահողեր Բազմամյա տնկարկներ (Խաղողի այգի, Պտղատու այգի) Խոտհարքներ Արոտավայրեր	Հիմնական օգտագործման ձևեր՝ Գյուղատնտեսական գործունեություն Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ՀՀ բոլոր համայնքներում՝ կենցաղային, տնտեսական նշանակության շենքեր և շինություններ՝ մինչև 30 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով: ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի N498 որոշման 2-րդ կետի ա ենթակետում նշված համայնքներում՝ մինչև 150 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով բնակելի և մինչև 300 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր ու շինություններ, ընդ որում, միայն այն հողամասերի վրա, որոնց մակերեսը առնվազն մեկ հեկտար է:
Այլ հողատեսքեր	Չի սահմանվում
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ	
Բնակելի կառուցապատման գոտի	
Ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտի (տնամերձերով) ԲՆԿԳ- 1/1 Ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտի (առանց տնամերձերի) ԲՆԿԳ-1/2	Հիմնական օգտագործման ձևեր՝ առանձնատներ, բլոկացված բնակելի տներ, քոթեջներ. Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ մինչև 150 մ2 ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ, բուժական կաբինետներ, բուժական կենտրոններ, մինչև 200 մ2 ընդհանուր մակերեսով մարզական պարապմունքների տարածքներ, գրադարաններ, տուն-թանգարաններ, ցուցասրահներ, մինչև 30 տեղ ունեցող հյուրանոցներ և հյուրատներ, վարչական, ֆինանսական հիմնարկությունների և սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, փոքր հզորության անհատական կաթսայատներ մինչև 52Կ(ժամ),

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսյալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

	մուր- մանկապարտեզներ, փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, փոշու, վնասարար արտանետումների հետ (մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերեսով): սեփական օգտագործման և անհատական ձեռնարկատիրության տեսակներ՝ սանիտարական և հակահրդեհային նորմերի պահպանմամբ, տնամերձ հողամասի սահմաններում՝ այգիներ, բանջարանոցներ, ընտանի կենդանիների բուծման համար շինություններ, անհատական բաղնիքներ, սաունաներ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի, բլոկացված տների դեպքում՝ ոչ ավելին քան 1 մեքենայի համար),
Ամառանոցային (այգեգործական) կառուցապատման գոտի ԲՆԿԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ առանձնատներ, ամառանոցներ, քոթեջներ, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ մինչև 150 մ2 ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, մինչև 30 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ, սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, անհատական կաթսայատներ: Սեփական հողամասի սահմաններում՝ այգիներ, բանջարանոցներ, անհատական բաղնիքներ, սաունաներ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի,

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտի ԲՆԿԳ-3	Հիմնական օգտագործման ձևեր՝ Բազմաբնակարան բնակելի շենքեր Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ Նախադպրոցական հաստատություններ, Մանրածախ առևտրի կետեր, խանութներ, Սրճարաններ, ռեստորաններ, Գրասենյակային տարածքներ, Ատամնաբուժական կենտրոններ, Ավտոտնակներ, ավտոկայանատեղեր, Կանաչ տարածքներ, պուրակներ, Մանկական խաղահրապարակներ, Սպորտային հարթակներ
Բարձրահարկ բնակելի կառուցապատման գոտի ԲՆԿԳ-4	
Հասարակական կառուցապատման գոտի	
Համայնքային նշանակության հասարակական կառուցապատման գոտի Վարչական օբյեկտների գոտի ՀԿԳ-1/1 Մշակութային և ժամանցային օբյեկտների գոտի ՀԿԳ-1/2 Կրթական գոտի ՀԿԳ-1/3 Բուժական հաստատությունների գոտի ՀԿԳ-1/4 Սպորտային օբյեկտների գոտի ՀԿԳ-1/5	Հիմնական օգտագործման ձևեր՝ վարչական, ֆինանսական, փոստի, կապի, կրթական, գիտահետազոտական. նախադպրոցական, բուժական, սպորտային, մշակութային և կրթական հաստատություններ, ուսողականության տեղամասեր, հրշեջ ծառայություններ, գրասենյակային տարածքներ Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ՝ ռեստորաններ, սրճարաններ, բառեր, պանդոկներ, խորտկարաններ: մանրածախ առևտրի կետեր, խանութներ, կրպակներ:

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Բնակչության սոցիալական սպասարկման և առևտրի գոտի ՀԿԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ հյուրանոցներ, հյուրատներ, հյուրանոցատիպ քոթեջային համալիրներ, գյուղական տներ հասարակական սննդի օբյեկտներ, առևտրի կենտրոններ, խանութներ, մթերային և արտադրական ապրանքների շուկաներ, տոնավաճառներ, կենցաղ-սպասարկման առաջնային ծառայություններ, հանրային բաղնիքներ, սաունաներ, զուգարաններ, աղբարկղների տեղադրման հարթակներ Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ
Վառելիքի և տրանսպորտային միջոցների սպասարկման օբյեկտների գոտի ՀԿԳ-3	Հիմնական օգտագործման ձևեր՝ բենզալցակայաններ, գազալիցքավորման կետեր, ավտոտեխսպասարկման կետեր, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ գրասենյակներ, սպասասրահներ, մանրածախ առևտրի կետեր, զուգարաններ
Խառը կառուցապատման գոտի	
Խառը	Հիմնական օգտագործման ձևեր՝

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական, արտադրական) ԽԿԳ-1 Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական, ընդհանուր օգտ.) ԽԿԳ-2	Բնակելի, գրասենյակային, առևտրի և սպասարկման, մասնավոր ուսումնական և նախադպրոցական մակերեսներով բազմաֆունկցիոնալ շենքեր, կիրականօրյա դպրոցներ, բուժական կաբինետներ, վարչական, ֆինանսական և այլ քաղաքային նշանակության ծառայությունների շենքեր և գրասենյակներ, կենցաղ-սպասարկման, spa- ծառայությունների օբյեկտներ, ակումբներ և հասարակական հավաքատեղիներ, գիշերային ակումբներ, մշակութային օբյեկտներ (թատրոններ, կինոթատրոններ, գրադարաններ, ցուցասրահներ և այլ), առևտրի մեծ և փոքր օբյեկտներ, հանրային սննդի օբյեկտներ: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, ավտոկանգառներ, տրանսպորտի հավաքակայաններ և կառույցներ, փոքր ճարտարապետական ձևեր, փակ լողավազաններ, տաղավարներ, կրպակներ:
Ընդհանուր օգտագործման գոտի	
Փողոցներ, հրապարակներ, հանրային նշանակության այլ բաց տարածքներ ԼՕԳ-1	Հիմնական օգտագործման ձևեր՝ ճանապարհային եզրային կանաչապատում, արտաքին լուսավորություն, գովազդ, փոքր ճարտարապետական ձևեր, հրապարակներում՝ շատրվաններ, ջրավազաններ, ծաղկանոցներ և բարեկարգման այլ տարրեր: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ Բնժեներական և կոմունալ ենթակառուցվածքի ստորգետնյա զծեր, Ստորգետնյա ավտոկայանատեղեր

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսյալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Զբոսայգիներ, պուրակներ, այլ կանաչ տարածքներ ԸՕԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ այգեպուրակային կանաչ տարածքներ, վերջիններիս բնորոշ խաղաձևերի սրահներ, ջրավազաններ, խաղահրապարակներ, բացօթյա սպորտի- և բեմա- հարթակներ, բացօթյա սրճարաններ, հրաձգարաններ, տաղավարներ, գրուցարաններ, ճարտարապետական փոքր ձևեր: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ, զուգարաններ.
Այլ հողեր	
Բնակավայրի ռեզերվային և անօգտագործելի հողեր	Չի սահմանվում
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ	
Արդյունաբերական օբյեկտների գոտի	
Ծանր արդյունաբերության օբյեկտների գոտի Թեթև արդյունաբերության օբյեկտների գոտի ԱԳ- 1/2	Հիմնական օգտագործման ձևեր՝ արդյունաբերական համալիրներ, գործարաններ, արտադրական ձեռնարկություններ, արհեստագործական արտադրամասեր Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ հանրակացարանային տիպի բնակելի շենքեր, մինչև 150 քմ ընդհանուր մակերեսով քոթեջային տիպի բնակելի տներ, մանրածախ առևտրի կետեր, տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ, հանրային սննդի կետեր
Գյուղատնտեսական արտադրության օբյեկտների գոտի	
Անասնապահական օբյեկտներ Ա-2/1	Հիմնական օգտագործման ձևեր՝ անասնապահական ֆերմաներ և համալիրներ,
Սպանդանոցներ Ա-2/2	թռչնաբուծարաններ,

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Գյուղատնտեսական մթերքի վերամշակման գործարաններ, արտադրամասեր Ա-2/3	ձկնաբուծական ֆերմաներ անասնագոմեր, սպանդանոցներ ջերմոցներ
Ջերմոցներ Ա-2/4	Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, անասնաբուժական լաբորատորիաներ, պահեստներ, ցանկապատներ շենքեր, փարախներ, անձրևապաշտպանիչ ծածկեր, տնտեսական այլ շինություններ:
Ձկնաբուծարաններ Ա-2/5	
Պահեստարանների գոտի Ա-3	
Ընդերք օգտագործման գոտի Ա-4	Հիմնական օգտագործման ձևեր՝ ընդերք օգտագործման տարածքներ, հումքի վերամշակման արտադրամասեր, արտադրական այլ շենքեր և շինություններ պահեստային տարածքներ Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, ավտոտրանսպորտի, շինարարական և արդյունահանման տեխնիկայի և մեխանիզմների համար նախատեսված հարթակներ, ծածկեր, ավտոտնակներ, տնտեսական այլ շինություններ հանրակացարանային տիպի բնակելի շենքեր, մինչև 150 քմ ընդհանուր մակերեսով քոթեջային տիպի բնակելի տներ, պահակակետեր, անցակետեր:
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ	

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Էներգետիկայի օբյեկտների գոտի Էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի ԷՆԲԳ-1/1	Հիմնական օգտագործման ձևեր՝ Էլեկտրակայաններ՝ ատոմային, ջերմային, հիդրոէլեկտրակայաններ, փոքր ՀԷԿ-եր տրանսֆորմատորային ենթակայաններ օդային և մալուխային գծեր Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական շենքեր, ավտոկայանատեղեր, պահեստային տարածքներ, պահակակետեր և անցակետեր, մանրածախ առևտրի կետեր, խանութներ, հասարակական սննդի օբյեկտներ, (*) Բարձրավոլտ էլեկտրահաղորդման օդային և մալուխային գծերի համար էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի չի առանձնացվում, դրանք կարող են անցկացվել մի շարք գործառնական գոտիներով (գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդհանուր օգտագործման, ռեզերվային, պահուստային և այլ՝ պահպանելով նորմատիվային հեռավորությունները բնակելի թաղամասերից, կրթական օբյեկտներից, պատմության և մշակույթի հուշարձաններից և այլն)
Գազամատակարարման օբյեկտների գոտի ԷՆԲԳ-1/2	Հիմնական օգտագործման ձևեր՝ ավտոմատ գազաբաշխիչ կայաններ (ԱԳԿ), գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳՊԿ), բարձր ճնշման գազատար խողովակաշար գազի ստորգետնյա պահեստարաններ
Կապի օբյեկտների գոտի ԷՆԲԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ հեռախոսային կապի բախշիչ կետեր (պահարանային), կապի ավտոմատ հեռախոսային կայաններ, բջիջային կապի աշտարակներ
Տրանսպորտի օբյեկտների գոտի ԷՆԲԳ-3	Հիմնական օգտագործման ձևեր՝ պետական ավտոմայրուղիներ ճանապարհիչ սպասարկող օբյեկտներ, ավտոկայանատեղեր, կամուրջներ, թունելներ, երկաթգիծ և երկաթգծի կայարաններ քաղաքացիական ավիացիայի օբյեկտներ՝ օդանավակայաններ, անգարներ, այլ ենթակառուցվածք, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ազատ տնտեսական գոտիներ, օդանավակայաններին, կայարաններին կից հյուրանոցներ, Գրասենյակային և պահեստային տարածքներ
Կոմունալ տնտեսության օբյեկտների գոտի	

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ջրամատակարարման, ջրահեռացման ենթակառուցվածքների օբյեկտներ ԷՆԹԳ-4/1	Հիմնական օգտագործման ձևեր՝ օրվա կարգավորիչ ջրամբարներ, ջրամատակարարման բաշխիչ հորեր, ջրամատակարարման համակարգի հանգույցներ, կոյուղու ցանցային հորեր, մաքրման կայաններ, ջերմամատակարարման համակարգեր, կաթսայատներ
Աղբավայրերի գոտի ԷՆԹԳ-4/2	Հիմնական օգտագործման ձևեր՝ աղբավայրեր, աղբի վերամշակման գործարաններ, աղբի տեսակավորման հարթակներ, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ավտոկայանատեղեր պահեստային տարածքներ
Համայնքային և մասնավոր գերեզմանատների գոտի ԷՆԹԳ-4/3	Հիմնական օգտագործման ձևեր՝ գերեզմանոցներ, դիակիզարաններ, Փոքր ճարտարապետական ձևեր, կոթողներ. Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ պահակատներ, գրասենյակներ քարի և մետաղի մշակման արվեստանոցներ,
ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	
Բնապահպանական գոտի ՀՊՏ-1/Բնապ	Գոտին ներառում է բնության հուշարձաններ, արգելանոցների, ազգային և ծառաբանական զբոսայգիների ու պարկերի, բուսաբանական այգիների, արգելավայրերի (բացառությամբ՝ որսորդական) հողերը: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ պահակատներ, տարածքը սպասարկող անձնակազմի գրասենյակային տարածքներ, անձրևից պաշտպանող թեթև կոնստրուկցիաներով իրականացված տաղավարներ, զուգարաններ, մուտքի տոմսերի և արագ սննդի կրպակներ

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Առողջարարական նպատակներով նախատեսված գոտի ՀՊՏ-2/առջ	Հիմնական օգտագործման ձևեր՝ հյուրանոցներ, պանսիոնատային, առողջարանային, քոթեջային, քեմպինգային, այգեպուրակային, սահմանափակ օգտագործման՝ սննդի ծառայություններ, սպորտա- և խաղահրապարակներ, ժամանցային և ռեկրեացիոն բնույթի խաղատեսակների ակումբներ:
Հանգստի համար նախատեսված գոտի ՀՊՏ-3/հնգ	Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի միջոցների կայանատեղեր, վարսավիթանոցներ, գեղեցկության սրահներ, հասարակական բաղնիքներ, սաունաներ, լվացքատներ, մանրածախ առևտրի կետեր, խանութներ
Պատմամշակութային հուշարձանների գոտի ՀՊՏ-4/պմգ	Գոտին ներառում է հուշարձանների պահպանության պետական ցուցակում ընդգրկված օբյեկտները, բացառությամբ բնակելի, հասարակական, արտադրական նշանակությամբ օգտագործվող շենքերի և շինությունների: Վերջիններիս համար սահմանվում է պահպանության գոտի և կանոնակարգ: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ հուշարձանները սպասարկող աշխատակազմի կացարաններ, թանգարաններ, ճարտարապետական փոքր ձևեր, ավտոտրանսպորտի կայանատեղեր, գրասաշրջիկներին սպասարկող առաջին անհրաժեշտության օբյեկտներ, հուշանվերների և արագ սննդի կրպակներ
Պետական գերեզմանատների գոտի	Հիմնական օգտագործման ձևեր՝ գերեզմանոցներ, Փոքր ճարտարապետական ձևեր, կոթողներ. Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ աշխատակազմի համար նախատեսված շենք/շինություններ արհեստանոցներ, ոչ հիմնական շինություններ, ծածկեր
ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	
Հատուկ նշանակության գոտի ՀՆԳ	պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության հողերը և օրենքով պաշտպանվող շենքերի ու շինությունների օգտագործման ու սպասարկման համար տրամադրված հողամասերը:
ԶՐԱՅԻՆ	
Զբանգքներ ԶԳ-1	ջրային օբյեկտներով՝ գետերով, բնական և արհեստական
Գետեր, գետակներ ԶԳ-2	ջրամբարներով, լճերով զբաղեցված, ինչպես նաև ջրային

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Լճեր ԶԳ-3	օբյեկտների օգտագործման և պահպանության համար անհրաժեշտ հիդրոտեխնիկական, ջրատնտեսային և այլ օբյեկտների համար առանձնացված տարածքները:
Հիդրոտեխնիկական կառույցներ ԶԳ-4	
Զբամբարներ ԶԳ-5	Զբային հողերը կարող են օգտագործվել բնակչության խմելու ջրի, կենցաղային, առողջարարական և այլ պահանջների, ինչպես նաև ջրատնտեսային, գյուղատնտեսական, բնապահպան, արդյունաբերական, ձկնատնտեսային, էներգետիկ և այլ պետական ու համայնքային կարիքների բավարարումն ապահովող օբյեկտների շինարարության և շահագործման համար:
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ	
Պահուստային գոտի	համայնքներին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության, օգտագործման իրավունքով չտրամադրված պետական հողերը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով կոնսերվացիայի արդյունքում տնտեսական շրջանառությունից հանված հողամասերը: 2. Պահուստային հողերի կազմում կարող են ներառվել քաղաքաշինական ու հողաշինարարական փաստաթղթերով առանձնացված չօգտագործվող հողերը, ինչպես նաև ավազուտները, ճահիճները և այլ անօգտագործելի հողերը:

Բացի հիմնական գոտիներից սահմանվում են նաև հատուկ սահմանափակումներով գոտիներ՝

4.6. Է. Հատուկ իրավական ռեժիմով գոտիներ (ՄՊԳ)

/Ծանոթություն.- հատուկ իրավական ռեժիմով գոտիները սահմանվում են որպես տարածքների օգտագործման սահմանափակումներ պարունակող գոտիներ և դրանց սահմանները կարող են համընկնել կամ չհամընկնել այլ գոտիների սահմանների հետ/:


Դրանք հանդես են գալիս որպես գոտու հիմնական գործառնություն ծածկող գոտիներ, ուստի կարող են համադրվել հիմնական գոտուն: Որպես այդպիսիք հանդես են գալիս ստորև ներկայացված գոտիները.

Պատմամշակութային ժառանգության օբյեկտների տարածքներ և պահպանական գոտիներ

Սահմանափակումներ.- հողային աշխատանքների, ճարտարապետա-հատակագծային առաջադրանքների և նախագծերի համաձայնեցում հուշարձանների պահպանության լիազոր մարմնի հետ, ըստ անհրաժեշտության՝ պահպանության պարտավորագրի առկայություն, հուշարձանների տեսանելիությունն ապահովող շենքերի և շինությունների տեղադրման և բարձրությունների սահմանափակումներ:

Զբաղապահական գոտիներ

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ
 Տնամերձ հողամասերի և գյուղատնտեսական հողերի օգտագործման հանձնարարելի ձևեր



4.7. ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿ

Պայմանական նշաններ	
Թույլատրվում է	Թ
Չի թույլատրվում	

Անվանում	Գործառնական գոտիներ	ԳՕԳ-1	ԳՕԳ-2	ԲՆԿԳ-1/1	ԲՆԿԳ-1/2	ԲՆԿԳ-2	ԲՆԿԳ-3	ԲՆԿԳ-4	ՀԿԳ-1	ՀԿԳ-2	ՀԿԳ-3	ԽԿԳ-1	ԽԿԳ-2	ԸՕԳ-1	ԸՕԳ-2	ԲՆՈԳ	ԱԳ-1	ԱԳ-2	ԱԳ-3	ԱԳ-3	ԵՆԹԳ-1	ԵՆԹԳ-2	ԵՆԹԳ-3	ԵՆԹԳ-4	ՀՊՏ-1/ԴՊՏ
Բնակելի																									
առանձնատներ				Թ	Թ	Թ	Թ																		
բլոկացված տներ					Թ		Թ																		
քոթեջներ				Թ	Թ																				
մինչև 150 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով բնակելի				Թ	Թ	Թ																			
բազմաբնակարան բնակելի շենքեր								Թ																	
Հյուրանոցային																									

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

հյուրանոցներ, հյուրատներ, (մինչև 30 տեղ)			Թ	Թ				Թ																
հյուրանոցներ, հյուրատներ, (առանց սահմանափ)								Թ																
վարձ. տրվող գյուղ.տներ, քոթեջներ			Թ					Թ																
պանսիոնատներ, հանգստի տներ								Թ																
առողջարանային հաստատություններ																								
Կրթական և գիտական																								
Նախադպրոցական հաստատություններ մանկապարտեզներ, մանկամսուրներ								Թ																
միջնակարգ դպրոցներ								Թ																
գեղարվեստական և երաժշտական դպրոցներ								Թ																
քոլեջներ								Թ																
Համալսարաններ, ԲՈՒՀ-եր								Թ																
Ակադեմիայի մասնաշենքեր, գիտահետազոտական ինստիտուտներ								Թ																
Հետազոտական և այլ լաբորատորիաներ								Թ																

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Բուժական և սոցիալական հաստատություններ																								
հիվանդանոցներ								Թ																
հոսպիսներ					Թ			Թ																
վերականգնողական կենտրոններ								Թ																
ամբուլատորիաներ								Թ																
պոլիկլինիկաներ								Թ																
բուժական կաբինետներ, կենտրոններ								Թ																
ծերանոցներ					Թ			Թ																
մանկատներ					Թ			Թ																
Վարչական																								
վարչական շենքեր								Թ								Թ	Թ	Թ	Թ					Թ
վարչական, ֆինանսական հիմնարկությունների և սպասարկման ծառայությունների գրասենյակներ								Թ																
փոստատներ								Թ																
կապի բաժանմունքներ								Թ																
հրշեջ ծառայություններ								Թ																
ոստիկանական տեղամասեր								Թ																
քաղաքացիական պաշտպանության	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ապաստարաններ																										
գրասենյակային տարածքներ								Թ																		
ֆինանսական																										
բանկի բաժանմունքներ								Թ																		
այլ ֆինանսական հաստատություններ								Թ																		
Մշակութային, մարզական, այլ հասարակական նշանակության հիմնարկություններ																										
գրադարաններ								Թ																		
տուն-թանգարաններ, ցուցասրահներ								Թ																		
թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ								Թ																		
կինոթատրոններ և թատրոններ								Թ																		
ակումբներ, մշակութային կենտրոններ								Թ																		
մարզադաշտեր, մարզահամալիրներ								Թ																		
մարզադահլիճներ, սպորտ-ակումբներ և սպորտդպրոցներ								Թ																		
ձիարշավարաններ								Թ																		
բաց և փակ լողավազաններ								Թ																		
հանգստի և մանկական տարբեր տիպի այգիներ																										

«Գեղարքունիք-1» միկրոռեզիտնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ռեկրեացիոն բնույթի խաղաձևերի սրահներ								Թ																	
մինչև 200 մ2 ընդհանուր մակերեսով մարզական պարապմունքների տարածքներ								Թ																	
խաղադաշտեր, բացօթյա ռեկրեացիոն կառույցներ, անիվավոր չմուշկների, սքեյթի և այլնի համար հարթակներ,								Թ																	
հրաձգարաններ (պնևմոտիրեր)								Թ																	
Կրոնական																									
Եկեղեցիներ								Թ																	
մատուռներ								Թ																	
այլ եկեղեցական հաստատություններ								Թ																	
Հասարակական սպասարկման և առևտրի																									
մինչև 20 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ՝ ռեստորաններ, սրճարաններ , պանդոկներ և այլն								Թ																	
մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ՝								Թ																	
ռեստորաններ, սրճարաններ ,								Թ																	

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

պանդոկներ և այլն																									
ռեստորաններ, սրճարաններ (առանց տեղերի սահմանափ.)								Թ																	
բացօթյա սրճարաններ								Թ																	
արագ սննդի կետեր								Թ																	
կենցաղ-սպասարկման առաջնային ծառայություններ՝ վարսավիրանոցներ, քիմմաքրման կետեր, լվացքատներ, Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ								Թ																	
առևտրի կենտրոններ								Թ																	
մանրածախ առևտրի կետեր, խանութներ, կրպակներ, դեղատներ								Թ																	
մթերային և արտադրական ապրանքների շուկաներ,								Թ																	
տոնավաճառներ								Թ																	
մինչև 150 մ2 ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների,								Թ																	

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

հասարական բաղնիքներ, սաունաներ,								Թ																	
հասարական զուգարաններ								Թ																	
աղբարկղների տեղադրման հարթակներ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ
Վառելիքի վաճառակետեր, մասնագիտացված առևտրի օբյեկտներ՝ ավտոպահեստամասեր, շինանյութ, գործիքներ և այլն																									
բենզալցակայաններ										Թ															
գազալիցքավորման կետեր										Թ															
ավտոտեխսպասարկման կետեր, արհեստանոցներ										Թ															
շինարարական նյութերի, գործիքների և ավտոպահեստա-մասերի, քիմիական նյութերի, գյուղատնտեսական և այգեգործական գործիքների, սերմերի, տնկիների խանութներ										Թ															
Արտադրական																									
ծանր արդյունաբերության, հանքարդյունաբերության համալիրներ, գործարաններ															Թ										
փայտի, մետաղի, քարի մշակման արտադրամասեր															Թ										
փայտի, մետաղի, քարի մշակման															Թ										

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

անհատական արհեստանոցներ																									
թեթև արդյունաբերության գործարաններ, արտադրական ձեռնարկություններ, արհեստագործական արտադրամասեր															Թ										
սննդամթերքի արտադրություն																Թ									
անհատական արհեստանոցներ և փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, փոշու, վնասարար արտանետումների հետ (մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերեսով):																Թ									
ընդերքօգտագործման տարածքներ																Թ									
Գյուղատնտեսական արտադրության																									
ձկնաբուծական ֆերմաներ																	Թ								
անասնապահական ֆերմաներ և համալիրներ, անասնագոմեր																	Թ								
թռչնաբուծական գործարաններ																	Թ								
գյուղմթերքի վերամշակման գործարաններ՝ կաթնամթերքի, պահածոների և այլ նմանատիպ արտադրություն,																	Թ								

«Գեղարքունիք-1» միկրոռեզիտնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Ջերմոցներ, չորանոցներ, ծխարաններ	Թ																Թ							
մինչև 300 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր ու շինություններ	Թ																Թ							
Սառնարաններ, պահեստարաններ																	Թ							
սպանդանոցներ																	Թ							
Տրանսպորտային																								
պետական ավտոմայրուղիներ և ճանապարհը սպասարկող օբյեկտներ,																						Թ		
Ավտոկայաններ, ավտոկայանատեղեր								Թ		Թ											Թ			
կամուրջներ, թունելներ																							Թ	
Երկաթգիծ, երկաթգծի կայարաններ և այլ փոխկապակցված ենթակառուցվածք																							Թ	
քաղաքացիական ավիացիայի օբյեկտներ՝ օդանավակայաններ, անգարներ և այլ փոխկապակցված ենթակառուցվածք,																							Թ	
Օժանդակ շինություններ																								
Տնտեսական շինություններ,	Թ		Թ	Թ	Թ																			

«Գեղարքունիք-1» միկրոռեզիտնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

խորդանոցներ																									
կենցաղային, տնտեսական նշանակության շենքեր և շինություններ՝ մինչև 30 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով	Թ																								
շվաքարաններ, ծածկեր												Թ													
ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի,			Թ	Թ	Թ	Թ	Թ																		
Ավտոտնակներ, վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղեր			Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ													
անհատական օգտագործման՝ ամառային խոհանոցներ, զուգարաններ, բաղնիքներ և սաունաներ, տնտեսական շինություններ, արվեստանոցներ և արհեստանոցներ			Թ	Թ	Թ	Թ	Թ																		
Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածք																									
Էլեկտրակայաններ՝ ատոմային, ջերմային,																				Թ					
հիդրոէլեկտրակայաններ, փոքր ՀԷԿ-եր																				Թ					
տրանսֆորմատորային ենթակայաններ																				Թ					

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Էլեկտրականության բարձրավոլտ օղային գծեր																				Թ				
Էլեկտրականության բարձրավոլտ մալուխային գծեր																				Թ				
ավտոմատ գազաբաշխիչ կայան (ԱԳԲԿ)																					Թ			
գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳԿԿ)																					Թ			
բարձր ճնշման գազատար խողովակաշար																					Թ			
գազի ստորգետնյա պահեստարաններ																					Թ			
հեռախոսային կապի բախշիչ կետեր (պահարանային)																						Թ		
հեռահաղորդակցության ցանցերի աշտարակներ																						Թ		
կապի ավտոմատ հեռախոսային կայաններ																						Թ		
օրվա կարգավորիչ ջրամբարներ																								Թ
ջրամատակարարման բաշխիչ հորեր, հանգույցներ																								Թ
կոյուղու ցանցային հորեր																								Թ
Կոյուղու մաքրման կայաններ																								Թ

«Գեղարքունիք-1» միկրոռեզիտնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

4.8. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

հապավումը և պայմանակա ն նշանը գծագրում	Ընդհանու ր մակերեսը, հա	Կառուցապատմա ն տոկոսը, առավելագույնը՝	Անջրանցիկ (սպասարկման) տարածքի մակերեսի տոկոս, այդ թվում կառուցապատմա ն տոկոսը, առավելագույնը՝	Կանաչապատման տոկոս, ջրային մակերեսներ, նվազագույնը	Հարկայնությունը առավելագույնը	Կառուցապատմա ն խտությունը, առավելագույնը՝	Թույլատրելի օգտագործման հիմնական ձևերի և ոչ հիմնական (ուղեկցող) ձևերի կառուցապատման
							հիմնակ ան/ ոչ հիմնակ ան
ԳՀ							
ԳՕԳ							
ԳՕԳ-1		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-2		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-2/1		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-2/2		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-3		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-4		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-0		-	-	փաստացի	-	-	

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ԲՆՀ							
ԲՆԿԳ							
ԲՆԿԳ-1/1		20% (+20% տնտեսական շինություններ)	40%+10%	50%	1-2 վերգետնյա հարկ (նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0.4	50/50
ԲՆԿԳ-1/2		30%	30%+10%	60%	1-3 վերգետնյա հարկ (նկուղային հարկի հնարավորություն)	0.6	80/20
ԲՆԿԳ-2		20%	20%+20%	60%	1-2 վերգետնյա հարկ (նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0.4	80/20
ԲՆԿԳ-3		40% (վերակառուցման պայմաններում	40%+10% (վերակառուցման պայմաններում	50% (վերակառուցման պայմաններում	4-5 վերգետնյա հարկ, (նկուղային հարկի	0.8/1.2 (վերակա-ռուցման պայման-ներում	75/25

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

		մինչև 60%)	60%+10%)	30%)	և ձեղնահարկի հնարավորություն)	1.6)	
ԲՆԿԳ-3		40% (վերակառուցման պայմաններում մինչև 60%)	40%+10% (վերակառուցման պայմաններում 60%+10%)	50% (վերակառուցման պայմաններում 30%)	6-9 վերգետնյա հարկ, (նկուղային հարկի)	0.8/1.2 (վերակա-ռուցման պայման-ներում 1.6)	75/25
ԲՆԿԳ-4		40% (վերակառուցման պայմաններում մինչև 60%)	40%+10% (վերակառուցման պայմաններում 60%+10%)	50% (վերակառուցման պայմաններում 30%)	9-ից ավելի վերգետնյա հարկ (նկուղային 2 հարկի հնարավորություն)		75/25
ՀԿԳ							
ՀԿԳ-1							
ՀԿԳ-1/1		80%	80%+20%	10% /կառուցապատմա ն կամ սպասարկման մակերեսների հաշվին		2.4	80/20
ՀԿԳ-1/2		80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/3		80%	80%+20%	10%		2.4	80/20

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ՀԿԳ-1/4		80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/5		80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-2		100%	30%	-	-		80/20
ՀԿԳ-3		100%	30%	-	-		80/20
ԽԿԳ							
ԽԿԳ-1		35%	35%+25%	40%			80/20
ԽԿԳ-2		40%	40%+20%	40%		1.2 1.6	80/20
		(վերակառուցման պայմաններում մինչև 60%)	(վերակառուցման պայմաններում 60%+20%)	(վերակառուցման պայմաններում 20%)			
ԸՕԳ							
ԸՕԳ-1		-	-	Չի սահմանվում			
ԸՕԳ-2		7%	7%+23%	70%	1 հարկ	0.07	-
ԲՆՌԳ							
ԲՆՌԳ		-	-	-	-	-	-
ԱՀ							
ԱԳ-1							
ԱԳ-1/1		60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական		

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

					պահանջների		
ԱԳ-1/2		60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2				-			
ԱԳ-2/1		60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/2		60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/3		60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/4		60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/5		60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-3		60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ԱԳ-4		60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹՀ							
ԵՆԹԳ -1							
ԷՆԲԳ -1/1		80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԷՆԲԳ -1/2		80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -2		80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -3		համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ-4							

«Գեղարքունիք-1» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ԵՆԹԳ -4/1		համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -4/2		համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		80/20
ԵՆԹԳ -4/3		70%	70%+20%	10%			80/20
ՀՊՏՀ							
ՀՊՏ-1/բնակ		-	-	փաստացի			
ՀՊՏ-2/առջ		40%	40%+10%	50%	մինչև 4 հարկ		80/20
ՀՊՏ-3/հնգ		40%	40%+10%	50%	մինչև 4 հարկ		80/20
ՀՊՏ-4/պմհ		փաստացի	-	Չի սահմանվում	1 հարկ	0.05	95/5
ՀՊՏ-5/պմգ		փաստացի	-	Չի սահմանվում	1 հարկ	0.05	95/5
ՀՆՀ							
ՀՆԳ		համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			համաձայն առաջա- դրանքի
ԱՆՏՀ							
ԱՆՏԳ-1		-	-	փաստացի			
ԱՆՏԳ-2		-	-	փաստացի			

«Գեղարքունիք-1» միկրոռեզիտնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

ԱՆՏԳ-3		-	-	փաստացի			
ԱՆՏԳ-4		-	-	փաստացի			
ԱՆՏԳ-5		-	-	փաստացի			
ԱՆՏԳ-6		-	-	-			
ՋՀ							
ՋԳ-1		համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ՋԳ-2		-	-	փաստացի			
ՋԳ-3		-	-	փաստացի			
ՋԳ-4		համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ՋԳ-5		համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ՊՀՄՏՀ							
ՊՀՄՏԳ		-	-	-			

4.9. Լրացուցիչ պահանջներ

Բոլոր շենքերը պետք է դրվեն փողոցի կողմից հողամասի սահմանից 3 մ հետ, բացառելով աղմուկի, տհաճ հոտերի կամ վնասակար արտանետումների տարածումը, պահպանելով հրդեհային անվտանգության և վթարաանվտանգության պահանջները:

Առաջին հարկերը թույլատրվում է օգտագործել հասարակական գործառնությունների նպատակով: Այս դեպքում շենքերը կարող են դրվել կարմիր գծով, եթե հասարակական գործառնության մատուցումը չի ստեղծում վթարավտանգ իրավիճակ կից փողոցով երթևեկողների համար, հակառակ դեպքում, շենքերին կից, տնամերձ հողամասի սահմաններում, փողոցի կողմից պետք է նախատեսվի ավտոկայանատեղ 1-2 մեքենայի համար:

4.10. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Սահմանված են տեղական պայմաններից բխող կանոններ, որոնք պարտադիր են նախագծվող ողջ տարածքում կիրառելու և բոլոր գոտիների համար: Դրանք հիմնականում կարգավորում են կառուցապատման և շահագործման ընթացքում առաջացող միջավայրի համալիր կանոնակարգման խնդիրները, այն է.

Ընդունված սկզբունքներին չհամապատասխանող կառույցների աստիճանական վերափոխման մեխանիզմները,

Բնապահպանական միջոցառումների իրականացումը,

Գոտիավորման նախագծով ներկայացված պահանջների իրականացումը:

1. Շինարարական և վերանորոգման աշխատանքներ

• Բոլոր շինարարական, վերակառուցման, վերականգնման և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

2. Շենքերի ճակատների արտաքին հարդարանք

• Շենքերի ճակատների (փողոցային և բակային) արտաքին հարդարանքի հետ կապված բոլոր շինարարական և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

3. Շինանյութ

• Պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի/շինությունների բնական քարերից կառուցված ճակատային պատերը ներկել կամ երեսապատել արգելվում է:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

- Այլ շենքերի համար, նախընտրելի է օգտագործել սև, վարդագույն, մոխրագույն, օխրա (դեղին, կարմիր), սպիտակ երանգների շինանյութեր, որոնք կներդաշնակեն քաղաքի հիմնական կառուցապատմանը:

4. Նկուղներ և կիսանկուղներ

- Բնակելի շենքերի նկուղային և կիսանկուղային հարկերը փողոցի կողմից մեկուսացված մուտքեր չպետք է ունենան:

- Բոլոր շենքերի կիսանկուղների պատուհանների զոգերը մայթից պետք է առնվազն 30 սմ բարձր լինեն:

5. Շենքերի շքամուտքեր

- Շենքերի շքամուտքերի աստիճանները փողոցի կարմիր գծից դուրս չպետք է դրվեն:

6. Տանիքներ

- Լանջավոր տանիքների կիրառման դեպքում դրանց առավելագույն թեքությունը (i) պետք է ընդունել - 0.5:

- Լանջավոր տանիքների գագաթի բարձրությունը պետք է սահմանափակվի կառույցի խորության կեսի չափով:

7. Գուլագո

- Հուշարձաններ չհանդիսացող շենքերին կցված գուլագոյին վահանակների մակերեսը չպետք է գերազանցի շենքի ճակատային պատի 10 տոկոսը:

- Փողոցներում տեղադրվող առանձին կանգնած գուլագոյին վահանակները պետք է տեղադրվեն մոտակա կարգավորվող խաչմերուկից առնվազն 50 մ հեռավորության վրա:

8. Ցուցանակներ և անվանատախտակներ

- Փողոցների անվանատախտակները պետք է տեղադրվեն ստանդարտ չափերով՝ միասնական հատուկ նախագծի համաձայն:

- Շենքերի համարների չափերը պետք է ընդունվեն՝

- ա) լուսավորությամբ, կլոր՝ տրամագիծը-30սմ

- բ) առանց լուսավորության՝ քառակուսի -15 x 15սմ:

Հիմնարկությունների անվանատախտակները և բնակիչների անվանատախտակները կցվում են միայն շքամուտքների դռներին:

9. Փողոցային ցանց

- Խաչմերուկներում պահպանել տեսանելիության եռանկյունները՝ համաձայն ՀՀՇՆ 30-01-2014 նորմերի պահանջների,

- Ավտոտնակների համար հատակացվող հողամասի նվազագույն մակերեսը 20 ք.մ., բաց ավտոկանգառատեղերի համար՝ 25 ք.մ.:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

• Կանգառատեղերի համար խորացումները մայթի հաշվին իրականացնել միայն սիզամարգերի և առանձին ծառախմբերի հաշվին՝ տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ թույլտվությամբ, այլ հնարավորությունների բացակայության դեպքում մայթի մեջ գրպանաձև խորացմամբ ավտոկայանատեղերի կազմակերպման դեպքում ապահովել՝

Փողոցային լուսավորություն

• «Փողոցների լուսավորության չափորոշիչները՝ համաձայն ՀՀ գործող շինարարական նորմերի»:

Տրանսպորտի միջոցների կանգառներ

• Տրանսպորտի միջոցների կանգառները պետք է տեղավորվեն, որպես կանոն, միասնական նախագծով թեթև կոնստրուկցիաներից կառուցված, թափանցիկ պատերով կամ պուներով շինությունների մեջ: Առավելագույն չափերը՝

- երկարությունը՝ 3.6 մ

- լայնությունը՝ 2.0 մ

10. Աղբահեռացման կոնտեյներներ

Աղբարկղները տեղադրելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ պահանջները.

• Համաքաղաքային նշանակության փողոցների, ինչպես նաև հասարակական առավելագույն ձգողության և կուտակման վայրերին հարակից տարածքներում տեղադրել ոչ ավելի, քան 100 մ հեռավորության վրա, հատուկ փակվող տիպի, բանուկ մասերին չխանգարող տարածքներում,

• Շրջանային նշանակության փողոցների վրա՝ 100 –200 մետրը մեկ,

• Տեղական նշանակության փողոցների վրա հիմնական խաչմերուկների վրա, դրանց հեռավորությունը 200 մետրից պակաս լինելու դեպքում՝ 200 մետրը մեկ:

11. Հեռավորությունը շենքերի միջև

Բնակելի և հասարակական, ինչպես նաև արտադրական շենքերի միջև եղած հեռավորությունը պետք է ընդունել հիմնվելով արևի ճառագայթման քանակի (ինսոլյացիայի) և լուսավորվածության հաշվարկների վրա, ինչպես նաև հակահրդեհային պահանջներին համապատասխան:

2-3 հարկանի բնակելի շենքերի երկար կողմերի միջև հեռավորությունը (կենցաղային խզումներ) պետք է ընդունել 15 մ-ից ոչ պակաս, իսկ 4 հարկանի շենքերի միջև՝ 20 մ-ից ոչ պակաս: Այս շենքերի երկար կողմերի և բնակելի սենյակներից պատուհաններ ունեցող կողաճակատների միջև՝ 15 մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորությունները կարող են կրճատվել ինսոլյացիայի և լուսավորության նորմերը պահպանելու դեպքում, եթե ապահովված է պատուհանից պատուհան բնակելի սենյակների անտեսանելիությունը:

12. Շենքերի տեղադրությունները

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Շենքերը տեղադրել քամիների գերակշիռ ուղղությունների հաշվառումով՝ կողաճակատներով դեպի վերջիններս:

13. Աղմուկի թույլատրելի մակարդակ

Բոլոր գոտիներում որտեղ թույլատրված է բնակելի կառուցապատում աղմուկի թույլատրելի մակարդակը չպետք է գերազանցի 55 դԲԱ (ցերեկը) և 45 դԲԱ (գիշերը):

Աղմուկից և արտանետումներից բնակելի կառուցապատման պահպանման համար նախատեսել վերոնշյալ բացասական պարամետրերի գերազանցմամբ փողոցների ծառապատում:

14. Սանիտարական պահպանման գոտիների չափորոշում

Ճանապարհների, փողոցների, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների (օդանավակայաններ, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր, բարձր և միջին ճնշման գազատար և այլն) արդյունաբերական և կոմունալ օբյեկտների սանպահպանման գոտիները՝ համաձայն գործող նորմերի և ստանդարտների:

15. Գոտիավորմանը չհամապատասխանող կառուցապատման կարգավորում

Գոտիավորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող օգտագործման ձևերը, որոնք գոյությունը պահպանել են մինչև սույն նախագծի հաստատման տարեթիվը, այսուհետև պետք է կարգավորվեն միայն սույն կանոնների պահանջներին համապատասխան:

Գոտիավորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող շենքերի և կառույցների ընդարձակում չի թույլատրվում:

Գոտիավորմանը չհամապատասխանող 6 ամսից ավելի լքված և չօգտագործվող օրինական համարվող կառույցների հետագա օգտագործման ձևը պետք է որոշվի համաձայն այն հիմնական գոտու թույլատրելի օգտագործումների կանոնների, որտեղ այն գտնվում է:

Գոտիավորմանը չհամապատասխանող օրինական համարվող կառուցապատման ձևերը կարող են վերանորոգվել, եթե բոլոր կառուցվածքային փոփոխումները կատարվում են միայն գործող քաղաքաշինական օրենսդրությանը համաձայն:

Եթե գոտիավորմանը չհամապատասխանող օրինական համարվող կառույցի վերանորոգման արժեքը գերազանցում է նրա տեղափոխման արժեքի 50%-ը, ապա այդ կառույցը պետք է արգելվի:

16. Բնակչության սակավաշարժուն խմբերի պահանջների ապահովում

Նոր կառուցապատման իրականացման կամ վերակառուցվման պայմաններում անհրաժեշտ է ընդունել որոշումներ՝ հաշմանդամների շահերի առավելագույն պահպանումով, ապահովելով վերջիններիս կենսագործունեության անարգել միջավայր:

Ինչպես բնակելի թաղամասերը, այնպես էլ ճանապարհափողոցային ցանցը պետք է նախատեսվեն բնակչության վերոնշյալ խմբերի համար երթուղիների ապահովմամբ՝ հասարակական տրանսպորտից օգտվելու հարթակների, մոտեցումների ձևավորմամբ:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Հաշմանդամների համար հողատարածքների չափերը հաշվարկել համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-06 նորմերի պահանջների:

Հետիոտն ուղիների նախատեսման ժամանակ հաշվի առնել հնարավորության դեպքում երկայնական ուղղությամբ 6 %ից ոչ ավելի թեքությունների ապահովումը, խիստ ռելյեֆային պայմանների կամ սահմանափակ տարածքային հնարավորությունների դեպքում թույլատրվում է մինչև 10 % թեքությամբ հատվածներ՝ 10 մ-ից ոչ ավելի հեռավորությամբ ապահովելով հորիզոնական տեղամասերով:

Ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, աստիճանների և պանդուսների, շենքերի շքամուտքերի, վերելակների, մարզական կառույցների կազմակերպման ժամանակ առաջնորդվել ՀՀՇՆ IV-11.07.01-06 պահանջներով:

17. Կառուցապատման թույլտվություններ

Օգտագործման ձևերի համար թույլտվությունների կառուցվածքը հիմնվում է ընդունված գոտի-թույլատրելի հողօգտագործման ձև՝ սկզբունքի վրա:

4.11. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Առանձնատներ՝ իր սեփական տնամերձ հողամասում տեղակայված բնակելի միավոր մեկ ընտանիքի համար:

Բազմաբնակարան տներ՝ 2 և ավելի բնակարաններ, միավորված մեկ շենքում:

Ինսուլյացիա՝ տարածքներում և սենյակներում արևի ուղիղ անընդհատ ճառագայթման տևողության նորմատիվային պահանջ:

Լրացուցիչ պահանջներ՝ նախատեսվում են տարբեր գոտիներում տեղադրվող այն օգտագործման ձևերի համար, որոնց բնույթը մասամբ չի համապատասխանում տվյալ գոտուն ներկայցվող պահանջներին և դրանց գործառնությունը հիմնականում կապվում է հատուկ պայմանների կիրառման հետ:

Կանաչ ծածկույթ՝ բուսական ծածկույթ. ծառեր, թփեր, խոտաբույսեր և այլն:

Հետիոտն մատչելիության շառավղեր՝ այն հեռավորությունը, որը կարող է անցնել մարդը՝ առանց ֆիզիկական լարվածության (0-30 րոպե ժամանակահատված):

Կառուցապատման /հողօգտագործման/ չափորոշիչներ և կարգավորիչներ՝ սահմանում են տվյալ գոտու հողօգտագործման և կառուցապատման պահանջներին համապատասխանող բնութագրերի համակարգը, որոնցով կանոնակարգվում է տարածքի իրացման ինտենսիվությունը, կառուցապատման խտությունը, կառույցների հարկայնությունը, գեղագիտական պահանջները: Կարգավորիչների հարաչափերը հիմնվում են օրենսդրական և պետական նորմատիվ փաստաթղթերի վրա, տեղայնացվում են՝ ելնելով յուրաքանչյուր գոտուն յուրահատուկ պահանջներից և փոփոխվում են գոտուց գոտի:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Հակահրդեհային պահանջներ՝ շենքերը, կառույցները հրդեհներից պաշտպանելու համար կառուցման և այլ միջոցառումների նորմերով հաստատված պարտադիր կարգ:

Համայնքային նշանակության փողոցներ՝ տրանսպորտային և հետիոտն կապ բնակելի թաղամասերի, գյուղատաղրական ձեռնարկությունների, ինչպես նաև հասարակական կենտրոնների միջև, ելքեր դեպի արտաքին ավտոմայրուղիներ կամ դաշտամիջան ճանապարհներ:

Տեղական նշանակության փողոցներ՝ տրանսպորտային և հետիոտն կապ բնակելի տարածքներում, ելքեր դեպի համայնքային նշանակության փողոցներ կամ դաշտամիջան ճանապարհներ:

Երթևեկության անցուղաքաձ՝ միավոր ժամանակահատվածում ճանապարհի որևէ կտրվածքով հանդիպակաց ուղղություններով անցնող ավտոմոբիլների քանակը:

Ճանապարհի բեռնվածության մակարդակ՝ երթևեկության անցուղաքաձի հարաբերությունը ճանապարհի թողունակությանը:

Երթևեկային մաս՝ ճանապարհի մակերևույթի շերտ, որի սահմաններում կատարվում է ավտոմոբիլների երթևեկությունը:

Կարմիր գիծ՝ շենքերն ու շինությունները փողոցներից անջատող սահմանը, որով սահմանվում է նաև գլխավոր և երկրորդական փողոցների, ներառյալ մայրերի լայնությունը:

Մայրի բանուկ մաս՝ փողոցի մայրերի՝ հետիոտնի շարժման համար հատկացված շերտ:

Հողամաս՝ հողի վերգետնյա և ստորգետնյա տարածքի մասն է, որն ունի ամրագրված սահմաններ, տարածք (մակերես, ծածկագիր), գտնվելու վայր, իրավական կարգավիճակ՝ օրենքներով նախատեսված սահմանափակումներով հանդերձ, որոնք գրանցված և արտացոլված են անշարժ գույքի պետական միասնական կադաստրում:

Հողամասի անջրանցիկ տարածք՝ հողամասի այն հատվածը, որի բուսական բնաշերտը ծածկված է արհեստական կառույցներով (շենք, մայր, սալարկ):

Հողամասի ճակատը՝ հողամասի կարմիր գծին հարող կողմը:

Ձեղնահարկ՝ լանջավոր տանիքի ներքին տարածությունը:

Նորմ՝ նախագծման՝ շինարարության համար սահմանված պարտադիր կարգ:

Շենքի բարձրություն՝ մայրի մակերևույթից մինչև քիվի վերին եզրն ընկած ուղղահիգ հեռավորությունը:

Ոչ հիմնական շինություն՝ կրպակներ, տաղավարներ ճարտարապետական փոքր ձևեր:

Սանիտարահիգիենիկ պահանջներ՝ բնակվելու տարածությունների՝ շրջակա միջավայրի սահմանային թույլատրելի վիճակներին համապատասխանության պահանջներ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

6. Աշխատանքի նպատակը և խնդիրները

7. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք 1 ՄՄՏՀՆ նախագիծը իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որտեղ արտացոլված են բնական պաշարների (օդ, ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության արդյունքները՝ տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների, կաթսայատների ճիշտ տեղադրման անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ, կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասագործման ճանապարհով:

Սևան քաղաքային համայնքի շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական ձեռնարկությունների, կոմունալ-կենցաղային սեկտորի և ավտոտրանսպորտի արտանետումներով
- մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով
- շրջակա միջավայրի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով
- տրանսպորտի աղմուկը:

2.20. Առկա իրավիճակը

Մթնոլորտային օդը. Ներկայումս Սևանի քաղաքային համայնքի մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, կոմունալ-կենցաղային օբյեկտների և ավտոտրանսպորտի արտանետումներով:

Համայնքում գործող արդյունաբերական ձեռնարկությունները /"Մարս" ալրադաց գործարանը, հացի և հացամթերքի գործարանը, ճանապարհների շինարարության և շահագործման ՊԲԲԸ, "Ապակամեկուսացիչ" ԲԲԸ/ մթնոլորտ ընդհանուր արտանետումները կազմում են 155.4 տ/տարի, որոնց դեպքում, ինչպես պարզվել է սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նախագծերի վերլուծությունից, մթնոլորտի գետնամերձ շերտի աղտոտվածության մակարդակը աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՄԹԿ): Համաձայն Շրջակա միջավայրի և բնական պաշարների ՀՀ-ում 2011թ. տվյալների վերլուծությանը, Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքային համայնքում տարեկան առաջանում է (աննշան քանակի) 100 տոննա 4 և 5-րդ դասի վտանգավոր արտադրական թափոններ որոնք տեղափոխվում են համայնքային աղբյուս:

Մինչև 1991թ. բազմաբնակարան և հասարակական շենքերի ջերմամատակարարումն իրականացվում էր 118 Գկալ/ժ ընդհանուր հզորության 10 կաթսայատներից, որոնք, բացառությամբ բուժհիմնարկների կաթսայատներից ավելի քան 10 տարի է ինչ չեն գործում: Ներկայումս ջեռուցման կարիքների համար հիմնականում օգտագործվում է էլեկտրաէներգիա, բնական գազ և վառելափայտ: Corinar մեթոդիկայով հաշվարկված կենցաղ-կոմունալ սեկտորի արտանետումները աննշան են և կազմում են 12.8 տ/տարի:

Ավտոտրանսպորտի արտանետումները որոշվել են ըստ Permanent International Association of Road Congresses (PIARC) մեթոդիկայի, որը հաշվի է առնում փողոցների (ճանապարհների) բութագրերը, տեղանքի բարձրությունը և այլն և տալիս է առավել ճշգրիտ գնահատականներ: Համայնքի սահմաններում ավտոտրանսպորտի արտանետումները կազմում են 1257.8 տ/տարի:

Արտանետումների ամփոփիչ ցուցանիշները բերվում են աղյուսակ 5--ում:

Примечание [U6]: ճշտել

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Աղյուսակում Սևանի քաղաքային համայնքի մթնոլորտն աղտոտող արտանետումները, տ/տարի

Աղյուսակ 5

Աղտոտման աղբյուրները	Ընդամենը	աղբյուրներ					
		ազոտի օքսիդներ	ածխածնի օքսիդ	ածխաջրածիններ	ծծմբային անհիդրիդ	փոշի	այլ
Աշտարակ	198.2	31.9	144.5	0	7.5	30.9	3.4
Ավտոմոբիլային	1257.8	44.2	1105.0	108.4	0	0	0
Ընդամենը	1456.0	76.1	1240.5	108.6	7.5	10.9	3.4

Աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ արտանետումների գերակշռող մասը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին (86.4%):

Ներկայումս Սևան քաղաքային համայնքում օդի աղտոտվածության հսկողություն չի իրականացվում: Էկոմոնիտորինգի կենտրոնը ՔՃ 52.04 186-89 համապատասխան քաղաքի օդի աղտոտվածության գնահատման համար առաջարկում է ֆոնային կոնցենտրացիաների հետևյալ արժեքները, մգ/մ³

փոշի	-	0.20
ծծմբային անհիդրիդ	-	0.02
ազոտի օքսիդներ	-	0.008
ածխածնի օքսիդ	-	0.1

Սևան քաղաքում ավտոմոբիլային տրանսպորտի արտանետված նյութերի քանակի հաշվարկ

Ավտոմոբիլային տրանսպորտը արտանետում է ավելի քան 200 վնասակար նյութեր, որոնցից ամենազանգվածային ու մարդու առողջության համար վտանգավորը հանդիսանում են.

- ածխածնի մոնօքսիդը - CO
- ազոտի օքսիդներ - NOx
- ածխաջրածիններ - CmHn
- կոշտ նյութեր - զանազան մետաղներն ու դրանց միացությունները

Արտանետած որևէ նյութի քանակը հատվում են PIARC*-ի մեթոդով

Որտեղ

T	-	մոմ ³ Ս՝Հ մ ³ Ի ³ ՍՈՆՇ ÷ áŌáóŸ»ñáí ìñ³Ÿeááñ³ŸŮÇŸ ŮÇçáóŸ»ñÇ İ³Ů³Ÿ»ñĀ»İáóĀŮ³Ÿ Ā³Ů»ñŸ »Ÿ,
q ₀ " q _μ	-	Ů³ñ¹³³ñ " μ»éŸ³³ñ ³ñáŮáμÇÉŸ»ñÇ ì»é³İ³ñ³ñ ³ñ³ŸŸ»İáóŮŸ»ñÇ ù³Ÿ³İŸ չ,
k ₀ " k _μ	-	İŮ³É İÇăÇ Ů³ñ¹³³ñ " μ»éŸ³³ñ ³ñáŮáμÇÉÇ Ů³éŸ չ ìñ³Ÿeááñ³ŸŮÇŸ ÑáèùáóŮ,
f _v f _h f _i	-	ìñ³Ÿeááñ³ŸŮÇŸ ÑáèùÇ ŮÇçÇŸ ³ñ³.áóĀŮ³ŸŸ, ì»Ō³ŸùÇª İáíÇ Ů³ñ¹³İÇó áóŸ»ó³İ μ³ñŌñáóĀŮ³ŸŸ " ÷áŌáóÇ »ñİ³ŮŸ³İ³Ÿ Ā»ùáóĀŮ³ŸŸ ³¹²¹»óáóĀŮáóŸŸ չ ³ñİ³Ÿ»İáóŮŸ»ñÇ ìñ³,
N	-	ìñ³Ÿeááñ³ŸŮÇŸ ŮÇçáóŸ»ñÇ Ā³Ů³ŮÇŸŸ ³Ÿóáó¹³ñŌŸ չ ÷áŌáóáí,
L	-	÷áŌáóÇ »ñİ³ñáóĀáóŸŸŸ չ,
V	-	ìñ³Ÿeááñ³ŸŮÇŸ ÑáèùÇ ŮÇçÇŸ ³ñ³.áóĀŮáóŸŸŸ չ:

«Գեղարքունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

Վերը նշված բանաձևով հաշվարկված է յուրաքանչյուր փողոցի անցուղարձին համապատասխան արտանետման քանակը: Ամբողջ քաղաքի համար գումարելով արտանետումների առանձին քանակները, որոշվել է լրիվ քանակը: Այդ ցուցանիշները բերված են ստորև.

Ածխածնի մոնօքսիդ (CO)	- 1105 տ/տարեկան
Ազոտի օքսիդներ (NOx)	- 44.2 տ/տարեկան
Ածխաջրածիններ (CmHn)	- 108.6 տ/տարեկան
Կոշտ նյութեր	- 1.1 տ/տարեկան

Permanent International Association of Road Congresses.

Նախկինում կատարված ուսումնասիրությունների^{1/2/} և ձեռնարկությունների ՍԹԱ նախագծերի վերլուծության տվյալների հիման վրա նաև կարելի է պնդել, որ ներկայումս Սևան համայնքի մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը չի գերազանցում սանիտարահիգիենիկ նորմերը:

Սակերնության ջրեր. Սևան քաղաքային համայնքին կից հոսում է Հրազդան գետը, որը աղտոտվում է համայնքի կոյուղու կեղտաջրերով: Գազարին գյուղում տեղաբաշխված կեղտաջրերի մաքրման կայանը ներկայումս չի գործում և կեղտաջրերը առանց մաքրման թափվում են Հրազդան գետը:

Կեղտաջրերով Հրազդան գետ թափվող աղտոտող նյութերի քանակը **բերվում է աղյուսակ 6-ում:**

Աղյուսակ 6

Примечание [U7]: նախադասությունն ավարտել-աղյուսակը համարակալել

Կեղտաջրերի ծավալը, հազ. խոր.մ	ԹԿՊ լրիվ, տ	Կախյալ նյութեր, տ	Նավթա - մթերքներ, տ	Ազոտ ամոն-յակային, տ	Քլոր իդ-ներ, տ	Սուլ-ֆատներ, տ	Պղինձ, կգ	Ցինկ, կգ
1183.1	54.3	26.1*	0.12*	57.0	45.1	5.0	6.0	18.0

